ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

ԻՆՉՊԵՍ ՀԵՐՈՍԱԲԱՐ
ԿՐԵՔ ՁԵՐ ԽԱՉԸ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Թանկագի՛ն ընկեր,

Հիմա վախենալու և նահանջելու ժամանակը չէ, այլ՝ ժամանակն է, որ բոլորս, որպես Քրիստոսի միասնական մարմին, բարգավաճենք սիրո մեջ: Ժամանակն է, որ բարձրացնենք մեր հոգևոր թրերը և գործածենք դրանք, որպեսզի կապ ստեղծենք Երկնքի և երկրի միջև: Ժամանակն է՝ գործածել Աստծո Խոսքի թուրը, որը կբաժանի երկրային դրդապատճառները Երկնքի դիտավորությունից: Ժամանակն է, որ կանայք դառնան այնպիսի հերոսուհիներ, ինչպիսիք Աստված ստեղծել է նրանց՝ խիզախ, իմաստուն, ներող և զանազանող, որպեսզի ազդեցություն թողնեն այս և հաջորդ սերունդների վրա, որպեսզի փոխեն սերունդները Աստծո համար:

Տերը խոսեց սրտիս՝ դրդելով փոխանցել այս ուղերձը ձեզ և ձեր ծառայակից հոգևոր ավագներին՝ աշխարհով մեկ: Խնդրում եմ, ընդունե՛ք սա իմ սիրո և աջակցության հետ: Ես հավատում եմ, որ այն կբարձրացնի ձեզ և նրանց, ում մասին դուք հոգ եք տանում, դեպի Աստծո նպատակը, իշխանությունը և կոչումը:

Այս ուղերձը ոգեշնչեց ինձ և կոչ արեց՝ ավելին անել Քրիստոսի համար, ոտքի ելնել և ոգեշնչել Աստծո դուստրերի (և որդիների) մի ամբողջ սերնդի՝ հորդորելով նրանց՝ գործածել այն, ինչ իրենք արդեն ունեն, և փոփոխություններ առաջացնել իրենց ազդեցության շրջանակում և մեզ շրջապատող աշխարհում:

Լսե՛ք Սուրբ Հոգուն, երբ տանում եք խաչի բոլոր օրհնությունները այն մարդկանց, ովքեր հույսով լցված սպասում են:

Ձեր քույրը՝ Քրիստոսում

Լիզա Բիվեր
LisaBevere@ymail.com

teach reach rescue
Messenger International®
MessengerInternational.org

Գովասանական ակնարկներ *«Թրեր կրող կանայք»* գրքի մասին

«Կանա՛յք, վերցրե՛ք ձեր թրերը: Այս գիրքը նոր ուժ կհաղորդի ձեզ և կօգնի պատրաստվել ձեր պայքարներին՝ զինելով Աստծո ճշմարտությամբ: Պատրաստվեք ընդունե՛լ *«Թրեր կրող կանայք»* գրքի կոչը և ոգեշնչումը»:

— Քրեյգ և Էմի Գրոյշհել, «LifeChurch. tv» եկեղեցու հովիվներ Էդմոնդ, Օկլահոմա

«Լիզա Բիվերն Աստծո ամենաազդեցիկ ձայներից մեկն է մեր պատմության այս ժամանակահատվածում: Նրա սիրտն ուղղված է Թագավորին և Նրա թագավորությանը. նրա նպատակն է՝ սովորեցնել Աստծո դուստրերին, թե ինչպես ոտքի ելնել և իրականացնել իրենց կոչումը»:

— Շեյլա Ուոլշ, *«Աստված սիրում է կոտրված մարդկանց»* գրքի հեղինակը և «Հավատքի կանայք» ծառայության գլխավոր քարոզիչը

«Լիզա Բիվերն աշխարհով մեկ ոգեշնչել է կանանց իր ձգտումով, որն է՝ ծառայել Քրիստոսին և պայքարել Նրա թագավորությունն ընդարձակելու համար: *«Թրեր կրող կանայք»* գիրքը կոչ կանի ձեզ՝ միանալ այն քրիստոնյաների շարքերին, ովքեր արդեն առաջ են շարժվում իրենց հավատքով: Մի՛ հեռացեք պայքարից: Հաստա՛տ կանգնեք և ունեցե՛ք հոգևոր հաղթանակներ»:

— Հովիվներ՝ Սթիվեն և Հոլլի Ֆարտիկ, «Elevation Church», Շառլոտ, Հյուսիսային Կարոլինա

«*«Թրեր կրող կանայք»* գիրքը մեր ժամանակների մարգարեական հռչակում է: Այն կոչ է անում Աստծո դուստրերին՝ հմտորեն գործածել Նրա Խոսքի թուրը: Լիզա Բիվերն առաքելություն ունի Աստծուց՝ բացահայտել մեր ուժը և բերել բժշկություն, արդարություն և վերականգնում մեզ շրջապատող աշխարհին: Ընթերցե՛ք այս գիրքը՝ նախապես իմանալով, որ ձեր կյանքը լցվելու է զորությամբ և խիզախությամբ»:

— Քրիսթին Քեյն, «Անվեհեր» գրքի հեղինակը և
«A21 Campaign» կազմակերպության համահիմնադիրը

«*«Թրեր կրող կանայք»* գիրքը մարգարեական, աստվածաշնչյան, խրատական և կոչ անող ուղերձ է: Այն գրված չէ մեղմ, կանացի ոճով. այս գիրքը լուրջ ուղերձ է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Մենք ոգեշնչված ենք այս գրքով և համոզված ենք, որ այն մեծ ազդեցություն կթողնի Եկեղեցում՝ աշխարհով մեկ»:

— Ջուդա և Չելսի Սմիթ, «City Church» եկեղեցու հովիվներ
Կիրկլենդ, Վաշինգտոն

«Ընթերցելով *«Թրեր կրող կանայք»* գիրքը՝ դուք զորություն կստանաք ձեր դժվարություններին համարձակ դիմակայելու համար, և կսովորեք ապրել հերոսուհու պես»:

— Ռոբերտ և Դեբի Մորիս, «Gateway Church» եկեղեցու հովիվներ
Դալլաս, Ֆորտ Վորտ, Տեխաս, և *«Օրհնված ամուսնություն»*
գրքի համահեղինակները

«Մենք ապրում ենք զարմանալի պատմական ժամանակահատվածում, երբ ամբողջ աշխարհը լի է ցավով, տառապանքով և տրտմությամբ, բայց միևնույն ժամանակ մենք փոփոխություններ

առաջացնելու և մարդկանց օգնելու մեծ հնարավորություններ ունենք: Իր եզակի ոճով Լիզա Բիվերը խրախուսում է Թագավորի դուստրերին՝ հասկանալ, որ մենք էպիկական պատերազմի մեջ ենք և պետք է պատրաստվենք: Հիմա նահանջելու ժամանա՛կը չէ: Ընթերցե՛ք *«Թրեր կրող կանայք»* գիրքը և միացե՛ք մշտապես համալրվող կանանց բանակին, ովքեր բարձրանում և զորանում են այս երկրի վրա»:

— Հոլլի Վագներ, «GodChicks» ծառայության հիմնադիրը
և «Պատերազմող աղջիկներ» գրքի հեղինակը

«*«Թրեր կրող կանայք»* գրքում Լիզա Բիվերը ևս մեկ անգամ բացահայտում է այն հերոսուհուն, ով ապրում է մեր ներսում, և խրախուսում է, որ լիարժեք կերպով դառնանք այնպիսին, ինչպիսին Աստված ստեղծել է մեզ: Նա ոգեշնչող և կենդանի նախանձավորությամբ ցանկանում է, որ Եկեղեցին լինի միաբան և գործածի Աստծո Խոսքը: Կարևոր չէ, թե որտեղ եք դուք. այս ուղերձը կզորացնի ձեզ, որպեսզի «կրկին կռեք ձեր թուրը» և խիզախությամբ, համարձակությամբ ու ճշմարտությամբ դիմակայեք ամենօրյա պայքարներին»:

— Սթովոլ և Քերի Ուիմս, «Celebration Church» եկեղեցու հովիվներ
Ջեքսոնվիլ, Ֆլորիդա

««Աստծո Խոսքը՝ աստվածային թուր է». ինձ դուր է գալիս այս համեմատությունը: Այս գրքում Լիզան զետեղում է փայլուն հասկացություններ և համեմատություններ, նաև գերազանց ձևով խանդավառություն է ներշնչում ընթերցողին՝ օգտագործելով «դիմացինի հաջորդ քայլը կանխազգալու» մեթոդը»:

— Դոկտոր Քերոլայն Լիֆ, իմացական նյարդաբան և
հաղորդակցման փորձագետ, նաև *«Ո՞վ է անջատել իմ ուղեղը»* գրքի հեղինակ

«*«Թրեր կրող կանայք»* գիրքը փայլուն կերպով ցույց է տալիս այն կարողությունը, որն Աստված տվել է Լիզա Բիվերին՝ խրախուսել և սպառազինել կանանց, որպեսզի նրանք վերականգնվեն, թարմանան, զբաղեցնեն իրենց դիրքն այս էպիկական պատերազմի մեջ և պարտության մատնեն թշնամուն, ով կանանց դարձրել է իր թիրախը ամբողջ պատմության ընթացքում»:

— Քրիս և Ջոյ Հիլ, «Potter's House» եկեղեցու հովիվներ
Դենվեր, Կոլորադո

«Մենք արտոնություն ենք ունեցել հաճախակի հրավիրելու Լիզա Բիվերին մեր *«LIFE Today»* հեռուստահաղորդմանը: Տարիներ շարունակ նա միացել է մեր միջազգային ծառայողական թիմին, որն աշխատում է նաև Ասիական երկրներում՝ մարդկային թրաֆիքինգի զոհ դարձած կանանց օգնելու համար: Այդ փորձառության շնորհիվ նա քաջատեղյակ է այն պայքարներին, որոնցում կարելի է հաղթել միայն Աստծո Խոսքի թրով: Նրա ուղերձը կօգնի ոգեշնչել և պատրաստել կանանց՝ հատկապես հոգևոր պատերազմի համար»:

— Ջեյմս և Բեթի Ռոբինսոն, «LIFE Outreach International»

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

ԻՆՉՊԵՍ ՀԵՐՈՍԱԲԱՐ ԿՐԵՔ
ՁԵՐ ԽԱՉԸ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒԾՆԵՐԸ
ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Girls with Swords by Lisa Bevere, Armenian
© 2014 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Girls with Swords
Additional resources in Armenian by John & Lisa Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: LisaBevere@ymail.com

«Թրեր կրող կանայք», հեղինակ՝ Լիզա Բիվեր, հայերենով
© 2014 Մեսինջեր Ինտերնեյշնլ
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Girls with Swords» վերնագրով
Ջոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. LisaBevere@ymail.com

• • •

Նվիրում եմ բոլոր զինակից քույրերիս, ովքեր պատրաստ են բարձրացնել իրենց ձայները և կրել իրենց խաչերը:

Դուք քաջարի և առաքինի Պատերազմողի դուստրերն եք,
Ում հավիտենական, ստեղծարար Խոսքը ձեր բերանում՝
կենդանի և անպարտելի թուր է ձեր ձեռքերում:
Իր՝ նախադեպը չունեցող ժամանակաշրջանում,
ձեզ վստահվել է իրեն հավասարը չունեցող զենք:
Գործածեք այն նրբանկատ հնարամտությամբ,
գթասիրտ խորաթափանցությամբ և հաղթական սիրով
և վստահաբար հարվածեք:

«Այս պահից ի վեր՝ մարդիկ Իմ թրերն են»:
— Զաքարիա 9.13, (MSG)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 11

Սրամարտի տերմիններ 13

ՄԱՍ ՄԵԿ. ԸՆՏՐՎԱԾ

1. Դուք թիրախ եք 17

2. Թրի ծնունդը 31

3. Դուք կարող եք հերոսուհի լինել 49

4. Մարտադաշտը 67

5. Խաչը՝ որպես թուր 79

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ՍՊԱՌԱԶԻՆՎԱԾ

6. Դառնալ պատերազմող 97

7. Ինչպե՞ս թուր կռել 123

ՄԱՍ ԵՐԵՔ. ՋԻՆՎԱԾ

8. Թրե բառեր 139

9. Հունձքի թուրը 157

10. Լույսի թուրը 171

11. Երգի թուրը 185

12. Լռության թուրը 193

13. Ներման և վերականգնման թուրը 211

ՄԱՍ ՉՈՐՍ. ՈՒՂԱՐԿՎԱԾ

14. Կրել խաչը 231

Նշումներ..... 244

ՆԱԽԱԲԱՆ

Այլ բան է թուր ունենալը, և բոլորովին այլ բան է իմանալը, թե ինչպես գործածել այն:

Աստծո յուրաքանչյուր զավակի վստահվել է թուր՝ Հոգու թուրը: Մենք պատերազմողներ ենք, որոնց հանձնարարված է գործածել տիեզերքի ամենահզոր զենքը: Մեր Տերը և օրինակը՝ Հիսուս Քրիստոսը, Հոգու թուրն է, Ով մարմին դարձավ: Երկու հազարամյակ առաջ Նա գործածեց այս թուրը և փոխեց ամբողջ աշխարհը: Մեկ օր Նա կհնազանդեցնի բոլոր ազգերին նույն թրով: Բայց այժմ Նա պատվիրում է յուրաքանչյուրիս. «Ինչպես Հայրն է ուղարկել Ինձ, Ես նույնպես ուղարկում եմ ձեզ» (Հովհ. 20. 21, NKJV):

Ներկայումս բարձրանում է դուստրերի և (որդիների) սերունդ, որոնք ցուցադրելու են մեր Թագավորի փառահեղ ուժը: Այս պատերազմողները փոփոխություն կբերեն իրենց միջավայրում՝ հմտորեն գործածելով այն թուրը, որը վստահվել է իրենց: Աստված իմ կնոջը՝ Լիզային, տվել է հզոր ուղերձ, որը կսովորեցնի Աստծո դուստրերին և (որդիներին)՝ օգտագործել այն, ինչ նրանք արդեն ունեն՝ իրենց ազդեցության ոլորտում փոփոխություններ առաջացնելու համար:

Ես արտոնված եմ համարում ինձ, քանի որ երեսուն տարուց ավելի է՝ ամուսնացած եմայս հրաշալի կնոջ հետ, ով Աստծո ծառայող է: Ես ականատես եմ եղել նրա վերափոխմանը՝ բախումներից խուսափող, վախվորած և եկեղեցու երկչոտ այցելուից դեպի անվեհեր ու սքանչելի պատերազմողի՝ մեր Թագավորի դստեր: Նման կնոջը ճանաչելը և նրա հետ աշխատելը իրական արտոնություն է: Ես այնքա՜ն բան եմ սովորում այն ամենից, ինչ Աստված սովորեցնում է նրան:

Ես գիտեմ, որ այս գիրքը կսովորեցնի ձեզ՝ օգտագործել այն, ինչ դուք արդեն ունեք: Մի՛ եղեք այնպիսին, ով պարզապես թուր ունի: Եղեք հմուտ պատերազմող, ով փոփոխություն է բերում իր միջավայրում:

— Ջոն Բիվեր, հանրաճանաչ հեղինակ և քարոզիչ



Սրամարտի տերմիններ

Կրուիսե՛ (**croisé**). հարվածի խափանում և հակահարձակում մեկ սահուն շարժումով: Այն արգելափակում է հակառակորդի հարձակումը, շեղում է այն հրելու միջոցով և հարվածում է՝ առանց պոկվելու հակառակորդի սրաշեղբից:

Պատրաստության դիրք (**en garde**). պաշտպանական դիրք, որը նույնպես հարձակվողական է: Այն, փաստորեն, պատրաստության դիրք է:

Կեղծում (**feint**). կեղծ շարժում, որը փորձում է հարձակման պատասխան առաջացնել ձեր հակառակորդից՝ դրդելով նրան՝ մտածել, որ դուք պատրաստվում եք հարձակվել, թեև չեք պատրաստվում անել դա:

Հարձակում (**lunge**). հարձակվողական շարժում, որի նպատակը հարված հասցնելն է:

Ետմղում (**parry**). ձեր հակառակորդի սրաշեղբի ետ մղելը՝ պաշտպանական նպատակով:

Պատասխան հարված (**riposte**). հակահարձակում, որը հետևում է՝ հարվածը հաջողությամբ ետ մղելուն:

ՄԱՍ ՄԵԿ

ԸՆՏՐՎԱԾ

1

Դուք թիրախ եք

Քրիստոնեությունը պայքար է, ոչ թե երազ:

— Վենդել Ֆիլիպս

Միգուցե դուք մտածեք, թե ինչու եմ առաջարկում, որ բոլոր տարիքի կանայք զենքեր վերցնեն և միանան պայքարին, երբ աշխարհն այսօր արդեն հեղեղված է բռնությամբ: Հուսով եմ, որ ընթերցելով այս գիրքը՝ դուք կբացահայտեք շատ պատճառներ, թե ինչու այս աշխարհում չկա չեզոք տարածք: Մենք չենք ապրում թրի *բռնությամբ*, բայց եկել է ժամանակը, որ ապրենք թրի *ուժով*:

Թուր վերցնելու առաջին պատճառն այն է, որ անկախ նրանից՝ գիտակցում եք, թե՝ ոչ, դուք էպիկական պատերազմի մեջ եք, և Աստված չի ցանկանում, որ Իր դուստրերն անզեն լինեն կամ հանկարծակիի գան:

Այս մասին խոսելու մղումն առաջացավ անսպասելիորեն:

Երկու հազար տասը թվականի հուլիսի սկիզբն էր, ես նոր էի տուն վերադարձել ճանապարհորդությունից: Քարոզել էի հինգ տարբեր երկրներում ընդամենը չորս շաբաթվա ընթացքում: Բացի այդ՝ այն երկրները, որոնք ես այցելել էի, հեռու էին իրարից, այնպես որ, ճանապարհորդելը նշանակում էր՝ փոխել ժամային գոտիներ, գիշերը և ցերեկը, ինչպես նաև «ցատկոտել» Հյուսիսային և Հարավային Հեմփշիրների միջև:

Հյուծված օրգանիզմի բիոռիթմերի շարունակական խախտումից ես մի փոքր թույլ էի զգում, թեև արդեն երկրորդ օրն էր, որ տանն

էի: Ես տանը մենակ էի կրտսեր որդուս՝ Արդենի հետ, այնպես որ գնացի նրա մոտ: Տեսնելով ինձ՝ Արդենն ափով թփթփացրեց բազմոցին՝ հրավիրելով ինձ՝ միանալ իրեն և միասին ֆիլմ դիտել: Ես հրճվանքով մտածեցի որդուս գրկելու մասին և նստեցի նրան շատ մոտ՝ հարցնելով.

- Ի՞նչ ֆիլմ ենք դիտելու:

- *«Տերմինատորը»*, - պատասխանեց նա:

Մինչև ձեր վրդովմունքն արտահայտելը, մնացեք ինձ հետ: Ես հավանություն չեմ տալիս այդ ֆիլմին, և ոչ էլ առաջարկում եմ, որ դիտեք այն: Ես դիտել եմ խմբագրված հեռուստատեսային տարբերակը, և նույնիսկ այդ ժամանակ՝ ութսունական թվականներին, այն ահավոր էր: Բայց ես գտա արժեքավոր մի բան ծիծաղելի սանրվածքների, անճաշակ երաժշտության և վատ դերասանական խաղի մեջ, ինչով ցանկանում եմ կիսվել ձեզ հետ, որովհետև այն գերազանց կերպով ցույց է տալիս այս գիրքը գրելու *պատճառը*:

Եթե դուք ծանոթ չեք *«Տերմինատոր»* ֆիլմին, թույլ տվեք խիստ համառոտ պատմել: Այս պատմությունը Սառա Քոնորի մասին է: Նա մոտոցիկլետ վարող մատուցողուհի է, ով ապրում է ձանձրալի, միապաղաղ կյանքով՝ հուսալով, որ մեկ օր սերը կգտնի իրեն: Օրերը գրեթե ոչնչով չեն տարբերվում իրարից: Ցերեկը նա թխվածք և սուրճ է մատուցում, իսկ գիշերը հանդիպում է անծանոթ տղամարդկանց՝ հույս ունենալով, որ կգտնի իր հմայիչ արքայազնին: Ցերեկը նա աշխատում է, իսկ գիշերը՝ սպասում:

1980-ականների այս կանխատեսելի կյանքը կոպտորեն ընդհատվում է մի ռոբոտ-մարդասպանի կողմից, ով եկել է իր ապագայից: Մեր հերոսուհին՝ Սառան, ընդմիջման ժամանակ լսելով, որ իր անուն-ազգանունը ունեցող մի քանի կանայք սպանվել են, հասկանում է, որ իր կյանքը կարող է վտանգված լինել:

Ակնհայտ է, որ տերմինատորը, ում դերը կատարում էր դերասան Առնոլդ Շվարցենեգերը՝ Կալիֆոռնիա նահանգի նախկին նահանգապետը և Մարիա Շրայերի նախկին ամուսինը, ճանապարհորդել էր ժամանակով, և յուրաքանչյուր կին, ով կրում է Սառա Քոնոր անուն-ազգանունը, նրա թիրախն է: Թվում է՝ անկարելի է, որ այս ռոբոտ-մարդասպանը ձախողվի: Նա ոչ միայն ունի մեքենայի

ուժ և տեղեկություններ մշակելու կարողություն, այլև ամբողջովին համալրված է նորագույն զենքերով: Բացի բոլոր տեխնոլոգիական առավելություններից՝ նրա ձեռքում է ութսունական թվականների տեղեկատվական միջոցների գագաթնակետը՝ «Դեղին էջերից» պոկած մի թերթ, որտեղ գրված են բոլոր Սառա Քոնորների հեռախոսահամարները և հասցեները, ովքեր ապրում են իր նպատակային տարածքում: Մինչ ապագայից եկած տերմինատորնիր ցուցակից գտնում է նորանոր Սառաների, մեր հերոսուհին սկսում է մի փոքր անհանգստանալ:

Աշխատանքից հետո նա վերադառնում է իր բնակարանը և այս մասին կիսվում է ընկերուհիներից մեկի հետ: Հեռախոսի ինքնապատասխանիչից իմանալով, որ հանդիպումը հերթական անծանոթ տղամարդու հետ չի կայանալու՝ Սառան մի ակումբ է գնում. եթե վտանգն իրական է, այդտեղ նա կկարողանա թաքնվել ամբոխի մեջ: Տերմինատորն արագորեն գտնում է Սառային՝ նրա բնակարան կատարած կարճատև այցից հետո: Առնոլդը հայտնվում է ակումբում և սկսում է աջուձախ կրակել՝ խառնաշփոթ ստեղծելով: Անհաջող պարային շարժումները փոխարինվում են քաոսով, արյունով և գոչյուններով. մարդիկ սողում են հատակի վրայով՝ փորձելով փախչել: Բայց սպասե՛ք. այս դժգույն պատմության մեջ կա ևս մեկ անձնավորություն:

Նույն պահին, երբ հայտնվում է նրա մարդասպանը՝ ապագայից, նրա պահապանը, որը նույնպես ապագայից է, բացահայտում է իր ներկայությունը՝ անելով անհաղթահարելի առաջարկ. «Արի՛ ինձ հետ, եթե ցանկանում ես ապրել»:

Ընտրությունն ակնհայտ էր, այնպես որ, Սառան երկար չի մտածում. նա ցանկանում է ապրել: Նա դուրս է վազում ակումբից, ցատկում է ինչ-որ մեքենայի մեջ բոլորովին օտար մարդու հետ, և երկուսը միասին փորձում են փախչել: Բայցևայնպես, տերմինատորը չի հանձնվում: Սկսվում է արագընթաց հետապնդում. փամփուշտները փշրում են մեքենայի պատուհանների ապակիները և հյուծում Սառայի նյարդերը: Ուր էլ գնան և ինչ էլ անեն, թվում է՝ նրանք չեն կարողանում ազատվել իրեն հետապնդողից:

Այս մատուցողուհին, ով հանդարտ կյանք էր վարում և

ցանկանում էր արժանավոր ընկեր գտնել, նույնիսկ գաղափար չունի, որ այս էպիկական պատերազմը ծավալվում է իր շուրջը: Մինչ փամփուշտները թռչում են, և մեքենաներն իրար են բախվում, նրա պահապանն սկսում է պատմել իրեն, *թե ով է ինքը*: Նա բացատրում է, որ ապագայում նա հերոսուհի է դառնալու: Մի ամբողջ բանակ պատերազմ է վարելու՝ սպառազինված այն կանխատեսումներով և մարտավարություններով, որոնք նա գրի է առել և փոխանցել է իր որդուն: Ապագայում նա մեծ դեր է կատարելուայն հերոսական պայքարի մեջ, որը մղվելու է ընդդեմ ամբողջ մարդկության թշնամու:

Սառան պարզապես չի կարողանում հավատալ, որ նա այս անհեթեթ պատմության մասնակիցն է, և համոզված է, որ նրան շփոթել են ինչ-որ մեկի հետ: Կարիք չկա դիտարկել իրեն որպես սպառնալիք՝ ներկայի կամ ապագայի համար: Փորձելով պարզություն և ողջամտություն բերել ստեղծված իրավիճակում՝ Սառան մերժում է ապագայից եկած իր պահապանի խոսքերը: Նա հերոսուհի չէ… նա պարզապես մատուցողուհի է: Նա նույնիսկ ընկեր չունի, այնպես որ, որտեղի՞ց որդի ունենա: Այս մղձավանջը սարսափելի սխալմունք է. նրան շփոթել են մեկ այլ մարդու հետ:

Այնուամենայնիվ, նրա պահապանը պնդում է, որ հենց նա է ճիշտ Սառա Քոնորը՝ հերոսուհին, և որ իր առաքելությունն է՝ պատրաստել և պաշտպանել նրան: Բնականորեն ճնշվելով և հանկարծ կորցնելով ինքնավերահսկողությունը՝ Սառան բղավում է. «Ես ոչինչ չե՛մ արել», ինչին նրա պահապանը պատասխանում է. «Ո՛չ, բայց դու կանես»:

Այդ դրվագի ժամանակ, որդուս հետ բազմոցին նստած, ուշադրությունս գամվեց էկրանին: Այս «ո՛չ, բայց դու կանես» արտահայտությունը՝ անցած տասնամյակներից, ներխուժեց իմ ներկան: Ես հասկացա, որ հաճախ մեր թշնամին գիտի, թե ով ենք մենք լինելու, նախքան կհայտնաբերենք դա: Եվ ժամանակն է, որ յուրաքանչյուրս գիտակցենք այն երկու ճշմարտությունները, որոնք Սառան հասկացավ այդ երեկո: Սիրելի դո՛ւստր.

1. Դուք թիրախ եք:
2. Դուք կարող եք հերոսուհի լինել:

Ես ասացի՝ *կարո՛ղ եք*, որովհետև ընտրությունն, ի վերջո, ձե՛րն է:

Թիրախ

Նախ՝ խոսենք այն մասին, որ դուք թիրախ եք:

Եթե դուք քրիստոնյա եք, ուրեմն սատանայի թիրախն եք, ով մեր անձերի թշնամին է և խավարի իշխանը: Սա ձեր հոգևոր դիրքն է, որը դուք չեք կարող փոխել: Գոյություն ունի խավարի շատ իրական և լավ կազմակերպված ուժ երկրի վրա, որը պայքարում է նրանց դեմ, ովքեր ներկայացնում են Աստծո լույսը և կյանքը:

Այսպիսով, կարևոր է՝ իմանաք, թե ի՞նչ է նշանակում լինել թիրախ:

Ահա մեր համատեքստի այն բառերը, որոնք նկարագրում են «թիրախ» բառի իմաստը. *նպատակ, մտադրություն, առաջադրանք, կենտրոնացում և դիտավորություն:*

Սատանայի նպատակն է՝ շեղել ձեզ նրանից, թե *ով եք դուք իրականում*, և թե *որն է ձեր կյանքի ճշմարիտ նպատակը:* Նա մտադրված է հրապուրել ձեզ՝ հեռացնելով զորության, կյանքի և իշխանության ճանապարհից դեպի միտումնավոր կործանման ուղին:

Մինչև խոսելը այն մասին, որ դուք կարող եք հերոսուհի լինել, ես ցանկանում եմ, որ հասկանաք մի բան, ինչը, միգուցե, նոր և օտար թվա ձեզ, և ինչը շատ ավելի լուրջ է ցանկացած ֆիլմի սյուժեից: Թշնամին, ով ապրում է խավարում և մարդասպան է, արդեն հասկացել է, թե ով եք դուք: Նա գիտի ձեր ներուժը և պարբերաբար փորձում է խարխլել ձեր ապագան: Ես հավատում եմ, որ *ձեր կյանքի հարձակումները շատ ավելի կապված են նրա հետ, թե ինչպիսին դուք կարող եք լինել ապագայում, քան՝ թե ինչպիսին եք եղել անցյալում:*

Ինչպես մարդասպանը *«Տերմինատոր»* ֆիլմում, թշնամին գիտի ձեր անունը: Թույլ մի՛ տվեք, որ դա վախեցնի ձեզ: Խորը շունչ քաշեք և հասկացեք, որ դուք ապրում եք հատուկ նպատակով: Խուճապի մի՛ մատնվեք և մի՛ համարեք, որ այս ամենը ուղղված է անձամբ ձեր դեմ, որովհետև դա ճիշտ չէ: Այս հարձակումը մեկի և բոլորի դեմ է: Մեր անձերի թշնամու համար սա անձնական հարց չէ, այլ իր գործն է:

Ոչ ոք չի կազմակերպում լայնածավալ և համակարգված

հարձակում ինչ-որ բանի դեմ, ինչը սպառնալիք չի համարվում: Ձեր և իմ անունը նույնն է՝ քրիստոնյա: Այս անունը շատ ավելին է, քան պատկանելիությունը որևէ կրոնական խմբի. այն նշանակում է՝ «օծված»: Դուք Բարձրյալ Աստծո սիրելի արքայադուստրն եք: Միգուցե թշնամու մոտեցումը յուրաքանչյուրիս կարող է տարբեր թվալ, բայց նա կանի այն ամենը, ինչն իր ուժերի մեջ է, որպեսզի խոչընդոտի կամ կասեցնի ձեր աճը և շեղի ձեզ երկնային կոչումից: Չկան մեկուսացված և կղզիացած դուստրեր, ովքեր կարող են լիովին խուսափել նրա հարձակումներից: Մի՛ մտածեք, որ ձեր տարիքը, ֆինանսական կամ ամուսնական կարգավիճակը կազատեն ձեզ այս հարձակումից:

Այս ամենը կապված չէ ձեզ հետ: Այս ամենը կապված չէ ինձ հետ: Անկեղծ ասած՝ սա նույնիսկ մեր պատերազմը չէ: Պատերազմը Տիրոջինն է, իսկ մենք Նրա լուսեղեն զենքերն ենք խավարի աշխարհում:

Մարդկային պատմության ամբողջ ընթացքը կարող է կախված լինել առանձին անհատի, նույնիսկ՝ հասարակ մարդու սրտի փոփոխությունից... Որովհետև պայքարը բարու և չարի միջև ծավալվում է հենց առանձին անհատի մեկուսի մտքում՝ ավարտվելով հաղթանակով կամ պարտությամբ:

— Մ. Սքոթ Փեք

Պատերազմող կանայք

Այն փաստը, որ դուք կին եք, դարձնում է ձեզ ավելի առանձնահատուկ թիրախ և ավելի արժանավոր «հասցեատեր» սատանայի թշնամանքի համար:

«Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը,
և քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը...» (Ծննդ. 3.15):

Թշնամանքը՝ խորը արմատացած ատելություն և անհաշտ պայքար է: Այն անչափ խորը խզում է, որն ավելի է լայնանում և խորանում ամեն եկող սերնդի հետ: Սատանայի թշնամանքը և ատելու-

թյունն ավելի են խորանում ամեն սերնդի հետ, քանի որ նրա ժամանակն ավարտվում է, և գործելու հրատապությունն ավելի է մեծանում: Նրա հարձակումն ընդդեմ կանանց և երեխաների՝ երբեք չի եղել այն աստիճան կատաղի, բացահայտ և լայնամասշտաբ, որքան այսօր:

Այս խոսքերի անհերքելի ապացույցն այն տվյալներն են, ըստ որոնց, ավելի քան հիսուն միլիոն կին ներկայումս այս երկրի վրա չէ: Ի՞նչ նկատի ունեմ՝ ասելով սա. այս դուստրերը *չկան*, և նրանց անկարելի է գտնել:

Նրանց անհետացման գլխավոր պատճառը սեռասպանությունն է: Ցեղասպանությունն ուղղված է ռասայական, ազգային, քաղաքական կամ մշակութային խմբերին. սեռասպանությունն ուղղված է որևէ սեռի: Իր՝ վերջերս գրված գրքում, որը կոչվում է *«Անբնական ընտրություն»*, հեղինակ Մառա Հվիստենդալը մեջբերում է մի վիճակագրություն, որը բացահայտում է այս բարբարոսությունը. ենթադրվում է, որ ավելի քան 160 միլիոն աղջիկ երեխաներ Ասիայում այդպես էլ չեն տեսել լույս աշխարհը, քանի որ նրանց ծնունդը կանխվել է արհեստական վիժեցմամբ[1]:

Եթե դուք դուստր եք և ապրում եք Չինաստանում, Հնդկաստանում և Պակիստանում, ինչպես նաև Աֆրիկա մայրցամաքում, ձեր կյանքին վտանգ է սպառնում: Սա կարող է նշանակել, որ միգուցե դուք բռնության ենթարկվեք, վաճառվեք, անտեսված լինեք կամ դառնաք զոհ՝ սեփական ընտանիքի անարգանքը մաքրելու համար:

Սիրելի դո՛ւստր, մի՛ կարծեք, որ դուք ապահով եք զուտ այն պատճառով, որ չեք ապրում որևէ զարգացող երկրում: Թվերը չեն ստում: Ձեր ծննդավայրը պարզապես ցույց է տալիս, թե ինչ տեսակի թիրախ եք դուք լինելու: Թշնամին՝ մարդասպանը, կմոտենա ձեզ այլ կողմից, և համոզված եմ՝ նա արդեն մեծ ջանքեր է անում, որպեսզի շփոթեցնի ձեզ, և դուք այդպես էլ ծնունդ չտաք այն ծրագրին, որն Աստված սահմանել է ձեզ համար:

Ես չեմ կիսվում այս ամենով՝ ձեզ վախեցնելու համար: Ես ցանկանում եմ, որ դուք իմանաք ձեր նշանակությունը այս պատմական ժամանակահատվածում: Որպես այս սերնդի մեջ ապրող դուստր՝ դուք թիրախ եք, բայց դուք կարող եք որոշում կայացնել, որ

հերոսուհի եք լինելու: Եթե չհասկանաք, թե իրականում ինչ է տեղի ունենում, դուք կընդունեք հարձակումներն ընդդեմ ձեր սեռի կամ հավատքի՝ անձնական մակարդակի վրա, և կհակազդեք դրանց համապատասխան ձևով: Բայց այս ամենը շատ ավելի մեծ է, քան յուրաքանչյուրս: Դուք չեք կարող ինքնուրույն պայքարել այս պատերազմում, և կարիք էլ չկա անելու դա: Այս պայքարի համար անհրաժեշտ է երկնային մարտավարություն և օգնություն: Թեև ամեն ինչ սկսվում է անձնական որոշումից, բայց միայն դա դեռ բավական չէ. մենք պետք է անհատապես զինված լինենք հավիտենական զենքերով և սովորենք համագործակցել այլ մարդկանց հետ:

Որքան էլ սարսափելի լինեն թվերը, դրանք ընդամենը ակնարկում են ավելի մեծ խավարի մասին: Ժամանակն է, որ բարձրացնեք ձեր աչքերը և տրամադրեք ձեր ձայնը նրան, ինչ երկինքը կցանկանա խոսել այս դատարկությանը: Պատմության սյուժեն արդեն որոշված է: Մի կողմից աննահանջև դաժան թշնամին մշտապես ձգտում է կործանել ձեզ, իսկ մյուս կողմից՝ փառահեղ Արքայազնը, ով սիրում է ձեզ հավերժական սիրով, մտադրվել է, որ դուք իրականացնեք այն ամենը, ինչի համար Նա ստեղծել է ձեզ: Հիսուսը՝ մեր երկնային Արքայազնը, մշտապես սիրելու է ձեզ: Նրա սերն անվերջ է և ավելի աննահանջ, քան մեր հակառակորդի թշնամությունը, ով ցանկանում է սպանել ձեզ: Հարցն այն է, թե ինչ դիրքորոշում կունենաք այս պայքարում: Արդյոք կլինեք անզեն քաղաքացիական, ռազմական գերուհի՞, թե՞ հերոսուհի:

Մինչ որոշում եք կայացնում, խնդրում եմ, իմացե՛ք, որ գոյություն չունի ապահով, չեզոք դիրք: Ընդամենը ժամանակի հարց է, թե երբ դուք հարկադրված կլինեք միանալ այս կամ այն կողմին: Միշտ ավելի լավ է նախապես որոշել սեփական դիրքորոշումը՝ վճռականորեն մտադրվելով հետևել դրան, քան թույլ տալ, որ այն որոշվի ձեր փոխարեն: Հիշեք՝ *Աստված ընտրեց ձեզ նույնիսկ մինչև այս երկիրն ստեղծելը*:

> «Որով էլ ստացանք ժառանգությունը մենք՝ առաջուց որոշված լինելով, Նրա առաջադրության պես, որ ամեն բան հաջողում

> է Իր կամքի խորհուրդների պես: Որ մենք գովասանք լինենք Նրա փառքին, որ առաջուց մեր հույսը Քրիստոսի վրա ենք դրել: Որ Նրանում և դուք հուսացիք, երբ որ ճշմարտության խոսքը լսեցիք՝ ձեր փրկության Ավետարանը, որին էլ երբ որ հավատացիք, խոստմունքի Սուրբ Հոգով կնքվեցիք: Որ մեր ժառանգության գրավն է, մինչև ստացվածքի փրկությունը՝ Նրա փառաց գովասանքի համար» (Եփես. 1. 11-14):

Իմ կարծիքով, ի վերջո ամեն ինչ շատ պարզ է լինելու. տաք կամ սառը, ուժեղ կամ թույլ, գործուն կամ անգործ, զինվոր կամ դավաճան, հերոս կամ զոհ:

Ես գիտեմ, որ շատ պարզ եմ ներկայացնում այս ընտրությունները, որովհետև դրանց նպատակն է՝ ցույց տալ, թե որքան կարևոր է մեր՝ կանանց ներկա դիրքորոշումը: Ես չեմ ցանկանում ասել, որ մենք, օրինակ, սեռասպանության անմիջական սպառնալիքի ներքո ենք, այլ ընդգծում եմ, թե որքան կարևոր է, որ մենք գործուն քայլեր ձեռնարկենք: Մենք չենք ապրում այնպիսի ժամանակներում, երբ կարելի է անտեղյակ կամ անզեն լինել, և հենց սա՛ է այս գրքի նպատակը:

Այս գրքի վրա աշխատելու ընթացքում կրկին ընթերցեցի Կ. Ս. Լյուիսի *«Խառնակչի նամակները»* գիրքը: Այն մտացածին նամակագրություն է ցածր աստիճան ունեցող դևի և նրա վերակացուի միջև, որի ընթացքում նրանք փորձում են ծուղակը գցել մի երիտասարդ տղամարդու: Այս գիրքը հանճարեղ է նրանով, որ ցույց է տալիս թշնամու տեսանկյունը և այն, թե ինչպես է նա կեղծում և աղավաղում ճշմարտությունը՝ համոզելով մեզ, որ դուրս գանք Աստծո դեմ:

Մի հատվածում դևերը պարծենում են նրանով, թե ինչպես են կարողանում աղավաղել կնոջ դերը. «Ամեն ինչ ասված է մեկ աղոթքով, որը, ինչպես ինձ ասացին, վերջերս աղոթել է մի երիտասարդ աղջիկ. «Աստվա՛ծ, դարձրո՛ւ ինձ նորմալ, քսաներորդ դարի աղջիկ»: Շնորհիվ մեր ջանքերի, սա նշանակելու է՝ «Դարձրու ինձ թեթևաբարո, հիմար և պորտաբույծ»»[2]:

Ես ցանկանում եմ լաց լինել այս մարգարեական հեգնանքի վրա, որը գրվել է դեռ 1942 թվականին, քանի որ այն ճշմարտապես

ցույց է տալիս, թե ինչ վիճակում են մերօրյաշատ դուստրեր: Կարդալով այս մեջբերումը՝ ես ուշադրություն դարձրի չորս բառի վրա. «նորմալ», «թեթևաբարո», «հիմար» և «պորտաբույծ»:

Նախ՝ խոսենք նորմալ լինելու մասին: Վերստին ծնվելով՝ դուք ետևում եք թողնում նորմալ լինելը: Սա չի նշանակում, որ դուք տարօրինակ կամ աննորմալ եք դառնում, այլ, որ ծածկվելով Նրա արդարությամբ՝ դուք ազատվում եք միջակ և սովորական կյանքից: Դուք շարունակում եք ձեր երկրային կյանքի ընթացքը, բայց՝ որպես հավիտենության դուստր:

Հաջորդը՝ *թեթևաբարո* բառն է, որը նշանակում է գայթակղեցնող կամ անբարոյական կին: Այս բառի հոմանիշներից են՝ *թափառող*, *թեթևամիտ*, *պոռնիկ* և *քած:* Ցավոք, մեր քսանմեկերորդ դարի երգերը հենց այսպիսին են ներկայացնում կանանց:

Կ. Ս. Լյուիսի գրքում *հիմար* բառը մատնանշում է մի տերմին, որը ներմուծվեց քսաներորդ դարի սկզբում՝ նկարագրելու համար այնպիսի մարդու, ով ութից տասներկու տարեկան երեխայի մտավոր զարգացման գործակից ունի: Կլայվ Լյուիսի համատեքստում սա նշանակում է դուստրերի մի սերունդ, որը հրաժարվում է զարգանալ և վերափոխվել աղջկական քմահաճությունից դեպի կանացի իմաստությունը:

Եվ, ի վերջո, *պորտաբույծ* բառը նկարագրում է ինչ-որ մեկի, ով ապրում է մեկ այլ մարդու աջակցությամբ և նրա հաշվին՝ առանց՝ որևէ կերպով հատուցելու: Սա լիովին հակառակ է նրան, թե ինչպիսին պետք է լինեն Աստծո դուստրերը: Մենք պետք է ապրենք՝ աջակցելով այլ մարդկանց, և հնարավորություններ ընձեռենք զրկյալներին, ոչ թե ինքներս զրկենք մարդկանց: Բայց նայեք կանանց ամսագրերի կազմերին, որոնք շարված են մթերային խանութների դրամարկղերի մոտ: Տարիքը ներկայացվում է որպես հիվանդություն, իսկ թռուցիկ երիտասարդությունը և բացահայտ անհասունությունը գովերգվում են: Համարձակ սեռականությունը փոխարինում է ճշմարիտ մտերմությանը, և մեզ խրախուսում են ապրել ճչացող շռայլության մեջ՝ խլելով այն ամենը, ինչ կարող ենք: Ահա թե որքան ենք մենք ընկել:

Նորմալ կյանքը լավ ծառայություն չմատուցեց մեզ, և ակնհայտ

է, որ մեր թշնամին գիտի՝ մենք ստեղծված ենք ավելիի համար: Ո՞ւմ մենք թույլ կտանք ձևավորել մեր աղոթքները: Մեր հանգամանքների ճնշումները չեն կարող ձևավորել մեր աղոթքները: Մենք չենք կարող վստահել այն բառերին, որոնք հուշում է մեր մշակույթը: Մեր աղոթքները պետք է կազմվեն Երկնքի կողմից: Մեր կյանքերի ճարտարապետը և հեղինակը՝ երկնքի և երկրի Արարիչն է: Ժամանակն է, որ քսանմեկերորդ դարի դուստրերը կրկնեն Երկնքի բառերը: Միգուցե այն փափագը, որը ձեզանում է, այնքան մեծ է, որ դուք չեք կարողանում ձևակերպել բառերով, բայց հենց սա է պատճառը, որ դուք պետք է թուր ունենաք:

Ես հավատում եմ, որ այս կամ այն կերպով դուք ձգտում եք լինել Բարձրյալ Աստծո արտասովոր և քաջարի դուստրը, ով ունի առաքինի վարք, ով լիարժեք և հասուն անձնավորություն է, և ում կյանքի նպատակը՝ այլ մարդկանց կյանքերը բարելավելն է:

Այս գրքի նպատակներից մեկն է՝ օգնել ձեզ, որ պատրաստեք համարձակ, հավատքով լի աղոթքներ (թրեր), որոնք հատկապես կվերաբերեն այն պատմական ժամանակահատվածին, որում դուք ապրում եք:

Հին մարտավարություններ

Հիմա վախով լցվելու և նահանջելու ժամանակը չէ, այլ՝ բարձրանալու և սիրո մեջ բարգավաճելու ժամանակն է: Երբ քրիստոնյա դարձա, իմացա, որ Աստված ծրագիր ունի կյանքիս համար: Դա պարզապես նոր նշանակման վայր չէ հանդերձյալ կյանքում: Ես հասկացա, որ իմ կյանքը կարևոր է հենց հիմա: Ես գնվել էի մեծ գնով. իմ կյանքն այլևս չէր պատկանում ինձ, և ես չպետք է վատնեի այն: Աստված ցանկանում էր, որ ես դառնայի ճիշտ այնպիսին, ինչպիսին Նա ստեղծել է ինձ:

Հիմա վախով լցվելու և նահանջելու ժամանակը չէ, այլ՝ բարձրանալու և սիրո մեջ բարգավաճելու ժամանակն է:

Դարձեք այնպիսին, ինչպիսին Աստված ստեղծել է ձեզ. դա լավագույն հարձակումն է թշնամու մարտավարության վրա և

լավագույն պաշտպանությունը՝ դրանից: Ակնհայտ է, որ նա չի փորձում արգելել ձեզ, որ շնչեք: Ժամանակն է թույլ չտալ, որ նա խեղդի այն հոգևոր սերմը, որն Աստված ցանել է ձեր ներսում: Թշնամին ճնշում է մեզ, քանի որ վախենում է նրանից, թե ինչպիսին մենք կարող ենք դառնալ: Հիշե՛ք. այն մարդիկ, ովքեր կեղեքում և ճնշում են, խորամանկ են, բայց նրանք նույնպես վախեցած են շատ ավելի հաճախ, քան կարող է թվալ: Ինչ-որ առումով նրանք վախենում են նրանցից, ում ցանկանում են ճնշել: Նրանք վախենում են, որ ձեր ուժը կարող է վտանգի ենթարկել իրենց:

> «Եկեք իմաստությամբ վարվենք նրանց դեմ, միգուցե շատանան և լինի, որ երբ պատերազմ պատահի, և նրանք էլ մեր թշնամիների հետ միանան և մեզ դեմ պատերազմեն և այս երկրից դուրս գնան: Նրա համար գործավարներ դրին նրանց վրա, որ չարչարեն նրանց իրենց ծանր գործերով, և շտեմարանի քաղաքներ շինեցին Փարավոնի համար՝ Փիթոմը և Ռամզեսը: *Եվ որչափ որ չարչարում էին նրանց, այնչափ է՛լ ավելի շատանում և աճում էին, և նրանք Իսրայելի որդիներից երկյուղ կրեցին»* (Ելից 1.10-12, շեղագիրն ավելացված է):

Երբ փարավոնի ճնշող մարտավարությունը չկարողացավ թուլացնել իսրայելցիների ուժը, նա դիմեց ավելի վճռական միջոցների՝ սեռասպանության և մանկասպանության: Այնպես որ, այս մարտավարությունները նոր չեն թշնամու համար, այլ հին և դաժան պատմություն ունեն: Աստվածաշնչում նկարագրված է սեռասպանության երկու դեպք: Առաջինը Ելից գրքում է, երբ Եգիպտոսի թագավորը հրամայեց եբրայեցի մանկաբարձներին.

> «Եբրայեցի կանանց ծնեցնելիս՝ նստարանների վրա նայեք. եթե տղա է՝ մեռցրեք նրան, և եթե աղջիկ է՝ թող ապրի»:
> (Ելից 1.16)

Կարևոր է նշել, որ փարավոնը պատվիրեց նորածին տղաների մահը անմիջապես Մովսեսի ծնունդից առաջ: Մի՞թե տրամաբանական չէր, որ եկել էր նոր հերոսի ծննդյան ժամանակը: Մի՞թե թշնամին չէր վախենում հնարավոր ապստամբությունից: Փարա-

վոնը դիմեց արմատական, համակարգված քայլերի, որպեսզի զրոյացներ այս երկու հավանականությունները: Այնուամենայնիվ, պատմությունը ցույց է տալիս, որ այս լայնածավալ գրոհը չկարողացավ կանգնեցնել արու զավակ Մովսեսի ծնունդը: Ճակատագրի հեգնանքով, նա ապահով մեծացավ փարավոնի տանը՝ որպես Եգիպտոսի որդի:

Այն բանից հետո, երբ Մովսեսը հասկացավ, թե ով էր ինքը և ինչի համար էր ծնվել, Աստված օգտագործեց անապատը, որպեսզի վերածեր նրան փրկչի: Մովսեսն ազատության առաջնորդեց իսրայելցիներին երեքհարյուրամյա եգիպտական ստրկությունից հետո: Թեև փարավոնն սպանեց որդիների մի ամբողջ սերնդի (բանակ), Աստված կատարեց պատասխան գրոհը՝ բարձրացնելով մեկ առաջնորդի, ով ազատեց Իր ժողովրդին: Բացի այդ՝ Նա անձամբ կատաղի պայքարեց Իր ժողովրդի համար:

Հաջորդ դեպքը Սուրբ գրքում, երբ թշնամին դիմեց նորածին տղաների սեռասպանությանը, Հիսուսի ծննդյան ժամանակ էր: Երբ մոգերը պատասխան չուղարկեցին Հերովդեսին, նա հրաման արձակեց մինչև երկու տարեկան բոլոր հրեա տղա երեխաների սպանության մասին:

> «Այն ժամանակ Հերովդեսը, տեսնելով, որ խաբվեց մոգերից, շատ բարկացավ և ուղարկեց, կոտորեց այն բոլոր երեխաներին, որ Բեթլեհեմում և նրա չորս կողմերում էին՝ երկու տարեկաններին և նրանցից փոքրերին՝ այն ժամանակին նայելով, որ ստուգեց մոգերից: Այն ժամանակ կատարվեց Երեմիա մարգարեի ձեռքով ասվածը, որ ասում է՝
> ձայն լսվեց Ռամայի մեջ՝
> ողբ, լաց և կոծ:
> Ռաքելը իր որդիների վրա լաց էր լինում
> և չէր կամենում մխիթարվել, *որովհետև չկան*»:
> (Մատթ. 2.16-18, շեղագիրն ավելացված է)

Ինչպիսի՜ հետապնդող բառեր… *որովհետև չկան:* Այս երկու աստվածաշնչյան պատմությունների մեջ զայրացած երկրային թագավորները բացահայտ կերպով սպանեցին նորածին տղաներին, քանի որ վախենում էին, որ այդ երեխաները կարող էին կրել Աստծո

նախասահմանությունը: Ես համոզված եմ՝ մենք կրկին գտնվում ենք կեղեքումից և գերությունից ազատվելու սահմանագծին, բայց այս անգամ թշնամու հարձակման թիրախն աղջիկներն են, ոչ թե տղաները:

> «Եվ վիշապը բարկացավ այն կնոջ վրա և գնաց պատերազմ անելու նրա մյուս զավակների հետ, որ Աստծո պատվիրանները պահում են և Հիսուսի վկայությունն ունեն»: (Հայտն. 12.17)

Ուշադրություն դարձրեք վախեցած երկրային թագավորների և սատանայի՝ վախեցած վիշապի դրդապատճառների նմանությանը: Երկուսն էլ վախենում են, որ կզրկվեն իշխանությունից, երկուսն էլ զայրացած են, և երկուսն էլ պատերազմում են մարդկանց և նրանց զավակների դեմ:

Նրանք, ովքեր զոհ չեն դարձել այս պայքարում, դեռ հնարավորություն ունեն ընտրելու հերոսի ճանապարհը: Այս գրքի նպատակն է, որ ինքներդ ձեզ նայեք որպես զինված և զորացված անձնավորության, որովհետև, երբ մենք բարձրանում ենք զորության մեջ, մեր Բարձրյալ Աստված դուրս է գալիս թշնամու դեմ:

2

Թրի ծնունդը

Եվ յուրաքանչյուրը կանգնած է՝ իր դուրս քաշած թրի լույսը դեմքին, պատրաստ՝ անելու այն, ինչ միայն հերոսը կարող է անել:

— Էլիզաբեթ Բարեթ Բրաունինգ

Միգուցե հարցնեք. ինչո՞ւ թուր: Եթե նպատակն ինքնապաշտպանությունն է, մի՞թե ավելի լավ չէ ընտրել ատրճանակ՝ հեռավորության և դիպուկության համար: Իսկ եթե թշնամու հարձակումը մեծամասշտաբ է, ինչո՞ւ չպատասխանել մասսայական ոչնչացման զենքերով: Մի՞թե թրերը մի փոքր հնաոճ չեն:

Թրերը պատմության մեջ եղել են հազարամյակներ շարունակ և թողել են իրենց ռոմանտիկ պատկերները մեր մտքերում: Այն տեսքով, որով թրերը ծանոթ են մեզ, առաջին անգամ պատրաստվել են Բրոնզե դարում՝ մոտավորապես մ. թ. ա. III հազարամյակում: Այս գործիքն առաջացել է հասարակ նիզակից և դանակից այն ժամանակ, երբ դարբինները բրոնզը խառնել են պղնձի հետ: Այնուամենայնիվ, այս նկարագրությունը լիարժեք չէ, քանի որ այս դեպքում խոսքը միայն մեր աշխարհում ծնված թրերի մասին է: Թուրն, իրականում, շատ ավելի հին գործիք է, քան մենք կարող ենք որոշել ժամանակային առումով:

Սուրբ գրքից մենք իմանում ենք, որ մարդկության ժամանակաշրջանից շատ առաջ թրերն ստեղծվել էին Երկնքի դարբնոցներում, և հրեշտակներից ամենազորավորները կրել են այնպիսի թրեր, որոնց նմանը մենք դեռ չենք տեսել: Առաջին թուրը, որի

մասին մենք կարդում ենք Աստվածաշնչում, պատրաստված էր բոցեղեն կրակից և ինքն իրեն պտտվում էր զորավոր թևավոր քերովբեի ձեռքերում:

> «Եվ արտաքսեց Ադամին, և Եդեմի պարտեզի դիմացի կողմից դրեց քերովբեներին և *ամեն կողմ դարձող բոցեղեն սուրը*՝ կենաց ծառի ճանապարհը պահելու համար» (Ծննդ. 3.24, շեղագիրն ավելացված է):

Պատկերացրե՞ք դա: Այդ պահապան թուրը շարժվում էր: Այն կրակե արգելք էր, որը հսկում էր ճանապարհը դեպի Կյանքի ծառը, որպեսզի արտաքսված Ադամը և Եվան ոչ մի դեպքում չպարզեին իրենց ձեռքը և չվերցնեին այս ծառի պտուղը, որը Եդեմում էր:

Աստվածաշնչյան պատմության ամբողջ ընթացքում մենք տեսնում ենք թրեր առանձին մարդկանց և ամբողջ բանակների ձեռքերում՝ բարի և չար նպատակներով: Վերջին սուրբգրային հիշատակումը զորավոր թրի մասին՝ որպես իշխանություն հաստատելու և դատաստան անելու եզրափակիչ միջոց, Հայտնություն գրքում է:

> «Եվ Նրա բերանից դուրս է գալիս *սրած սուր*, որ նրանով զարկի ազգերին, և Ինքը հովվում է նրանց երկաթե գավազանով, և Ինքը կոխում է Ամենակարող Աստծո բարկության և սրտմտության գինու հնձանը: Եվ Իր հանդերձի վրա և Իր ազդրի վրա գրված էր անունը. ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՏԵՐԵՐԻ ՏԵՐ» (Հայտն. 19.15,16, շեղագիրն ավելացված է):

Այսպիսով, թուրը ներկա է եղել մարդկության պատմության սկզբից մինչև ժամանակվա ավարտը՝ այն տեսքով, որով մենք ճանաչում ենք այն: Մենք ապրում ենք այն ժամանակահատվածում, որը շատ ավելի մոտ է հաղթական ավարտին, քան ցավալի սկզբին: Մեր ժամանակահատվածը նմանվում է կնոջ ծննդյան ցավերի սաստկացմանը՝ լարված անցումային ջանքերին, որոնք նախորդում են ծննդյանը: Այս ժամանակահատվածում մեզ անհրաժեշտ է թուր ունենալ: Մենք հրեշտակային պահապաններ չենք, այնպես որ կարիք չկա պատկերացնել, որ երբևէ կօգտագործենք թուրը, որպեսզի մերժենք ինչ-որ մեկի մուտքն Աստծո բարության

պարտեզի մեջ: Նմանապես, մենք չպետք է կատարենք դատավորի դերը, քանի որ այդ իրավունքը պատկանում է մեր թագավորների Թագավորին: Թրերը Աստծո դուստրերի ձեռքերում կյանքի և լույսի գործիքներ են:

Աստծո թուրը

Աստծո Խոսքը՝ Աստծո թուրն է: Մի՞թե սա հրաշալի չէ: Պողոսը գրում է Եփեսացիների թղթում. *«...և Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է»* (Եփես. 6. 17):

Այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք կամ կունենանք, թաքնված է Նրա Խոսքում, և մենք ուսումնասիրում ենք այն՝ պահված գանձ որոնողների պես:

Վերջերս աղոթքի ժամանակ ես ուժեղ զգացողություն ունեցա, որ Աստծո դուստրերից չափազանց շատերն այս սերնդի մեջ անզեն են: Անզեն լինելը չի նշանակումմիայն, որ նրանք վատ սպառազինված և անպատրաստ են: Սա նույնպես նշանակում է, որ նրանց սպառնում է խաբեության վտանգը, և նրանք անհավատալիորեն խոցելի են դրա համար: Այս վերջին օրերին մեր թշնամին կուժգնացնի իր հարձակումները կեղծ ուսուցիչների և կեղծ եղբայրների երկսայրի թրի միջոցով՝ միաժամանակ օգտագործելով ինքնախաբեությունը: Նոր կտակարանում շատ զգուշացումներ կան խաբեության և կեղծ ուսուցիչների մասին: Մատթեոսի Ավետարանը և Հովհաննեսի առաջին ուղերձն զգուշացնում են մեզ:

> «Եվ շատ սուտ մարգարեներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն» (Մատթ. 24.11):

> «Սիրելինե՛ր, ամեն հոգու մի՛ հավատացեք, այլ փորձեք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են, որովհետև շատ սուտ մարգարեներ են դուրս եկել աշխարհ» (Ա Հովհ. 4.1):

Ինչպե՞ս պայքարել խաբեության կամ մոլորության դեմ: Մենք պետք է համեմատենք մարդկանց խոսքերը Աստծո Խոսքի

ճշմարտության հետ: Երբ Աստծո Խոսքի երկաթն ավելի սրի մեր կյանքերը, մենք ավելի զգայուն կդառնանք ճշմարտության հանդեպ: Եվ անկախ նրանից, թե որքան գիտենք՝ եթե չկատարենք մեր իմացածը, կրկին վտանգի մեջ կլինենք:

> «Բայց Խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբ. 1.22):

Պայքարի ժամանակ թրերը պետք է օգտագործվեն: Այս անելու միջոցներից մեկը՝ Աստծո Խոսքի թուրը մեր կյանքում իրականություն դարձնելն է:

Երբ գիտությունը բարու մասին չի գործադրվում,
այն հաճախ վերածվում է չարի:

— Ս. Մարտելլի, *Սուսերամարտի վարպետ*

Ավելի լավ է՝ սովորել սրամարտը կամ սուսերամարտը *մինչև* թեժ պայքարի սկիզբը: Պայքարները հնարավորություն են ընձեռում՝ ցույց տալու այն, ինչը դուք արդեն կատարումեք: Ինչ-որ առումով, կռիվն ստուգում է այն դիմացկունությունը, որն արդեն ձևավորվել է ձեր պատրաստության փուլերի ընթացքում:

Այս գաղափարն ավելի լավ նկարագրելու համար թույլ տվեք պատմել ևս մեկ պատմություն այն մասին, թե *ինչը* դրդեց ինձ՝ գրելայս գիրքը:

2009 թվականին միմյանց հաջորդող կոնֆերանսներ էի անցկացնում գեղեցիկ Նոր Զելանդիայում: Ես ունեի մեկ ազատ առավոտ, որ կարող էի հանգիստ քնել, և անհամբեր սպասում էի դրան: Արդեն կեսգիշերն անց էր, այնպես որ, ես հարմարավետ կերպով տեղավորվեցի բարձերից կազմված արգելապատնեշի մեջ և, գոհունակությամբ հոգոց հանելով, ապահով փաթաթվեցի ծածկոցներով և սավաններով:

Մինչև աչքերս փակելը, ես շրջեցի ժամացույցը: Ինձ անհրաժեշտ չէր ոչ մի ձայնային ազդանշան, զարթնեցնող հեռախոսազանգ կամ բջջային հեռախոսի զարթուցիչ: Ես հանգի՜ստ քնելու էի: Ես քաշեցի լուսաքողարկող վարագույրները, դրեցի ականջակալներս

և մելատոնինի հաբ կուլ տվեցի: Ամեն ինչ մանրակրկիտ կազմակերպված էր, որպեսզի ճանապարհից հոգնած մարմինս չարթնանար մինչև լիովին հանգստանալը:

Բայց ավա՜ղ, հանգիստը չէր կայանալու: Գիշերվա ժամը 3-ի և 4-ի միջև ես հանկարծ հասկացա, որ տարօրինակ կերպով արթնացել էի, և գլխումս հնչում էր երեք բառից կազմված մի արտահայտություն.

Կրկի՛ն կռիր թուրը:

Այդ ի՞նչ էր: Միգուցե ինչ-որ երազ էի տեսել: Ես շրջվեցի, ստուգեցի ականջակալներս և ավելի հարմարավետ տեղավորվեցի բարձերիս մեջ, բայց դա չփրկեց ինձ. այդ արտահայտությունը կրկնվում էր.

Կրկի՛ն կռիր թուրը:

Ես գնացի լոգարան, ինչից հետո կրկին մագլցեցի անկողնուս մեջ: Ես փորձում էի պայքարել, որպեսզի վերադառնայի երազների աշխարհը, բայց չէի կարողանում: Իմ քունն անհանգիստ և մակերեսային էր, և այդ անհանգիստ նիրհի մեջ ինչ-որ մեկը շարունակաբար կրկնում էր…

Կրկի՛ն կռիր թուրը:

Ես արթնացա և նայեցի ժամացույցին. արդեն չորսից մի փոքր անց էր: Ես գիտեի, որ չէի կարողանալու քնել, մինչև որ չլռեցնեի այդ կրկներգն իմ մտքում: Ես փակեցի աչքերս և փորձեցի հիշել, թե որտե՞ղ էի լսել այդ արտահայտությունը նախկինում՝ հուսալով, որ կհասկանամ, թե ինչո՞ւ էի լսում այն: Արդյո՞ք դա հատված էր որևէ գրքից, որը ես վերջերս ընթերցում էի, թե՞ դրվագ էր որևէ ֆիլմից: Թույլ տալով, որ միտքս թափառեր՝ որոնելով հնարավոր պատասխանը, ես հիշեցի, որ զրուցում էի որդիներիցս մեկի հետ, երբ հավաքում էի իրերս այս ճանապարհորդության համար:

- Ի՞նչ կցանկանաս, որ բերեմ Նոր Զելանդիայից, - հարցրի նրան:

- Մայրի՛կ, ես ցանկանում եմ որևէ բան՝ կապված *«Մատանիների տիրակալը»* ֆիլմի հետ, - անվարան պատասխանեց նա:

Այդ ժամանակ ես կասկած հայտնեցի, որ կկարողանայի կատարել այդ խնդրանքը, և պահանջեցի նրանից՝ ավելի ման-

ռամասներ ասել: Նա մի քանի տարբերակ առաջարկեց և Օքլենդ հասնելուն պես ես հարցրի իմ սիրալիր հյուրընկալին, թե ինչպե՞ս կարող էի գտնել առարկաներ՝ կապված *«Մատանիների տիրակալը»* ֆիլմի հետ: Այդ կինը բացատրեց, որ ես կարող էի շատ ավելի հեշտորեն նման «գանձեր» գտնել ինտերնետի միջոցով կամ Միացյալ Նահանգներում, ինչից հետո ես դադարեցի մտածել որդուս խնդրանքի մասին: Բայց այժմ՝ երբ ուշ գիշեր էր, ես մտածեցի, որ *«Կրկի՛ն կռիր թուրը»* արտահայտությունը, որը լսում էի, միգուցե *«Թագավորի վերադարձը»* ֆիլմից էր, որը հիմնված է Ջ. Ռ. Ռ. Տոլկիենի «Մատանիների Տիրակալը» եռապատումի վրա:

Ես վեր կացա անկողնուց, վառեցի լույսը և նստեցի, որպեսզի մի քանի մտքեր գրի առնեի՝ այն հույսով, որ դրանից հետո կրկին կպառկեի քնելու: Բայց հենց որ սկսեցի գրել, մտքերն այնքան արագությամբ եկան, որքան հասցնում էի գրի առնել իմ անկանոն ձեռագրով: Տիրոջ Հոգին օգտագործեց պատկերների, սուրբգրային հատվածների և արտահայտությունների համադրություն՝ նախաձեռնելու համար այն, ինչի մասին գրում եմ այս գրքում:

Ես լսեցի, թե ինչպես էր Հոգին շշնջում ինձ, որ Քրիստոսի մարմնի չափազանց շատ մասեր գործածում են միայն հատվածներ Իր Խոսքից, և այլևս չեն բարձրացնում Իր Խոսքը՝ որպես ամբողջություն: Հոգին նույնպես ասաց, որ նեղությունները (տնտեսական, բնական, կառավարական, մշակութային և հասարակական) գալու են երկրի վրա ավելի մեծ հաճախականությամբ և ուժգնությամբ: Այս նեղություններն ի վերջո կօգնեն միաբանել Իր ժողովրդին մեկ գործի և նպատակի շուրջ, և երբ Աստծո Խոսքը բարձրացվի իր ամբողջ կշիռով և իշխանությամբ, այդ խնդիրների պատասխանները կհայտնվեն:

Լսելով այս գաղափարները՝ մտքումս տեսա առանձին մարդկանց, ովքեր բարձրացնում էին նախկինում ամբողջական զենքերի և մարտական դրոշների կտորտանքները: Թրերի բռնատեղերը վեր էին բարձրացված, բայց առանց շեղբերի կտրող զորությանդրանք անօգուտ էին: Հարթակների վրա, որոնք նման էին խորանների, ընկած էին կոտրվածքրերի ծայրեր, որոնք եղել էին ամուր շեղբերի եզրերին և կարող էին խոցել իրենց թիրախները: Այդ առանձին և չամրացված թրերի կտորներն ընդամենը մետաղի թափոն էին:

Այլ պատերազմողներ ունեին թրերի կոտրված շեղբեր՝ առանց բռնակների: Զինվորները չէին կարողանում գործածել դրանք՝ առանց իրենց վնասելու կամ վիրավորելու, այնպես որ, նրանք մի կողմ էին դրել դրանք: Մեկ այլ խումբ կրում էր թրեր՝ առանց խաչարդների, որոնք թույլ չէին տա, որ զինվորների ձեռքերը սահեին՝ դիպչելով շեղբին հարվածի ժամանակ: Միասին բոլոր այս մասերը հզոր և ազդեցիկ էին, և կարող էին գործածվել ու կատարել թրի բոլոր գործառույթները: Իսկ որպես առանձնացված մասեր՝ դրանք եզրեր էին՝ առանց ծայրերի, մետաղ՝ առանց ուժի, և շեղբեր, որոնցով անկարելի էր հարվածել:

Առանձնացված և բաժանված լինելու պատճառով շատ մասերի գործածությունը չի հասկացվել, քանի որ դրանք արդյունավետ են միայն, երբ միասնական և ամբողջական են: Մինչ մենք պայքարում ենք մեր սպառազինության ընդամենը մի մասով, թշնամին գործում է իր ամբողջ սպառազինությամբ: Վախենում եմ, որ նա ծիծաղում է, երբ մենք հիմարաբար գործածում ենք մեր բաժանված բառերը, կամ բառերը, որոնք բաժանում են՝ այն դեպքում, երբ դրանց լիարժեք զորությունն իրենց ամբողջականության մեջ է:

Հարաբերական խաղաղության և հանգստի փուլերում Ավետարանի բեկորները կարող են կարճ ժամանակով նեցուկ լինել մեզ համար: Բայց Ավետարանի մասերը չունեն բավականաչափ ամրություն, որպեսզի պահպանեն մեզ վտանգավոր ժամանակներում. այնպես որ, բաժանված եկեղեցին կընկնի:

Այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեզ, որպեսզի կրկին միավորենք այդ զենքերի մասերը, Աստծո Խոսքի մեջ է: Ամեն մաս՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, արդեն սպասում է մեր միավորված, կենդանի հռչակմանը: Եթե անհրաժեշտ է, որ անցնենք նեղությունների հնոցով՝ հասնելու համար այնպիսի կետի, երբ կսկսենք միաբան աղոթել, որ այն, ինչ մասնատված էր, սահուն կերպով միավորվի, թո՛ղ այդպես լինի:

Խնդրում եմ, սխալ մի՛ հասկացեք այն, ինչ ասում եմ: Ես չեմ առաջարկում, որ մենք փոխզիջման գնանք կամ փոխենք այն, ինչ ասում է Խոսքը: Ես հրատապ կերպով հորդորում եմ, որ մենք ուսումնասիրենք, աղոթենք և հռչակենք Խոսքն իր ամբողջական ձևով, և թույլ տանք, որ այն ազդեցություն գործի մեզ վրա: Աստծո Խոսքը կենդանի, զորավոր, կատարյալ և անարատ է:

Այն, ինչ ես տեսա և լսեցի, հրաման էր՝ հռչակելու Նրա Սուրբ Խոսքն իր խորհրդի ամբողջ իմաստությամբ և իր զորության ամբողջ հրաշափառությամբ: Դա հրավեր էր՝ դարձնելու մարդկային լեզուն աստվածայինի պատկերով, ոչ թե զրկելու Աստծո Խոսքն իր աստվածային բնույթից՝ դարձնելով այն մարդկային:

Սատանան չի վախենում մասնատված եկեղեցուց, որը գործածում է Աստծո զորավոր Խոսքի բեկորները կամ մասերը, բայց նա սարսափահար կդողա՝ տեսնելով այնպիսի եկեղեցի, որը բարձրանում է՝ պահելով Նրա Խոսքի կրկին կռած թուրը և դրսևորելով այն մեր կյանքերում: Երբ մենք սկսենք կարդալ և կիրառել ամբողջ Խոսքը, և ոչ միայն մեր սիրելի հատվածները, մենք ճշմարտապես կճանաչենք, թե ինչ է դրված մեր ձեռքերում: Քրիստոսի մարմինը կբարձրանա միաբանության մեջ, երբ մենք գործածենք մեր ուժերը՝ մեկս մյուսին սրելու, ոչ թե մեկս մյուսի վրա հարձակվելու համար: Երբ Եկեղեցին հնազանդվի մաքրվել և շտկվել Աստծո մեջ, այն կհիշի, որ թրերը գործածվում են ընդդեմ թշնամիների, ոչ թե ընկերների:

Կրկին կռած թուրը

Նոր Զելանդիայից տուն վերադառնալուն պես կրկին դիտեցի «Մատանիների տիրակալը» ֆիլմի երրորդ մասը՝ պարզելու համար, թե արդյո՞ք այդ արտահայտությունը կար ֆիլմի մեջ, և եթե կար, ինչպե՞ս էր այն գործածվում: *«Թագավորի վերադարձը»* երկար ֆիլմ է, և ես շատ սեղմ կնկարագրեմ այս ֆիլմի սյուժեն:

Այն սկսվում է բարու և չարի, մարդկանց և դևերի, լույսի և խավարի միջև տարվող էպիկական պատերազմի շեմին: Դաշնակիցների փոքրաթիվ բանակները հավաքվում են՝ պայքարելու չար հրոսակախմբերի դեմ, որոնք համախմբվել են իրենց դեմ: Թվում է՝ այդ մի խումբ համարձակ զինվորները տանուլ են տալու ամեն ինչ: Այդ ժամանակ արքայադուստր Արվենն ակնթարթային տեսիլք է տեսնում ապագա խոստման լույսի մասին: Նա վերադառնում է իր հոր՝ թագավորի մոտ, և թախանձում է նրան՝ կրկին կռել մի հինավուրց թուր: Ահա նրա բառերը.

Մոխրի կույտից մի կրակ կարթնանա,
Մի լույս ստվերներից կծագի,
Շեղբը կոտրված նորոգում կստանա,
Եվ թագ չունեցողը կթագադրվի…
Կրկի՛ն կռիր թուրը:

Սրտիս դրոշմվեց երեք բառ՝ այն ենթատեքստով, որը շատ ավելին էր, քան այս ֆիլմը: Այս բառերը էպիկական չափեր ունեցող առաքելություն են կրում: Ֆիլմի մեջ Տոլկիենի բանաստեղծական տունն ուղեկցվում էր վառ պատկերներով, որոնց թվում էին կրակե դարբնոցը, մուրճը և ուժեղ, հմուտ դարբինը, ով կռում էր թուրը: Թրի բաժանված մասերը դրվեցին իրար մոտ, իսկ հետո միաձուլվեցին կրակի, ճնշման և ջրի շարունակ ազդեցությամբ, մինչև որ այն, ինչ բաժանված էր, կրկին զորություն ստացավ: Թուրը վերականգնվեց:

Անցյալի խարխլված հուշարձանը դարձավ ապագայի փայլուն խորհրդանիշը: Այս նորոգված շեղբը կապակցում էր անցյալի հաղթանակները ներկայի անհնարին իրավիճակի հետ՝ վերականգնելով հույսն ապագայի հանդեպ:

Ինչո՞վ է տարբերվում այս օրինակը մեր ներկա իրավիճակից: Չէ՞ որ մենք դեռ փառավորում ենք անցյալի վկայությունները՝ անտեսելով այն ամենը, ինչ դեռ կարող է տեղի ունենալ:

Ես համակվում եմ տարբեր զգացմունքներով, երբ մտածում եմ, թե ինչ է նշանակում կրկին կռած թրի խորհրդապատկերը մեզ համար: Այն թուրը, որը վստահված է մեզ, հինավուրց չէ. այն հավիտենական է: Մեր թուրը կապված չէ առանձին հաղթանակի հետ. մեր կենդանի Աստծո Խոսքը կրկին ու կրկին ապացուցել է, որ ճշմարիտ է: «Մատանիների տիրակալը» ֆիլմի թուրը ստեղծեց նոր կարգ. մեր Աստծո թուրն ստեղծեց երկինքները և երկիրը: Նրանց թուրը ձուլված էր երկրի ընդերքից դուրս բերված հումքից. մեր թուրը ձուլված է երկնքի սպառող կրակների մեջ: Ժամանակն է, որ գործածենք Աստծո Խոսքի թուրը, որպեսզի կերտենք պատմությունը, ոչ թե պարզապես հետք թողնենք դրանում:

Ի տարբերություն Արագոն թագավորի՝ մեր Տերը մշտապես կրում է Իր թագը: Հարցը հետևյալն է՝ արդյո՞ք մենք հնազանդվում

ենք Նրա իշխանությանը: Թե՞ վախենում ենք պատկերացնել՝ ինչ կարող էր տեղի ունենալ, եթե մենք բռնեինք Աստծո Խոսքը երկու ձեռքով և թույլ տայինք, որ այն լիներ մեր վերջնական հեղինակությունը: Ի՞նչ կլիներ, եթե մենք պարզապես հռչակեինք Սուրբ գրքի խոսքերը և թույլ տայինք, որ Սուրբ Հոգին մեկներ դրանք: Ես հավատում եմ՝ ժամանակն է, որ Եկեղեցին ճանաչվի թրերի հետ հմտորեն վարվելու համար, քանի որ պահանջվում է ավելի մեծ հմտություն՝ բժշկելու, քան խոցելու համար:

> «Եվ Իմ ժողովրդի աղջկա վերքը բժշկում են թեթև կերպով՝
> ասելով. «Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն»,
> քանի որ (կամ՝ երբ) խաղաղություն չկա» (Երեմիա 6.14, 8.11):

Կոսմետիկ վիրաբուժությունը և մակերեսային բժշկությունը քիչ արդյունավետ են այն դեպքում, երբ անհրաժեշտ է սրտի փոխպատվաստում: Մարդիկ չեն կարող երկար ժամանակ նայել մեր աշխարհին և պատկերացնել, որ խաղաղություն են տեսնում, այնինչ խաղաղություն չկա: Մենք կարող ենք խաղաղություն ունենալ և պետք է առաջնորդվենք Խաղաղության Իշխանի կողմից, բայց մենք չենք կարող խաղաղություն հռչակել այնտեղ, որտեղ Աստված դատաստան է հռչակել: Ահա Աստծո դեղամիջոցը նման վիճակի համար.

> «Այսպես է ասում Տերը.
> «Կանգնե՛ք ճանապարհներին և տեսե՛ք
> և հարցրե՛ք վաղեմի ճանապարհներից,
> թե արդյոք ո՞րն է լավ ուղին, այն ժամանակ գնացեք նրանով,
> և դուք հանգստություն կգտնեք ձեր հոգիների (կամ՝ անձերի)
> համար...»» (Երեմիա 6.16):

Գոյություն ունի մեծ մայրուղի, և գոյություն ունեն վաղեմի շավիղներ: Առաջինով ճանապարհորդողները շատ են, քանի որ այն լայն է, իսկ մյուսներով ճանապարհորդողները քիչ են, որովհետև դրանք նեղ են: Աստծո Խոսքը զորություն ունի լուսավորելու մեր ճանապարհը և մաքրելու մեր շավիղների աղբնու ավերակները, որպեսզի կարողանանք քայլել դրանցով: Աստծո Խոսքի

թուրը կբաժանի երկրային դրդապատճառները Երկնքի դիտավորությունից:

Նույնիսկ այս ամենն ասելուց հետո, անտեսանելի թրերի գործածումը կարող է դեռ մի փոքր անխոհեմ, ոչ գործնական և անիրական թվալ մեր քսանմեկերորդ դարում: Ի վերջո, մի՞թե Հիսուսը չզգուշացրեց Պետրոսին, որ թրով ապրողները թրով էլ կմեռնեն (տե՛ս Մատթ. 26. 52): Մենք պետք է պատասխանենք այս հարցին, մինչև առաջ անցնելը:

Աստծո Խոսքի թուրը կբաժանի երկրային դրդապատճառները Երկնքի դիտավորությունից:

Հիշենք Վերջին Ընթրիքի պատմությունը, երբ Հիսուսը շրջապատված էր Իր աշակերտներով: Խոսելով նրանց ապագայի մասին՝ Հիսուսն սկսեց հակադրել այն ամենը, ինչ նրանք իմացել էին անցյալում:

> «Եվ նրանց ասաց. «Երբ որ ուղարկեցի ձեզ առանց քսակի և պարկի և կոշիկների, մի՞թե կարոտ եղաք մի բանի»: Նրանք էլ ասացին. «Ոչնչի»» (Ղուկ. 22.35):

Ես գրեթե կարող եմ տեսնել, թե ինչպես էին նրանք ժպտում և գլխով անում, քանի որ յուրաքանչյուրը հիշում էր այդ արկածը: Նրանք գնացին Հիսուսի խոսքով՝ չունենալով ոչինչ իրենց հետ, բայց գերբնականորեն ստացան այն ամենը, ինչի կարիքն ունեին: Դրանից հետո Հիսուսը ներկայացրեց նոր ժամանակաշրջան.

> «Ապա ասաց նրանց. «*Բայց հիմա* քսակ ունեցողը թող առնի, այնպես էլ պարկը, և չունեցողը թող իր հանդերձը ծախի և իր համար սուր առնի»» (խոսք 36, շեղագիրն ավելացված է):

Որպեսզի իմանաք, որ ես չեմ հորինում սա, Աստվածաշնչի մեկ այլ թարգմանության մեջ այսպես է գրված.

> «Բայց հիմա, - ասաց Նա, - վերցրե՛ք ձեր փողը և ճանապարհորդական պայուսակը: Եվ եթե դուք թուր չունեք, վաճառեք ձեր վերարկուն և թուր գնեք» (խոսք 36, NLT):

Հիսուսը պարզապես չպատվիրեց նրանց փող և պայուսակ վերցնել. Նա նույնպես ասաց, որ թուրը կարող է ավելի կարևոր

լինել, քան վերարկուն: Հիսուսի օրերը, որոնցում Նա հայտնի էր որպես «Բարի վարդապետ», ավարտված էին. Նրան արդեն հանցագործ էին համարում: Աշակերտները հավաքված էին այն երեկո, երբ կատարվում էին *բոլոր մարգարեությունները:* Իրենց իրերը արագորեն զննելուց հետո, նրանք երկու թուր գտան:

> «Նրանք էլ ասացին. «Տե՛ր, ահա այստեղ երկու սուր կա»: Եվ Նա ասաց նրանց. «Բավական է»» (խոսք 38):

Այնուհետև Հիսուսը գնաց Ձիթենյաց սարը, որտեղ պայքարեց կյանքի և մահվան դեմ և այցելվեց հրեշտակների կողմից, մինչ Իր աշակերտները քնած էին: Երբ Հիսուսն արթնացրեց նրանց նիրհից և խրախուսեց, որ աղոթեն, մի ամբոխ՝ Հուդայի առաջնորդությամբ, մտավ պարտեզ:

Առաջին հերթին պետք է խոստովանեմ, որ ինքս էլ կիսաքնած վիճակում կորցնում եմ մտքիս ճկունությունը, բայց նույնիսկ լիովին արթուն վիճակում ես կշփոթվեի՝ տեսնելով այն, ինչ կատարվեց այդ պահին: Աշակերտներն արթնացան, և երբ հասկացան, թե ինչ էր կատարվում, վերցրին իրենց թրերը՝ պատրաստ իրենց Տիրոջը պաշտպանելու համար:

> «Երբ որ Նրա հետ լինողները տեսան, թե ինչ է լինելու, Նրան ասացին. *«Տե՛ր, սրով զարկե՞նք»*: Եվ նրանցից մեկը քահանայապետի ծառային զարկեց, և նրա աջ ականջը կտրեց: Հիսուսն էլ պատասխանեց. «Թո՛ղ տվեք մինչև այս», և նրա ականջին դիպավ և բժշկեց նրան» (խոսքեր 49-51, շեղագիրն ավելացված է):

Ինչո՞ւ էր պետք թուր վերցնել, եթե այն չէր օգտագործվելու: Իմ կարծիքով՝ Հովհաննեսը հարցրեց՝ կարո՞ղ են իրենք զարկել, իսկ Պետրոսը միանգամից անցավ գործի: Այնպիսի տպավորություն է, որ Ղուկասը ծածկում է Պետրոսին, որովհետև Հովհաննեսի պատմածից մենք գիտենք, որ հենց Պետրոսը կտրեց այդ ծառայի ականջը: Մատթեոսի Ավետարանը ցույց է տալիս, թե ինչ տեղի ունեցավ Պետրոսի և Հիսուսի միջև այս պոռթկումից հետո:

> «Այդ ժամանակ Հիսուսը նրան ասաց. «Սուրդ տե՛ղը դիր, որովհետև բոլոր սուր վեր առնողները սրով պիտի կորչեն: Կամ, կարծում ես, թե չե՞մ կարող հիմա Իմ Հորն աղաչել, որ հասցնի Ինձ ավելի քան տասներկու գունդ հրեշտակներ, բայց ինչպե՞ս կկատարվեն գրքերը, թե այսպես պետք է լիներ»» (Մատթ. 26. 52-54):

Այս հատվածը մշտապես առեղծվածային է եղել: Կարելի է ենթադրել, որ Պետրոսը նույնպես մի փոքր շփոթվեց նման շրջադարձից: Հավանաբար, նա կարծում էր, որ եթե Հիսուսը պատվիրեց իրենց՝ թրեր վերցնել, ուրեմն եկել էր դրանք գործածելու ժամանակը: Բայց և այնպես, մենք կարող ենք համոզված լինել, որ այդ թրերի նպատակը ոչ մի դեպքում Հիսուսին պաշտպանելը չէր: Ես նույնիսկ չեմ մտածում, որ դրանք հենց աշակերտներին պաշտպանելու համար էին: Ի վերջո, ո՞ւմ է պետք անվտանգությունը, երբ հրեշտակների լեգեոնները քո տրամադրության տակ են:

Հիսուսը նույնպես չպատվիրեց Պետրոսին՝ դեն նետել այդ թուրը: Նա պարզապես պատվիրեց դնել թուրն իր տեղը: Սա նույնպես մի փոքր տարօրինակ է թվում ինձ, որովհետև դրանից հետո Նա ասաց. «Բոլոր սուր վեր առնողները սրով պիտի կորչեն»: Միգուցե միայն ես եմ այդպես հասկանում, բայց ես կասեի. «Մի կո՛ղմ շպրտիր այդ երկաթը. այն կսպանի քեզ»: Բոլոր այս անհամատեղելիությունները դրդեցին ինձ՝ մտածել, որ Հիսուսի խոսքերն այստեղ այլաբանական իմաստ ունեին, ոչ թե բառացի:

Թվում է՝ Հիսուսը փորձում էր պատրաստել նրանց այս մոտեցմանը՝ ավելի վաղ տեղի ունեցած զրույցի ընթացքում, որի մասին գրված է Հովհաննեսի Ավետարանում: Այդ ժամանակ Նա բացատրեց, թե ինչու էր այլ կերպով խոսում Իր աշակերտների հետ, երբ պատրաստվում էր վերադառնալ Երկինք, քան այն ժամանակ, երբ նրանց հետ էր երկրի վրա:

> «Այս էլ խոսեցի ձեզ հետ, որ երբ ժամանակը գա, սրանք հիշեք, թե ես ասացի ձեզ:
> Բայց այս բաները սկզբից չասացի ձեզ, որովհետև ես ձեզ հետ էի» (Հովհ. 16.4,5):

Երբեմն դուք չեք կարող լսել ինչ-որ բան, քանի դեռ դրա ժամը չի եկել: Դուք ասես խուլ լինեք դրա համար, որովհետև չեք ցանկանում, կամ դեռ կարիք չունեք լսել դա: Ճիշտ ժամանակին գալիս է բացահայտման պահը, և այն, ինչը նախկինում շփոթեցնող էր, պարզ է դառնում: Երբ մտերիմ մարդկանց կողքին եք, որոշ բաների մասին կարող եք և չխոսել, քանի որ անհրաժեշտություն չկա, բայց այն, ինչն ակնհայտ էր, երբ դուք միասին էիք, մի փոքր անորոշ է դառնում, երբ հեռանում եք իրարից:

Թրերի հետ կապված շփոթմունքն ավելի պարզեցնելու համար, կարդանք մեկ այլ հատված: Երբ Հիսուսը հեռանում էր, խոստացավ Իր աշակերտներին. «Ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20):

Փաստեր սուսերամարտի մասին

Լավագույն սուսերամարտը՝ թե՛ հարձակողականը, և թե՛ պաշտպանողականը, հավասարակշռության և չափավորության զգացում ունի:

Այս խոստումը շատ ավելի մեծ նշանակություն ուներ գալիք հանգամանքներում, քան հենց այդ պահին: Այն շատ թանկ էր աշակերտների համար, երբ Հիսուսն այլևս տեսանելի կերպով նրանց հետ չէր, և նրանք ճանապարհորդում էին օտար երկրներ՝ հանդիպելով ձախողումների և հաղթանակների: Այս խոստումը չէր խրախուսում միայն նրանց. այն դեռ խրախուսում է ձեզ և ինձ: Այս խոստման հույսը պատկանում է մեզ:

Այլ բան է, որ ասեմ առջևումս նստած ամուսնուս. «Ես քեզ հետ եմ, սիրելի՛ս», և բոլորովին այլ բան է, եթե նա լսի նույն խոսքերն ինձնից այն ժամանակ, երբ հեռու ենք միմյանցից: Առաջին դեպքում ես հաստատում եմ ակնհայտ իրականությունը, իսկ երկրորդում՝ հավաստիացնում անտեսանելիի մեջ:

Այս օրինակն օգնում է մեզ՝ հասկանալ, թե ինչո՞ւ են Հիսուսի խոսքերը երբեմն հակասական թվում: Նա պատվիրեց թուր գնել, բայց կարճ ժամանակ անց հանդիմանեց Պետրոսին այն գործածելու համար: Ձիթենյաց սարը թրեր հա-

Թրերի հայտնվելուն պես բացահայտվում են շարժառիթները:

նելու տեղը չէր, և այն գիշերը, երբ Նա մատնվեց, թրեր հանելու ժամանակը չէր: Այդ գիշերը նվիրման և աղոթքի ժամանակ էր: Եթե աշակերտներն արթուն մնային, նրանք կհասկանային, որ Հիսուսը նվիրաբերում էր Իր կյանքը, ոչ թե փորձում էր պաշտպանել այն:

Մատթեոսը ցույց է տալիս նախորդ դեպքը, երբ Հիսուսը խոսեց թրերի մասին.

> «Մի՛ կարծեք, թե Ես եկա այս երկրի վրա խաղաղություն գցելու. չեկա խաղաղություն գցելու, այլ՝ սուր» (Մատթ. 10.34):

Թրերի հայտնվելուն պես բացահայտվում են շարժառիթները: Թրերը կարող են խուճապահար անել և փախուստի մատնել մեզ, կամ՝ խիզախ և միաբան դարձնել: Վերջին ընթրիքի դեպքերից հետո չկա ոչ մի հիշատակում այն մասին, որ աշակերտները երբևէ դուրս քաշեցին իրենց թրերը, որպեսզի պաշտպանեն իրենց կամ հարձակվեն իրենց հալածողների վրա: Այս փաստը դրդում է ինձ՝ մտածել, որ Հիսուսը չէր խոսում ինքնապաշտպանության կամ իրավիճակները մեր ձեռքը վերցնելու և մեր ուժերով հարթելու մասին:

Սկզբում Հիսուսը փորձվեց մենակ, անապատում, քառասուն օրվա ծոմից հետո: Հաջորդ փորձության ժամանակ Նա շրջապատված էր ընկերներով՝ պարտեզում, խնջույքից հետո: Բայց առաջին փորձությունն այնքան էլ չէր տարբերվում երկրորդից: Առաջինում սատանան խրախուսում էր քաղցած Հիսուսին՝ հաց դարձնել այն քարերը, որոնք Նա տեսնում էր: Նրա խնդրանքը նույնիսկ կարող էր սուրբգրային համարվել. ի վերջո, Մովսեսը հաց տվեց Իսրայելի զավակներին, երբ նրանք բնակվում էին անապատում:

> «Նա [Հիսուսն] էլ պատասխանեց. «Գրված է՝
> ոչ միայն հացով կապրի մարդ,
> այլև ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»»:
> (Մատթ. 4.4)

Առաջին հրաշագործության նպատակն էր՝ կերակրել մարդկանց, իսկ երկրորդինը՝ կերակրել սեփական անձը: Ավելի ուշ Իր երկրային

ծառայության ընթացքում Հիսուսը ցույց տվեց, թե որքան լավ էր հասկանում այս տարբերությունը, երբ խոսում էր Իր մասին՝ որպես կյանքի հացի:

> «Հիսուսն էլ նրանց ասաց. «Ես եմ կյանքի հացը. Ինձ մոտ եկողը չի սովի, և Ինձ հավատացողը երբեք չի ծարավի»»:
> (Հովհ. 6.35)

Արդյո՞ք Հիսուսը բառացիորեն էր խոսում: Ո՛չ: Ես վերապրել եմ և՛ քաղց, և՛ ծարավ Հիսուսին հանդիպելուց հետո: Ծոմապահությունն անապատում փոխեց Հիսուսին: Մինչև ծոմապահությունը, Նա ապրում էր հացով, իսկ դրանից հետո Նա տալիս էր կենդանի հացը: Կենդանի հացը Հիսուսն է՝ մարմին դարձած Խոսքը:

Սատանան նույնպես առաջարկեց Հիսուսին, որպեսզի պահանջի Աստծո միջամտությունը, այսինքն՝ ցած թռչի տաճարի աշտարակից՝ հարկադրելով Աստծուն՝ փրկել Իրեն:

> «Եթե Աստծո Որդի ես, Քեզ վա՛յր գցիր, որովհետև գրվա՛ծ է, թե՝
> Իր հրեշտակներին կհրամայի քեզ համար և
> ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ,
> որ քո ոտքը քարի չդիպցնես երբեք»:
> «Հիսուսը նրան ասաց. «Դարձյալ գրվա՛ծ է, թե՝ մի՛ փորձիր Տիրոջը՝ քո Աստծուն»» (Մատթ. 4.7):

Հիսուսը գիտեր, որ Ինքը չէր եկել, որ ցած նետեր Իրեն՝ հիմարաբար փորձելով ապացուցել կրոնական առաջնորդներին, որ Ինքն Աստծո Որդին է: Փոխարենը՝ Նա եկել էր, որպեսզի բարձրացներ բոլորիս խաչի վրա: Երբ սատանան փորձեց գայթակղեցնել Հիսուսին երկրի բոլոր թագավորություններով և դրանց փառքով, Հիսուսը կրկին գործածեց Խոսքի թուրը.

> ««Դե՛ն գնա, սատանա՛, որովհետև գրված է, թե՝
> Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր
> և միայն Նրան պաշտիր»:
> Այն ժամանակ սատանան թողեց Նրան, և ահա հրեշտակներ մոտ եկան և ծառայում էին Նրան» (Խոսքեր 10,11):

Ակնհայտ է, որ այս հրեշտակները գալիս են, երբ մենք անցնում

ենք «գրված է» կոչվող փորձությունը: Ինչպես և Հիսուսի դեպքում, սատանան փորձում է աղավաղել Աստծո Խոսքի իմաստը, ինչից հետո նաև Խոսքի գործածությունը՝ հուսալով, որ մենք կչարաշահենք Աստծո խոստումները՝ ինքներս մեզ պաշտպանելու, մարդկանց ճանաչումը և հիացմունքը ձեռք բերելու կամ անձնական շահի համար: Սատանան հարվածում է՝ աղավաղելով ճշմարտությունը. մենք հակահարված ենք հասցնում՝ հռչակելով ճշմարտությունը:

Սրամարտի պատմության մեջ, երբ մենամարտեր էին հայտարարվում՝ պատվի հարցերը որոշելու համար, կար մի ասացվածք. «Թուրը՝ ճշմարտությունն է»:

Եկել է ժամանակը, որ ապրենք ճշմարտության թրով, որը մեր Աստծո Խոսքն է: Այս գրքում տեղադրված են թրերի պատկերներ և օգտագործվում են սուսերամարտին վերաբերող տերմիններ, որպեսզի հիմնովին ծանոթանանք Աստծո նախընտրելի զենքին:

Մենք կօգտագործենք *սրամարտ* կամ *սուսերամարտ* բառերը՝ որպես համարժեքներ: *Սուսերամարտը* արդյունավետ միջոց է *պաշտպանության* համար, իսկ մենք չունենք ավելի արդյունավետ պաշտպանություն, քան Աստծո Խոսքը:

Ուսումնասիրելով սուսերամարտը՝ ես իմացա, որ այն մի քանի մարզաձևերից մեկն է, որում կանայք կարող են մրցել տղամարդկանց հետ, քանի որ սուսերամարտի մեջ մարտավարական միտքն ավելի կարևոր է, քան մարմնական ուժը: Արդյունավետ սուսերամարտը բաղկացած է փոքրիկ, ճշգրիտ շարժումներից, ոչ թե խոշոր հարվածներից: Մրցության մեջ հաղթանակը որոշվում է՝ մտովի կանխատեսելով հակառակորդի հաջորդ քայլը, ոչ թե չափից ավելի վստահելով ձեր մարտավարությանը:

3

Դուք կարող եք հերոսուհի լինել

Անհնար է հաղթել մրցավազքը, եթե դուք չեք սկսել վազել. անհնար է հաղթանակ տանել, եթե դուք չեք համարձակվում պայքարել:

— Ռիչարդ Մ. ԴեՎոս
— Էլիզաբեթ Բարեթ Բրաունինգ

Մենք խոսեցինք այն մասին, թե ինչո՞ւ եք դուք թիրախ հանդիսանում: Այնուհետև բացատրեցինք, թե ինչո՞ւ է թուրը ձեր լավագույն զենքը: Այժմ խոսենք հերոսուհի լինելու մասին:

> Հերոսուհի. գեր կին, չեմպիոնուհի, հաղթող, աստղ, գլխավոր դերասանուհի, կին առաջնորդ և խիզախ կին:

Մի՞թե մի փոքր չվհատվեցիք, երբ հասկացաք, որ դուք թիրախ եք զուտ այն պատճառով, որ *կարող եք* հերոսուհի դառնալ: Եկեք անկեղծ լինենք. ո՞վ կուրախանա՝ իմանալով, որ ինքը հարձակման թիրախ է: Բայց ինչպես գիտեք, դուք հասարակ մարդ չեք: Դուք Բարձրյալ Աստծո՝ երկնքի և երկրի, ամեն տեսանելի և անտեսանելի բաների Արարչի օծված դուստրն եք: Այդ իսկ պատճառով, դուք վտանգ եք ներկայացնում թշնամու համար:

Ես գիտեմ՝ դուք գիտակցում եք, որ այս պայքարն իրական է, և որ խաղադրույքները չափազանց բարձր են, բայց ինչպես մեր ընկերուհի Սառա Քոնորը, միգուցե դուք *դեռ* ոչինչ չեք

արել: Այնուամենայնիվ, ձեր սրտի խորքում դուք գիտեք՝ մի օր դուք գործելու եք: Եվ հրաշալին այն է, որ հերոսուհի դառնալու ճանապարհն սկսում է, երբ դուք պարզապես թույլ եք տալիս Աստծուն՝ առաջնորդել ձեզ Իր կամքով:

Վերջերս մի անձնավորություն, ում ես ժամանակակից հերոսուհի եմ անվանում, ով գործում է աշխարհով մեկ և ոգեշնչում է հազարավոր մարդկանց, հարցրեց ինձ. «Կարծում ես՝ ես կանչվա՞ծ եմ ծառայության համար»:

Ես բարձրաձայն ծիծաղեցի: Իհարկե, այդ կինը կանչված է ծառայության համար: Բայց նրա հարցը և րոպեական շփոթմունքն անկեղծ էին: Ինչո՞ւ: Երբեմն մեր ժամանակավոր ամպերը քողարկում են մեր հավիտենական հորիզոնը: Ոչ մի դեպքում մի՛ կասկածեք, որ դուք պետք է կերտեք պատմությունը այն ժամանակաշրջանում, որում ապրում եք:

Մենք կարող ենք լինել մեր օրերում այնպիսին, ինչպիսին եղել են հավատքի հերոսներն իրենց օրերում, բայց հիշեք՝ այդ ժամանակ նրանք չգիտեին, որ հերոսներ էին:

—Է. Ու. Թոզեր

Տրամաբանական է, որ եթե աստվածաշնչյան հավատքի մարդիկ չգիտեին, որ իրենք՝ իրենց ժամանակաշրջանի հերոսներն էին, մենք նույնպես կարող ենք անտեղյալ լինել այդ մասին մեր օրերում: Մենք լավ ընկերակցության մեջ ենք, որովհետև ինչպես և մենք՝ նրանք էլ հերոսներ էին, ովքեր պատկերացում չունեին այդ մասին:

Աստված ոչինչներին հերոսներ է դարձնում

Ինչպես որ մեր կյանքն է պարգև, այն պատմությունը, որում գտնվում ենք և, որը բացահայտում ենք հավատքով, նույնպես պարգև է: Կարիք չկա, որ հերոսական որակավորումներ գտնենք մեզանում, որպեսզի կարողանանք դիմել հերոսուհու դերի համար: Աստված արդեն ընդգրկել է մեզ հավատքի հերոսների պատմության մեջ, որն էպիկական չափերի է հասնում և լցված է մեծ գործերով, պայքարներով, նշաններով և հրաշքներով:

> «Այն պատմությունը, որը տրվել է մեզ, Աստծո պատմությունն է, ոչ թե Աբրահամի» (Հռոմ. 4.2, MSG):

Սկսենք այնտեղից, որտեղից ծավալվում է մեր պատմությունը՝ Աբրահամից, ով հավատքի առաջին հերոսն էր: Նա մուտք գործեց այս պատմության մեջ, երբ դադարեց ինքնուրույն տնօրինել իր կյանքը: Ինչպես և շատերս, Աբրահամը կռապաշտ մարդու զավակ էր (տե՛ս Հեսու 24.2): Կռապաշտության հիմքում ընկած է մեր ձեռքի գործերին երկրպագելը: Երբ Աստված ցանկանում է անել այնպիսի բան, որն ավելի մեծ է մեր ծրագրած գործերից, Նա բերում է մեզ Իր ծրագրերի մեջ, ոչ թե օրհնում է այն, ինչ արել ենք:

> Աստծո Խոսքում կարդում ենք, որ «Աբրահամը մուտք գործեց այն բանի մեջ, ինչ Աստված անում էր նրա համար, և *դա* նրա շրջադարձային պահն էր: Նա վստահում էր, որ Աստված իրեն կարդարացներ, ոչ թե փորձում էր արդար լինել իր ուժերով» (Հռոմ. 4.3, MSG):

Հարցը հետևյալն է. արդյո՞ք մենք պատրաստ ենք անել նույնը: Եթե այո, ուրեմն ժամանակն է մուտք գործել այն ամենի մեջ, ինչ Աստված արդեն արել է մեզ համար, և թույլ տալ, որ Նրա Հոգին սկսի այս նոր գործը մեզանում: Մեր որոշումը ցույց կտա, որ մենք հավատում ենք, որ Նրա մեջ ավելին ենք, քան հաղթող: Երբ կատարենք այս շրջադարձը և հաստատենք մեր սրտերն այս ճանապարհի վրա, Նա այնպես կանի, որ մեր կյանքում տեղի կունենա անտեսանելի, բայց խիստ նշանակալի մի բան: Եվ հետևելով այս ճանապարհին՝ մենք ոչ միայն ամեն բան կտեսնենք Նրա տեսանկյունից, այլև կստանանք Նրա իշխանությունը:

> «Հիսուսը պատասխանեց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե *Որդին Իրենից չի կարող ոչինչ անել*, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում»» (Հովհ. 5.19, շեղագիրն ավելացված է):

Հիսուսը գործում էր Հոր նման, այսինքն՝ համաձայնությամբ, միությամբ կամ ներդաշնակությամբ Նրա հետ: Եթե Հիսուսը՝

Աստծո միածին Որդին, ոչինչ չէր անում Իր Հորից անջատ, ուրեմն մենք՝ Նրա հերոսուհի դուստրերս, չենք կարող իրականացնել ոչ մի արժեքավոր բան հավիտենության համար, եթե նույն կերպով չհետևենք Նրա առաջնորդությանը:

Աստվածաշունչը պատմում է Աբրահամի նման հերոսների մասին, ովքեր ապրել են մեզնից առաջ. նրանք «հոժարաբար ռիսկի էին դիմում՝ հավատքով ընդունելով այն, ինչ Աստված անում էր իրենց համար» (Հռոմ. 4.12, MSG): Ինչպես որ մենք համոզված ենք, որ Քրիստոսում Աստված ջնջեց մեր անցյալը, նույնպեսև հավատում ենք, որ Քրիստոսում Նա արդեն գործում է մեր փոխարեն ապագայում: Աստծո Խոսքը շարունակում է բացատրել սա.

> «Մենք «հայր» ենք անվանում Աբրահամին ոչ թե այն պատճառով, որ նա գրավեց Աստծո ուշադրությունը՝ ապրելով սրբի պես, այլ որովհետև Աստված ինչ-որ բան դարձրեց Աբրահամին, երբ նա ոչինչ էր» (Հռոմ. 4.17, MSG):

Մենք չենք կարող փրկել ինքներս մեզ՝ ճիշտ ապրելով: Ոչ ոք արդար չէ, բացի Հիսուսից՝ Աստծո Որդուց: Այնպես որ, մենք պատրաստակամորեն մուտք ենք գործում այն ամենի մեջ, ինչ Աստված արեց Աբրահամի համար հավատքի միջոցով. մենք նույնպես թույլ ենք տալիս Աստծուն՝ *ինչ-որ բան դարձնել* մեզ *ոչնչից:* Նա կարող է վերցնել նախկինում ձգտումներ չունեցող և կոտրված դստերը և դարձնել խիզախ ու գործուն հերոսուհի: Երբ մենք մուտք ենք գործում այն ամենի մեջ, ինչ Աստված անում է մեր փոխարեն, մենք գործուն հերոսուհիներ ենք դառնում: Մեր նախորդներն առանձնացան ամբոխից իրենց *հավատքի գործերով* կամ *հավատքով լի քայլերով:* Նրանք ձեռք բերեցին հերոսների և հերոսուհիների կարգավիճակ Աստծո պատմության մեջ:

> «Գոյության հիմնարար փաստն այն է, որ այս վստահությունն առ Աստված՝ այս հավատքը, հաստատ հիմք է այն ամենի համար, ինչի պատճառով արժե ապրել այս կյանքը: Այն մեր բռնակն է՝ ամրացրած այն բաներին, որոնք մենք չենք կարողանում տեսնել: *Այս հավատքի գործն* այն է, ինչն առանձնացրեց մեր նախնիներին և վեր դասեց նրանց ամբոխից» (Եբր. 11.1,2, MSG, շեղագիրն ավելացված է):

Հերոսները հաստատություն ունեցող մարդիկ են

Այս հավատքի գործերը խոսք առ խոսք գրված են Եբրայեցիների ուղերձում, որտեղ *հավատքով* բառը նորից ու նորից կրկնվում է: Հետևյալ ցուցակն այն մասին է, թե ինչ արեցին այս հերոսները հավատքով.

- Սահմանեցին նախադեպ՝ ընդունելի զոհերի համար:
- Խուսափեցին մահից:
- Հաճեցրին Աստծուն:
- Կառուցեցին վիթխարի տապան չոր հողի վրա:
- Որոշեցին բարու և չարի սահմանը:
- Ճանապարհորդեցին անհայտ վայրեր:
- Ապրեցին որպես օտարականներ որոշված երկրում:
- Պահեցին իրենց հայացքը հավիտենականի վրա:
- Հավատքով ընդունեցին այն, ինչ Աստված արեց նրանց համար:
- Հղիացան տարեց հասակում և ծնունդ տվեցին մի ամբողջ ազգի:
- Փորձության ժամանակ Աստծուն զոհաբերեցին Իր տված խոստումը:
- Օրհնեցին իրենց սերունդների ապագան:
- Մարգարեացան ազգի ապագան և Ելիցը:
- Համարձակվեցին խախտել թագավորի հրամանը և թաքցրին իրենց որդուն:
- Հրաժարվեցին արտոնյալ թագավորական կյանքից կեղեքիչների հետ և ընտրեցին հալածանքն Աստծո ժողովրդի մեջ, որը դժվարություններ էր կրում:
- Երես թեքեցին զայրացած երկրային թագավորից՝ հնազանդվելով անտեսանելի հավիտենական Աստծուն:
- Տոնեցին Զատիկը:
- Անցան Կարմիր ծովը չոր հողի վրայով:
- Յոթ անգամ քայլեցին Երիքովի շուրջը:
- Ընդունեցին լրտեսներին և խուսափեցին մահից:
- Թագավորություններ տապալեցին:
- Արդարություն գործեցին:
- Ստացան Աստծո խոստումները:

- Պաշտպանվեցին առյուծներից, կրակից և թրերից:
- Անբարենպաստ պայմանները դարձրին բարենպաստ:
- Հաղթեցին ճակատամարտերում:
- Ձախջախեցին թշնամիներին:
- Մահացածներից ընդունեցին իրենց սիրելիներին:

Այս ծավալուն ցուցակից ես կընտրեմ ընդամենը չորս կետ, որոնք դուք կարող եք հավատքով ընդունել, որպեսզի անմիջապես գործուն հերոսուհու վերաբերմունք ձեռք բերեք:

1. **Հավատքով ընդունե՛ք Աստծո կատարած գործը ձեզ համար և մնացե՛ք դրանում:** Աբրահամը մնաց այն ծրագրի մեջ, որն ընդունել էր: Նա ետ չդարձավ ճանապարհի կեսից և չասաց. «Աստված արդեն ավարտել է այս գործը, այնպես որ, կարող եմ այլևս չապրել վրաններում՝ քոչվորի պես»: Նա հետևողական էր այն ծրագրի մեջ, որը հայտնվել էր իրեն, մինչև իր օրերի վերջը:
2. **Հաճեցրե՛ք Աստծուն:** Մեր Հորը հաճելի է, երբ Իր զավակները տիրում են այն անտեսանելի հաստատությանը, որից Նա ստեղծել է նրանց, և սկսում են ապրել այն հայտնությամբ, թե ով է Ինքը նրանց համար: Եբրայեցիների ուղերձը հայտնում է մեզ, որ «առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա, և թե Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի» (Եբր.11.6): Հավատքով ապրելը հաճեցնում է Աստծուն: «Հուսացած բաների հաստատությունը» լինելու հետ մեկտեղ (տե՛ս Եբր.11.1), հավատքը համոզվածություն, վստահություն, նվիրում, կայունություն և հավատարմություն է: Այս կյանքը բնութագրվում է մեր Թագավորի հանդեպ ունեցած լիարժեք անձնվիրությամբ և վստահությամբ: Հավատքի կյանքով ապրելու հակառակ իմաստը՝ անհավատարմությամբ և անհավատությամբ ապրելն է: Եթե ընտրենք Աստծուն հաճեցնելու ուղին, մենք նաև կկատարենք հաջորդ առաջադրանքը:
3. **Օրհնե՛ք ձեր սերունդները:** Երբ մենք գիտակցաբար ընտրում ենք կյանքը, օրհնությունը և հնազանդությունը, մեր ետևից եկող հազար սերունդ գտնվում է միևնույն ազդեցության ներքո: Ահա թե ինչ է խոստանում Սաղմոս 105.7-9-ը. «Ինքը

Եհովան է մեր Աստվածը. Նրա իրավունքներն ամեն երկրի մեջ են: Նա հավիտյան հիշում է Իր ուխտը, այն խոսքը, որ պատվիրեց մինչև հազար ազգ: Այն, որ Աբրահամի հետ դրեց, և Իր երդումը՝ Իսահակի հետ»:

4. **Որոշո՛ւմ կայացրեք՝ այս աշխարհում ապրել որպես օտարական:** Ապրեք՝ հասկանալով, որ մենք պարզապես անցում ենք կատարում այս աշխարհով: Մեր կյանքի աղբյուրը և արմատները Քրիստոսում են, այնպես որ, մենք թույլ չենք տալիս, որ մեր արմատները չափազանց խորանան այստեղ: Բույսերն ընդունում են ջուր և սննդարար նյութեր իրենց արմատների միջոցով: Մենք ստանում ենք Աստծուց և տալիս ենք այս երկրին: Այնուամենայնիվ, այս երկրի վրա որպես օտարական ապրելը չի նշանակում, որ մենք պետք է վարվենք որպես օտարականներ: Հարցն այն է, թե որտեղ է ուղղված ձեր հայացքը «Վերինները մտածեք, ոչ թե երկրի վրայինները, որովհետև դուք մեռաք, և ձեր կյանքը ծածկված է Քրիստոսի հետ Աստծո մեջ» (Կողոս. 3.2,3):

Հերոսները հատուկ վերաբերմունք ունեն

Եբրայեցիների թղթի 11-րդ գլխի զարմանալի սխրանքներն իրականացվել են այնպիսի մարդկանց կողմից, ովքեր շատ նման են մեզ: Միակ տարբերությունը նրանց և մեր միջև այն է, որ նրանք ընդունեցին երկնային տեսիլքը և հրաժարվեցին ապրել համաձայն այս երկրի սահմանափակումների: Մենք նրանց ժառանգներն ենք: Սա մեր ժառանգությո՞ւնն է:

Ի լրումն այն ամենի, ինչ արդեն թվարկվեց, նրանք խիզախեցին՝ անցնելով բազմաթիվ դժվարություններով և նեղություններով: Ոմանք տանջամահ արվեցին, բայց այդպես էլ չհանձնվեցին: Նրանք դիմացան չարչարանքներին, բանտին և կապանքներին: Ոմանք քարկոծվեցին, սղոցվեցին կամ սպանվեցին, իսկ մյուսներնիրենց կյանքի ընթացքում թափառեցին՝ կենդանիների մորթիներով ծածկված, նրանք անտուն էին, առանց ընկերների և կարողության: Այնուամենայնիվ, այսօր նրանց կյանքերն ազդեցիկ կերպով խոսում են մեզ հետ: Աստվածաշունչն ավարտում է այս հերոսների նկարագրությունը՝ ասելով. «Որ աշխարհը նրանց արժանի չէր. անապատ-

ներում մոլորվեցին, և՛ սարերում, և՛ այրերում, և՛ երկրի խոռոչներում» (խոսք 38):

Այս բառերը սրտի թրթիռ են առաջացնում ինձանում: Ես ցանկանում եմ այնպես ապրել, որ լինեմ Երկնքի քաղաքացի ավելի, քան երկրի: Կարիք չկա, որ մեզ տանջամահ անեն կամ սղոցեն, որպեսզի մեր պատկերացումները փոխվեն: Բայց միգուցե կարիք կլինի, որ փոխենք մեր ակնկալիքները:

Հերոսները որսում են պահը

Երբ ես գրում էի այս գլուխը, մեր քաղաքում անտառային հրդեհ սկսվեց, և ականատես եղանք, թե ինչպես Աստված ազատեց մեզ:

Չորեքշաբթի առավոտյան մեր տան նկուղում ես աշխատում էի դատապարտվածի պես, երբ ամուսինս՝ Ջոնը, տուն եկավ և ասաց, որ պետք է նրա հետ գնամ մեր գրասենյակ: Երեքշաբթի օրը նա և մեր ծառայողական աշխատակազմն աղոթել էին Վալդո կիրճի հրդեհի համար, և ցավոք, այդ գիշեր մենք դիտում էինք մեր տան առջևի ծածկապատշգամբից, թե ինչպես էր կրակը քշվում քամուց սարի լանջով՝ իր ճանապարհին կլանելով հարյուրավոր տներ: Երեսուներկու հազար մարդ մեր քաղաքից պետք է էվակուացվեր: Այնպես որ, չորեքշաբթի առավոտյան Ջոնը և մեր աշխատակազմը կրկին աղոթեցին՝ հաշվի առնելով մոտալուտ էվակուացման վտանգը մեր գրասենյակային տարածքից:

Իրավիճակն ավելի վատթարացավ: Մեր աշխատողներից շատերը հասկանալի պատճառներով վախեցած էին, քանի որ կրակը սպառնում էր թե՛ իրենց տներին, թե՛ աշխատանքին: Որպես ծառայության ղեկավարներ՝ մենք քննարկում էինք, թե ինչ պետք է դուրս հանեինք մեր գրասենյակային շենքից, երբ հանկարծ Ջոնը բարկացավ: Նա մոտեցավ ինձ և ասաց. «Լի՛զա, մենք վերադառնալու ենք գրասենյակ և աղոթելու ենք երրորդ անգամ»:

Հաղթելու համար միգուցե կարիք լինի, որ պայքարեք ավելի, քան մեկ անգամ:

— Մարգարետ Թեթչեր

Սկզբում ես հակառակվեցի, քանի որ պետք է աշխատեի գրքիս վրա: Բայց հանկարծ հասկացա, որ հնարավորություն ունեի

իրականացնելու այն, ինչ ուսումնասիրում էի Եբրայեցիների ուղերձում հավատքի հերոսների մասին, թե ինչպես նրանք…

> *«Կրակի զորությունն անցրին (կամ՝ հանգցրին)*, սրի բերանից պրծան, տկարությունից զորացան, պատերազմի մեջ զորավոր եղան, օտարների բանակները փախցրին» (Եբր. 11.34, շեղագիրն ավելացված է):

Ջոնը և ես գնացինք մեր գրասենյակ և ճանապարհին զանգահարեցինք մեր ընկերուհիներից մեկին՝ վայրի հավատք ունեցող մի կնոջ: Երբեմն, երբ կրակի մեջ եք, ձեզ անհրաժեշտ է ինչ-որ մեկը, ով կրակի մեջ *չէ*, ով կօգնի ձեզ՝ գտնել ճանապարհը և դուրս գալ ծխի միջից: Մենք մանրամասնորեն պատմեցինք, թե ինչ էր տեղի ունենում: Ջոնը բացատրեց, թե ինչ կար նրա սրտում և ինչին էր նա հավատում: Այդ կինն ի սրտե միաբանվեց մեզ հետ: Նա հիշեցրեց մեր անցյալի «հուշաքարերի» մասին: Բանն այն է, որ մենք առաջին անգամ չէինք բախվում հրդեհի սպառնալիքին, և այս պայքարի ժամանակ, որը *ներկայում* էր, մեզ պետք էր հիշեցնել այն, ինչ մենք սովորել էինք *անցյալում:*

Միգուցե դուք մտածում եք. «*Բայց ես չունեմ նման «հուշաքար»՝ առաջ գնալու համար*»: Այդ դեպքում ես հրաշալի լուր ունեմ ձեզ համար. ձեր կյանքը կառուցելու համար դուք կարող եք օգտագործել այն սխրանքները, որոնք թվարկված են Եբրայեցիների թղթի 11-րդ գլխում:

Մենք ավարտեցինք խոսակցությունը մեր ընկերուհու հետ և խոստացանք կրկին զանգահարել նրան, որովհետև նա ցանկանում էր մասնակցել մեր աղոթքին գրասենյակում: Երեքս էլ այնքա՜ն ակնկալիքներ ունեինք, որ անհամբեր սպասում էինք, թե երբ պետք է աղոթեինք և տեսնեինք՝ ինչպես է մեր Ամենակարող Աստված պատասխանելու: Մենք հավաքեցինք ամբողջ աշխատակազմին: Ջոնը գրատախտակի վրա գրեց, թե ինչի համար էինք աղոթելու: Մենք աղոթելու էինք, որ հրդեհն այլևս չտարածվեր, այլ՝ սպառվեր ինքն իրենով: Դա նշանակում էր, որ նոր շինություններ չէին հրդեհվելու և մարդկային կորուստներ չէին լինելու, և որ մեր ներկա նախաէվակուացիոն կարգավիճակն այդպես էլ պարտադիր չէր դառնալու: Աչքի անցկացնելով ամբողջ սենյակը և նայելով մեր աշխատակազմի անդամների դեմքերին՝ ես տեսա վախ, հավատք,

մտահոգություն, հարցական արտահայտություններ և նույնիսկ՝ խանդավառություն: Բոլորս դուրս գնացինք և սկսեցինք աղոթել:

Հիշեք, որ մեր աշխատակազմն արդեն երրորդ անգամ էր հավաքվում աղոթելու համար: Ես զգում էի, որ ոմանք «ձանձրացել էին բարին գործելուց»: Բայց երբ մենք շրջան կազմեցինք, ձեռք ձեռքի բռնեցինք և բարձրացրինք մեր ձայները, բոլորը ներգրավվեցին աղոթքի մեջ, և մեր աղոթքների ուժն սկսեց աճել: Չգիտեմ, թե որքան ժամանակ մենք աղոթեցինք, բայց հաստատ գիտեմ, որ աղոթեցինք այնքան ժամանակ, մինչև ինչ-որ բան տեսանք հեռվում… Մենք տեսանք պատասխանը: Մեզնից երեքը տեսան, թե ինչպես Աստված պատասխանեց կրակով… թե ինչպես երկնքից իջնող կրակը կլանեց այն կրակը, որը երկրի վրա էր: Մի՛ խնդրեք ինձ տրամաբանորեն բացատրել դա, որովհետև ես չեմ կարող:

Փաստեր սուսերամարտի մասին

Սուսերամարտի մեջ դուք կմատնվեք պարտության, եթե ենթարկվեք ձեր հակառակորդի պայմաններին:

Աղոթքի ընթացքում մենք բառացիորեն զգացինք, թե ինչպես մթնոլորտային ճնշումն իջավ, և օդի ջերմությունն զգալիորեն նվազեց: Այն բանից հետո, երբ Ջոնը և ես գնացինք գրասենյակից, ավելի պակաս, քան մեկ ժամվա ընթացքում անձրև սկսվեց, և քամու ուղղությունը փոխվեց: Մինչև երեկո հրդեհը, որը երևում էր մեր տան ծածկապատշգամբից, ամբողջովին մարել էր: Այլևս ոչ մի տուն չայրվեց: Լուրերով հաղորդեցին, որ կրակն սկսել էր շարժվել հակառակ ուղղությամբ:

Իհարկե, ես գիտեմ, որ շատերն էին աղոթում՝ բացի մեր թիմից: Մենք տեսանք, թե ինչ կարող է կատարվել, երբ նպատակաուղղված՝ մեր ձայներով և հավատքովմիաբանվում ենք այլ մարդկանց հետ: Համարձակ հրշեջները, ոստիկանությունը, Ազգային գվարդիան և այլ զինվորական ստորաբաժանումներ անխոնջ աշխատում էին, և եթե նրանք կամենում էին պայքարել երկրային հրդեհի դեմ, նվազագույնը, որ մենք կարող էինք անել՝ Երկնքի օգնության համար աղաղակելն էր:

Աղոթելու հետ մեկտեղ, մեր անձնակազմը շատ էր աշխատում՝

օգնելով էվակուացված մարդկանց՝ գտնել իրենց ընտանիքները: Հերոսները հասկանում են, որ անհրաժեշտ է համատեղել գործողությունն աղոթքների հետ:

Հերոսները միացյալ ժառանգության մասն են

Եբրայեցիների թղթի 11-րդ գլխում գրված է.

> «Նրանք տեսան այն հեռվից, ձեռքով արեցին՝ փոխանցելով իրենց ողջույնները, և ընդունեցին այն փաստը, որ նրանք ժամանակավոր բնակիչներ էին այս աշխարհում» (խոսք 13, MSG):

Ի՞նչ տեսան հեռվում անցյալի հավատքի հերոսները: Մի՞թե թանկարժեք տներ և մեքենաներ: Չեմ կարծում: Ոչ ոք ձեռքով չի անում և չի ողջունում առարկաներին. մարդիկ ձեռքով են անում և ողջունում են *մարդկանց:*

Եթե մենք ցանկանում ենք հետևել նրանց օրինակին, պետք է հեռատես դառնանք:

Այս հերոսները չէին նայում նրան, ինչ իրենց ձեռքերում էր. նրանք զբաղված էին՝ ողջունելով այն, ինչ տեսնում էին հեռավոր հորիզոնում: Հերոսներն այն մարդիկ են, ովքեր ունեն հաստատ հույս և համոզվածություն Երկնքի հանդեպ, որովհետև հավատքը՝ հուսացած բաների հաստատությունն է և չերևացած բաների ապացույցը (տե՛ս Եբր. 11.1):

Կարդացե՛ք հաջորդ խոսքը, որը կստիպի ձեզ՝ խոնարհվել և համակվել երկյուղածությամբ, քանի որ մեր Բարձրյալ Աստված արժանի համարեց մեզ՝ նրանցից մեկը լինելու համար:

> «Եվ սրանք ամենքը հավատքով վկայություն առան, բայց խոստմունքը չընդունեցին, որովհետև Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց, որ նրանք առանց մեզ չկատարվեն» (խոսքեր 39,40):

Մենք կապակցված ենք այն շղթային, որը կազմված է նրանց կյանքերից: Մենք նրանց պատմության ավարտական գործողության մասն ենք: Նրանց բոլոր հերոսական գործերը սպասում են ամբողջացմանը՝ մեր գործերին միանալուց հետո:

Վերանայելով այս հավատքի հսկաների կյանքերը՝ ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ մենք պետք է մոտիկից տեսնենք այն, ինչ նրանք ընդամենը կարող էին հեռվից նշմարել: Նրանք աշխատեցին՝ առանց, նույնիսկ, ճաշակելու այն դաշտերի պտուղը, որն Աստված թույլ է տալիս մեզ հնձել:

- Նրանք թափառեցին ծանր պայմաններում, իսկ մենք օդափոխության համակարգով շենքեր ունենք:
- Նրանք անտուն էին, իսկ մենք ընտանիք ենք գտել Աստծո տան մեջ:
- Նրանք երգում էին միայնակ, ամայի վայրերում, իսկ մենք բարձրացնում ենք մեր ձայները հազարավորների հետ:
- Նրանց ձեռքերը դատարկ էին, իսկ մեր ձեռքերը լիքն են:

Ո՞րն է այն հավատքի հաստատությունը, որը մենք կարող ենք ներդնել այս հավատքի ժառանգության մեջ, թե՛ այդ ժամանակվա, թե՛ ներկայիս տեսանկյունից:

Ժամանակն է, որ աղոթենք հունձքի Տիրոջը՝ խնդրելով՝ բացել մեր աչքերը և լայնացնել մեր տեսադաշտը, որպեսզի մենք նույնպես կարողանանք տեսնել այս իրականությունից ավելի հեռուն և կատարենք հավատքի հերոսների գործերը: Արդյո՞ք հնարավոր է, որ մենք իրականացնենք այն, ինչ նրանք հռչակել էին: Արդյո՞ք հնարավոր է, որ մենք տիրենք այն ամենին, ինչը նրանք ընդունել էին ընդամենը՝ որպես խորհրդապատկեր:

> «Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը: Մտիկ տանք հավատքի Զորագլխին և Կատարողին՝ Հիսուսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ, և ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց» (Եբր. 12.1,2):

Մենք գիտենք, որ մենք ենք այն ուրախությունը, որը դրված էր Հիսուսի առջև: Ես հաճախ եմ մտածում՝ չէ՞ որ այս հավատքի հերոսներն ուրախանում են մեր շնորհիվ: Մի՞թե մենք շրջապատված չենք վկաների բազմությամբ ճիշտ այնպես, ինչպես որ

շրջապատված ենք հրեշտակային բանակներով:

Մենք պետք է գիտակցենք, որ հերոսուհիներ ենք, և Նա՝ իրական հերոսն է, Ով ապրում է մեր ներսում: Երբ այս գիտակցությունն աճում է, այն հաղթահարում է ցանկացած վախ, որը մենք զգացել ենք, երբ հասկացել ենք, որ թիրախ ենք: Մենք պետք է խորը շունչ քաշենք և հռչակենք. «Ես աներևակայելի հաղթության մեջ եմ, որովհետև ես «Աստծուց եմ, և հաղթեցի նրանց, քանի որ ավելի մեծ է Նա, Ով ինձանում է, քան թե նա, ով աշխարհի մեջ է»» (Ա Հովհ. 4.4):

Հենց հիմա ես աղոթում եմ, որ այս բառերը բորբոքեն ձեր սրտում սերմված հավատքը, և որ *հերոսուհի* լինելու հույսը ոգեշնչի ձեզ: Այնքա՜ն ոգեշնչող է նայել հայելու մեջ և հասկանալ, որ ձեզանում կա շատ ավելին, քան ինչ-որ մեկը կարող է տեսնել: Ձեր հերոսական ինքնությունը թաքնված է անտեսանելի իրականության մեջ: Հերոսուհի լինելը՝ երկրպագություն է Աստծուն:

Հերոսները գերմարդկային հատկանիշներ ունեն

> «Երկրի աստվածապաշտ մարդիկ
> Իմ ճշմարիտ հերոսներն են:
> Նրանք հաճելի են Ինձ» (Սաղմ. 16.3, NLT):

Ես սիրում եմ այս խոսքը, որովհետև այն հավասարեցնում է աստվածապաշտությունը հերոսության հետ: Ի՞նչ է նշանակում աստվածապաշտ լինելը: Ահա որոշ բառեր, որոնք սահմանում են աստվածապաշտությունը. *սուրբ, երկնային, գերբնական* և *գերմարդ:* Կրկին, սա նշանակում է, որ մենք գործում ենք

> «Ոչ թե զորությունով, և ոչ թե ուժով, այլ Իմ Հոգով, - ասում է Զորաց Տերը» (Զաքարիա 4.6):

Մեր հերոսական կարգավիճակը կախված չէ մեր մարդկային զորությունից կամ ուժից, և ո՛չ էլ մեր մարդկային հոգուց. այլ Նրա Հոգու զորությունից: Մենք կանչված ենք լինելու գերբնական և գերմարդկային անձնավորություններ, և ժամանակն է, որ սկսենք վարվել հենց այդպես: Կյանքը Հոգու մեջ՝ նշանակում է, որ մենք այլևս տեղի չենք տալիս ստոր արարքներին և զգացմունքներին,

որոնք թույլ չեն տալիս մեզ՝ բարձրանալ մեր սեփական ուժերից և ձգտումներից: Մենք նույնպես չենք կարող թույլ տալ, որ թշնամին մուտք գործի մեր կյանք՝ մեր իսկ գործողությունների պատճառով:

> «Որովհետև տակավին նախանձ և կռիվ և բաժանումներ կան ձեզանում. չէ՞ որ մարմնավոր եք և մարդկորեն եք վարվում»: (Ա Կորնթ. 3.3)

Դուք լսեցի՞ք սա: Մարդկորեն գործելը թույլ չի տա մեզ՝ տնօրինել այն, ինչ մեր ներսում է: Հեռացնելով նախանձը և կռիվները մեր կյանքերից՝ մենք իսկապես սկսում ենք գերմարդկորեն վարվել: Մենք գերազանցում ենք մարմնական նորմերը, երբ որոշում ենք միաբան լինել:

Գերհերոսները կարող են օգնել վտանգված և վախեցած մարդկանց, քանի որ նրանք հասկանում են, որ գործում են ավելի բարձր զորությամբ: Եթե պատկերացնենք, որ մեզնից յուրաքանչյուրը կարող է հերոսուհի լինել իր ուժերով, մենք շատ հեռու չենք գնա: Աստված է մեր զորության աղբյուրը, և մենք հաշվետու ենք Նրան, Ով զորացնում է մեզ և շնորհել է Իր՝ Հիսուսի անունը կրելու արտոնությունը:

Հերոսները խիզախ են

Խիզախությունը վտանգի մեջ՝ կռվի կեսն է:

—Պլավտոս

Հերոսները *մշտապես խիզախ* են, սակայն մի՛ կարծեք, որ *մշտապես խիզախ* լինելը նշանակում է՝ *երբեք չվախենալ*: Ես հայտնաբերել եմ, որ Ռալֆ Ուոլդո Էմերսոնի հետևյալ միտքը խորը ճշմարտություն է. «Հերոսն ավելի համարձակ չէ, քան սովորական մարդը, բայց նա համարձակ է հինգ րոպեով ավելի»:

Փաստեր սուսերամարտի մասին

Որևէ հարցում ասելիք ունենալը և ձեր պատասխանն զգուշորեն ընտրելը՝ իրական սուսերամարտիկի հատկանիշ է:

Լինում են պահեր, երբ «հինգ

րոպեով ավելի համարձակ լինելը» իրականում նշանակում է՝ լուռ մնալ, երբ մարդիկ դուրս են գալիս ձեր դեմ, քանի որ դա թույլ է տալիս Աստծուն՝ ասել վերջին խոսքը: Այլ դեպքերում, «հինգ րոպեով ավելի համարձակ լինելը» նշանակում է՝ պահպանել ձեր դիրքորոշումը և կայուն լինել: «Հինգ րոպեով ավելի համարձակ լինելը» ոչ մի դեպքում չի նշանակում՝ լռել կամ զիջել ձեր դիրքը, երբ անպաշտպան մարդիկ վտանգված են: Հաճախ պայքարները պսակվում են հաղթանակով, ստերը բացահայտվում են, և թշնամիները պարտվում են, որովհետև դուք վերջինն եք, ով կանգնած է մնում մարտի դաշտում: Խիզախությունը կօգնի ձեզ՝ հաստատուն մնալ:

Կյանքում կան շատ բաներ, որոնք փորձում են վախեցնել մեզ: Մենք չենք կարող դադարեցնել վախի գրոհները, ինչպես որ չենք կարող կանգնեցնել քամին: Այնուամենայնիվ, մենք մշտապես կարող ենք ընտրել, թե ինչպես ենք արձագանքում իրավիճակներին: Նույն քամիները, որոնց օգնությամբ արծիվը սավառնում է, սարսափեցնում էին նրան, երբ նա դեռ արծվիկ էր: Թո՛ւյլ տվեք, որ վախը մոտեցնի ձեզ Աստծուն:

Հերոսների կյանքում կա ավելին

Մենք կարող ենք ասել, որ բոլոր հերոսների կյանքում կա ավելին, մեկ պարզ պատճառով. նրանք նվիրել են իրենց կյանքերն ավելի մեծ նպատակի:

Հերոսն այնպիսի մարդ է, ով նվիրում է իր կյանքը մի բանի, որն ավելի մեծ է, քան ինքը:

— Ջոզեֆ Քեմփբել

Հերոսները պայքարում են՝ հանուն որոշակի նպատակների, ոչ թե հանուն իրենց: Նրանք ձգտում են իրականացնել այնպիսի նպատակ, որն ավելին է, քան իրենց անձը, ինչը դրդում է նրանց՝ ռիսկի դիմել՝ լինելով *ավելի* համարձակ, գթասիրտ, հոժարակամ, պատասխանատու և խիզախ: Հերոսները հասկանում են, որ

մշտապես կա ավելին, քան այն, ինչը տեսնում է մարդու աչքը: Հերոսները չեն վախենում կանգնել ինչ-որ հարցի համար կամ առանձնանալ ինչ-որ բանում: Սովորական իրականությունից բարձրանալու պատրաստակամությունը արտասովոր է դարձնում նրանց:

Ներկայումս, երբ գրում եմ այս գիրքը, *«Վրիժառուները»* ֆիլմը բոլոր ժամանակների երրորդ ամենաեկամտաբեր կինոնկարն է: Հետաքրքիր է նշել, որ վրիժառուն ընդամենը սխալներից ամենաճիշտն է: Այս ֆիլմի հաջողության պատճառներից մեկն այն է, որ վրիժառուները յուրօրինակ հերոսներ են, ովքեր սովորում են գործել՝ որպես մեկ թիմ: Նրանցից յուրաքանչյուրը մեծ կարողություն ունի, բայց միասին նրանք անպարտելի են:

Կապիտան Ամերիկան գերազանց ուժի և պատվի տեր անձնավորություն է: Այս հատկանիշները հաղթող են դարձնում նրան, բայց նա մի փոքր միամիտ է: Տորը անմիջական և բարի սիրտ ունեցող անձնավորություն է՝ իր հսկա անհաղթահարելի մուրճից անբաժան, բայց նա վստահում է իր եղբորը, թեև չպետք է անի դա: Երկաթե Մարդը փայլուն և զվարճալի անձնավորություն է. նա զուսպ բնավորություն ունի, բայց նույնպես հեգնոտ է և մի փոքր հղփացած: Հալկը անտաշ ու կոպիտ ուժ ունի, որը գրեթե չի վերահսկում: Սև Այրին շատ ճարպիկ է և չի կորցնում իրեն ճնշման ներքո, բայց նա մութ անցյալ է ունեցել: Այս ցուցակը կարող է ընդգրկել բազմաթիվ այլ գերհերոսների, բայց իմաստն այն է, որ նրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ ուժեղ *և* թույլ կողմեր:

Բացի Հիսուսից՝ յուրաքանչյուր աստվածաշնչյան հերոս ուժեղ և թույլ կողմեր ուներ: Գերհերոսների կարելի է գտնել երկու սեռերի մեջ. նրանք լինում են տարբեր ձևերի և չափերի… ինչպես դուք և ես:

Քրիստոնյա բառը նշանակում է՝ Քրիստոսի հետևորդ և օծված մարդ: Մենք երկրպագում ենք մեր հերոսին՝ Հիսուսին, թույլ տալով, որ Աստծո մատակարարումը և շնորհքը հերոսուհիներ դարձնեն մեզ: Լսե՛ք Պողոսի խրատները Եփեսոսի եկեղեցուն.

> «Աստված ուժեղ է և ցանկանում է, որ դուք նույնպես ուժեղ լինեք: Այնպես որ, վերցրե՛ք այն ամենը, ինչ Տերը որոշել է ձեզ համար՝ հմտորեն պատրաստված զենքեր լավագույն նյութերից: Եվ գործադրե՛ք դրանք, որպեսզի կարողանաք

> կանգնել ընդդեմ այն ամենի, ինչը սատանան նետում է ձեզ վրա: Սա ցերեկային սպորտային մրցույթ չէ, որից մենք կհեռանանք և երկու ժամից լիովին կմոռանանք այդ մասին: Սա կյանքի և մահու տևական պայքար է սատանայի և նրա հրեշտակների դեմ:
> Պատրա՛ստ եղեք: Դուք դուրս եք եկել մի բանի դեմ, որը շատ ավելին է, քան կարող եք հաղթահարել ձեր ուժերով: Վերցրե՛ք ամբողջ օգնությունը, որը կարող եք ստանալ, ամեն զենք, որ Աստված պատրաստել է, որպեսզի երբ ամեն ինչ ավարտվի և միայն գոչյուններ լսվեն, դուք դեռևս ձեր ոտքերի վրա լինեք: Ճշմարտությունը, արդարությունը, խաղաղությունը, հավատքը և փրկությունը պարզապես բառեր չեն: Սովորեք, թե ինչպես գործադրել դրանք: Դուք կունենաք դրանց կարիքը ձեր ամբողջ կյանքի ընթացքում: Աստծո Խոսքը՝ *անփոխարինելի* զենք է: Նույն կերպով, աղոթքն էապես կարևոր է այս անդադար պատերազմի մեջ: Աղոթե՛ք ջանասիրաբար և երկար: Աղոթե՛ք ձեր եղբայրների և քույրերի համար: Բա՛ց պահեք ձեր աչքերը: Պահպանե՛ք մեկդ մյուսի հոգիներն զգոնության մեջ, որպեսզի ձեզանից ոչ ոք ետ չմնա կամ չընկնի» (Եփես. 6.10-18, MSG):

Այս հատվածը մեծածավալ տեղեկություններ է պարունակում: Առանձնացնենք մի քանի կարևոր կետեր, որովհետև Եփեսացիների ուղերձի այս խոսքերն ամփոփում են ամբողջ ուղերձի ասելիքը:

1. Աստված ուժեղ է, և Նա ցանկանում է, որ Իր դուստրերը նույնպես ուժեղ լինեն:
2. Նրա զենքերը գերազանց են:
3. Եթե ունենք այս զենքերը, թշնամու ոչ մի հարձակում չի կարող շեղել ձեզ ճանապարհից:
4. Դուք կյանքի և մահու հոգևոր պայքարի մեջ եք:
5. Դուք հանկարծակիի չեք գա, եթե պատրաստվեք հիմա:
6. Դուք չեք կարող պայքարել ձեր մարդկային ուժերով:
7. Դուք պետք է գործադրեք ճշմարտությունը, արդարությունը, խաղաղությունը, հավատքը և փրկությունը ամբողջ կյանքի ընթացքում:
8. Աստծո Խոսքը՝ անփոխարինելի զենք է:
9. Աղոթելն ընտրովի չէ:

Մեր երկնային Հայրը նախապես գիտեր մեր ամեն մի կարիքի մասին, և Նա զորացրել է մեզ՝ հաղթելու համար: Մեզ սպասում է լավագույն սպառազինությունը, որն անպարտելի է և պատրաստված է հատուկ մեզ համար: Մեր սպառազինության անժամանակյա արժեքները զորավոր են՝ հաղթելու համար թե՛ ներկա, թե՛ ապագա պայքարներում: Մենք լույսի և խավարի պայքարի մեջ ենք. մահը և կյանքը դրված են նժարներին: Մենք չպետք է շրջվենք և փախչենք վախի պատճառով:

Փաստեր սուսերամարտի մասին

Սանձե՛ք ձեր թշնամու ագրեսիվ տրամադրվածությունը՝ հարձակվելով ամեն անգամ, երբ նա չափից ավելի է մոտենում ձեզ՝ պատրաստելով իր հարձակումը:

Քանի դեռ ապրում ենք այս երկրի վրա, վիշապը շարունակելու է պատրաստել զենքեր, որոնցով փորձելու է հաղթել մեզ: Թշնամին կմոլեգնի և պատերազմ կվարի Աստծո բոլոր դուստրերի դեմ: Բայց նա չի հաղթի, որովհետև մեր ձեռքերում կրակի մեջ ձուլված թրեր են: Երբ Աստծո դուստրերը մերկացնում են իրենց թրերը, թշնամին նահանջում է:

Նայե՛ք առաջ, ամո՛ւր կանգնեք, բարձրացրե՛ք ձեր թուրը, և թող թշնամին տեսնի հերոսուհու դուրեկան դեմքը:

4

Մարտադաշտը

«Որովհետև մեր պատերազմը արյան և մարմնի դեմ չէ,
այլ՝ իշխանությունների և պետությունների դեմ,
այս աշխարհի խավարի աշխարհակալների դեմ,
այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են»:

— Եփեսացիների 6.12

Այս գլխում մենք կպատասխանենք, թե «որտե՞ղ է տեղի ունենում այս պայքարը» և «ո՞վ է իմ թշնամին» հարցերին:

Այս հարցերի հակիրճ և պարզ պատասխանները հետևյալն են. մեր պայքարը տեղի է ունենում անտեսանելի իրականության մեջ, իսկ մեր թշնամիները՝ այն մարդիկ չեն, ում մենք ճանաչում ենք:

Մենք ապրում ենք մշտապես փոփոխվող աշխարհում, որտեղ ժամանակը՝ այն ձևով, որով մենք գիտենք, շուտով կանցնի՝ տեղի տալով հավիտենությանը: «...որովհետև այս աշխարհի կերպարանքն անցնում է» (Ա Կորնթ. 7.31):

Երկիրը և այն ամենը, ինչ իր մեջ է, ստեղծվել է նրանից, ինչը մենք դեռ չենք կարող տեսնել:

Եկեք օրինակ բերենք հզոր ատոմը: Կարո՞ղ է անզեն աչքը տեսնել այն: Ո՛չ: Բայց ատոմի զորությունը և սքանչելիությունը գոյություն ունեն անկախ նրանից՝ մենք տեսնո՞ւմ ենք այն, թե՞ ոչ: *«Խառնակչի նամակները»* գրքում մի դևն զգուշացնում է մյուսին. «Ամենից առավել մի՛ փորձիր օգտագործել գիտությունը (ես նկատի ունեմ իրական գիտությունը)՝ որպես պաշտպանություն՝ ընդդեմ

քրիստոնեության: Այն դրականորեն կխրախուսի նրան՝ մտածել այնպիսի իրողությունների մասին, որոնց նա չի կարող հպվել կամ տեսնել»[3]:

Մենք չենք կարող համարել, որ այն, ինչն աննկատ է մեզ համար, չի ազդում մեզ վրա: Ժամանակն է օգտագործել մեր միտքը: Կա մի վատ լուր. ձեր միտքը պայքարի մեջ է, և դուք ոչ մի կերպ չեք կարող խուսափել դրանից:

> «Որովհետև մեր պատերազմը արյան և մարմնի դեմ չէ, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս աշխարհի խավարի աշխարհակալների դեմ, այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են» (Եփես. 6.12):

Բայց կա նաև լավ լուր. դուք կարող եք որոշել, թե ինչ զենքով եք պայքարելու: Մեր թշնամին ցանկանում է շեղել մեր ուշադրությունն այս անտեսանելի պայքարից, որպեսզի շփոթվենք և վերահսկվենք չարի դրսևորումներով: Նա չի ցանկանում, որ մենք տեսնենք այն աղբյուրը, որից էլ հենց առաջանում են բոլոր դրսևորումները, և հարվածենք դրան: Մենք չենք կարող պարտության մատնել այս թշնամուն մարդկանց հետ պայքարելու միջոցով: Այդ փորձը կարելի է նմանեցնել նրան, որ ինչ-որ մեկը ցանկանում է ոչնչացնել ծառը՝ պոկելով բոլոր պտուղները: Ծառը ոչնչացնելու համար պետք է վնասել արմատները:

Կա չարի մի ամբողջ «ստորգետնյա» համակարգ, որը հաճախ գործում կամ դրսևորվում է մարդկանց միջոցով: Դուք մարդկանց թիրախը չեք, թեև երբեմն կարող է այդպես թվալ: Կա շատ ավելի խորամանկ և հին թշնամի, ով ցանկանում է կործանել ձեզ, որովհետև վիշապը վախենում է նրանից, ինչ դուք կրում եք:

Ինչպես որ ծննդաբերության ցավերը նախորդում են բնական ծնունդին, այնպես էլ կան ժամանակավոր պայքարներ, որոնք նախորդում են հավիտենական երազանքների իրականացմանը: Այսօր թվում է, թե մի *մղձավանջ* մթագնեցնում է Տիրոջ ամենից արժանավոր և փառավոր *երազանքը:* Որպես անհատներ՝ մենք Նրա երազանքն ենք, ում համար Նա պայքարել է և ում Նա շահել է: Բայց և այնպես, Նրա հույսերը մեզ համար չեն ավարտվում

այսքանով. մենք տեսնում ենք Նրա երազանքը բոլորիս համար այս՝ Հոգուց ոգեշնչված աղոթքի մեջ.

> «Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, *որ նրանց խոսքով կհավատան Ինձ:* Որ ամենքը մեկ լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն, որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ: Եվ Ես այն փառքը, որ Ինձ տվիր, նրանց տվի, որ մեկ լինեն, ինչպես Մենք էլ մեկ ենք: Ես նրանցում և Դու Ինձանում, *որ կատարյալ լինեն միությունում*, որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու ուղարկեցիր Ինձ, և սիրեցիր նրանց, ինչպես Ինձ սիրեցիր» (Հովհ. 17.20-23, շեղագիրն ավելացված է):

Իր վերջին ընթրիքի սեղանին, շրջապատված տասնմեկ հավատացող աշակերտներով, Հիսուսն աղոթում էր մեզ համար՝ այն մարդկանց, ովքեր աշակերտների շնորհիվ մի օր հավատալու էին: Սուրբ գրքում մենք տեսնում ենք, թե ինչպես նրանք հետևեցին Հիսուսին, լքեցին Նրան, բայց հետո վերադարձան՝ Նրան փառք բերելու համար: Հիսուսին անհրաժեշտ էր, որ նրանք իրենց կյանքերով և խոսքերով վկայեին, որպեսզի հայտնեին Իրեն մեզ: Հիմա եկել է ժամանակը, որ մենք հայտնենք Հիսուսին այլ մարդկանց: Սա նշանակում է, որ այլ մարդիկ կհավատան ձեր շնորհիվ:

Ինչպես որ ծննդաբերության ցավերը նախորդում են բնական ծնունդին, այնպես էլ կան ժամանակավոր պայքարներ, որոնք նախորդում են հավիտենական երազանքների իրականացմանը:

Ինչպե՞ս դա տեղի կունենա: Աստծո փառքի միջոցով: Աստծո փառքի շատ սեղմ սահմանումն է՝ «Աստծո ամբողջական չափը» կամ «Նրա լիությունը»: Աստված ամբողջովին զոհեց Իր միածին Որդուն, իսկ Հիսուսը զոհեց Իր կյանքը մինչև վերջ: Աստված ոչինչ չպահեց և չխնայեց: Նրանք կատարելապես միաբան էին Իրենց նպատակով և գործելակերպով: Հիսուսի աղոթքի նպատակը մեզ համար այն էր, որ մենք ունենանք մեկ սիրտ և միտք, որպեսզի այս աշխարհը ևս մեկ անգամ, Հոգու միջոցով, Իր հարսնացուի մեջ տեսնի Հոր և Որդու փառքը:

Ցավոք, Հովհաննես 17-րդ գլխում կարդալով այս խոսքերը, ես հասկացա, որ երբեմն նույնիսկ Հիսուսը պետք է երկար սպասի՝ Իր աղոթքների պատասխանն ստանալու համար… որովհետև, անկասկած, մենք դեռ այդպիսին չենք:

Բոլորս էլ յուրահատուկ ենք. մեր տեսքը, ձայնը, մաշկի բույրը և զգացմունքները տարբեր են: Մեր երկրպագության արտահայտությունը կարող է և պե՛տք է տարբերվի, բայց եթե մենք ցանկանում ենք, որ մեր ընդհանրական մարմինն սկսի գործել, մենք *պետք է մեկ* լինենք: «Մեսիջ» թարգմանությունն այսպես է վերծանում Հովհաննեսի 17.23-ը.

> «Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում:
> Այդ ժամանակ նրանք կհասունանան այս մեկության մեջ,
> Եվ *վկայություն* կտան այս անաստված *աշխարհին*,
> Որ Դու ուղարկեցիր Ինձ և սիրեցիր նրանց
> *Նույն կերպով, ինչպես Դու սիրեցիր Ինձ»:*
> (շեղագիրն ավելացված է)

Եթե մենք միաբան լինենք, աշխարհը դեռ կարող է հավատալ, բայց եթե մենք պառակտող և պառակտված լինենք, ամեն ինչ ուղղված կլինի մեր դեմ: Քրիստոնյա մշակույթների և համայնքների ներկա վարքնստիպել է այս աշխարհի մարդկանց՝ վիճարկել մեր բոլոր համոզմունքները: Արդյո՞ք վարվում ենք այնպես, ասես Աստված ուղարկել է Իր միածին Որդուն՝ այս աշխարհը փրկելու համար, թե՞ մեր վարքը ցույց է տալիս, որ մենք մտահոգված ենք միայն ինքներս մեզանով: Արդյո՞ք մենք հավատում ենք, որ Աստված սիրում է մարդկանց նույն կերպով, ինչպես որ սիրում է Հիսուսին: Մի՞թե դժվար է պատկերացնել, որ Աստված սիրում է մեզ ճիշտ այնպես, ինչպես Նա սիրեց Իր երկնային Որդուն: Ես հավատում եմ՝ եկել է ժամանակը, որ մենք սկսենք վարվել՝ որպես Հիսուսի աղոթքի պատասխան: Երբ մեկ սիրտը և միտքն իրականություն դառնան, կկատարվի հետևյալը.

> «Հա՛յր, Ես ցանկանում եմ, որ նրանք, որոնց Դու տվեցիր Ինձ,
> *Լինեն Ինձ հետ, ճիշտ այնտեղ, որտեղ Ես եմ,*
> Որպեսզի նրանք կարողանան տեսնել Իմ փառքը՝ այն

մեծափառությունը, որը Դու տվիր Ինձ,
Քանի որ սիրեցիր Ինձ
Շատ ավելի վաղ, քան աշխարհի գոյություն ունենալը»:
(Խոսք 24, MSG, շեղագիրն ավելացված է)

Հասկանո՞ւմ եք, որ դո՛ւք եք այն պարգևը, որը Հայրը տվեց Իր Որդուն: Պատկերացրեք, որ Հայրն ասեր. «Ահա, Հիսո՛ւս, թաքցրու նրան Քո սրտում: Այս դուստրը՝ գանձ է, որը Դու կհայտնաբերես ավելի ուշ»: Այս մեկությունը՝ առեղծված է: Ինչպե՞ս մենք կարող ենք Նրա հետ լինել, երբ դեռ այս երկրի վրա ենք: Պատասխանը հետևյալն է. Քրիստոսում բոլորը մեկ են դառնում: Այս անաստված աշխարհը ապացույց է փնտրում այն մասին, որ Քրիստոսը մեզանում է: Ես կասկածում եմ, որ նրանք կկարողանան տեսնել սա, քանի դեռ մենք չենք գիտակցում այն հրաշալի իրողությունը, որում ապրում ենք՝ լինելով Քրիստոսի մեջ: Եվ մենք կգիտակցենք այս իրողությունը, երբ շրջվենք ինքներս մեզնից և *նայենք Նրան:*

Եփեսացիների թուղթը լավագույնս բացատրում է այս առեղծվածը.

> «Նրանում մենք փրկություն ունենք Նրա արյամբ, մեր հանցանքների ներումը՝ ըստ Իր շնորհքի հարստության, որը Նա շռայլորեն տվեց մեզ, ամբողջ իմաստությամբ և հանճարով՝ հայտնելով մեզ Իր կամքի առեղծվածը, համաձայն Իր նպատակի, որը Նա սահմանեց Քրիստոսում որպես ծրագիր՝ ժամանակվա լրման համար, որպեսզի միավորի ամեն ինչ Նրանում՝ այն բաները, որ երկնքում են, և այն բաները, որ երկրի վրա են» (Եփես. 1.7-10, ESV):

Այս սուրբգրային հատվածը կրկին պարզ է դարձնում, որ Աստված ոչինչ չէր պահել մեզնից: Մենք շռայլորեն փրկություն և ներում ստացանք. մեզ շնորհվեց իմաստություն և հանճար՝ ճանաչելու համար և՛ Նրա կամքի առեղծվածը, և՛ այն նպատակը, որը նախորոշված էր Քրիստոսում, որպեսզի երկինքը և երկիրը միավորվեն Նրանում: Հիսուսը եկավ, երբ լրացավ ժամանակը, և այժմ, երբ մենք այս երկրի վրա ենք, ժամանակն սպառվում է: Ի՞նչ կարող էր կատարվել, եթե մենք ունենայինք մեկ սիրտ, մեկ ձայն,

մեկ տեսիլք և նպատակ, մեկ անուն, մեկ թագավորություն և մեկ առաքելություն, որը Հիսուսին փառավորելն է: Մենք ևս մեկ անգամ կապրեինք այնպես, որ մեր հյուծված երկիրը հանդիպեր Երկնքին:

Խաղաղությունն ինքնին տեղի չի ունենում: Խաղաղությունը՝ Աստծո որդիների և դուստրերի աշխատանքի արդյունքն է:

> «Աստված օրհնում է նրանց, ովքեր գործում են խաղաղության համար, որովհետև նրանք կկոչվեն Աստծո զավակներ»:
> (Մատթ. 5.9, NLT)

Բաժանությունը տեղի է ունենում առանց՝ մեր կողմից արված որևէ աշխատանքի կամ ներդրման: Բաժանությունն այս աշխարհի բնական ընթացքն է՝ մարդկության անկումից ի վեր: Միաբանությունը և խաղաղությունը պահանջում են նպատակաուղղված և մարտավարական իմաստություն: Մենք պետք է իրագործենք երկնային որոշումները, որպեսզի հակառակվենք այն ընթացքին, որը թելադրում է մեր մշակույթը:

Բաժանությունը երբեք չի փառավորում Հիսուսին: Անհամաձայնությունը բաժանում է սրտերը, ընտանիքները, ձայները, տեսիլքը, նպատակը և թագավորությունները: Բաժանությունն արտահայտվում է տարբեր կերպով՝ հպարտությամբ, զայրույթով, բարկությամբ, մրցակցությամբ, չարախոսությամբ, բամբասանքով, անեծքներով, պառակտմամբ, դառնությամբ և վիրավորանքներով, կախարդությամբ և կռապաշտությամբ (տե՛ս Գաղատ. 5.19-21): Այս ամենը մուտք է գործում մեր կյանք, երբ մենք ապրում ենք մարմնավոր կամ բիրտ մարդկային բնազդներով: Թեև բաժանությունը տարբեր դրսևորումներ ունի, դրա վերջնական նպատակը մեկն է՝ մեր կործանումը:

> «Բայց եթե դառը նախանձ և հակառակություն ունեք ձեր սրտերում, մի՛ պարծեցեք և սուտ մի՛ ասեք ճշմարտության դեմ: Այս իմաստությունը վերևից իջած չէ, այլ երկրավոր, շնչավոր և դիվական, որովհետև ուր որ նախանձ և կռիվ կա, այնտեղ անկարգություն և ամեն չար բաներ կան»:
> (Հակոբ. 3.14-16)

Աստծո նպատակներից մեկն այն է, որ Իր ժողովուրդը միաբանվի և հասկանա, որ Աստված նախանձավոր է, որ Իր հարսնացուի զգացմունքները պատկանում են միմիայն Իրեն: Սա նշանակում է, որ երբեմն մենք պետք է պայքարենք՝ մեկ դառնալու համար: Հիսուսը հաղթեց մահը, դժոխքը և գերեզմանը, որպեսզի կարողանար մեկ լինել մեզ հետ, և որպեսզի մենք կարողանայինք մեկ լինել իրար հետ: Ամենաարդյունավետ հարաբերությունները «կռվում» են այն ժամանակ, երբ մետաղը հանդիպում է այլ մետաղի, և նրանց շփման արդյունքում երկուսն էլ սրվում են: Դուք գրեթե մշտապես կբախվեք մեծագույն հակառակության, երբ որոշում կայացնեք քայլել դեպի միաբանությունը:

Փաստեր սուսերամարտի մասին

Թրի հրապուրանքն այնքան անհաղթահարելի էր, որ տասնվեցերորդ դարում ավելի շատ ազնվականներ (40. 000) մահացան մենամարտերում (սրամարտերում՝ իրենց պատիվը պաշտպանելու համար), քան պայմանագրային զինվորական ծառայության ժամանակ:

Ամեն անգամ, երբ միասնության դրոշ բարձրացնեք՝ շատերին ծածկելու և զորացնելու համար, դուք կտեսնեք, թե ինչպես է բաժանությունը փորձում ներհյուսել իր կախարդանքն այդ միաբանության շարքերում: Կրկին ու կրկին ես տեսել եմ միևնույն մարտավարությունը ամեն ինչում՝ սկսած ընկերություններից մինչև եկեղեցիները: Ուշադրությունը շեղվում է նրանից, թե ինչու դուք որոշեցիք միաբանվել դեպի այն միտքը, որ ձեր կարիքներն այդ միության մեջ չեն լրացվում:

Եթե դուք անցնում եք դժոխքով, շարունակեք գնալ:

—Ուինսթոն Չերչիլ

Պետք չէ հաստատվել դժոխքում… պետք է առաջ շարժվել: Որպես օրինակ կարելի է բերել ամուսնությունը: Չգիտեմ, թե ինչպես էր ձեր կյանքում, բայց Ջոնը և ես պայքարելու կարիք

չունեինք, երբ դեռ հանդիպում էինք: Այնուամենայնիվ, այն բանից հետո, երբ մենք ամուսնացանք և ուխտ կնքեցինք Աստծո առջև, որ մեկ ենք լինելու, ասես մի անջրպետ քանդվեց մեզ վրա: Ընտանիքի միակ խնդիրը՝ վեճերը չեն. ընտանիքը՝ որպես հաստատություն, նույնպես հարձակման տակ է: Մենք չպետք է վերասահմանենք այն, ինչ Աստված սահմանել է, և չպետք է բաժանենք այն, ինչ Նա միավորել է: Բաժանությունները համատարած են, քանի որ այս սերունդը որոշել է, որ ամուսնական զույգը կարող է դավաճանել և լքել մեկը մյուսին, եթե զգում են, որ այլևս սիրահարված չեն իրար:

Գոյություն ունեն հարձակումներ ընդդեմ ամուսնությունների, և հարձակումներ ամուսնությունների ներսում: Ես չեմ կարող ասել ձեզ, թե քանի՞ անգամ ենք Ջոնը և ես ցնցվել՝ լսելով այնպիսի զույգերի մասին, ովքեր երբեք բախումներ չեն ունեցել, բայց բաժանության եզրին են: Մենք հասկացել ենք, որ երբեմն բախումների բացակայությունն ամուսնության *մեջ* նշանակում է, որ դուք չեք պայքարում ձեր ամուսնության *համար:* Երբեմն պետք է պայքարեք՝ մեկ դառնալու համար:

Ինչպես գիտեք, վիշապները չեն առաջացել առասպելական բանահյուսությունից: Խոսելով վիշապների մասին՝ մենք նկատի ունենք սատանային՝ այն ծեր օձին, ով հոգևոր մահ է բերում: Մրցակցությունը, չարախոսությունը, համեմատությունները և բաժանություն սերմող բառերը՝ այս վիշապի լեզուն են:

Ինչպես որ կինը, ում մասին գրված է Հայտնության գրքում, խորհրդապատկերում է Իսրայելը, Մարիամին, կանանց և Նրա հարսնացուին, այնպես էլ վիշապը խորհրդապատկերում է Եդեմի օձին, սատանային, լևիաթանին և այն ամենը, ինչը ձգտում է արատավորել և աղավաղել Աստծո բնավորությունը և Խոսքը: Այս վիշապը խորամանկ և չար է, և գործում է հակաքրիստոսի ոգով:

Օձը հարձակվեց, մինչև որ Ադամը և Եվան հասցրին կատարել Աստծո պատվիրանը, որը Եդեմում ծաղկունք ապրելն էր: Նա բաժանեց ոչ միայն նրանց, այլև նրանց իշխանության տարածքը՝ հեռացնելով նրանց Աստծո պարտեզից, որտեղ նրանք ապահով էին և ոչնչի կարիք չունեին:

Տիեզերքում չկա չեզոք տարածք.
Աստված պահանջ է ներկայացնում, իսկ սատանան հակահայց է
հարուցում ամեն քառակուսի սանտիմետրի
և ամեն ակնթարթի համար:

— Կ. Ս. Լյուիս

Նա դեռևս սողոսկում է մղձավանջների ստվերներում և սպասում է, որ հարձակվի նրանց վրա, ովքեր կհամարձակվեն երազել: Վիշապը դիտավորյալ բաժանում, ստորացնում և հիասթափեցնում է յուրաքանչյուրին, ով հույս ունի, որ կբարձրանա և կապրի լույսի մեջ, ով համարձակվում է երազել խավարում:

Սիրելի դո՛ւստր, եթե դուք համարձակվում եք երազել, պետք է նաև բավականին համարձակ լինեք՝ պայքարելու համար:

Աչքի անցկացրեք ձեր կյանքը հերոսուհու տեսանկյունից և տեսեք ավելին, քան ձեզ շրջապատող մարդիկ և այն ցավը, որն զգում եք կյանքում: Քանի՞ անգամ եք նկատել օձին, որը փաթաթված է ստվերներում, ով թաքնված սպասում է հարմար պահի, որպեսզի հարձակվի ձեր հույսերի և երազանքների վրա:

Երբ փոքր աղջնակ էիք, միգուցե վիշապը կրակե խոսքեր էր ասում ձեզ, որոնք մոխրի էին վերածում ձեր հույսերը: Միգուցե նա փոխում էր իր բառերն այնքան ժամանակ, մինչև այդ մտքերը ձերն էիք համարում: Միգուցե ինչ-որ մեկն ասել է ձեզ, որ դուք տգեղ, գեր, վտիտ, ձանձրալի, հիմար կամ չափից ավելի խելացի եք, չափից ավելի կարճահասակ կամ բարձրահասակ եք: Միգուցե ձեր ծնողների սերը փոխվել է ատելության, և ձեր նախկին ընտանեկան ապաստանն անկենդան պատսպարան է դարձել: Միգուցե ինչ-որ մեկը, վիշապի վրա նստած, գիշերով եկել է ձեզ մոտ և հպվել է այնպիսի տեղերի և այնպիսի ձևերով, որ այժմ դուք խայտառակված և կեղտոտ եք զգում: Միգուցե ամոթի օձը սողալով հեռացել է՝ ասելով. «Ի՛նքդ խնդրեցիր սա. դու ցանկանո՛ւմ էիր սա. դո՛ւ ստիպեցիր, որ անեմ սա»:

Մեղադրանքի խոսքերը տարօրինակ կերպով շարունակում են շրջապատել կանանց՝ սկսած Ադամի ժամանակներից: Երբ

պահապանին չի հաջողվում պաշտպանել իր տիրույթը, շատ ավելի հեշտ է մեղադրել, քան ընդունել սեփական ձախողումը: Ճշմարիտ է, որ օձը խաբեց Եվային, բայց Ադամը չէր խաբվել: Նա կամովի վերցրեց այն, ինչ իրենը չէր: Նա ցանկացավ Աստված լինել՝ Աստծուն ենթարկվելու փոխարեն: Նույնիսկ այսօր, երբ տղամարդը գողանում է որևէ աղջկա կամ կնոջ արժանապատվությունը, ավելի հեշտ է մեղադրել՝ ասելով, որ նա այդպես է վարվել Եվայի ազդեցության պատճառով, քան խոստովանել ճշմարտությունը, որ նա ցանկանում էր գողանալ նրա առաքինությունը և իշխեր նրան:

Անցել են հազարամյակներ. արդյո՞ք տղամարդն ազատ է դարձել՝ մեղադրելով կնոջը: Ո՛չ: Արդյո՞ք կինը ազատ է դարձել՝ մեղադրելով տղամարդուն: Ո՛չ: Հիսուսը եկավ, որպեսզի մեկընդմիշտ հեռացնի մեղադրանքը: Մեղադրանքը մշտապես շեղում է մեզ նրանից, թե ինչ է իրականում տեղի ունենում: Ցանկացած ցավ, որը մարդիկ պատճառել են մեզ, պարզապես ստվերային տիկնիկ է, որի ձեռնածուն թաքնված է կուլիսների ետևում: Մենք չենք կռվում մարմնի և արյան դեմ: Վիշապը՝ իրական հարուցիչը, թաքնվում է ստվերներում: Նա հաճույքով է աղավաղում Աստծո զավակների արարքները և պատկերացումները: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք օձի թիրախն են: Նա ցանկանում է թալանել բոլորին: Նա ցանկանում է գողանալ մեր անդրանիկությունը և զրպարտել մեզ՝ կասկածի ենթարկելով այն փաստը, որ մենք կարողենք կրել Աստծո պատկերը: «Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի» (Հովհ. 10.10):

Գողությանը հետևում են մահը և կործանումը: Ադամը և Եվան վերցրին այն, ինչ իրենցը չէր, և մահն անմիջապես մուտք գործեց մեր հավիտենական պարտեզի մեջ: Կարճ ժամանակ անցամբողջ երկիրը կործանման զոհ դարձավ:

> «Սրա համար, ինչպես մեկ մարդու ձեռքով մեղքը մտավ աշխարհ, և այն մեղքով էլ մահը, և այսպես մահն ամեն մարդու վրա տարածվեց, ըստ որում (կամ՝ որովհետև) ամենքը մեղանչեցին» (Հռոմ. 5.12):

Հիսուսը որոշեց, որ մենք ծաղկունք ապրենք՝ անձամբ և միասին վերականգնելով այն, ինչը կորսվեց գողության, մահվան և կործանման պատճառով: Երբ մենք միաբանված լինենք մեկ նպատակի շուրջ և անհատապես ծաղկունք ապրենք՝ զարգացնելով մեր ուժեղ կողմերը, մենք ևս մեկ անգամ կնմանվենք փառավոր պարտեզի, որի գլխավոր պարտիզպանը Տերն է:

«*Այդ ժամանակ* Աստված դուրս կքաշի իր թուրը՝
Իր անողորմ, ահռելի, զորավոր թուրը:
Նա կպատժի Լևիաթան փախչող օձին,
Լևիաթան օձին, որը ոլորվում է փախչելիս:
Նա կսպանի այդ ծեր վիշապին,
Որն ապրում է ծովում:

Միևնույն ժամանակ, մի գեղեցիկ խաղողի այգի կհայտնվի:
Ահա և մի բան, որի մասին կարելի է երգե՛լ:
Ես՝ Աստվածս, խնամում եմ այն,
Ես մշտապես լավ ոռոգում եմ այն:
Ես ուշադրությամբ հսկում եմ այն,
Որպեսզի ոչ ոք չկարողանա վնասել այն»:
(Եսայի 27.1-3, MSG, շեղագիրն ավելացված է)

Մինչ մեր Բարձրյալ Աստված պայքարում է, մենք ծաղկունք ենք ապրում: Մինչ Նրա ժողովուրդը ծաղկունք է ապրում, մեր Աստված մահացու հարված է հասցնում: Երկնային պատերազմները երևում են երկրի վրա, և երկրային պատերազմները չեն խուսափում Երկնքի ուշադրությունից: Մենք ծաղկունք ենք ապրում, երբ միաբան ենք մեկս մյուսիևնույնպես երկնային նպատակի հետ:

Սիրելի դո՛ւստր, ամենահերոսական բանը, որը դուք կարող եք անել, պտղաբեր լինելն է: Սուրբ գրքում Աստված շարունակաբար խոսում է Իր ժողովրդի մասին՝ անվանելով նրանց խաղողի այգիներ, պարտեզներ և դաշտեր: Դուք նմանեցվում եք Նրա տնկած այգուն: Ծառերը չեն հարձակվում իրենց շուրջն աճող բույսերի վրա, և ո՛չ էլ համարում են, որ իրենց ստվերում ծաղկող ծաղիկների

գեղեցկությունը կշեղի ուշադրությունն իրենց ամրությունից: Այնպես որ, թույլ տվեք, որ ձեր արմատներն իջնեն խորը գետնի տակ. ստացե՛ք ձեր զորությունն անտեսանելի իրականությունից և ոչ մի դեպքում թույլ մի՛ տվեք, որ վիշապի ստվերը խավարեցնի ձեր ապագայի լույսը:

5

Խաչը՝ որպես թուր

Արյունը ազատում է մեզ հանցանքներից,
իսկ խաչը փոխում է մեր ինքնությունը:
Արյունը ազատում է մեզ մեղքերից, իսկ խաչն
արմատախիլ է անում մեղանչելու ընդունակությունը:

— Վոչման Նի

Մտածելով Քրիստոսի խաչի մասին, անկասկած, շատ բառեր կարելի է մտաբերել, բայց *թուրը*, հավանաբար, դրանց թվում չէ: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ խաչը տարբեր ձևերով խոսելու զորություն ունի յուրաքանչյուրիս հետ մեր կյանքի տարբեր փուլերում: Ուրեմն, մի պահ մտածենք այն մասին, թե ինչ է նշանակում խաչը ձեզ համար հենց հիմա:

Ձատկի ժամանակ ես գրառում արեցի իմ սոցիալական էջերում՝ հարցնելով. «Ի՞նչ է նշանակում խաչը ձեզ համար՝ մեկ բառով»:

Ես օրհնվեցի պատասխանների հեղեղով: Այդ բառերի թվում էին՝ *սեր* (որը մինչև այժմ ամենահաճախ տրվող պատասխանն է), *շնորհք, ազատություն, ներում, փրկագնում*, *Հիսուս, կյանք, ողորմություն, զոհ, ամբողջովին համակող գոհության զգացում*, ինչպես նաև շատ ավելի գեղեցիկ սահմանումներ՝ նման այն բառերին, որոնք թվարկեցի:

Նախ՝ թույլ տվեք ասել, որ չկա մեկ բառից բաղկացած ճշգրիտ սահմանում խաչի համար: Խաչը միացրեց մեծ անդունդը երկնքի և երկրի միջև, որպեսզի հաշտեցներ Աստծուն և մարդկությանը,

և փոխեց այն, ինչը սարսափելի պարտություն էր թվում՝ վերածելով ապշեցուցիչ հաղթության: Այս փոփոխության հույսը, որը զորացնում է մեզ, կենդանի մնաց դարերի ընթացքում: Ոչ մի հաղթանակ այդքան ազդեցիկ չէր, որ կարողանար լուսավորել մարդկության խավար անցյալը, և միևնույն ժամանակ տարածել իր ճառագայթները դեպի ապագան: Այդ իսկ պատճառով, ես համոզված չեմ, որ խաչի վրա տեղի ունեցածի լայնությունը և իմաստը կարող է արտահայտվել և բովանդակվել մեր երկրային բառերով: Այնուամենայնիվ, խաչի հաղթանակը պարզապես անժամանակյա չէ. այն հավիտենական է:

Մի պահ փակեք ձեր աչքերը և պատկերացրեք փայտե խաչը: Ես ցանկանում եմ, որ ձեր մտքում տեսնեք հետևյալը. երբեմնի գեղեցիկ կենդանի ծառն այժմ դարձել է մահվան անկենդան գործիք: Այդ մահացած փայտը, որից պոկել են բոլոր ճյուղերը և կեղևը, կոպտատաշ և փշոտ է: Կոպիտ կտորները արհեստականորեն միացվել են՝ փայտե խաչ կազմելու համար, որը կանգնած վիճակում տարօրինակ կերպով նման է գետնի մեջ խրված թրի:

Այժմ պատկերացրեք Հիսուսին՝ մարմին դարձած Խոսքը և Աստծո փառավոր Որդուն, Ով մերկ և ծեծված մարմնով ձգված է այդ սարսուռ առաջացնող թրի շեղբի վրա: Քսան սանտիմետրանոց մեխերը նրա ձեռքերը գամել էին այդ թրի խաչարդին, իսկ մեր Տիրոջ գլխի ետևում այդ փայտե թրի բռնակն էր: Միգուցե Երկնքում խաչը և թուրը՝ նույնն են:

Ադամը գողացավ արգելված ծառի պտուղը, և ամեն ինչ նրանում մահացավ, իսկ Հիսուսը մահացավ անկյանք փայտի վրա՝ դառնալով դրա պտուղը, որպեսզի նրանք, ովքեր Հիսուսի մեջ են, կյանք ունենան:

Վերջերս, ուսումնասիրելով Եբրայեցիների թուղթը, հանդիպեցի ծանոթ բառերի, որոնք ինձ համար ավելի խորը իմաստ ստացան՝ դեպի թրերի աշխարհ կատարած կարճ ճանապարհորդությունից հետո:

> «Երբ Աստված տվեց Իր խոստումն Աբրահամին, *Նա սատարեց այն մինչև բռնատեղը*՝ ռիսկի ենթարկելով Իր իսկ հեղի-

> նակությունը…Երբ Աստված ցանկացավ երաշխավորել Իր խոստումները, *Նա տվեց Իր խոսքը*, որը ժայռի պես հաստատուն երաշխիք է. Աստված *չի կարող* խախտել Իր Խոսքը: Եվ քանի որ *Նրա խոսքը չի կարող փոխվել*, խոստումը նույնպես անփոփոխ է» (Եբր. 6.13,17,18, MSG, շեղագիրն ավելացված է):

Երբ կարդում էի այս խոսքը, հանկարծ մի վառ պատկեր հայտնվեց մտքումս: Ես այլևս չէի նայում խաչին՝ որպես անտաշ փայտի, որը մահվան գործիք էր: Փոխարենը այն երևաց ինձ որպես փայտե թուր, որի ծայրը խրված էր մեր կոտրված երկրի մեջ: Ես տեսա Հիսուսի մարմինը՝ ձգված այդ թրի շեղբի երկայնքով: Նրա ձեռքերը լայնորեն պարզած էին խաչարդի վրա՝ ասես ցույց տալով, որ նույնիսկ մահվան հոգեվարքի մեջ Նրա հնազանդությունն ընդունում էր բոլորիս:

Իմ պատկերացումը փոխվեց այն բանից հետո, երբ ուսումնասիրեցի թրերը և դրանց տերմինաբանությունը, և նորովի հասկացա «*մինչև բռնատեղը*» արտահայտությունը: Մինչև այդ, ես մտածում էի, որ այն փոխաբերական իմաստ ունի և նշանակում է «մինչև վերջ», «լիովին» կամ «ամբողջապես»: Բայց հիմա ես հասկանում եմ, որ «*մինչև բռնատեղը*» արտահայտությունն ունի նաև բառացի իմաստ, որովհետև «բռնատեղը» թրի մասերից մեկն է:

Բռնատեղը՝ թրի բռնակն է, որն սկսվում է շեղբից հետո: Բռնատեղի մասերն են՝ թրի խաչարդը, դաստապանը և կոթը: Երեքը միասին կազմում են թրի բռնատեղը:

Երբ թուրը խրվում է թշնամու մարմնի մեջ մինչև բռնատեղը, գրեթե անհնար է, որ զոհը խուսափի մահից: Շեղբը դուրս կհանվի միայն մի դեպքում՝ երբ հարձակվողը զգա, որ իր հաղթանակը երաշխավորված է: Ինչ-որ մեկին մինչև բռնատեղը խոցելը դաժան քայլ է. այդ քայլին դիմում են ագրեսիվ հակառակորդները, ովքեր հաճույք են ստանում իրենց զոհի ցավից: Հարձակվողը վստահ է իր հաղթանակի մեջ, որովհետև նա հնարավորինս կրճատել է հեռավորությունն իր և զոհի միջև: Նրա և իր թշնամու միջև չկա տարածություն՝ որևէ գործողություն կատարելու համար:

Իր Որդու՝ Հիսուսի զոհի միջոցով, Աստված օգտագործեց խաչը որպես թուր՝ սպանելով թշնամությունն Աստծո և մարդու միջև:

Խաչի վրա Աստված մինչև վերջ կատարեց այն խոստումը, որը տվել էր Աբրահամին:

Ո՞վ էր պատասխանատու խաչի համար

Հաճախ ես լսում եմ, թե ինչպես են մարդիկ ասում, որ սատանան խաչեց Փառքի Տիրոջը, բայց հետևյալ առակը ցույց է տալիս, որ ամեն ինչ շատ ավելի ողբերգական էր: Այն սկսվում է՝ պատմելով մի տանուտերի մասին, ով խաղողի այգի տնկեց, ցանկապատեց, գինին ճզմելու տեղ փորեց, աշտարակ կառուցեց և վարձակալեց այդ հողատարածքը մշակների: Երբ հունձքի ժամանակը եկավ, նա առանձին-առանձին ուղարկեց ծառաների, որոնց մշակները ծեծեցին, սպանեցին և քարկոծեցին: Տանուտերն ուղարկեց ավելի շատ ծառաների, և նրանց նույնպես ծեծեցին ու սպանեցին: Վերջապես տանուտերն ուղարկեց իր որդուն՝ հուսալով, որ մշակները կհարգեն իր որդուն և կտան նրան իր բաժինը: Տեսեք, թե ինչպես են ծավալվում իրադարձություններն այս պատմության մեջ:

> «Բայց մշակները, որդուն տեսնելով, իրենք իրենց ասացին. «Սա է ժառանգը, եկեք սրան սպանենք և նրա ժառանգությանը տիրենք»: Եվ բռնեցին նրան, այգուց դուրս հանեցին և սպանեցին: Արդ, երբ որ այն այգու տերը գա, ի՞նչ կանի այն մշակներին: Նրան ասացին. «Չարերին չարաչար կկորցնի և այգին կտա ուրիշ մշակների, որ պտուղները կտան նրան իրենց ժամանակներում»:
> Հիսուսը նրանց ասաց. «Դուք երբևէ չե՞ք կարդացել գրքում գրվածը.
>
> «Այն քարը, որ շինողներն անարգեցին,
> նա եղավ անկյան գլուխ.
> սա Տիրոջից եղավ,
> և մեր աչքերի առջև զարմանալի է»:
>
> «Սրա համար ասում եմ ձեզ, որ Աստծո արքայությունը ձեզնից վեր կառնվի և մի ազգի կտրվի, որ պտուղներ կբերի: Եվ այս քարի վրա ընկնողը կփշրվի, և ում վրա, որ նա ընկնի, կջարդի նրան»:

> Երբ քահանայապետերը և փարիսեցիները Նրա առակները լսեցին, *հասկացան, որ իրենց համար է ասում»»:*
> (Մատթ. 21.38-45, շեղագիրն ավելացված է)

Այս առակի մեջ Հայր Աստված՝ տանուտերն է, մարգարեները և հին ժամանակվա թագավորները՝ նրա ուղարկված ծառաներն են, Հիսուսը՝ որդին է, իսկ քահանաները և փարիսեցիները՝ մշակներն են: Ավելի ուշ Հիսուսը հիշեցրեց Իր աշակերտներին, թե ինչ պետք է տեղի ունենար.

> ««Գիտեք, որ երկու օրից Զատիկ կլինի, և մարդու Որդին կմատնվի խաչվելու»:
> Այն ժամանակ քահանայապետերը և դպիրները և ժողովրդի ծերերը ժողովվեցին այն քահանայապետի սրահը, որի անունը Կայիափա էր: Եվ խորհուրդ արին, որ Հիսուսին բռնեն նենգությամբ և սպանեն» (Մատթ. 26.2-4):

Եսային և Դավիթը մարգարեացան, որ Աստծո ընտրյալները կսպանեն Նրա մեկ և միածին Որդուն: Կրոնական առաջնորդները մտածեցին, որ սպանելով Աստծո Որդուն՝ նրանք կգողանային Նրա ժառանգությունը:

> *«Որն այս աշխարհի իշխաններից ոչ ոք չճանաչեց, քանի որ, եթե ճանաչած լինեին, փառքի Տիրոջը չէին խաչի»* (Ա Կորնթ. 2.8, շեղագիրն ավելացված է):

Ի՞նչը կուրացրեց այդ ժամանակվա իշխաններին՝ թույլ չտալով տեսնել խաչի վերափոխող և հաղթական զորությունը:

«Իշխաններ» նշանակումն այս խոսքում կարող է վերաբերել թե՛ Քրիստոսի ժամանակվա կրոնական և քաղաքական ուժերին, թե՛ Խավարի իշխանին, ով գաղտնի կառավարում էր նրանց զրպարտությունների և դիվային ուժերի միջոցով:

Ես ենթադրում եմ, որ միգուցե սատանան հույս ուներ, որ սպանելով Աստծո միածին Որդուն այն մարդկանց ձեռքերով, ովքեր պետք է Նրա «ընտրյալները» լինեին՝ նա կհարուցեր Աստծո հավիտենական զայրույթը: Ի վերջո, չէ՞ որ երբ Ադամը գողացավ արգելված պտուղը՝ ձգտելով հավասարվել Աստծուն, նա վտարվեց Եդեմի պարտեզից: Սատանան կարող էր մտածել, որ Աստծո Որդու սպանությունը, միանշանակ, կդառնար բոլորիս վերջը:

Պողոս առաքյալը նախորդեց վերոնշյալ իր խորաթափանց արտահայտությունը (տե՛ս Ա Կորնթ. 2.8)՝ հակադրելով Հոգու իմաստությունը մարդկային իմաստությանը.

> «Բայց իմաստություն ենք խոսում կատարյալների հետ, և ոչ թե այս աշխարհի իմաստությունը, և ո՛չ էլ այս աշխարհի իշխաններինը, որ պիտի խափանվեն: Այլ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում խորհրդով, որ *Աստված հավիտենից առաջ սահմանեց նրան* մեր փառքի համար»:
> (խոսքեր 6,7, շեղագիրն ավելացված է)

Աստծո իմաստությունը գործում էր՝ նախքան մեր հիմարության ի հայտ գալը: Մինչև ժամանակվա սկիզբը, Աստված մտածում էր ձեր մասին: Խաչը հյուսված էր երկնքի առեղծվածային գործվածքի մեջ, որը պատրաստված է հավիտենական իմաստությունից: Նրա սիրո այս հիանալի պատկերումը դեռևս շարունակում է բացահայտվելև հայտնել իրեն:

Պարզապես մտածե՛ք այս մասին. Հիսուսը մեր գառն էր *մինչև* ոչխարների ստեղծվելը: Նա մեր երկրի Փրկիչն էր, մինչև այս աշխարհի ստեղծվելը: Եթե սա դեռ բավական չէ, մենք ընտրվել ենք, որ անարատ դառնանք «Նրանում» մինչև աշխարհի արարումը:

> «Ինչպես որ *ընտրեց մեզ Նրանով աշխարհի ստեղծելուց առաջ*, որ մենք սուրբ և անարատ լինենք Նրա առջև սիրով»:
> (Եփես.1.4)

Մինչև Եդեմի պարտեզի տնկվելը, մենք տնկված էինք Նրանում: Նախքան Ադամի և Եվայի վտարումը Եդեմից, մենք արդեն իսկ ապահով թաքնված էինք Քրիստոսում: Մինչև այն ժամանակը, երբ մեր մեղքերը որդան կարմիրի պես էին, Աստված մաքրեց դրանք՝ ձյունի պես սպիտակ դարձնելով:

Չեմ կարծում, որ այս աշխարհի իշխաններն առանձնահատուկ զարմանք ապրեցին, երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից: Նրանք նախկինում էլ էին տեսել մեռելների հարություն, և բացի այդ, Հիսուսը բոլորին ասում էր, որ Ինքը երեք օրից հարություն էր առնելու: Կարծում եմ՝ սատանան գիտեր, որ հարությունը՝ Աստծո ծրագրի մի մասն էր: Սատանան և իշխանները չգիտակցեցին հետևյալը. երբ Հիսուսը գերեզմանից հարություն առավ, մենք հարություն առանք Նրա հետ: Սուրբ գրքում գրված է.

> «Ես *Քրիստոսի հետ խաչված եմ:* Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ՝ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղատ. 2.20, շեղագիրն ավելացված է):

Նա պարզապես չզբաղեցրեց մեր տեղը. Նա տվեց մեզ… Իր: Մենք ունենք Նրա անունը, Նրա խոսքերը, Նրա իշխանությունը և Նրա խոստումը: Ոչ ոք կենդանի չէր, երբ մեր Քրիստոսը խաչվում էր: Բայց դա կարևոր չէ, որովհետև նույնիսկ մինչև ժամանակվա սկիզբը մենք ընտրված էինք Քրիստոս Հիսուսում… նախասահմանված՝ Աստծո զավակներ դառնալու համար: Ինչպես որ Ադամի մեջ բոլորը մեղանչեցին, Քրիստոսի մեջ բոլորը ներված են: Մեր կյանքերը, որոնք ծածկված են Քրիստոսում, առեղծվածներ են, որոնք Նա ցանկանում է շարունակ բացահայտել:

Դուք պետք է հասկանաք, որ խաչը մշտապես Աստծո ծրագրի մասն է եղել: Այն պահեստային ծրագիր չէր, որը գործադրվեց, երբ Ադամը և Եվան ձախողվեցին: Այն անխափան է: Հիսուսն ապրեց այս երկրի վրա՝ ամեն օր հայտնելով Աստծո կամքը և բնությունը երկրի կորսված բնակիչներին, «Որովհետև *մենք Նրանով ենք ապրում և շարժվում և կանք*. ինչպես ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասացին, թե Նրա ազգից էլ ենք» (Գործք 17.28, շեղագիրն ավելացված է):

Հիսուսը մեր կյանքն է, մեր հեղինակը, և Մեկը, Ով փոխում է մեզ: Ուսումնասիրելով այս խոսքը՝ ես կարող եմ ավելի շատ լույս սփռել «Նրանում» կամ «Նրա մեջ» հասկացության վրա: Նրա շնորհիվ մենք այլևս չենք ապրում Ադամի մեջ: Մենք ապրում ենք Քրիստոսի մեջ և նստած ենք Նրա հետ՝ լինելով այս երկրի վրա:

Աստծո իմաստությունը գործում էր՝ նախքան մեր հիմարության ի հայտ գալը:

Հիսուսի մահը, հավանաբար, շատ չզարմացրեց մարդկանց, բայց ակնհայտ է, որ դրանից հետո տեղի ունեցածը մեծ ցնցում առաջացրեց: Թեև Հիսուսը շարունակ ասում էր Իր մոտ ընկերներին և Իր կատաղի քննադատներին, որ Ինքը կչարչարվեր, կմահանար և երեք օրից հարություն կառներ, նրանք պարզապես չէին կարողանում և չէին ցանկանում լսել այդ մասին:

> «Այդ պահից ի վեր Հիսուսը *պարզ* ասաց Իր աշակերտներին, որ անհրաժեշտ է, որ Ինքը գնա Երուսաղեմ, և որ Ինքը կրելու է շատ սարսափելի չարչարանքներ երեցների, առաջնորդող քահանաների և կրոնական օրենքի ուսուցիչների ձեռքով: Նա սպանվելու է, բայց երրորդ օրը հարություն է առնելու մեռելներից» (Մատթ. 16.21, NLT, շեղագիրն ավելացված է):

Սա այն դեպքերից մեկը չէր, երբ Հիսուսը խոսում էր առակներով, որ «ականջ ունեցողները լսեին» (տե՛ս Մատթ. 13. 10-17): Հիսուսը մշտապես պարզ ասում էր, որ մոտ ապագայում Նագնալու էր Երուսաղեմ, որտեղ Նրա ժողովրդի առաջնորդները մերժելու էին Նրան: Արդյունքում Նա կրելու էր սարսափելի չարչարանքներ, մահանալու էր և հարություն էր առնելու: Ինչպես գիտեք, Պետրոսն այնքան չափն անցավ, որ մի կողմ տարավ Հիսուսին և հանդիմանեց Նրան այդ խոսքերի համար:

> «Պետրոսը մի կողմ տարավ Նրան և սկսեց հանդիմանել այսպիսի բաներ ասելու համար. «Երկինքը չանի, Տե՛ր»,- ասաց նա: - «Սա երբեք չի կատարվի Քեզ հետ»:
> Հիսուսը շրջվեց դեպի Պետրոսը և ասաց. «Հեռացի՛ր Ինձնից, սատանա: Դու վտանգավոր ծուղակ ես Ինձ համար: Դու նայում ես ամեն ինչին զուտ մարդկային տեսանկյունից, ոչ թե Աստծո»» (Մատթ. 16.22,23, NLT):

Այս խոսակցության մեջ այնքա՞ն բան է տեղի ունենում: Նախևառաջ՝ մի՞թե տարօրինակ չէ, որ գրեթե անմիջապես այն բանից հետո, երբ Պետրոսը լսեց Երկնքից և Հիսուսին «Տեր» անվանեց, Հիսուսը նայեց Պետրոսին և խոսեց սատանայի հետ:

Մենք տեսնում ենք, որ Պետրոսի ոգևորված ձգտումը իր սիրելի առաջնորդի անվտանգության և պաշտպանության համար՝ իրականում բաց դուռ էր, որի միջոցով մահը կարող էր ծուղակ պատրաստել: Այս խոսքից կարելի է ևս մեկ՝ ոչ պակաս ապշեցուցիչ հետևություն անել. երբեմն սատանան և մարդիկ նույն կարծիքն ունեն:

Ավելի պարզ բացատրելու համար, թույլ տվեք մաթեմատիկական հավասարման օրինակ բերել, որովհետև ակնհայտ է, որ երկնքի և երկրի հավասարումները ենթարկվում են տարբեր կանոնների:

- Համաձայն երկրի (մարդկային և սատանայական) հավասարման կանոնների՝
  Մերժվածություն + Չարչարանք + Մահ = Իշխանության կորուստ և Պարտություն:
- Համաձայն Երկնքի (Հիսուսի և Աստծո) հավասարման կանոնների՝
  Մերժվածություն + Չարչարանք + Մահ = Անսահմանափակ իշխանություն և Հաղթանակ:

Այս ծրագիրն այն աստիճան անտրամաբանական և անճշմարիտ էր թվում, որ թեև ամեն ինչ մանրամասնորեն բացատրված էր, սակայն ոչ ոք չէր սպասում, որ հենց այդպես էր լինելու: Հիսուսի հաղթանակը միայն Իրենը չէր. այն նույնպես մերն էր: Եվ Նրա հաղթանակի վերափոխման զորությունն ամենից ակնհայտ էր Պետրոսի կյանքում: Նախկինում ականջ կտրող և Քրիստոսին ուրացող Պետրոսը, ով խոսում էր այն, ինչ սատանայից էր, համարձակ ընդդիմացավ այն մարդկանց, ովքեր մի ժամանակ վախեցնում էին նրան:

> ««Հիմա թող ստույգ գիտենա Իսրայելի ամբողջ տունը, որ Աստված Նրան Տեր և Օծյալ արեց, սույն այս Հիսուսին, որին դուք խաչեցիք»:
> Եվ երբ որ այս լսեցին, իրենց սրտերում զղջացին և ասացին Պետրոսին և մյուս առաքյալներին. «Ի՞նչ անենք, մարդի՛կ եղբայրներ»: Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք»» (Գործք 2.36-38):

Մենք փրկվեցինք, ներվեցինք, բժշկվեցինք, շնորհք ստացանք, զորացանք և վերականգնվեցինք «Քրիստոսում»: «Քրիստոսում» Աստված բռնեց մեզ մինչև մեր ընկնելը: Այս զարմանալի իրողության առեղծվածը բացահայտվելու է ամբողջ հավիտենության ընթացքում:

Միայն հավիտենությունը կհայտնի խաչի մեծափառությունը:

Պատասխանը գոյություն ուներ մինչև թշնամին, պարտեզը, տղամարդը, կինը և օձը: Հաղթանակը գոյություն ուներ մինչև պատերազմը: Մինչև այս կյանքի կանոնների ստեղծվելը, խաչը արդեն կանոնները փոխելու միջոց էր: Հիսուսն օգտագործեց խաչը,

որպեսզի իրականացներ այն նպատակը, որի համար ծնվել էր: Բոլորս կյանք ստացանք այդ անկյանք ծառի միջոցով: Աստված բարձրացրեց մեզ Քրիստոսի մեջ շատ ավելի վաղ, քան մենք սայթաքեցինք: Նա ճանապարհ բացեց մեզ համար, մինչև որ մենք մոլորվեցինք մեր ճանապարհից: Նա սիրեց և ճանաչեց մեզ շատ ավելի վաղ, քան մենք ճանաչեցինք Նրան: Աստված ծածկեց մեզ, մինչև որ մենք հակացանք որ մերկ էինք, և բժշկեց մեզ, մինչև որ մենք իմացանք, որ կոտրված էինք: Ամեն Կյանք Պարգևողը խաչը վերածեց Կյանքի ծառի:

Փաստեր սուսերամարտի մասին
Ամենակործանարար զգացմունքները սուսերամարտի մեջ՝ զայրույթն ու վախն են:

Ինչո՞ւ խաչը: Կյանքի ընթացքում ես հասկացա, որ Աստված թույլ է տալիս մարդկային դաժանությունը և անբարոյությունը, որպեսզի հայտնի, թե որքան խորապես և հուսահատորեն ունենք Նրա կարիքը: Ուսումնասիրելով սրամարտը՝ բացահայտեցի դրա պատճառներից մեկը:

Կրուիսե՛

Երբ ուսումնասիրում էի սրամարտը, ինձ հետաքրքրեց մի շարժում, որը կոչվում է «կրուիսե՛»: Այս ֆրանսերեն բառը նշանակում է «հատել կամ վերցնել շեղբը»: Այս շարժումն օգտագործում է թշնամաբար տրամադրված հակառակորդի թափը՝ ուղղելով այն նրա դեմ, և արդյունքում զինաթափում է նրան:

Ահա այդ շարժման նկարագրությունը. «Կրուիսե՛ն կատարվում է հետևյալ կերպով. երբ սուսերամարտիկն ուժ է գործադրում՝ իջեցնելով կամ բարձրացնելով իր դեմ ուղղված սուսերը, նրա հակառակորդը կորցնում է հավասարակշռությունը, և չի կարողանում ուղղել իր սուսերի ծայրը դեպի նա: Կրուիսե՛ն հատկապես արդյունավետ է խիստ ագրեսիվ սուսերամարտիկների դեմ, որովհետև այն զրոյացնում է նրանց թափը՝ ուղղելով թե՛ նրանց ուժը, թե՛ ռազմատենչությունը նրանց դեմ»[4]:

Երբ սուսերամարտը վերածվեց մարզաձևի և Իտալիայից ու Ֆրանսիայից տեղափոխվեց Մեծ Բրիտանիա, անգլիացիները պարզեցրին այս շարժման անվանումը՝ կոչելով այն «հատում» («քրոս»՝ «խաչ» բառի համանունը անգլերենում): Մտածե՞ք այս մասին: Ի՞նչ կատարվեց խաչի վրա: Մեր հրաշալի Փրկիչը հարված ստացավ, երբ Իր կողը խոցվեց, բայց խաչի վրա Նա վերցրեց բոլոր ժամանակների թշնամանքը: Այն, ինչը պետք է կործաներ Նրան, զինաթափեց թշնամուն:

«Կրուիսե՛ի» կամ խաչի ուժը, այսպես կոչված, լծակների համակարգի մեջ է, որը նույնպես կոչվում է ամբարձիկ ուժ: Ավելի պարզ ասած՝ այն փոխանակման մեջ է: Այս շարժումը ճիշտ և անվարան կատարելու դեպքում, հակառակորդն ինքն է թռչում ձեր սուսերի ծայրի վրա: Սա այն շարժումներից չէ, որոնց համար ծանր ձեռք է պահանջվում. իրականում, այն լավագույնս իրականացվում է թեթև ձեռքով:

Խաչի վրա Աստված փոխանակում կատարեց. Նա անմնացորդ զոհեց Իրեն՝ փոխարենը լիարժեք դարձնելով մեզ:

Խաչի վրա Աստված փոխանակում կատարեց. Նա անմնացորդ զոհեց Իրեն՝ փոխարենը լիարժեք դարձնելով մեզ: Քրիստոսի ծնունդից գրեթե երեք դար առաջ, հույն մաթեմատիկոս Արքիմեդը ենթադրություն արեց լծակների համակարգի ուժի մասին. «Տվե՛ք ինձ հենման կետ, և ես կշարժեմ աշխարհը»[5]:

Ամբարձիկ ուժի սահմանումներից մեկը հետևյալն է. Ուժի մոմենտը = Ուժը x Ուղղահայաց տարածությանը[6]: Այն պահին, երբ խաչը միացրեց բաժանման անհերևակայելի տարածությունը Աստծո և մարդկության միջև, այն հաղթահարեց ամբողջ թշնամանքը:

Խաչն Աստծո լծակն էր, իսկ երկիրը դարձավ Նրա հենման կետն այն պահին, երբ Քրիստոսը տվեց Իր կյանքը՝ աշխարհը փրկելու համար:

Հիսուսը չցուցաբերեց ոչ մի հակառակություն այն պահին, երբ տեղի ունեցավ աստվածային փոխանակումը: Նա հանձնեց Իր անձն Աստծուն, իսկ Իր մարմինը՝ թշնամիներին:

Հիսուսի անունը՝ միակ լծակն է,
որը բարձրացնում է աշխարհը:

— Անհայտ հեղինակ

Հիսուսի անունը բարձրացնում է աշխարհը, իսկ Քրիստոսի խաչը՝ այն լծակն է, որը փրկեց աշխարհը:

Վերջին հաշվով, սրամարտը ուժային մրցություն չէ, այլ հնարամտության և մարտավարական տոկունության մրցություն: Հիսուսը կրեց խաչը և մեր բոլոր մեղքերի ծանրությունը, որպեսզի իրականացներ Իր նպատակը. «Նրա համար *հայտնվեց* Աստծո Որդին, որ սատանայի գործերը քանդի» (Ա Հովհ. 3.8, շեղագիրն ավելացված է):

Մեր փառավոր Տեր Հիսուսը՝ Բարձրյալի Որդին, հայտնվեց այս աշխարհում, որպեսզի կործանի սատանայի կառուցած թագավորությունը: Հիսուսն էմմանուելն է՝ Աստված մեզ հետ, անտեսանելի, բայց և անպարտելի: Միգուցե թվում է, թե Նա անհետացել է, բայց իրականում Նա մեծացրել է Իր ազդեցությունը, քանի որ Նրա ներկայությունը բոլորիս վրա է: Մինչև համբարձվելը, Նա սահմանափակ էր Իր մարդկային մարմնով, իսկ այժմ Նա շրջապատում է մեզ Իր Հոգով (տե՛ս Մատթ. 28.20):

Ես հավատում եմ՝ Քրիստոսը ցանկանում է, որ մենք շարունակենք Իր գործը. մենք պետք է փառավորենք Որդուն ճիշտ այնպես, ինչպես որ Նա էր հայտնում Հորը: Ամեն գործողություն, որը մենք անում ենք, պետք է ծառայի՝ մարդկանց Նրա մոտ առաջնորդելուն:

> «Բայց հիմա Հիսուս Քրիստոսի ձեռքով դուք, որ ժամանակով հեռավոր էիք, մոտավոր եղաք Քրիստոսի արյունով: Որովհետև Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ արեց և մեջտեղի բաժանող պատը՝ թշնամությունը, քանդեց Իր մարմնով, հրամաններով դրած պատվիրանների օրենքը խափանելով, որ Իրենով երկուսին մեկ նոր մարդ ստեղծի՝ խաղաղություն անելով: Եվ երկուսին մեկ մարմնով հաշտեցնի Աստծո հետ՝ Իր խաչով, թշնամությունը նրանով սպանելով»: (Եփես. 2.13-16)

Խաչը ջնջեց թշնամության ցանկացած հետք Աստծո և մարդկության միջև: Հիսուսի արյան և կոտրված մարմնի միջոցով բոլորս մեկ դարձանք: Քրիստոսի մեջ տղամարդիկ և կանայք մեկ մարմին են: Քրիստոսում հրեաները և հեթանոսները միահյուսված են՝ որպես մեկ որթ: Քրիստոսում Հին կտակարանի և Նոր կտակարանի սրբերը վկաների մեկ բազմություն են:

Երբ կարդում եմ այս խոսքերը Եփեսացիների ուղերձից, սիրտս լցվում է դրանց զորության և գեղեցկության խորությունից: Այն ամենը, ինչ կատարվեց Հիսուսի հնազանդության շնորհիվ, երկյուղածություն է ներշնչում: Հիսուսը ճանապարհ պատրաստեց, որպեսզի լինելով այս աշխարհում՝ մենք այլևս չլինենք այս աշխարհից, որովհետև քանի դեռ ապրում ենք այս երկրի վրա, մենք Նրանում ենք: Մենք միաժամանակ սահմանափակված ենք Քրիստոսի մեջ և անսահման ենք Նրանում:

Այն ամենը, ինչը գողացվեց Եդեմում, վերականգնվեց Նրանում: Որքան էլ հրաշալի լիներ կյանքը Եդեմում, մեր կյանքը Նրանում ավելի լավն է լինելու: Նա պարզապես չծածկեց մեզ թզենու թառամող տերևով կամ մահացած գառան մորթով. Նա հագցրեց մեզ Իր կենդանի արդարությամբ և վերափոխեց՝ ներսից դեպի դուրս: Մենք պարզապես կմախք չենք՝ ոսկր՝ Նրա ոսկրից: Նա պատեց մեզ փափուկ մարմնով՝ Իր մարմնից: Նա վերցրեց մեր խստացված սրտերը և նոր սրտեր տվեց՝ Իր սրտի համեմատ: Այդ ամենից հետո, Նա լցրեց մեզ նույն Հոգով, Ով հարություն տվեց Քրիստոսին մեռելներից, որպեսզի ամեն մի քայքայվող բնագավառ մեր կյանքերում վերածնվի և փրկություն ստանա:

> «Աստծո Հոգին, Ով հարություն տվեց Հիսուսին մեռելներից, ապրում է ձեզանում: Եվ ինչպես որ Աստված հարություն տվեց Քրիստոս Հիսուսին մեռելներից, Նա կյանք կտա ձեր մահկանացու մարմիններին նույն այս Հոգով, Ով ապրում է ձեր ներսում» (Հռոմ. 8.11, NLT):

Նա դարձավ մեզ նման, որպեսզի մենք կարողանանք դառնալ Նրա նման: Նրանում հայտնվում է մի մեծ առեղծված, և ինչ-որ կերպով բոլորս էլ մեկ ենք դառնում:

> «Եվ նրանց պետք է մեկ սիրտ տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր ներսում և պիտի հեռացնեմ քարե սիրտը նրանց մարմնից և նրանց մի մսի սիրտ տամ, որպեսզի Իմ օրենքներում գնան և Իմ իրավունքները պահեն և դրանք կատարեն, որ նրանք Ինձ համար ժողովուրդ լինեն, և Ես նրանց համար Աստված լինեմ» (Եզեկիել 11.19,20):

Քրիստոսում եղող բազմաթիվ մարդիկ մեկ սիրտ ունեն: Նրանում մեկ են դառնում տղամարդը և կինը: Նրա զոհի միջոցով մեկ են դառնում Քրիստոսը և Նրա հարսնացուն: Նրանում միավորվում է այն ամենը, ինչ բաժանված է եղել: Մեր Քրիստոսի բացարձակ հնազանդ զոհը կատարելապես փրկեց մեզ: Խաչը զորություն ունի միավորելու նրանց, ովքեր կամենում են ընդունել այն:

Քրիստոսում հեռավորները, կորսվածները և թափառականները մոտ են դառնում:

Քավության այծ

Արդյո՞ք գիտեք, որ հին ժամանակներում, երբ Ահարոնը քահանայապետ էր, զոհասեղանի մոտ բերում էին երկու այծ՝ զոհաբերության համար: Մեկը մորթվում էր որպես մեղքի զոհ, իսկ մյուսը, որը չէր մորթվում, քավության այծն էր: Քահանան փոխանցում էր Աստծո ժողովրդի մեղքն այդ կենդանու դողացող մարմնի մեջ, ինչից հետո այն ազատ էր արձակվում: Այս այծի վրա նշան էին դնում, և այն դատապարտված էր թափառելու անապատում՝ ինչպես Կայենը, ամոթ կրելով (տե՛ս Ղևտ. 16.10):

Այդ այծը օտար էր դառնում, որից բոլորը երես էին թեքում: Այն այլևս տեղ չուներ հոտի մեջ: Հովիվն այլևս չէր առաջնորդում այդ այծին դեպի հրաշալի հովիտներ, որտեղ այն պաշտպանված էր: Եթե քավության այծը մոտենար ինչ-որ մեկին, դրան կքշեին: Այն անհանգիստ և մենակ էր գիշերը՝ զրկված այլ կենդանիների ջերմությունից, իսկ ցերեկվա ընթացքում թափառում էր տաղտկալի տապի ներքո: Քավության այծն անցկացնում էր իր մնացած օրերը ջուր և կերակուր որոնելով՝ հանձնված կատաղի գազանների ողորմությանը:

Արդյոք երբևէ զգացե՞լ եք ձեզ քավության այծի պես: Միգուցե ձեզ մեղադրել են, ձեզնից երես են թեքել, մեկուսացրել կամ մերժել են: Միգուցե դուք թափառել եք անապատում՝ բեռնված հանցանքներով և մեղքի զգացումով: Միգուցե հիմա դուք նույնիսկ ամեն գիշեր մենակ եք քնում՝ լցված վախով: Միգուցե փորձել եք ներս մտնել՝ «դրսի մարդ» լինելով, բայց ձեզ թույլ չեն տվել: Միգուցե ձեր ընտանիքը մեղադրել և մերժել է ձեզ: Միգուցե ձեր ընկերական շրջապատը հրաժարվել է ձեզնից, կամ ձեզ դուրս են արել եկեղեցական շենքից:

Կարևոր չէ, թե ինչ է կատարվել. Հիսուսի մեջ ձեզ համար տեղ կա: Բոլորս էլ սխալվել ենք, բայց Նա անսխալական է: Քավության այծեր այլևս պետք չեն, որովհետև Հիսուսը վերցրեց ամբողջ մեղքը: Քրիստոսի արյունը ներս է բերել նրանց, ովքեր թափառում էին, և մաքրել է ամոթի այն մնացորդը, որը փորձում էր մեկուսացնել մեզ կամ պահել քավության այծերի կարգավիճակում:

Նույնիսկ մահանալիս Նա կարող էր դատաստան հռչակել, բայց փոխարենը ասաց. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև նրանք չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34, KJV): Այս խոսքով Աստված Իր Որդու միջոցով ջնջեց այն մեղադրանքը, որն ուժի մեջ էր Ադամի և Եվայի պատճառով: Ադամի որդի Աբելի արյունն արդարացիորեն աղաղակում էր՝ մարդասպան անվանելով իր եղբորը: Հիսուսի արյունը ներված անվանեց Իր եղբայրներին: Ահա թե ինչու է Աստվածաշնչում ասվում, որ Հիսուսի արյունն ավելի լավ է խոսում. «Դուք եկել եք… Հիսուսի՝ Նոր կտակարանի միջնորդի մոտ, և այն սրսկված արյան մոտ, որն ավելի լավ խոսք է ասում, քան Աբելի արյունը» (Եբր. 12.22-24, NIV):

Ավելի լավ խոսքը՝ «Հա՛յր, ների՛ր նրանց» արտահայտությունն էր: Նա որոշեց ընդունել մեր կործանման խարանը, ոչ թե խարանել մեզ այն կործանմամբ, որին մենք արժանի էինք:

«Սակայն մեր տկարություններն էին, որ Նա կրեց.
մեր վշտերն էին, որ ծանրացան Նրա վրա:
Իսկ մենք մտածում էինք, որ Նրա նեղությունները՝
պատիժ էին Աստծուց, պատիժ՝ Նրա մեղքերի համար:
Բայց Նա խոցվեց մեր ապստամբության համար,
փշրվեց մեր մեղքերի համար:

Նա ծեծվեց, որպեսզի մենք առողջ լինենք,
Նա մտրակվեց, որպեսզի մենք բժշկված լինենք:
Մենք բոլորս ոչխարների նման մոլորվեցինք:
Մենք լքեցինք Աստծո շավիղները՝
մեր շավիղներին հետևելու համար:
Սակայն Տերը Նրա վրա դրեց
բոլորիս մեղքերը» (Եսայի 53.4-6, NLT):

Հիսուսը ոչինչ չէր արել՝ այդ պատիժն ստանալու համար, իսկ մենք ոչինչ չէինք արել՝ Նրա զոհին արժանանալու համար: Նա մերժվեց, դավաճանվեց, խոցվեց, փշրվեց, ծեծվեց, մտրակվեց, ճնշվեց և խաչվեց:

Միայն Աստված, Ով սեր է, կարող էր տալ Իր Հոգին նրանց, ովքեր ապաշխարեցին Իր Որդուն սպանելու համար: Նրանք կարծում էին, որ խաչը՝ Հիսուսի վերջն էր, և նույնիսկ գաղափար չունեին, որ այն իրենց սկիզբն էր: Խաչը՝ սիրո թուրն է:

Ավելի քան երեք տասնամյակ Սուրբ գիրքն ուսումնասիրելուց հետո, երբեմն ես մտածում եմ, թե արդյոք սկսե՞լ եմ հասկանալ խաչի առեղծվածը: Այն իշխանության խորհրդանիշ չէ, այլ ամեն իշխանության չափանիշը: Այն, ինչը մահ էր մեր Քրիստոսի համար, դարձավ ավելիով կյանք մեզ համար:

Մեր Հիսուսը՝ Աստծո Խոսքն է. Նա եղել է, կա և կլինի Նրա անփոփոխ խոստումը. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13.8):

● ● ●

Խաչը վերջնական հավաստիացումն է այն մասին, որ Աստված կատարել է Իր բոլոր խոստումները: Խաչն այն թուրն է, որն սպանում է թշնամանքի ցանկացած մնացորդ երկնքի և երկրի միջև, ինչպես և վերափոխում է մեզ Խոսքի վիրահատության միջոցով: Խաչը ձեր հույսն էր, նույնիսկ մինչև ձեր գիտակցելը, որ անհույս եք: Խաչը ձեր պատասխանն էր, մինչև հասկացաք, որ խնդիրներ ունեք: Խաչը խորհրդանշում է Աստծո հավատարմությունը և արտահայտում է Նրա հավատքը մեզանում: Խաչի միջոցով մենք սպառազինված ենք՝ Նրանում ապրելու համար:

ՄԱՍ ԵՐԿՈՒ

ՍՊԱՌԱԶԻՆՎԱԾ

6

Դառնալ պատերազմող

Պայքարը զորացնում է: Չարի հետ պատերազմելը
զորություն է տալիս մեզ՝
չարի հետ ավելի շատ պատերազմելու համար:

— Օսսի Դեյվիս

Ես հավատում եմ, որ Աստված արթնացրել է Իր դուստրերին՝ լինելու ավելին, քան զինվորներ: Նա կանչում է մեզ պատերազմողներ լինելու համար: Այդ իսկ պատճառով, այս գլխում մենք կօգտագործենք որոշ ռազմական տերմիններ: Այնուամենայնիվ, մտապահեք, որ ես նկատի չունեմ մեր երկրի բանակային ծառայողներին, երբ հակադրում եմ զինվորին պատերազմողի հետ:

Ուսումնասիրելով տարբեր գրքեր սրամարտի և սուսերամարտի մասին՝ ես արագորեն հասկացա, որ կան բազմաթիվ պատճառներ զենք վերցնելու և կռվելու համար:

Կան զայրույթով լի ահաբեկիչներ, ովքեր իրենց սարսափելի և հիվանդագին նպատակների համար պայքարում են դաժան և անազնիվ միջոցներով: Կան նաև վարձու զինվորներ, ովքեր սիրում են կռվել այն աստիճան, որ անում են դա՝ առանց անձնական պատճառ ունենալու, և վաճառում են իրենց հավատարմությունը նրան, ով առաջարկում է ամենաբարձր վարձատրությունը: Այս համայնապատկերի մյուս եզրին զինվորներն են, ովքեր աշխատում և ծառայում են որևէ բանակի հրամանատարության ներքո:

Ի վերջո, գոյություն ունեն պատերազմողներ:



«Պատերազմողը» կյանքի ոճ է: Պատերազմողների պայքարների մեծ մասն անտեսանելի թշնամիների հետ է: Բոլոր պատերազմողները պետք է հմուտ լինեն «պատերազմողի ճանապարհի» մեջ, ինչպես ասում են սամուրայները: Նման մոտեցումը կյանքին՝ նշանակում է ունենալ *ազատություն՝ առանց վախի:* Կարծում եմ՝ դա լավագույն դիրքորոշումն է, որը կարող ենք ունենալ: Շրջելով այս արտահայտությունը՝ մենք կստանանք գերիների դիրքորոշումը. *վախ՝ առանց ազատության:*

Ցավոք, վախն առանց ազատության՝ սովորական է դառնում շատերի համար: Որպես պատերազմող դուստրեր՝ մենք հնարավորություն ունենք կորցնելու մեր կյանքերը և շահելու Աստծո կյանքը: Սա նշանակում է, որ մենք անարգել կարող ենք ընտրել ազատությունը՝ առանց վախի, որովհետև մեր Տերը խաչի վրա լուծել է մահվան և կյանքի խնդիրները:

Այս դիրքորոշումը հատուկ է միայն պատերազմողի համար: Սամուրայներն անուններ էին տալիս իրենց թրերին, քանի որ հավատում էին, որ ամեն թուր հոգի ուներ, որը ուժ էր տալիս դրան: Այս սովորությունը վերածվեց թրերի երկրպագության: Մեզ պետք չէ այնպիսի թուր, որի մեջ հոգի կա, որովհետև մենք ունենք Հոգու թուրը: Առաջնորդվելով Աստծո Խոսքով՝ մենք գործածում ենք Հիսուսի անունը և երկրպագում ենք Նրան մեր կյանքերով՝ բարձրացնելով Նրա Խոսքը մեր կամքից վեր:

Ահաբեկիչներն առաջնորդվում են վախով, վարձու զինվորները՝ ագահությամբ, և նույնիսկ հավաքագրված զինվորները *պարտավոր են* հնազանդվել հրամաններին: Բայց պատերազմողն ընտրություն ունի: Հաճախ աստվածային և ազնվագույն արժեքները պատվելու որոշումը՝ անցնելու այն արարողությունն է, որը զինվորին պատերազմող է դարձնում:

Սիրելի դո՛ւստր, ես համոզված եմ, որ դուք գիտակցում եք, որ ծնվել եք հեղաշրջման, հակամարտության և պատերազմական

ժամանակաշրջանում: Պայքարներն ընթանում են բոլոր ռազմաճակատներում, և հարձակումները թե՛ գաղտնի են, թե՛ բացահայտ: Ցավոք, դրանց թվում է երեխաների հանդեպ բռնության գաղտնի ոճրագործությունը: Երեխաներին վերցնում են ընտանիքի ապաստարանից և ապահովությունից՝ ենթարկելով սեռական կամ աշխատանքային ստրկության, որում ներկայումս գտնվում է մինչև քսանյոթ միլիոն մարդ[7]: Այս գաղտնի ահաբեկչության հետ մեկտեղ, մենք ապրում ենք բացահայտ վտանգների ժամանակաշրջանում: Մենք կողմնակի դիրք ենք զբաղեցնում, մինչ ազգերը մարտահրավեր են նետում մեկը մյուսին՝ պատերազմի մշտական սպառնալիքներով:

Քանի որ այս հարձակումը տեղի է ունենում բազմաթիվ ռազմաճակատներում, ընդգրկում է բազմաթիվ մարդկանց և չափազանց մեծ վտանգ է ներկայացնում, մենք չենք կարող սահմանափակել մեր պատերազմն այն անմիջական պայքարներով, որոնք մեր առջևում են: Մեր նպատակը պետք է լինի՝ հաղթահարել ամեն պայքար այնպես, որ ի վերջո փառավոր կերպով շահենք ամբողջ պատերազմը: Այս մոտեցումը պահանջում է մարտավարություն, ներընմբռնողություն, տեսիլք, իմաստություն, համբերություն, հարատևություն, հաստատակամություն, միացյալ ձայն և համախմբված ջանքեր:

Որպես օրինակ՝ պատկերացրեք վիրտուալ վիդեո խաղ: Ինչպե՞ս եք խաղալու, եթե ձեր նպատակն ընդամենը մեկ մակարդակում հաղթանակ տանելն է: Իմ կարծիքով, նման մտածելակերպ ունեցող խաղացողը լավ չի խաղա և երկար ժամանակ չի մնա խաղի մեջ: Անձամբ ես ընդհանրապես չեմ կարողանում նման խաղեր խաղալ, բայց տղաներս վարպետության են հասել դրանցում: Եվ մի փոքր նրանց հետևելուց հետո ես նկատեցի, որ նպատակը՝ պարզապես արագորեն մեկ մակարդակն անցնելը չէ: Մշտապես կան ինչ-որ բաներ, որոնք պետք է վերցնել կամ սովորել ներկա մակարդակի վրա, քանի որ ավելի ուշ դրանք պետք կգան մեզ:

Ես դիտում եմ, թե ինչպես են որդիներս մանևրում և ռիսկի դիմում՝ ստանալու համար որոշ առարկաներ, որոնք թաքնված են խաղի որևէ մակարդակում: Այդ առարկաներից յուրաքանչյուրն

ունի իր արժեքը, բայց դրանք սովորաբար անհրաժեշտ չեն տվյալ պահին: Ավելի հաճախ դրանք հավաքվում են հետագայի համար:

Թողնելով խաղերի մասին օրինակը և վերադառնալով մեր կյանքի շատ իրական ճանապարհներին՝ կարելի է ասել հետևյալը. երբեք մի՛ կասկածեք, որ փոքր կամ ոչ կարևոր *թվացող* որոշումը կամ գործողությունը կարող է նոր ճանապարհ բացել ձեզ համար կամ զորացնել ձեզ ապագայում:

Ահա թե ինչու է շատ կարևոր բարեխղճորեն կատարել փոքր առաջադրանքները: Միայն մեր գործերը չեն, որ գնում են մեզ հետ դեպի ապագան. այն դասերը, որոնք մենք քաղում ենք մեր շավիղների վրա, նույնպես մնում են մեզ հետ: Հասկացե՛ք, որ այն գաղտնիքը, որը դուք որոշում եք պահել, կամ ձեր հավատարմության քայլը, որը ոչ ոք չի տեսել ձեր կյանքի *նախորդ փուլում*, կարող է մեծապես պաշտպանել ձեզ *հաջորդ փուլում:*

Պատերազմողները հեռատեսորեն են վարվում կյանքում: Նրանք հասկանում են, որ ամեն դժվարության ժամանակ հնարավոր է հմտություններ ձեռք բերել և ավելի ուժեղ դառնալ:

Հարցը մի քանի ակր հողատարածքը չէ, այլ մեր գործը, որը պաշտպանում ենք, և անկախ նրանից՝ մենք պարտության կմատնենք թշնամուն մեկ կռվի ընթացքում, թե՝ աստիճանաբար, հետևանքները լինելու են նույնը:

— Թոմաս Փեյն

Պատերազմները երբեք չպետք է լինեն հանուն մի բուռ հողի, այլ՝ հանուն սկզբունքների: Ամերիկյան հեղափոխականները զենք վերցրին, որպեսզի պայքարեն իրենց երկրում տիրող անարդարության դեմ: Այդ դաժան պատերազմը թանկ նստեց շատերի վրա, քանի որ երկու կողմերից էլ մահացան բազմաթիվ զինվորներ և պատերազմողներ: Բայց սա այն տեսակի պայքարը չէ, որը մենք վարում ենք: Մեր պատերազմն անարդարության դեմ չէ. մենք Աստծո պատերազմի մեջ ենք՝ ընդդեմ սատանայի: Վերջին հաշվով, դուք մասնակցում եք խավարի և լույսի միջև հինավուրց պայքարի:

Թշնամու թիրախը

Վերադառնանք Սուրբ գրքի ուսումնասիրությանը: Առաջին անգամ, երբ Աստվածաշնչում հիշատակվում է «պատերազմող» բառը, այն զուգակցվում է *հերոսական*, *մեծ* և *զորավոր* ածականների հետ: «Քուշը նույնպես նախնին էր Նեմրովթի, ով առաջին *հերոսական պատերազմողն էր երկրի վրա»* (Ծննդ. 10.8, NLT, շեղագիրն ավելացված է):

«*Առաջին… երկրի վրա*» նկարագրությունը ցույց է տալիս, որ Երկնքում արդեն կային հերոսական պատերազմողներ, և Նեմրովթը պարզապես առաջին մարդն էր, ով պատերազմող դարձավ երկրի վրա: Մեր անկում ապրած աշխարհը՝ բարձր և փառավոր Երկնքի շուքն է: Այդ իսկ պատճառով, մենք չպետք է զարմանանք, որ Երկնքում շատ վաղուց տեղի ունեցած հակամարտությունները տարածվել և ծավալվել են երկրի վրա: Այդ պատերազմներից մեկը նկարագրված է Հայտնության գրքում.

> «Եվ *պատերազմ եղավ Երկնքում*. Միքայելը և նրա հրեշտակները պատերազմեցին վիշապի դեմ, և պատերազմեցին վիշապը և իր զորքերը: Եվ չկարողացան դեմ կենալ, և ո՛չ էլ տեղ գտնվեց նրանց համար Երկնքում» (Հայտն. 12.7,8, շեղագիրն ավելացված է):

Այս հատվածում գրված է Երկնքի ամենահզոր պատերազմողի՝ Միքայել հրեշտակապետի անունը: Այս պատերազմի մեջ վիշապը և նրա զորքերը պարզապես չպարտվեցին. նրանք տեղահանվեցին Երկնքից: Այս հինավուրց պատերազմը տեղափոխվեց նոր հողի վրա, և այժմ վիշապն ուղղում է իր բարկությունը Աստծո դուստրերի դեմ:

> «…վա՜յ երկրին և ծովին [և նրանցում բնակվողներին], որ բանսարկուն վայր իջավ ձեզ մոտ, որ մեծ բարկություն ունի՝ գիտենալով, որ քիչ ժամանակ ունի:
> Եվ երբ որ տեսավ վիշապը, թե վայր գցվեց երկրի վրա, ընկավ այն կնոջ ետևից, որ արու զավակը ծնեց: Եվ այն կնոջը երկու մեծ արծվի թև տրվեց, որ թռչի անապատը՝ իր տեղը, ուր որ կերակրվում է մի ժամանակ և ժամանակներ և կես ժամանակ

> օձի երեսից: Եվ օձն իր բերանից գետի պես ջուր թափեց այն կնոջ ետևից, որ նրան ընկղմի» (Խոսքեր 12-15, շեղագիրն ավելացված է):

Այս հատվածում այնքա՜ն շատ մարգարեական խորհրդապատկերներ կան, որ ես չեմ համարձակվի ասել, որ ամբողջովին հասկանում եմ այն: Այս հատվածն ունի թե՛ հոգևոր, և թե՛ բառացի իմաստ, բայց այս խորհրդապատկերների մեջ պարփակված է մի ակնհայտ ճշմարտություն. սատանան՝ վիշապը կամ օձը, աննահանջ ձգտում է կործանել «կնոջը»: Աստվածաշնչյան մեկնաբանները համոզված են, որ կինն այս հատվածում Իսրայելի խորհրդապատկերն է: Դրանից հետո վիշապն ուղղում է իր պատերազմը նրա զավակների դեմ:

> «Եվ վիշապը բարկացավ այն կնոջ վրա և գնաց *պատերազմ անելու նրա մյուս զավակների հետ, որ Աստծո պատվիրանները պահում են, և Հիսուսի [Քրիստոսի] վկայությունն ունեն»:* (Խոսք 17, շեղագիրն ավելացված է)

Նույնիսկ մի՛ կասկածեք, որ սատանան ցանկանում է վնաս հասցնել Աստծո հեղինակությանը և կործանել Նրա զավակներին: *Եկեղեցին* ընդգրկում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, բայց այն իգական սեռի տերմին է: Այնուամենայնիվ, սատանայի բարկությունը շարունակաբար բորբոքվել է *կնոջ* դեմ: Սկզբում Եվան էր, հետո՝ Սառան, Իսրայելը և Մարիամը: Այժմ նրա թունոտ հարձակումներն ուղղված են Քրիստոսի հարսնացուի դեմ: Նրա ատելությունը կանանց հանդեպ վաղեմի պատմություն ունի, և նա գիտի, որ կնոջը խոցելու հաստատուն միջոցը՝ նրա երեխաների վրա հարձակվելն է: Իսկ ովքե՞ր են այս կնոջ երեխաները: Նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները և ունեն Հիսուսի վկայությունը: Արդյո՞ք դուք այս մարդկանց թվում եք:

Սիրելի դո՛ւստր, դուք արդեն գիտեք, որ թիրախ եք, բայց դուք կարող եք որոշում կայացնել, որ պատերազմող հերոսուհի կդառնաք:

Առաջին պատերազմողը

Հաջորդ անգամ, երբ «պատերազմող» բառը հիշատակվում է Սուրբ գրքում, խոսքն Ամենակարող Աստծո մասին է. «Տերը պատերազմող է. Յահվե է Նրա անունը» (Ելից 15.3, NLT):

Յահվեն՝ մեր Բարձրյալ և Սուրբ Հայրը, առաջին պատերազմողն է: Այնպես չէ, որ ամենի Տերը կիսով չափ հայր է և կիսով չափ զինվոր: Նա և՛ մեկն է, և՛ մյուսը, և՛ ավելին: Նա մեր Ամենակարող Պատերազմող Հայրն է, և մենք Նրա դուստրերն ենք՝ ոսկրը Նրա ոսկրից և մարմինը Նրա մարմնից: Այնպես որ, տրամաբանական է, որ մեր մեջ պատերազմողի ԴՆԹ կա:

Ես ցանկանում եմ վճռականորեն և պարզորեն ասել ձեզ. դուք միաժամանակ և՛ դուստր եք, և՛ պատերազմող: Կարելի է նույնիսկ ընտրել ավելի բանաստեղծական անվանում, օրինակ՝ պատերազմող արքայադուստր: Դուք ազատորեն կարող եք այդպես անվանել ձեզ: Այս գլխում ես ցանկանում եմ պատկերել պատերազմող դստերը՝ համեմատելով և հակադրելով «պատերազմող» և «զինվոր» հասկացությունները:

Առաջին ակնհայտ հակադրությունն այն է, թե ինչպես են նրանք սկսում իրենց ընթացքը. պատերազմողները կանչվում են, իսկ զինվորները՝ վարձվում: Դուք կարող եք պատերազմող լինել՝ առանց հավաքագրվելու: Մեր ժամանակվա կարիքները պատերազմողների են կանչում և պատերազմի են մղում նրանց սրտերը: Նայեք ձեր շուրջը: Մի՞թե պայքարելու պատճառ չկա: Պատերազմողները չեն վարձվում՝ ինչ-որ նախաձեռնության մասը լինելու համար: Նրանց ներսում կա մղում, որը դրդում է նրանց՝ միանալ ճշմարիտ գործին:

Զինվորներին պետք է վճարել, իսկ պատերազմող պետք է դառնալ:

Դուք քաղաքացիական չեք, ում ընդգրկել են որևէ նախագծի մեջ կամ վարձել են՝ մասնակցելու հեռավոր երկրում ծավալվող պատերազմի մեջ: Ոչ մի կազմակերպություն չի կարող որոշել ձեր զինվորական աստիճանը, որովհետև դուք Թագավորի դուստր եք, ով ընտրված է հատուկ նպատակի համար: Այս պատերազմն ինչ-որ մեկինը չէ. սա լայնամասշտաբ հարձակում է ձեր ընտանիքի վրա:

> *«Թո՛ւյլ տուր, որ թագավորը* տարվի քո գեղեցկությամբ. *պատ–վի՛ր* Նրան, որովհետև Նա քո *տերն է»* (Սաղմ. 45.11, NIV, շեղագիրն ավելացված է):

Ուսումնասիրելով թրերի և սուսերամարտի աշխարհը՝ ես նկատեցի մեկ թեմա, որն անփոփոխ է՝ *պատիվը:* «Թույլ տուր» բառն այս խոսքի մեջ նշանակում է, որ դուք կարող եք թույլ չտալ կամ մերժել Թագավորին՝ վայելել ձեր գեղեցկությունը: Ես համոզված եմ, որ գլխավոր միջոցը, որով մենք մերժում ենք մեր Թագավորին մոտենալ մեր գեղեցկությանը, անպատվությունն է: Ցավոք, մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ անպատվությունը ոչ միայն տարածված է, այլև խրախուսվում է:

Մեր ներկա մշակույթն ավելի շուտ խրախուսում է կանանց՝ *անպատվել* իրենց մարմիններն անհամեստությամբ, անպարկեշտությամբ, գիրությամբ և այլ սննդային խանգարումներով, քան թե *պատվել* իրենց մարմինները համեստությամբ, պարկեշտությամբ և զսպվածությամբ: Անկեղծությունը, բարի անունը և անարատ համբավը, որոնք մի ժամանակ առաքինություն էին համարվում, այլևս չեն գովերգվում մեր մշակույթի երգերի մեջ: Ավելի հավանական է, որ լսեք երգեր անվայել պարային շարժումների, թանկ աքսեսուարների և արագընթաց մեքենաների մասին, կամ այնպիսի կանանց մասին, ովքեր որևէ ակումբում խմբվում են՝ փողը ցրիվ տվող տղամարդկանց շուրջը: Ակնհայտ է, որ ռեփի և աչք ծակող արդուզարդի կեղծ աշխարհում ամբարտավան, անպարկեշտ, անբարեխիղճ և ագահ մարդիկ կարծում են, որ մենք պարտավոր ենք հարգանքով վերաբերվել իրենց:

Գայթակղեցնող հրապուրանքը փոխարինել է գեղեցկությանը, և շահագործումը վարձատրվում է ավելի բարձր, քան իմաստությունը: Հիմարությունն այլևս կարիք չունի կանչել մեզ փողոցներից, որովհետև նրա ուղերձը և երաժշտությունը կարող են հեշտությամբ մուտք գործել մեր տները:

Ամուսինս միշտ ասում է, որ պատիվը նախ՝ ծագում է սրտում և, ի վերջո, սկսում է արտահայտվել մեր գործերի միջոցով: Ես համոզված եմ, որ պատերազմող դստեր ճանապարհն սկսվում

է նրա սրտում: Ահա թե ինչու է նա նախանձավոր կերպով պահպանում այն՝ հսկելով իր միտքը: Սա նշանակում է՝ ուշադիր լինել այն ամենի հանդեպ, ինչ նա լսում և խոսում է, ինչպես նաև այն ամենի հանդեպ, ինչ նա տեսնում և անում է: Անպատվության աղավաղված թելը ցանկանում է ներհյուսվել մեր կյանքի մեջ և արատավորել ամեն գեղեցկություն:

Մեր Պատերազմող Թագավորը գեղեցիկ է:

Նրա պատկերն անկարելի է համեմատել որևէ բանի հետ:

Արարչագործության սքանչելի համայնապատկերն ընդգրկում է Նրա գեղեցկության ընդամենը չնչին մասը:

Զորավոր օվկիանոսը, սավառնող ամպերը և հսկայածավալ լեռները հռչակում են Նրա կարողության զորավոր, անչափելի և մնայուն գեղեցկությունը:

Կյանքի ամեն տեսակ՝ բույսերից մինչև կենդանիները, անդիմադրելի հայտնություն է մեր Աստծո տպավորիչ գեղեցկության մասին:

Նա սիրով կազմեց Իր որդիներին և դուստրերին, որպեսզի նրանք կրեն Իր մեծությունը, փառքը և գեղեցկությունը ավելի, քան ցանկացած այլ ստեղծագործություն:

Մենք՝ Նրա գլուխգործոցն ենք:

Ահա թե ինչու է այդքան ողբերգական, երբ մեր վարքն անպատվում է Նրա իշխանության իրավունքը մեր կյանքում: Երբ որոշում ենք չպատվել Նրան, որպեսզի պատվենք այլ մարդկանց, Նրա արտացոլանքը մեզանում աղավաղվում է: Նույնիսկ աշխարհը գիտի, որ մենք պետք է սիրող, հաճելի և գեղեցիկ լինենք:

Մենք Աստծո դուստրեր ենք և կրում ենք մեր Հոր պատկերը: Աստծուն ամբողջ սրտով սիրելը նշանակում է, որ մենք նույնպես պետք է սիրենք Նրան մեր մտքով և զորությամբ: Բայց երբ խախտում ենք Նրա Խոսքի խորհուրդը հոժարակամ անհնազանդությամբ, մեզ շրջապատող մարդիկ այլևս չեն կարողանում տեսնել Սուրբ Հոգու վերափոխող զորության գրավիչ գեղեցկությունը մեր կյանքում, թեև նրանք ցանկանում են տեսնել նորոգված մարդկանց:

Ուսումնասիրություններիս ընթացքում սովորել եմ, որ չկա ճշմարիտ պատերազմող՝ առանց պատվի, որովհետև պատերազ-

մողները կապված են պատվի կապով այնպիսի բանի հետ, որն ավելին է, քան իրենք: Զորավոր սամուրայները և միջնադարյան ասպետներն ապրում էին կարգապահությամբ և ազնվագույն սկզբունքներով: Պատիվը նշանակում էր, որ նրանք համապատասխանում էին խստագույն կանոնակարգերին, որոնք պահանջում էին նվիրում և կարգապահություն: Ասպետները երդվում էին իրենց հավատարմությամբ, որ պահպանելու էին երկրային թագավորների իշխանությունը: Հաճախ դա նշանակում էր, որ նրանք պետք է մահանային մարտի դաշտում:

Մենք չենք ծառայում երկրային մահկանացու թագավորի, ում արդարությունը չափվում է երկրային վարձատրություններով: Ի վերջո, մեր վարձատրությունը Ինքը՝ Աստվածն է: Մի օր Նրա իմաստությունը, ողորմությունը և արդարությունը հավերժ երկյուղածություն են ներշնչելու ազգերին: Նա մեր Թագավորն է, Ով արժանի է շատ ավելիի, քան մեր մարդկային չափանիշները կարող են որոշել, կամ մեր մարդկային բառերը կարող են նկարագրել:

Մեր մեծահոգի Թագավորը գիտեր, որ մենք չէինք կարողանա պահել բարոյականության խստագույն կանոնակարգը, և որ մեզնից ոչ ոք չէր կարողանա պատվավոր դիրք վաստակել: Այնպես որ, դրա փոխարեն Նա ընդունեց մեզ որդեգրության միջոցով և տվեց Իր անվան պատիվը: Նա գիտեր, որ մենք չէինք կարողանա գտնել մեր ճանապարհը, այնպես որ, սովորեցրեց մեզ Իր թագավորական ճանապարհները՝ ուղարկելով Իր Որդուն մեր աշխարհ: Մեր աներևակայելի Հայրը և Թագավորը տվեց մեզ Իր կյանքը, որպեսզի մենք խուսափենք մահվան վերահաս դատավճռից և ստանանք Նրա իշխանությունն ու զորությունը:

Եթե կա այնպիսի ժողովուրդ, որն իսկապես պատվով ապրելու պատճառ ունի, այդ ժողովուրդը՝ մենք ենք: Այդ դեպքում, որտեղի՞ց այսքան անպատվություն Նրա ժողովրդի մեջ: Մի՞թե մենք դարձել ենք հոգնած զինվորներ՝ կրակոտ պատերազմողների փոխարեն: Անկեղծ ասած, ես չունեմ այս հարցերի պատասխանը: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ մենք կարող ենք լինել այդ խնդրի պատասխանը: Մենք զորություն ունենք, որպեսզի թե՛ անհատապես, թե՛ հավաքականորեն փոխենք այս միտումը:

Զինվորներին մարզում են: Պատերազմողները թրծվում են:

Դառնալ պատերազմող

Դուք պատրա՞ստ եք լինել ավելին, քան սովորական զինվոր: Այդ դեպքում պետք է հասկանաք, որ պատերազմողի պատրաստվածությունը շատ է տարբերվում զինվորի պատրաստվածությունից: Բոլոր զինվորները մասնակցում են զորավարժությունների, բայց եթե պատերազմող դառնաք, դրա հետ մեկտեղ դուք նույնպես թրծվելու եք: Զգուշացնում եմ. թրծումը ո՛չ հաճելի է, ո՛չ էլ կարճատև (այս մասին ավելի մանրամասն՝ հաջորդ գլխում):

Ցանկացած զինվոր կարող է տեսնել, թե ինչ է անում թշնամին, իսկ հետո զեկուցել այդ մասին: Ակնհայտը տեսնելու համար կարիք չկա զանազանություն ունենալ: Այնուամենայնիվ, պատերազմողները՝ առաջնորդներ են, ովքեր նույնպես զգում են, թե ինչ է անում Աստված անտեսանելի իրականության մեջ: Զինվորը կարող է ասել. «Մենք շրջապատված ենք քաոսային իրավիճակով և խնդիրներով», իսկ պատերազմողը գիտի, որ Աստված վերահսկում է ամեն ինչ, և Նրա բանակն արդեն պատրաստ է հակահարձակման:

Սուրբ գրքում կա մի հրաշալի օրինակ այս մասին, երբ Սիրիայի թագավորն իր բանակն ուղարկեց պատերազմող մարգարե Եղիսեի դեմ: Ինչպիսի որոշում էլ կայացներ Սիրիայի թագավորը, կամ որտեղ էլ դարանակալներ դներ, Եղիսե մարգարեն նախազգուշացնում էր այդ մասին Իսրայելի թագավորին իր հոգևոր հանճարի շնորհիվ: Սրտնեղելով՝ Սիրիայի թագավորը որոշեց բռնել Եղիսեին: Մի գիշերվա ընթացքում այս բարկացած թագավորն ամբողջությամբ շրջապատեց Դոթայիմ քաղաքը, որտեղ ապրում էր մարգարեն: Հաջորդ առավոտյան, երբ Եղիսեի ծառան արթնացավ, վախը պատեց նրան: Նա նկարագրեց ստեղծված իրավիճակը Եղիսեին՝ ասելով, որ նրանք շրջապատված էին

Փաստեր սուսերամարտի մասին

Վատ սուսերամարտն զգացմունքային է, չափազանց կոպիտ, դաժան և վնասաբեր. այն ընդամենը ձգտում է նպատակների և լի է անտեղի շարժումներով:

ձիերով, կառքերով և տպավորիչ զինվորական ուժով, և ոչ մի կերպ չէին կարող փախուստի դիմել: Որպես լավ զինվոր՝ նա զեկուցեց թշնամու դիրքի մասին: Իսկ այժմ լսեք պատերազմողի պատասխանը այս լուրի վերաբերյալ.

> «Նա էլ ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետև մեզ հետ եղողները շատ են, քան թե նրանց հետ եղողները»: Եվ Եղիսեն աղոթք արեց ու ասաց. «Ո՛վ Տեր, բա՛ց նրա աչքերը, որ տեսնի», և Տերը բացեց ծառայի աչքերը, և նա տեսավ, և ահա սարը լիքն էր հրեղեն ձիերով և կառքերով Եղիսեի շուրջը» (Դ Թագ. 6.16,17):

Վախը կուրացնում է, բայց մեզ հետ միշտ կա ավելին, քան մենք գիտենք: Պատերազմող դուստրն իր սրտում կրում է այս խրախուսանքը. «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31):

Այս խոսքը տալիս է և՛ հարց, և՛ պատասխան, որովհետև ավելի մեծ է Նա (Հիսուսը), Ով մեզանում է, քան նա (սատանան), ով այս աշխարհում է (տե՛ս Ա Հովհ. 4.4): Երբեմն այս հավաստիացումը հայտնվում է մեզ հրեղեն կառքերի բազմության տեսքով. այլ դեպքերում, այն անմար հույս է, որը վառվում է մեր ներսում:

Պատերազմողներն առաջնորդվում են ներքին հավիտենական առաքելությամբ: Նրանց արձագանքը ներսից է: Սա նշանակում է, որ նրանք կտան այն ամենը, ինչ կարող են: Նրանց արձագանքն ավելի քան բավական է, որովհետև զավակները պետք է անեն ավելին, քան վարձու ծառաները: Զինվորները տառացիորեն հետևում են հրամաններին: Այնուամենայնիվ, երբեմն նրանք հետևում են հրամաններին՝ չունենալով իրենց հրամանատարի ի սրտե ջերմեռանդությունը: Տառն սպանում է, բայց Հոգին գիտի, թե ինչպես կյանք տալ:

Լավ մարդիկ չպետք է չափից լավ հնազանդվեն օրենքներին:

— Ռալֆ Ուոլդո Էմերսոն

Վերադառնանք Եղիսե մարգարեի պատմությանը: Աստված կուրացրեց թշնամուն՝ ի պատասխան Եղիսեի աղոթքի, և Եղիսեն առաջնորդեց ամբողջ բանակն Իսրայելի թագավորի արքունա-

տեղին: Թագավորն անչափ ուրախացավ՝ տեսնելով, որ իր թշնամիները բերվել էին իր դարպասների առջև, և թույլտվություն խնդրեց Եղիսեից՝ բոլորին սպանելու համար: Եղիսեն պատասխանեց.

> «Նույնիսկ չմտածե՛ս այդ մասին… Դու նույնիսկ ձեռքդ չես բարձրացրել՝ նրանց բռնելու համար, իսկ հիմա պատրաստվում ես սպանե՞լ նրանց: Ո՛չ մի դեպքում, խնջույք պատրաստիր նրանց համար և ետ ուղարկիր նրանց իրենց տիրոջ մոտ» (Դ Թագ. 6.22, MSG):

Այդ ամենից հետո սիրիացիներն այլևս չհարձակվեցին Իսրայելի վրա:

Զինվորը կարող էր սպանել այն մարդկանց, ում՝ պատերազմողը կերակրեց: Այդ սպանդը վերջ չէր տա հարձակումներին, այլ կմեծացներ լարվածությունը, և պատերազմն ավելի դաժան կդառնար: Եղիսեն վարվեց՝ համաձայն Քրիստոսի խոսքերի (տե՛ս Ղուկ. 6.27), մինչև որ դրանք ասվեցին: Աստծո Հոգին առաջնորդում է Իր պատերազմող մարգարեներին: Նույնիսկ թագավորն էր սպասում Եղիսեի մարտավարական որոշումներին: Զինվորները կարող են հետապնդել, պարտադրել և սպանել՝ տառացիորեն հետևելով մարդկանց կարգադրություններին, իսկ պատերազմողները կառաջնորդեն մարդկանց և անդիմադրելիորեն կդրդեն նրանց՝ միանալ իրենց գործին:

Զինվորները գործարքային մտածելակերպ ունեն: Նրանք գիտեն, որ պայմանագիր են ստորագրել հաշված տարիների համար, և հիմնականում մտադրված են կատարել իրենց պարտականությունները՝ ո՛չ ավելի, և ո՛չ պակաս: Նրանք զբաղեցնում են իրենց դիրքը, բայց այդ դիրքը տեղ չունի իրենց սրտերում. նրանք ծառայում են, որպեսզի կարողանան թոշակի անցնել: Պատերազմողը երբեք թոշակի չի անցնում: *Պատերազմող* լինելը այնպիսի կարգավիճակ կամ դիրք է, որը մարդն զբաղեցնում է ամբողջ կյանքի ընթացքում:

Դավիթ թագավորը պատերազմող էր ամբողջ կյանքի ընթացքում: Նրա առաջին պայքարներն արջի և առյուծի հետ է եղել, և նա հաղթել է:

> «Եվ Դավիթն ասաց Սավուղին. «Ծառադ իր հոր ոչխարներին արածեցնում էր, և առյուծը կամ արջը գալիս էր, և հոտերից ոչխար էր տանում: Ես նրա ետևից գնում էի, նրան զարկում և նրա բերանից ազատում էի, և երբ որ նա վեր էր կենում ինձ վրա, մորուքից բռնում էի, զարկում և մեռցնում»»:
> (Ա Թագ. 17.34,35)

Դավիթը պայքարեց և հաղթեց ծածուկում: Նրա միակ վկաներն էին գառները, աստղերը և Աստված: Նրա եղբայրները կարող էին կասկածի ենթարկել նրա պայքարները արջի և առյուծի հետ: Միգուցե դուք անձնական պայքարնե՞ր ունեք: Միգուցե դուք հաղթանակնե՞ր եք տարել, որոնք չեք կարող տոնել, որովհետև ոչ ոք չի իմացել այդ մասին: Կամ, միգուցե, Դավթի նման դուք մենակ էիք, և ոչ ոք չի հավատում, որ այդ պայքարները տեղի են ունեցել: Համբերատա՛ր եղեք. Աստված երբեք չի անտեսում անձնական հաղթանակը: Կգա մեկ օր երկրի վրա կամ Երկնքում, և ձեր հաղթանակը կտոնվի: Դավթի համար այդ օրը եկավ, երբ նա, սպանելով Գողիաթին, հրապարակավ ապացուցեց, որ պատերազմող էր:

> «Եվ Դավիթն ասաց փղշտացուն. «Դու սրով, նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Զորաց Տիրոջ՝ Իսրայելի զորքերի Աստծո անունով, որին դու նախատեցիր: *Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, ու ես քեզ կմեռցնեմ, և քո վրայից գլուխդ կառնեմ*»» (խոսքեր 45,46, շեղագիրն ավելացված է):

Մի՞թե չեք տեսնում, թե ինչպես է Դավիթը վազում՝ արագացնելով իր ընթացքը, առանց որևէ վախի՝ առաջնորդվելով իր Աստծո անվան զորությամբ: Բայց հետաքրքիր է՝ ի՞նչ տեղի կունենար, եթե Դավիթը որոշեր չսպանել առյուծին կամ արջին: Ի՞նչ կլիներ, եթե նա մտածեր, որ չարժեր վտանգի ենթարկել կյանքը մեկ ոչխարի համար: Զինվորը կորոշեր ապագայում սպասել այլ հնարավորության, բայց պատերազմողի համար ապագան՝ հիմա է: Պատերազմողը վերականգնում է ամեն ինչ: Երբեք մի մտածեք, որ այն, ինչ դուք անում եք այլ մարդկանց համար կամ այն, ինչ անում

եք ծածուկում, կարևոր չէ: Դա հաշվի է առնվում շատ ավելի, քան մենք գիտակցում ենք: Մինչև ավելին վստահելը, Աստված հետևում է, թե ինչպես ենք մենք տնօրինում այն, ինչը չի պատկանում մեզ:

Պատերազմողը չի կշռադատում հանգամանքները, երբ արդարությունը պետք է հաղթի անարդարությանը: Անհրաժեշտ է պատերազմողի սիրտ ունենալ՝ հետապնդելու համար առյուծին, որի բերանում գառ կա: Այն պայքարները, որոնք մենք հաղթում ենք ծածուկում, թույլ են տալիս մեզ՝ հրապարակավ հսկաներ սպանել:

Ես համոզված եմ՝ Դավթի մեծագույն պատերազմական սխրանքներն այն պատմությունների մեջ են, որոնցում նա խնայեց մարդկանց կյանքերը: Ինձ համար նրա մեծագույն հաղթանակներն այն ժամանակ չէին, երբ կանայք երգում էին. «Դավիթն սպանեց իր տասը հազարներին» (Ա Թագ. 18.7, ESV): Նրա ճշմարիտ մեծությունն արտահայտվեց շատ ավելի պակաս թվով՝ երեքով: Դավիթն ապացուցեց, որ ճշմարիտ պատերազմող էր, երբ հրաժարվեց սպանել Սավուղին՝ ինքնապաշտպանության համար, նաև Նաբաղին և Սեմեիին, թեև երկուսն էլ զրպարտեցին նրան: Խնայելով նրանց կյանքերը և թույլ տալով, որ Աստծո արդարությունը գործեր՝ նա ապացուցեց, որ իրական թագավոր է:

Պատերազմողները հասկանում են, որ թուր են կրում արդարություն հաստատելու, ոչ թե դատաստանի համար: Զինվորը կսպաներ այս երեքին էլ: Հենց սա է զինվորների գործը. նրանց մարզել են կյանքեր խլելու համար: Պատերազմողներն անում են ավելին: Նրանք կյանք են շնորհում կամ խլում՝ ժառանգություն հաստատելու համար: Պատերազմողները կռվում են Աստծո կամքի համեմատ, իսկ զինվորները՝ մարդկանց:

Ճշմարիտ պատերազմող դուստրերը վախենում են Տիրոջից, և այդ պատճառով ուրախությամբ երկրպագում և հնազանդվում են Նրան:

Սավուղը ժողովրդի թագավորն էր, բայց նա նույնպես նրանց զինվորն էր: Զինվորները ծառայում են բանակին, որը մարդկանց ամենալսելի ընդհանուր ձայնն է: Նա ապացուցեց սա, երբ թույլ տվեց, որ ժողովուրդը թելադրեր իր քայլերը, և կորցրեց այն ժառանգությունը, որն Աստված պետք է հաստատեր նրա համար:

> «Եվ Սավուղն ասաց Սամուելին. «Մեղք գործեցի, որ Տիրոջ հրամանները և քո խոսքերը զանց արի, որովհետև ժողովրդից վախեցա և նրանց խոսքը լսեցի»» (Ա Թագ. 15.24):

Դուք անխուսափելիորեն կծառայեք նրան, ումից վախենում եք: Պատերազմողները հնազանդվում են Աստծուն:

> «Որովհետև Տերը Բարձրյալ և Ահավոր է. մեծ Թագավոր է ամեն երկրի վրա» (Սաղմ. 47.2):

Ճշմարիտ պատերազմող դուստրերը վախենում են Տիրոջից, և այդ պատճառով ուրախությամբ երկրպագում և հնազանդվում են Նրան: Զինվորները վախենում են մարդուց, և այդ պատճառով հնազանդվում են մարդկանց: Բոլոր պատերազմողները գիտեն, որ ի վերջո հաշիվ են տալու անտեսանելի Տիրոջը, Ով Երկնքի և երկրի Արարիչն է:

Սավուղի պատերազմող որդին

Զինվոր-թագավոր Սավուղն ուներ Հովնաթան անունով պատերազմող որդի, ով Աստծուն հետևելու և հավատարիմ լինելու զարմանալի օրինակ էր: Նրա կյանքը ցույց է տալիս, թե ինչ կարող է անել Աստված, երբ մենք հետևում ենք Նրա նպատակին: Ես կներկայացնեմ նրա հաղթական պատմությունը, բայց խնդրում եմ, կարդացե՛ք այնպես, ասես անծանոթ եք այս պատմությանը:

Փղշտացիները և իսրայելցիները երկար ժամանակ անհաշտ էին, բայց եկավ մի պահ, երբ պատերազմն անխուսափելի էր: Փղշտացիները զինաթափել էին իսրայելցիներին և ասպատակել էին նրանց երկիրը: Նրանց արշավախմբերն ապակենտրոնացրել էին իսրայելցիներին: Պարտիզանական մարտավարություն օգտագործելով՝ նրանք սպառում էին իսրայելցիների պաշարները և շարունակ անհանգստություն էին պատճառում նրանց: Միաժամանակ փղշտացիները հետևում էին, որ Իսրայելում դարբիններ չլինեին, որպեսզի ոչ ոք նոր զենքեր չպատրաստեր:

> «Եվ այնպես եղավ, որ պատերազմի օրը Սավուղի և Հովնաթանի հետ եղող ամբողջ ժողովրդի ձեռքին սուր կամ նիզակ

> չէր գտնվում, միայն Սավուղի և նրա որդի Հովնաթանի մոտ էր գտնվում» (Ա Թագ. 13.22):

Սավուղը և Հովնաթանն առաջնորդում էին իրենց վատ սպառազինված բանակը՝ թշնամուն դիմակայելու համար: Վեց հարյուր տղամարդու մոտ կար ընդամենը երկու թուր: Սավուղը՝ թուրը ձեռքին, մնաց զորքի ետևում և նահանջեց մի քարայրի մեջ, իսկ Հովնաթանը իր զինակրի հետ աննկատ դուրս եկավ բանակից և դիմեց դեպի թշնամու բանակը:

> «Եվ Հովնաթանն իր զենքերը կրող պատանուն ասաց. «Ե՛կ այս անթլփատների պահապան զորքի մոտն անցնենք, կարելի է՝ Տերը մեզ համար մի բան անի, որովհետև Տիրոջ համար արգելք չկա, որ շատով կամ քչով ազատի»: Եվ իր զենքերը կրողը նրան ասաց. «Ամբողջ քո սրտի մեջ եղածն արա. առա՛ջ գնա, ահա ես քեզ հետ եմ՝ քո ուզածի պես»:
> (Ա Թագ. 14. 6,7)

Դու լսեցի՞ր Հովնաթանի համարձակ դիրքորոշումը: Նա գիտեր, որ պայքարը չէր որոշվում իրենով կամ իր թրով: Այն, որ իր զինակիրը չուներ որևէ զենք, չէր կարող ազդել պայքարի արդյունքի վրա: Կռվի արդյունքը Տիրոջ կարողության մեջ էր: Հովնաթանը գիտեր, որ *ոչինչ* չի կարող խոչընդոտել Աստծուն, որպեսզի ազատի: Զինակիցը Հովնաթանի խոսքերում պետք է որ զգար հավատքը, որովհետև նրա պատասխանը խիստ վճռական էր. «Լսի՛ր, Հովնաթան, արա նույնիսկ ավելին, քան ասացիր: Արա այն ամենը, ինչ վառվում է քո սրտում, այն ամենը, ինչի մասին համարձակվում ես մտածել: Ես քո կողքին եմ, բայց ոչ միայն ֆիզիկապես… ես քո սրտի և անձի հետ եմ»:

Հանկարծ նրանց աչքերը լուսավորվեցին, իսկ մարմիններն առույգացան: Ինչ-որ հզոր բան տեղի ունեցավ, երբ այս երկու պատերազմողները համաձայնեցին և համարձակ հռչակեցին Աստծո հավատարմությունը և իրենց նվիրվածությունը ընդհանուր գործին: Հովնաթանը գիտեր, որ հաղթանակն առջևում էր, բայց նա նույնպես գիտեր, որ իրենք պետք է մարտավարություն ունենային: Նա մի ծրագիր առաջարկեց, իսկ հետո թույլ տվեց, որ Աստված որոշեր արդյունքը: Նրա ծրագիրը մոտավորապես այսպիսին էր.

«*Աստված, մենք դուրս ենք գալու թաքստոցից և ցույց ենք տալու թշնամիներին, թե որտեղ ենք գտնվում: Եթե նրանք հետապնդեն մեզ, մենք կփախչենք: Բայց եթե նրանք կանչեն մեզ իրենց մոտ, մենք կիմանանք, որ Դու հանձնել ես նրանց մեր ձեռքը»:*

Հետևելով իրենց ծրագրին՝ նրանք երևացին թշնամուն, և փղշտացի զինվորները հրավիրեցին Հովնաթանին և նրա զինակրին իրենց մոտ՝ մի լավ ծեծելու: Բայց թշնամու հրավերը՝ ծեծկռտուքի համար, իրականում Աստծո հրավերն էր՝ Իսրայելի հաղթանակի համար: Առանց մի պահ վարանելու՝ Հովնաթանը և նրա ուղեկիցն անցան գործի:

> «…և Հովնաթանն իր զենքերը կրողին ասաց. «Իմ ետևից վե՛ր ելիր, որովհետև Տերը նրանց Իսրայելի ձեռքն է տվել»: Եվ Հովնաթանը ձեռքերով և ոտքերով վեր ելավ, նրա զենքերը կրողն էլ նրա ետևից, և նրանք ընկնում էին Հովնաթանի առջև, նրա զենքերը կրողն էլ նրա ետևից էր մեռցնում: Եվ Հովնաթանն ու նրա զենքերը կրողն այս առաջին կոտորածի մեջ քսան մարդու չափ մեռցրին… Եվ բանակում՝ դաշտի մեջ, և ամբողջ ժողովրդի մեջ խռովություն եղավ. պահապան զորքերը և ավարառուներն էլ զարհուրեցին, և *երկիրը դողաց*, և վախն Աստծուց էր» (խոսքեր 12-15, շեղագիրն ավելացված է):

Կարո՞ղ ես պատկերացնել: Թշնամին խուճապի մատնվեց, երբ երկու պատերազմող քայլեր ձեռնարկվեցին: Վճռական գործողությունների մեջ կա այնպիսի բան, որը կաթվածահար է անում թշնամուն: Նա մշտապես ջախջախվում է, նրա ծրագրերը, որոնց նպատակն է՝ երկչոտություն առաջացնել, խափանվում են:

Այն զինվորները, որոնք մի քանի րոպե առաջ պարծենում էին, սկսեցին դողալ վախից, քանի որ նույնիսկ հողը ցնցվեց, երբ Հովնաթանն ու նրա զինակիրը մոտենում էին:

Մի՞թե ժամանակը չէ, որ մի քանի տարբերակ առաջարկենք Աստծուն և դուրս գանք թաքստոցից:

Բայց մի պահ ետ գնանք: Ի՞նչ կլիներ, եթե Հովնաթանը չհեռանար իր հոր ճամբարից և չգնար դեպի փղշտացիների դիտակետը: Ի՞նչ կլիներ, եթե նա չասեր հավատքի համարձակ խոսքեր և առաջարկ չներկայացներ Աստծուն: Միգուցե նա և

նրա զինակիցը այնքան բարձրանային, որ հնարավոր լիներ հաշվել թշնամու զինվորներին, ոչ թե կռվել նրանց հետ: Դրանից հետո նրանք ետ կգային, հաշվարկներ կանեին և կպարզեին, որ թշնամիներն ավելի շատ էին իրենցից, նույնիսկ ավելին, քան տասը՝ մեկի հարաբերակցությամբ: Գիտակցելով սա՝ նրանք աննկատ կվերադառնային իրենց ճամբար: Բայց կարիք չկա հաշվել թշնամիներին, երբ հայտնություն ունեք այն մասին, թե ով է կռվում ձեզ հետ: Ճամբար վերադառնալու և զեկույց գրելու փոխարեն՝ Հովնաթանը և իր զինակիրը առաջ գնացին և նոր էջ գրեցին պատմության մեջ:

Այստեղ կա մի կարևոր փաստ, և ես չեմ ցանկանում, որ դուք բաց թողնեք այն. *զինվորների դուստրերը* կարող են պատերազմող դառնալ: Կարևոր չէ, որ դուք ծնվել եք զինվորների մի քանի սերունդներից. պատերազմողի հոգին բնակվում է ձեզանում: Ինչպես և Հովնաթանը, դուք պետք է գիտակցեք, որ սահմանափակված չեք *նրանով, ինչ շրջապատում է ձեզ:* Բարձրացրեք ձեր աչքերը և բացեք ձեր սիրտն այն ամենի համար, ինչ կարող է կատարվել ձեզ հետ: Այդ ժամանակ դուք կզանազանեք ավելին, քան ձեր հանգամանքներն են. դուք կտեսնեք *այն, ինչ Աստված է ցանկանում:*

Երբ դուք համարձակությամբ թողնեք այն, ինչն անօգուտ է (օրինակ՝ քարայրում ճամբարելը), դուք հաղթանակ կգտնեք ամենաանսպասելի վայրերում (օրինակ՝ թշնամու ճամբարում): Ժամանակն է ռիսկի դիմել և այլ ճանապարհ գտնել:

Նույնիսկ պատերազմողների մտքով չի անցնում, որ նրանց վարձել են՝ որևէ առաջադրանք կատարելու համար, որովհետև նրանք գիտեն, որ կանչված են՝ փոխելու իրենց շրջապատող աշխարհը:

Լսե՛ք կանչը

Դատելով պատմության ընթացքից՝ մենք ապրում ենք եզակի ժամանակաշրջանում, երբ բարձրանում է հերոսների մի սերունդ, ում մայրերը և հայրերը նպաստում են դրան: Ես տեսնում եմ,

որ երկրի տնտեսական, մշակութային, բարոյական, կրոնական և շրջակա միջավայրի վիճակը ճնշում է ձեզ՝ ինչպես որովայնը ծննդյան ժամանակ: Թույլ մի՛ տվեք, որ ձեզ շրջապատող ճնշումն ընկճի կամ նեղություն պատճառի ձեզ: Թույլ մի՛ տվեք, որ սատանան համոզի ձեզ, որ սա հրավեր է՝ ծեծկռտուքի համար: Ամեն կողմից մեզ շրջապատող ճնշումը՝ աստվածային ծրագրի մասն է, որի նպատակն է՝ կռել և ձևավորել ձեզ, դարձնելով այնպիսի անձնավորություն, ով ունի թե՛ հաստատություն, թե՛ խորություն: Դուք, զորությամբ լցված, դուրս կգաք այս թրծման որովայնից:

«Ես կասեմ հյուսիսին. «Թո՛ղ նրանց»,
և հարավին. «Ետ մի՛ պահիր նրանց»:
Բե՛ր Իմ որդիներին հեռվից,
և Իմ դուստրերին՝ երկրի ծայրերից,
յուրաքանչյուրին, ով կանչված է Իմ անունով,
ում Ես ստեղծել եմ Իմ փառքի համար,
ում Ես եմ կազմել և արարել» (Եսայի 43. 6,7, NIV):

Աստված պատրաստում է Իր ժողովրդին Իր փառքի համար: Ճնշումը կարող է փոխել մեզ՝ դարձնելով զինվորից՝ պատերազմող, և աղախնից՝ դուստր: Այն մեր թրծման գործընթացի մասն է: Արտաքին ճնշումը մշտապես հնարավորություն է՝ ներքին վերա-փոխման համար: Երբ Աստված տեսնի, որ մենք պատրաստ ենք, Նա բաց կթողնի բոլոր քամիները և դուրս կկանչի մեզ Իր անունով:

Պատերազմողները սովորել են, թե ինչպես վստահեն այն շշնջոցին, որը նրանց կանչում է խորը ներսից, իսկ զինվորները ճնշման են ենթարկվում՝ արձագանքելով այն աղմուկին, որը նրանց շուրջն է: Զինվորները և պատերազմողները տարբեր վերաբերմունք ունեն ճնշման հանդեպ: Զինվորների մոտեցումն է՝ «դիմանալ կամ փախուստի դիմել»: Նրանք տարբեր գործողությունների են դիմում՝ ճնշումը մեղմացնելու համար. նրանք ուտում են, վազում են, կողոպտում կամ թալանում են, գնումներ են կատարում, մի խոսքով՝ անում են ամեն ինչ, որպեսզի մտովի հեռանան ընդհարումից: Սա է պատճառը, որ հայտնվելով շարունակական և դաժան ճնշումների

ներքո՝ զինվորները դաժանորեն վրեժ են լուծում: Այն, ինչին նրանք ենթարկվում են, թափանցում է նրանց ներսը և սկսում է դրսևորվել:

Աստված չի տալիս մեզ հաղթական կյանք.
Նա կյանք է տալիս մեզ, երբ մենք հաղթում ենք:

— Օսվալդ Չեմբերս

Պատերազմողներն արձագանքում են՝ թույլ տալով, որ իրենց շուրջը գտնվող ճնշումները բարձրացնեն ճնշման մակարդակն իրենց ներսում, մինչև որ հավասարակշռություն հաստատվի: Նրանք մշտապես ծրագրում են, թե ինչպես հակահարձակում գործեն կամ՝ ինչպես քանդեն թշնամու խարդավանքները:

Պատերազմողները փորձառու են կյանքի պայքարներում, իսկ զինվորները պայքարում են միայն իրենց կյանքի որոշակի ժամանակահատվածում: Ես հասկանում եմ, որ ավելի լավ է կյանքում կարճ ժամանակով զինվոր լինել, քան վախկոտ՝ ամբողջ կյանքում, բայց վախկոտ լինելը, նույնիսկ, պատերազմող դստեր համար տարբերակ չէ:

Պատմություն երկու թագավորների մասին

Մենք հակադրեցինք պատերազմողներին՝ զինվորների հետ, իսկ հիմա համեմատենք երկու թագավորների՝ Իսրայելի առաջին թագավոր Սավուղին՝ Իսրայելի վերջին և հավիտենական թագավորի՝ Հիսուսի հետ:

Իսրայելի զինվոր-թագավոր Սավուղն օծվեց որպես և՛ թագավոր, և՛ ազատիչ, որովհետև Իսրայելը ցանկանում էր լինել այլ ազգերի պես: Նրանք ցանկանում էին թագավոր ունենալ, ում կարող էին իրենցը անվանել, այնպիսի առաջնորդ, ում իրենք կարող էին հպարտությամբ մատնացույց անել:

Փոխարենը հնազանդվեին անտեսանելի, անպարտելի և հավիտենական Բարձրյալ Աստծուն, նրանք ցանկացան ինչ-որ մեկին, ում կարող էին տեսնել և շոշափել: Նրանք ցանկանում էին արտասովոր մարդու, ով կառաջնորդեր նրանց պատերազմի մեջ, ոչ թե երկնային Թագավորին, Ով կպատերազմեր նրանց փոխարեն:

Աստված պատասխանեց նրանց խնդրանքին՝ տալով Սավուղին, ով արտասովոր երիտասարդ էր:

> «…և նա կանգնեց ժողովրդի մեջտեղը, և բարձր էր ամբողջ ժողովրդից՝ ուսից վեր: Եվ Սամուելը ամբողջ ժողովրդին ասաց. «Տեսա՞ք՝ Տերը որին է ընտրել, *որ ամբողջ ժողովրդի մեջ նրա պեսը չկա»,* և ամբողջ ժողովուրդն աղաղակեց և ասաց. «Կեցցե՜ թագավորը»» (Ա Թագ. 10.23,24, շեղագիրն ավելացված է):

Սավուղն առանձնանում էր ամբողջ ժողովրդից՝ գերազանցելով բոլորին իր հասակով: Նա ոչ միայն ֆիզիկապես էր ուժեղ, այլև շատ գեղեցիկ տեսք ուներ:

Աստված հաստատեց Սավուղի գահակալությունն Իր փրկարար զորության անհերևակայելի դրսևորմամբ: Ցավոք, շատ կարճ ժամանակ անց Սավուղն անդառնալի սխալ գործեց: Սամուելը կարգադրել էր Սավուղին՝ պայքարել փղշտացիների դեմ, բայց նա պետք է սպասեր և չսկսեր պայքարը թշնամու հետ, մինչև որ Սամուելը պատշաճ նախապատերազմական զոհեր մատուցեր Իսրայելի համար: Սավուղը հավաքեց իր փոքրաքանակ բանակը Գաղգաղում՝ պատրաստվելով դիմակայել փղշտացիների զորքերին, որոնք այնքան շատ էին, որ նրանց անկարելի էր հաշվել:

Մինչ Սավուղն սպասում էր, թշնամու բանակը համալրվում էր նորանոր զինվորներով: Սավուղի սարսափահար զինվորները լքում էին իրենց դիրքերը և փախչում էին՝ անցնելով գետը, մինչև որ նրա մոտ մնաց ընդամենը վեց հարյուր զինվոր: Փոխանակ բարձրացներ հայացքը, որպեսզի տեսներ այն, ինչ Աստված էր տեսնում (ես համոզված եմ, որ Աստված այնպես էր արել, որ բոլոր փղշտացիները հասցնեին գալ այդտեղ, որպեսզի Սավուղը պարտության մատներ բոլորին), Սավուղը թույլ տվեց, որ հանգամանքները ճնշեին իրեն: Նա որոշեց անձամբ տնօրինել իրավիճակը: Փոխարենը խրախուսեր իր մարդկանց և հիշեցներ, որ Աստված կարող էր փրկել թե՛ շատ, թե՛ քիչ զինվորների հետ, Սավուղը թույլ տվեց, որ նրանց վախն անհնազանդության տաներ իրեն:

> «Եվ Սավուղն ասաց Սամուելին. «*Մեղք գործեցի, որ Տիրոջ հրամանները և քո խոսքերը զանց արի, որովհետև ժողովրդից վախեցա և նրանց խոսքը լսեցի»»* (Ա Թագ. 15.24, շեղագիրն ավելացված է):

Ի վերջո, դուք կծառայեք և կհնազանդվեք նրան, ինչից վախենում եք: Աստված ընտրել էր Սավուղին, ով գլխով և ուսերով բարձր էր ժողովրդից, որպեսզի մարդիկ նայեին նրան, բայց փոխարենը նա իջավ ժողովրդի մակարդակին: Սավուղը տուժեց՝ կորցնելով իր թագավորությունը, քանի որ շարունակ անհնազանդություն էր ցուցաբերում: Ցավոք, Սավուղն անապահով առաջնորդ էր, ով չափում էր իր արժեքը նրանով, թե ինչ էին մարդիկ ասում իր մասին:

Սավուղի անկումն սկսվեց անհնազանդությամբ և հասավ իր կիզակետին ծանր ընկճվածությամբ, որն առաջանում էր կործանարար և երբեմն մոլեգնող չար ոգու պատճառով: Սավուղը մահացավ այնպես, ինչպես ապրել էր՝ վախենալով, թե ինչ կարող էին մարդիկ անել իր հետ:

Խոցված նիզակներով և շրջապատված թշնամու բանակով՝ Սավուղը որոշեց անձամբ տնօրինել իրավիճակը: Իր թշնամիների խոշտանգումներից խուսափելու համար, վախեցած թագավորը ինքնասպան եղավ՝ ընկնելով գետնի մեջ բռնակով խրված թրի վրա: Սավուղի ազդրին կպած թուրը դուրս քաշվեց՝ ի պատասխան վախի: Միակ վախը, որտեղ թագավորը պետք է համարձակվի ապաստանել, Տիրոջ վախն է:

> «Եվ Սավուղն ասաց իր կապարճակրին. «Սուրդ հանի՛ր և նրանով ինձ խոցի՛ր. *միգուցե այս անթլփատները գան և ինձ ծաղր անեն»,* բայց նրա կապարճակիրը չուզեց, որովհետև վախեցավ: Եվ Սավուղն առավ սուրը և ընկավ նրա վրա»:
> (Ա Մնաց. 10.4, շեղագիրն ավելացված է)

Երբ կապարճակիրը հրաժարվեց, Սավուղն ինքնասպան եղավ: Մի՞թե կա որևէ արարք, որը ցույց է տալիս մարդու ծայրաստիճան հուսահատությունը ավելի, քան ինքնասպանությունը: Երբ Իսրայելի բանակը լսեց, որ իրենց թագավորը և նրա որդիները մահացել էին, նրանք նույնպես կորցրին ամբողջ հույսը: Ժողովուրդը լքեց իր քաղաքները, և թշնամիները տիրեցին Իսրայելի տներին և հողատարածքներին:

Ի հակադրություն սրան՝ Հիսուսը սովորեց հնազանդ լինել Իր չարչարանքների միջոցով, ինչի շնորհիվ Նա թագավորություն ստացավ:

> «Թեև Հիսուսն Աստծո Որդի էր, *Նա հնազանդություն սովորեց այն բաներից, որոնք չարչարվելով կրեց:* Այս կերպով Աստված որակավորեց Նրան՝ որպես կատարյալ Քահանայապետ, և Նա դարձավ հավիտենական փրկության աղբյուր նրանց համար, ովքեր հնազանդվում են Իրեն» (Եբր. 5.8,9, NLT, շեղագիրն ավելացված է):

Եկեք հակադրենք, թե ինչպե՞ս այս երկու թագավորները դիմակայեցին թե՛ դաժան թշնամիներին, թե՛ մահվանը:

Սավուղն ինքը տնօրինեց իրավիճակը՝ թշնամիների խոշտանգումներից խուսափելու համար: Հիսուսը որևէ կերպով չփոխեց Իր իրավիճակը և հանձնվեց Իր թշնամիներին՝ իմանալով, թե ինչպես էին նրանք վարվելու Իր հետ:

Սավուղն ընկավ իր թրի վրա՝ չարչարանքներից խուսափելու համար: Հիսուսը բարձրացավ խաչը՝ մեր չարչարանքները վերցնելու համար:

Սավուղի ինքնասպանությունը ձեռնունայն թողեց իր թշնամիներին: Հիսուսի զոհը ձեռնունայն թողեց մահվանը:

Ո՞ւմ կցանկանայիք ձեռնունայն թողնել: Ո՞րն է ավելի ազդեցիկ՝ հաղթել ձեր թշնամիների՞ն, թե՞ հաղթահարել բոլորի թշնամուն:

Մահանալով՝ զինվոր-թագավոր Սավուղը կորստյան մատնեց իր ժողովրդին՝ լքելով նրանց: Մահանալով՝ Հիսուսը վերականգնեց այն ամենը, ինչը կորսված էր, և որդեգրեց մեզ: Մեր Պատերազմող Թագավոր Հիսուսն արեց այս ամենը մեզ համար, թեև մենք մերժեցինք Նրան: Սավուղն ապրում էր իր ժողովրդի ճանաչման համար: Հիսուսը մահացավ, որպեսզի Աստված կարողանար ընդունել մեզ:

Թագավոր Հիսուսը ծնվեց Աստծուց, մկրտվեց Հովհաննեսի կողմից, լցվեց Սուրբ Հոգով և մերժվեց սեփական ժողովրդից: Հիսուսը հանձնվեց Իր թշնամիների դաժանությանը: Նա թույլ տվեց, որ նրանք ծաղրեին և չարչարեին Իրեն՝ ծեծելով այն աստիճան, որ Նրան անկարելի էր ճանաչել: Նա կրեց հարցաքննություններ, կեղծ վկաների ցուցմունքներ և հրապարակային նվաստացում՝ դատավարության ժամանակ: Նրան մահվան դատապարտեցին այն մարդիկ, ում փրկելու համար Նա աշխարհ էր եկել:

Այնուամենայնիվ, այս ամենի ընթացքում Նա լուռ մնաց: Հիսուսը չէր կրում պողպատե թուր Իր ազդրի վրա: Նրա բառերը Հոգու

երկսայրի սուր էին, և Նա պահում էր դրանք պատյանի մեջ՝ սիրուց ելնելով: Թագավոր Հիսուսն արեց այս ամենը նրանց համար, ովքեր մերժեցին Իրեն:

Ուսումնասիրելով խաչը պատերազմողի տեսանկյունից՝ ես հասկացա, ոչ *չկա ավելի մեծ զենք, քան՝ երբ մարդը կամովի հրաժարվում է իր կյանքից:*

Մեր Փրկչի նպատակն ինքնասպանությունը չէր: Նա կրոնական մոլեռանդ չէր, ով ռումբ է կապում իր մեջքին՝ փորձելով հնարավորինս շատ կյանքեր գողանալ իր մահով: Նա չմահացավ, որպեսզի խուսափեր երկրային չարչարանքից կամ ձեռնունայն թողներ դաժան թշնամուն: Հիսուսն անպաշտպան, լուռ գառ էր, Ով ձեռնունայն թողեց մահվան մռնչացող լևիաթանին:

Ոչ ոք չխլեց Հիսուսի կյանքը. Նա անձամբ տվեց Իր կյանքը և, մահանալով, փրկեց մեր կյանքերը: Նա հրաժարվեց փրկությունից և օգնությունից, որպեսզի մեզ համար կարողանար լինել թե՛ փրկություն, թե՛ օգնություն:

Մեր Պատերազմող Թագավորն աղոթում էր, մինչ Իր թշնամիները մոտենում էին: Հիսուսը հանձնվեց նրանց դաժանությանը՝ կռվելու փոխարեն: Նա կրեց խաչը, ոչ թե որոշեց անձամբ տնօրինել իրավիճակը կամ գցել Իրեն այն թրի վրա, որը կրում էր Պետրոսը: Եվ երբ Հիսուսը հասավ այն բլրին, որի վրա պետք է մահանար, Նա պառկեց խաչի թրի վրա և թույլ տվեց, որ Իր ձեռքերը գամեին «մինչև բռնատեղը»: Ապա հռոմեացի զինվորները բարձրացրին անտանելի փայտե խաչը, և դաժան ծայրը, որը մահաբեր ծառի արմատի էր նման, խրեցին հողի մեջ:

Փաստեր սուսերամարտի մասին

Սուսերամարտի ճանապարհը երկմաս է. առաջինը՝ համբերությունն է, և երկրորդը՝ մարզվելը:

«Երբ Նա տեսնի այն ամենը, ինչը իրականացվել է
Իր տառապանքով,
Նա գոհ կլինի:
Եվ Իր փորձառության պատճառով
Իմ արդար ծառան հնարավորություն կտա
շատերին՝ արդար համարվելու,

> որովհետև Նա կկրի նրանց բոլոր մեղքերը:
> Ես Նրան *հաղթանակող զինվորի պատիվներ կտամ,*
> *որովհետև Նա մահվան մատնեց Իրեն»:*
> (Եսայի 53.11,12, NLT, շեղագիրն ավելացված է)

Այն փաստը, որ Հիսուսը մահվան մատնեց Իրեն, նշանակում է, որ Նա կարող էր չանել դա: Եսային խոսում է այն մասին, թե ինչու էր անհրաժեշտ խաչը: Հիսուսը հասկանում էր, որ հաղթելու միակ միջոցը՝ ամենաբարձր իշխանությանը հնազանդվելն էր (Իր Հոր կամքին), և Նրա վարձատրությունը մենք էինք: Հիսուսը տառապանք և ամոթ կրեց, որպեսզի Նրա հաղթանակը հայտնվեր մեզանում: Նրա տառապանքի միջոցով մենք արդարություն ստացանք: Մենք Նրա գործի հաղթական ավարտն ենք:

● ● ●

Աստված մշտապես կտա մեզ այն շնորհքը և զորությունը, որոնք անհրաժեշտ են մեզ՝ Նրա կամքը կատարելու համար: Պատերազմողները հնազանդվում են իրենց հրամանատարին, և երբ նրանք ձախողվում են (ինչպես և բոլորը), նրանք չեն մեղադրում ուրիշներին: Հիսուսը վերցրեց մեր մեղադրանքը և հետևեց Իր Հոր կամքին:

Սիրելի դո՛ւստր, դուք հաղթանակող Պատերազմող Թագավորի դուստրն եք: Պատերազմողի թուրը, որը դուք կրում եք, խորհրդանշում է պատիվ, առաքինություն, խիզախություն, գեղեցկություն, հավատարմություն և ազատություն վախից: Հաջորդ բաժնում մենք կսովորենք նպատակաուղղված գործածել այս ամենը:

Ոչ մի նորմալ, ողջամիտ սուրբ երբեք չի ընտրում չարչարանքը.
նա պարզապես ընտրում է Աստծո կամքը, ինչպես և Հիսուսը,
անկախ նրանից՝ չարչարվելո՞ւ է դրա պատճառով, թե՞ ոչ:

— Օսվալդ Չեմբերս

7

Ինչպե՞ս թուր կռել

Դժվար ժամանակները հերոսներ չեն ստեղծում: Պարզապես դժվար ժամանակներին է, երբ մեր ներսի «հերոսն» ի հայտ է գալիս:

— Բոբ Ռայլի

Թուր պատրաստելու ընթացքը շատ նման է կյանք կառուցելուն:

Կրակը, ջուրը և ճնշումը այն գործիքներն են, որոնք օգտագործվում են մետաղը մաքրելու, պողպատը թրծելու և թրեր կռելու համար: Թուր կռելու ընթացքում ճնշումը սովորաբար գործադրվում է անմիջապես ջերմությունից հետո: Ճնշումը լավագույնս գործում է, քանի դեռ նյութը ճկուն է, որովհետև կարծր վիճակում այն կարող է կոտրվել: Թուր կռելու ընթացքում մուրճը մշտապես աշխատում է:

Իմ սիրելի պատմությունը թուր պատրաստելու մասին գրված է Ստեֆեն Լոհեդի «*Նինի հրամանատարները*» էպիկական ստեղծագործության մեջ: Խավար և դաժան թշնամին ներխուժում է երկիր, և անհրաժեշտ է լուսեղեն թուր՝ այդ անգուք ախոյանի հետ մարտնչելու համար: Չցանկանալով լիովին հիշատակել այն գործընթացը, որը նկարագրված է Լոհեդի գրքում՝ ես կբավականամ նրանով, որ թուրը պատրաստվում է տարբեր տեսակի մետաղներից և, ի վերջո, ամբողջացվում է:

Թուր պատրաստելու գործընթացը նույնպես ինչ-որ կերպով նման է ձեռագործությանը: Տաքացնելուն պես ամուր նյութը բավականին ենթարկվող է դառնում. ստեղծվում է ճնշում, որի շնորհիվ մետաղի առանձին կտորները՝ թելերի նման, միացվում են իրար:

Դրանից հետո միախառնված կամ «գործված» մետաղը մուտք է գործում կրակե հալոցը՝ տաքացվելու համար: Այնուհետև այն սառեցվում է, ձևավորվում է մուրճով և կրկին ուղղվում է: Այս խաղը ծայրահեղությունների միջև՝ մի գործընթաց է, որը հայտնի է որպես թրծում:

Սրան հետևում է մուրճով հարթեցնելը, ձևավորելը և հղկելը, մինչև որ շեղբն ստանում է իր տեսքը և պատրաստ է դառնում բռնակին կցելու համար: Բռնակն իր հերթին նույնպես պատրաստման և թրծման ընթացք է անցնում, որպեսզի այն հնարավոր լինի գործածել:

Նմանապես, Աստված օգտագործում է կրակը, ջուրը և ճնշումը՝ Իր դուստրերին մաքրելու համար, որպեսզի վերափոխի մեր տկարությունները ուժեղ կողմերի, և մեր կարծրությունը՝ ճկունության: Նա սրացնում է անձև կյանքը՝ դարձնելով այն սուր և նպատակաուղղված:

Ջուր

Ջուրը՝ հակասությունների խառնուրդ է: Քիչ առաջ ես նայեցի իմ հյուրանոցային համարի պատուհանից, և իմ սահմանափակ տեսադաշտում երեխաներ էին, ովքեր ծիծաղում էին և խաղում էին Խաղաղ օվկիանոսի պարզ ծանծաղուտների մեջ: Միևնույն ժամանակ, նայելով հեռուն՝ դեպի հորիզոնը, ես տեսա, թե ինչպես էին սև ալիքները բախվում իրար, ինչը խաբուսիկ հորձանքի նշան էր: Դուք պետք է սիրեք մեր զարմանալի Աստծուն, Ով ստեղծել է ջուրը՝ որպես եզակի միջավայր, որում մենք կարող ենք խաղալ, բայց որը, միևնույն ժամանակ, կարող է մահացու լինել մեզ համար:

Ջուրը կարող է թարմացնել կամ հեղեղել: Այն կարող է մեղմորեն բարձրացնել մեզ իր մակերեսի վրա, կամ քաշել դեպի խորքերը: Դուք չեք կարող երկար ապրել առանց ջրի և չեք կարող երկար ապրել ջրի մեջ: Ջուրը կարող է մեղմորեն մաքրել և ոռոգել դաշտերը, կամ սրբել ամբողջ քաղաքներ՝ ցունամիի ալիքով:

Կրակ

Հաջորդը՝ կրակի տարրն է: Այն մոտ է հրավիրում է մեզ՝ ջերմություն խոստանալով, բայց փորձեք շատ մոտենալ, և այն կայրի: Վերահսկվող կրակը մաքրում է, բայց չվերահսկվող հրդեհը կլանում է ամեն ինչ: Կրակը կարող է ապահով կերպով լուսավորել ճանապարհը կամ կործանման և մոխրի հետքեր թողնել իր ետևից: Կրակը միաժամանակ մարդկության ընկերն ու թշնամին է. այն բնության ուժ է, որը պետք է սանձել, բայց որի հետ ոչ մի դեպքում չպետք է խաղալ:

Կրակ առաջացնելը և պահպանելը այն կարողություններից մեկն է, որն առանձնացրել է մարդկությունը կենդանական աշխարհից: Հազարամյակների ընթացքում մենք սովորել ենք ավելացնել կրակի ջերմաստիճանը, որի շնորհիվ կարողացել ենք նոր ձև հաղորդել բազմաթիվ նյութերի:

Սաստիկ ջերմության ներքո պինդ նյութերը հեղուկներ են դառնում: Մենք սովորել ենք տաքացնել դարբինների հնոցները մինչև 1.800 աստիճանի՝ Ցելսիուսի սանդղակով, որպեսզի խառնենք մետաղն այլ ձուլվածքների հետ՝ ստանալով ամուր և դիմացկուն պողպատ: Երկու տարբեր ձուլվածքների միախառնման արդյունքում ստացվող մետաղներն ունենում են երկուսի լավագույն հատկանիշները: Հենց որ դրանք խառնվում են այն աստիճան, որ այլևս չեն կարող առանձնանալ իրարից, դրանք կրկին սառեցվում են՝ վերադարձվելով պինդ վիճակի, որը կարելի է ձևափոխել: Տաքացրած մետաղը փոխում է գույները սպիտակ բոցեղենից՝ նարնջագույնի, և վերջապես՝ անփայլ մոխրագույնի:

Մենք տեսնում ենք այս վերափոխումը ապակու և բյուրեղապակու ստեղծման մեջ: Կարելի է պատրաստել հոյակապ ջրի անոթներ՝ միաձուլելով սորուն ավազի պես չնչին և բաժանված մասնիկները:

Ջուրը և կրակը՝ շոշափելի տարրեր են, որոնք մեր հոգևոր կյանքի ընթացքում հանդես են գալիս բազմաթիվ ձևերով:

> «*Մի՛ վախեցիր*, որովհետև Ես փրկել եմ քեզ.
> Ես կանչել եմ քեզ անունով, դու Ի՛մն ես:

Երբ դու անցնես ջրերով, ես քեզ հետ կլինեմ,
և գետերի միջով, դրանք չեն հեղեղի քեզ.
երբ դու քայլես կրակի միջով, դու չես այրվի,
և բոցը չի սպառի քեզ»:
(Եսայի 43.1,2, ESV, շեղագիրն ավելացված է)

Ուշադրություն դարձրեք, որ նախքան ջրի և կրակի մասին խոսելը, այս հատվածում գրված է վախի մասին: Մենք վախենալու պատճառ չունենք, որովհետև մեր Հայրը ոչ միայն փրկել է մեզ, այլև անուններ է տվել և որդեգրել է յուրաքանչյուրիս՝ դարձնելով Իրենը: Կարևոր է նշել, թե ինչպիսի բառեր է Եսային ընտրել այս հատվածում. նա չի խոսում ջրի և կրակի միջով անցնելու մասին պայմանական *«եթե»* բառով, այլ հստակ ցույց է տալիս, որ դա տեղի է ունենալու՝ օգտագործելով «երբ» բառը:

Երբեմն ես նույնիսկ մտածում եմ, որ այս փաստը հուսադրող է: Եթե խոստումը լիներ «*եթե* դու անցնես ջրերով, գետերով, կրակով կամ բոցով», կար վտանգ, որ ես հանկարծակիի կգայի: Մարդկային բնությունն այնպիսին է, որ մենք շատ բաներ կանենք՝ «*եթե*»-ներից խուսափելու համար: Համաձայն Եսայու՝ մենք նախապես գիտենք, որ ջրի և կրակի փուլերն անխուսափելի են մեր կյանքում, և պարտադիր չէ, որ դրանք տեղի ունենան մեր սխալների հետևանքով:

Բացի հավաստիացումն այն մասին, որ լինելու են ջրեր և գետեր, կրակներ և բոցեր, ակնհայտ է, որ այս տեսակի փորձառությունները կրկնվող բնույթ են կրելու: Բարի լուրն այն է, որ դուք պարզապես անցնելու եք դրանցով: Տեղի մի՛ տվեք տրտնջալուն և բողոքելուն, որովհետև ո՛չ ջուրը, ո՛չ կրակը մեզ համար կայանելու միջավայրեր չեն: Դրանք գործընթացներ են, որոնցով մենք պետք է բարեհաջող անցնենք:

Ամբողջ Աստվածաշնչում Աստված շարունակաբար օգտագործում է ջրային միջավայրերը՝ որպես անցման խորհրդապատկերներ: Իսրայելի զավակները, մինչև խոստման ժամանակաշրջանի մեջ մուտք գործելը, թողեցին եգիպտական ստրկության տարիները Կարմիր ծովի խորքերում, իսկ հետո անապատային դեգերումների տարիները՝ Հորդանան գետի ափերին:

Կրակը՝ ուխտի հռչակման խորհրդապատկեր է: Աստծուց կրակ

եկավ, երբ Նա առաջին անգամ ուխտ կնքեց Աբրահամի հետ: Ավելի ուշ, երբ Իսրայելը խոտորվեց՝ լսելով սուտ մարգարեներին, և Եղիան ապաշխարության կոչ արեց Իսրայելին, Աստված պատասխանեց կրակով: Կրակե հնոցն ապաստարան դարձավ Իսրայելի այն զավակների համար, ովքեր հրաժարվեցին խոնարհվել Նաբուգոդոնոսորի կուռքի առջև, սակայն հնոցի կրակը կլանեց նրանց, ովքեր երկրպագեցին այդ կուռքին:

Հնարավոր է, որ դուք արդեն անցել եք մի փոքր ջրի և կրակի միջով: Միգուցե դուք անցել եք ջրով, բայց չեք նկատել այն: Յուրաքանչյուրս անցել է հանդարտ և մեղմ ջրերով, որոնք մաքրում են մեր մեղքերը, թեև ֆիզիկապես մենք անտեղյակ ենք այս մասին: Կա ջրի մեջ ընկղմվելու պահ՝ մկրտության խորհուրդը, երբ մենք թաղում ենք մեր հին կյանքերը և բարձրանում ենք նորոգված վիճակում: Բայց կան նաև մոլեգնող գետեր, որոնք պետք է անցնենք. դրանք վախեցնում են, քանի որ սպառնում են հեղեղել և խորտակել մեզ: Սա տեղի է ունենում մեր կյանքում, երբ մենք անցնում ենք դժվարին ժամանակներով:

Կյանքն սկսվում է ջրում, և ջուրը պահպանում է կյանքը: Հայր Աստված սկսեց արարչագործության ընթացքը, երբ Իր Հոգին շրջում էր ջրերի վրայով: Նմանապես, մեր կյանքն սկսվեց մեր մոր որովայնի ծովում: Ջուրը՝ համընդհանուր լուծիչ է, որի գլխավոր նպատակը՝ մաքրելն է: Բայց ջուրն անում է ավելին, քան մաքրելը. այն բարձրացնում է: Ջուրը կարող է պահել այնպիսի ծանրություններ, որոնք շատ դժվար է տեղափոխել ցամաքով. այն կարող է նավեր տեղափոխել գետերով և օվկիանոսներով՝ հասցնելով դրանք հեռավոր երկրներ:

Այս գլխում մենք խոսում ենք կրակի և ջրի մասին, որովհետև դրանք մեծ դեր են խաղում մեր բնավորությունը կռելու հարցում ճիշտ այնպես, ինչպես թուր թրծելու մեջ: Մենք պետք է նշենք, որ թուր կրող անձնավորության բնավորությունը պետք է մշակվի նախքան իր թուրը թրծելը: Հին մշակույթներում՝ սկսած սամուրայներից մինչև միջնադարյան ասպետները, նախքան թուր գործածելու պատվին արժանանալը, տղամարդիկ պետք է նախ՝ հնազանդվեին էթիկայի մի շարք կանոնների:

Որովհետև, ի վերջո, ազատությունն անձնական
և միայնակ պայքար է, և մարդը դիմակայում է
ներկա վախերին, որպեսզի կարողանա բախվել այն
վախերի հետ, որոնք գալու են ապագայում:

— Էլիս Ուոլքեր

Ինձ համար զվարճալի է, որ սամուրայի մոլեգնող կրքերը զսպելու համար այս պատերազմողներին խրախուսում էին՝ հավասարակշռության բերել իրենց ագրեսիվ բնավորությունը՝ զբաղվելով կանացի համարվող արվեստներով, օրինակ՝ ծաղիկների ձևավորմամբ և թեյի արարողությամբ: Չնայած դրան, ես չեմ կարծում, որ մենք՝ կանայքս, ծայրահեղության մեջ կընկնենք, եթե մեր կյանքում մի փոքր տեղ հատկացնենք մարտարվեստների և մարտական կանոնների ուսումնասիրության համար:

«Ահա Ես քեզ մաքրեցի, և ոչ թե արծաթի կերպով,
Ես քեզ փորձեցի նեղության հալոցում:
Իմ պատճառով, Իմ պատճառով պիտի անեմ,
որովհետև ինչպե՞ս պղծվում է Իմ անունը,
և Ես Իմ փառքն ուրիշին չեմ տա»:
(Եսայի 48.10,11, շեղագիրն ավելացված է)

«Ահա» բառը (այլ թարգմանությունների մեջ՝ նայիր) հրավեր է՝ նայելու ինչ-որ բանի ավելի լայն տեսանկյունից: Այս բառը հուշում է մեզ, որ Նրա ժողովուրդը, անցնելով մաքրման ընթացքով, նույնիսկ գաղափար չուներ այդ մասին: Նրանք պարզապես մտածում էին, որ եկել էր իրենց վերջը:

Աստված ամեն ինչ նորովի է ցույց տալիս մեզ Իր հավիտենական տեսանկյունից: Վերջին հաշվով՝ Նա է մաքրում է մեզ: Հիշե՛ք, որ մաքրումը լավ է, սակայն միշտ չէ, որ այն կլինի առանց ցավի կամ նեղությունների: Օրինակ՝ ծննդաբերելը լավ է, բայց ինձ համար դա ոչ մի անգամ առանց ցավի չի եղել: Այս կյանքը լի է կրակե հնոցներով, որոնք կոչվում են նեղություններ: Որպեսզի հաջողությամբ անցնենք այդ հնոցներով, մենք պետք է իմանանք, որ թե՛ ջերմաստիճանի, թե՛ ժամանակի բռնակը մեր Աստծո տրամադրության տակ են:

Մինչև շարունակելը, սահմանենք *«նեղություն»* բառը: Աստվածաշնչյան համատեքստով այն նշանակում է չարչարանք՝ ֆիզիկական կամ մտավոր տառապանքի, դժվարությունների, բեռնավորվածության, խնդիրների, ցավի, փորձանքների, թշվառության, դժբախտության և զրկանքների պատճառով: Կան ընդամենը մի քանի հիշատակումներ հիվանդության մասին, բայց հիմնականում այս բառը հայտնվում է, երբ Աստծո ժողովուրդը էպիկական չափերի հասնող ճնշումներ է կրում:

> Մեզ սպասվում է ավելին. մենք շարունակում ենք բարձրաձայն փառաբանել, նույնիսկ երբ ծեծվում ենք նեղություններով, որովհետև մենք գիտենք, թե ինչպես նեղությունները կարող են ջերմեռանդ համբերություն զարգացնել մեզանում, և թե ինչպես է այդ համբերությունն իր հերթին *կռում առաքինության թրծված պողպատը*՝ զգոն պահելով մեզ այն ամենի համար, ինչ Աստված անելու է: Նման աչալուրջ սպասում ունենալով՝ մենք երբեք խաբված չենք զգա մեզ (տե՛ս Հռոմ. 5.3-5, MSG, շեղագիրն ավելացված է):

Այնպես որ, եկեք խոսենք այն նեղությունների մասին, որոնք կան մեր կյանքերում: Վերջերս հարցում անցկացրի Ֆեյսբուքով. ես խնդրեցի մարդկանց՝ թվարկել նեղության երեք ամենածանր բնագավառները մեր օրերում: Ահա երեք ամենահաճախ տրվող պատասխանները.

1. *Փոխհարաբերությունների խնդիրներ* ամուսնու կամ կնոջ, եղբայրների կամ քույրերի, երեխաների, առաջնորդների կամ ընկերների հետ: Պատասխանողների թվում էին թե՛ միայնակ ամուսնացած, թե՛ միայնակ չամուսնացած մարդիկ:
2. *Ֆինանսական խնդիրներ*՝ կապված գործազրկության, վարկային քարտերի և այլ պարտքերի հետ, որոնք առաջացել են ոչ իմաստուն կերպով կատարած գնումների և առողջական խնդիրների պատճառով:
3. *Խնդիրներ՝ կապված կյանքի նպատակը գտնելու հետ*, նաև ամենօրյա կարգապահության հետ, որն անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ հասնեն այն ամենին, ինչը կա իրենց սրտերում:

Եկեք անկեղծ լինենք… նեղությունը բոլորովին հաճելի չէ: Սիրտս ցավում էր մարդկանց համար, երբ կարդում էի նրանց պատասխանները: Կան երկու տեսակի նեղություններ, որոնց միջով անցնում ենք. նեղություններ, որոնք ինքներս ենք հարուցել, և այնպիսիք, որոնք վերահսկվում են Աստծո կողմից: Ես չեմ հավատում, որ Աստված է մշտապես առաջացնում մեր խնդիրները, բայց Նա օգտագործում է մեր խնդիրները՝ որպես հնարավորություն, որպեսզի մաքրի մեզ Իր փառքի համար: Երկու դեպքերում էլ լուծումը մեկն է. մոտենալ Նրան: Նա է մեր աղբյուրը, Նրա Խոսքը և՛ Նրա կամքն է, և՛ մեր խոստումների զենքը:

Իհարկե, «շարժվիր տեղիցդ» արտահայտությունը կարող է խայթող թվալ, բայց երբ իրավիճակը վատթարանում է, դուք իսկապես սկսում եք մտածել փոփոխությունների մասին:

Սա նույնքան ճշմարիտ է առօրյա կյանքում,
որքան և պատերազմի դաշտում.
մեզ տրվել է մեկ կյանք, և մենք ենք որոշում՝
սպասե՞լ, մինչև որ հանգամանքները ստիպեն
մեզ՝ որոշում կայացնել, թե՞ գործել և ապրել՝ գործելով:

—Գեներալ Օման Ն. Բրեդլի

Դժվարությունների միջոցով սովորած դասերը միշտ ամենաթանկն են դառնում, քանի որ հաճախ դրանք խիստ անձնական նշանակություն ունեն մեզ համար:

ճնշում

Կրակին և ջրին ավելանում է ճնշումը:

Ես օգտագործելու եմ իմ ամենից չսիրված խոսքերը Հակոբոսի գրքից, որպեսզի բացատրեմ, թե ինչպիսին է թրծման ընթացքը՝ համաձայն Սուրբ գրքի: «Ինգլիշ ստանդարտ» թարգմանությունը խրախուսում է մեզ. «Բոլորովին ուրախություն համարեք, *իմ եղբայրնե՛ր*, երբ հանդիպում եք տարատեսակ նեղությունների» (Հակոբ. 1.2, ESV, շեղագիրն ավելացված է): Դե ինչ, կարծում

եմ՝ դուք արդեն գիտեք, որ նեղությունները հատուկ չեն որևէ սեռի: Բայց որպեսզի կանայք նույնպես զգան, որ այս հորդորը վերաբերում է իրենց, ես կավելացնեմ նույն խոսքը «Մեսիջ» թարգմանությունից. «Բոլորովին նվեր համարեք, *ընկերներ (նաև՝ ընկերուհիներ)*, երբ փորձությունները և դժվարությունները ձեզ վրա են գալիս բոլոր կողմերից» (խոսք 2, շեղագիրն ավելացված է):

Մի՞թե Հակոբոսը լրջորեն է ասում սա: Արդյո՞ք նա անկեղծորեն պատվիրում է մեզ՝ *բոլորովին ուրախություն* համարել մեր նեղությունները, և ամեն կողմից մեզ ճնշող փորձություններն ու դժվարությունները ընկալել որպես *նվերներ:* Պատկերացրեք, որ զանգահարում եք ձեր ամենալավ ընկերուհուն ձեր կյանքի ամենավատ օրը, և այն բանից հետո, երբ լացակումած պատմում եք նրան բոլոր կողմերից եկող անսպասելի նեղությունների մանրամասները, նա խանդավառությամբ բացականչում է. «Ինչպիսի՜ նվեր: Արի՛ ուրախանանք: Սիրելի՛ս, դու շրջապատված ես նվերներո՜վ»:

Հավանաբար, դուք անմիջապես կանջատեք հեռախոսը և կզանգահարեք մեկ այլ ընկերուհու, ով գոնե կասի, որ ցավում է, որ ձեր օրն այդքան սարսափելի է, և կխոստանա աղոթել, որ վաղը ամեն ինչ ավելի լավ լինի: Կարելի է ասել, որ հենց այստեղ է առավել ակնհայտ, թե որքանով են հակադրվում մարդկային և երկնային տեսակետները: Մեր Աստված սիրում է հաղթանակներ տոնել անհնարին թվացող իրավիճակներում. ահա թե ինչու է Նա «հնարավորություն» անվանում անսպասելի նեղությունը, որից անհնար է խուսափել: Ի վերջո, Հակոբոսը Հիսուսի եղբայրն էր, այնպես որ, նա պետք է որ իմանար ինչ-որ բան, ինչը մենք չգիտենք: Նա շարունակում է. «Որովհետև դուք գիտեք, որ ձեր հավատքի փորձվելը տոկունություն է առաջացնում» (խոսք 3, ESV):

Ահա թե ինչպես է նկարագրվում այս գործընթացը «Մեսիջ» թարգմանության մեջ. «Դուք գիտեք, որ ճնշման ներքո ձեր հավատքի կյանքն ստիպված է դրսևորվել, և այն ցույց է տալիս իր ճշմարիտ գույները» (MSG):

Լա՛վ, եկեք ճիշտը խոսենք: Ես գիտեմ, որ ճնշման ներքո իմ հավատքը ստիպված է եղել դրսևորվել, բայց երբեմն ինձ դուր չի եկել այն, ինչ ես տեսել եմ: Կյանքի հանգամանքների ծանրությունը իջնում էր վրաս, և հանկարծ ես երևում էի այնպիսի գույներով,

որոնք տեսնելիս՝ նույնիսկ անկարելի էր շողոքորթել: Ոչ միայն գույներն էին սխալ, այլև *տոկունություն* բառը բոլորովին չէր համապատասխանում իմ վարքին:

Չեմ կարծում, որ Աստված նախատեսել է, որ նեղությունների ժամանակ տղաները հաղթեն, իսկ աղջիկները լաց լինեն, այնպես որ, ես գիտեի՝ եկել էր սթափվելու ժամանակը:

Մեր կյանքի նեղությունները բացահայտում են անտեսանելին՝ դարձնելով այն տեսանելի: Ճնշման ներքո հայտնվում է այն ամենը, ինչը թաքնված էր, երբ դժվարություններ չկային: Աստված ցանկանում է, որ մենք ծաղկունք ապրենք թե՛ ճնշման, թե՛ հանգստության պայմաններում:

Կյանքը նման չէ մերսման սրահի, որտեղ դուք եք ընտրում ուժգնության աստիճանը: Երբ դժվարությունը հարվածում է, ոչ ոք չի հարցնում ձեզ, թե ինչպիսին պետք է լինի ճնշումը՝ մե՞ղմ, միջի՞ն, թե՞ ուժգին: Աստծո թրծված դուստրերն ընկճվող չեն: Մենք կարող ենք ծաղկունք ապրել ցանկացած տեսակի ճնշումների ներքո և մեր կյանքի ցանկացած ժամանակաշրջանում:

Ես ապրում եմ Կոլորադոյում, որտեղ ձմեռը երկար է, իսկ գարուն գրեթե չկա: Մեզ մոտ սովորական երևույթ է, երբ ձյունամրրիկներից հետո անմիջապես ամառ է սկսվում: Եթե ես ցանկանամ որոշ տեսակի ծաղիկներ աճեցնել այդպիսի պայմաններում, պետք է փոխեմ դրանց աճի պայմանները: Ես ստեղծում եմ արհեստականորեն մեղմ ձմեռ՝ դնելով ծաղիկների սոխարմատները սառնարանի դարակում: Ես անում եմ այսպես՝ մինչև կեղծ գարունը, որն սկսվում է իմ լվացքատան սենյակի պատուհանին, և իհարկե, իմ ծաղիկները, չհասկանալով այդ խորամանկությունը, բացվում են: Կարծում եմ՝ Աստված նման մի բան է անում մեզ հետ, բայց բոլորովին այլ կերպով. Նա օգտագործում է նեղությունները և ճնշումները, որպեսզի մենք ծաղկենք կամ փթթենք:

Փաստեր սուսերամարտի մասին

Թուլությունը կարող է ուժի տպավորություն գործել սուսերամարտի մեջ, և ուժը՝ թուլության:

Հաջորդ խոսքում Հակոբոսը շարունակում է գովաբանել նեղություններ կրելու առաքինությունը. «Եվ թո՛ւյլ տվեք, որ տոկունությունը լիովին ներգործի ձեզանում, որ դուք կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (խոսք 4, ESV):

Նրանց համար, ովքեր ցանկանում են լսել այս խոսքն ավելի պարզ լեզվով, մեջբերում եմ «Մեսիջ» թարգմանությունից. «Այնպես որ, մի՛ փորձեք ժամանակից շուտ ազատվել ինչ-որ բանից: Թո՛ւյլ տվեք, որ այն կատարի իր գործը, որպեսզի դուք հասունացած և կատարելագործված դառնաք՝ առանց որևէ թերության» (խոսքեր 3,4, MSG):

Բոլորս էլ անցնում ենք փորձություններով, ուրեմն ինչո՞ւ թույլ չտանք, որ դրանք լիովին ներգործեն մեզանում: Ես հասկացել եմ, որ եթե ժամանակից շուտ եմ ազատվում ինչ-որ բանից, սովորաբար դա նշանակում է, որ ապագայում ես վերաքննություն եմ հանձնելու: Ասում են՝ որևէ մկանային խմբի վրա աշխատելիս աճը տեղի է ունենում այն պահին, երբ այլևս անկարող եք աշխատել այդ մկանով: Երբ տալիս եք այն ամենը, ինչ կարող եք, ինչ-որ կերպով դուք սկսում եք ստանալ Աստծո աղբյուրներից, որոնք ձեզանում չեն. դուք տալիս եք մի փոքր ավելին՝ ևս մեկ բարի խոսք, ևս մեկ հոգատար հպում, ևս մեկ ներման խոսք, ևս մեկ աղոթք, ևս մեկ հեռախոսազանգ: Այլ կերպ ասած՝ նեղության ժամանակ կայուն լինելը թրծում է մեր հավատքը, որպեսզի այն լիովին հասունանա:

Այս մոտեցման համար պահանջվում է երկնային իմաստություն, այնպես որ, Հակոբոսն ավելացնում է 5-րդ խոսքը. «Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան»: Իսկ «Մեսիջ» թարգմանությունն արձագանքում է. «Եթե դուք չգիտեք, թե ինչ եք անում, աղոթե՛ք Հորը: Նա սիրում է օգնել: Դուք կստանաք Նրա օգնությունը, և երբ խնդրեք, դուք նվաստանալու կարիք չեք ունենա՝ այն ստանալու համար»:

Աստված մեր իմաստության աղբյուրն է: Նա տալիս է մեզ Իր խորհուրդն առատորեն, ոչ թե ժլատորեն: Ես հավատում եմ՝ Նա բերում է մեզ այնպիսի իրավիճակների մեջ, որոնցում մենք հարկադրված ենք խնդրել Նրա օգնությունը: Այնպես չէ, որ Նա ձեռքերը ծալած նստել է Երկնքում և ասում է Հիսուսին. «Հավատդ գալի՞ս է: Նրանք դեռ չեն կարողանում ոչինչ ինքնուրույն անել»: Ո՛չ,

Նա սիրում է, երբ մենք ներգրավում ենք Իրեն: Աստված արագընթաց է դարձրել իմ կյանքը, այնպես որ, հաճախ ես արթնանում եմ՝ չհիշելով, թե որտեղ եմ, և նույնիսկ՝ թե ինչո՞ւ եմ այդտեղ: Ես ասում եմ. «*Երկնային Հա՛յր, այսօր ես ունեմ Քո իմաստության կարիքը*»: Եվ Նա պատասխանում է. «*Դո՛ւստր, ես արդեն հոգացել եմ ամեն ինչ*»: Բայց կա մի հատուկ ձև, որով Աստված ցանկանում է լսել այս աղոթքները:

> «Միայն թե *թող հավատքով խնդրի՝ առանց երկմտելու*, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին: Այն մարդը [կինը] թող չկարծի, որ Տերից մի բան կառնի: Երկմիտ մարդն [կինն] անհաստատ է իր բոլոր ճանապարհներում» (Խոսքեր 6-8):

> «*Խնդրե՛ք համարձակ, հավատալով՝ առանց վարանելու*: Մարդիկ, ովքեր «անհանգստանում են» իրենց աղոթքներում, քամուց ծեծված ալիքների պես են: Մի՛ կարծեք, որ դուք ինչ-որ բան կստանաք Տիրոջից այդ կերպով՝ շարունակելով մնալ բաց ծովում, բաց լինելով ցանկացած հնարավորության համար» (Խոսքեր 6-8, MSG):

Աստծուն դուր է գալիս, երբ մենք համարձակ աղոթում ենք՝ առանց կասկածի որևէ նշույլի: Ինձ դուր է գալիս մտածել այս կերպով. Աստված առաջարկում է մեզ այնպես աղոթել, որ մեր աղոթքը վախեցնի այն, ինչը վախեցած է մեր ներսում: Վերջին մի քանի տարիների ընթացքում Աստված ընդլայնեց Զոնին, ինձ և «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ի աշխատակազմը: Մենք հարկադրված էինք միաբանել մեր սրտերն ու ձեռքերը և աղոթել այնպիսի աղոթքներ, որոնք ապշեցնում էին մեր ականջները, և մեր սրտերը թրթռում էին, երբ այդ բառերը դուրս էին գալիս մեր շուրթերից:

Աստծուն դուր է գալիս, երբ մենք համարձակ աղոթում ենք՝ առանց կասկածի որևէ նշույլի:

Նման մի դեպք տեղի ունեցավ, երբ Զոնը կիսվեց մեր թիմի հետ Աստծուց ստացած կոչի մասին: Նա զգում էր, որ Աստված կոչ էր անում իրեն՝ բաժանել 250.000 գիրք մեկ օրացուցային տարվա ընթացքում:

Ես կծկում զգացի կոկորդումս: Գրքերի առավելագույն քանակը

մեկ տարվա ընթացքում, որը մենք մինչև այդ բաժանել էինք, 70.000 էր: Ինձ թվաց, որ 250.000-ը մեկ օրացուցային տարում մեծ ցատկ էր: Այնպես որ, ես առաջարկ արեցի.

- Իսկ ի՞նչ կասես 100.000-ի մասին:

Դա իմ լավագույն պահը չէր: Զոնը պատասխանեց շատ արագ, նախքան իմ կասկածը կազդեր բոլորի վրա:

- Լի՛զա, ես հավատում եմ 250.000-ի համար:

Դրանով ամեն ինչ որոշվեց: Բոլորս կանգնեցինք և աղոթեցինք մի աղոթք, որն այդ պահին անհնարին և անհեթեթ էր թվում: Բայց անկեղծ ասած՝ եթե դուք չեք աղոթում այնպիսի աղոթքներ, որոնք վախեցնում են ձեզ, ուրեմն ձեր աղոթքները հաստատ չեն վախեցնի մեր թշնամուն: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ մեր համարձակ խնդրանքն այն էր, ինչին Երկինքն սպասում էր: Մի քանի օրվա ընթացքում մեզ համար բացահայտվեց այդ նախագծի իրականացման ծրագիրը, և հայտնվեցին միջոցներ՝ այն իրականացնելու համար: Տարբեր եկեղեցիներ, մեր ընկերները և նույնիսկ մի ռոք «աստղ» համագործակցեցին մեզ հետ, որպեսզի այն ուղերձները, որոնք հանձնված էին մեզ, հասնեին տարբեր երկրներ: Մեր գրքերը թարգմանվեցին արաբերենով, պարսկերենով, հայերենով, չինարենով, վիետնամերենով, բուլղարերենով և ինդոնեզերենով, ինչպես նաև ուրդուով, խմերով և շատ այլ լեզուներով: Գրքերն այն լեզուներով, որոնց անունները ես նույնիսկ չեմ կարող արտասանել, հասան մեկուսացված առաջնորդների, եղբայրների և քույրերի:

Թրերը կարող են երկսայրի լինել, բայց ոչ մի դեպքում՝ երկմիտ: Եթե մենք որոշել ենք հարվածել, ուրեմն պետք է հաստա՛տ հարվածենք:

Գրեթե բոլոր դեպքերում կյանքի պայքարը հաղթվում է մեծ ջանքերով, և հաղթել այն առանց պայքարի, միգուցե կնշանակեր՝ հաղթել այն առանց պատվի: Եթե չլինեին դժվարություններ, չէր լինի նաև հաջողություն: Առանց պայքարների չէին լինի նվաճումներ:

— Սեմյուել Սմայլս

Այնպես որ, սիրելի դո՛ւստր, դո՛ւք եք որոշում: Դուք կարող եք փախչել և թաքնվել, անիծել և լաց լինել՝ փորձելով խուսափել կյանքի դժվարություններից, և պարտվել: Բայց նաև կարող եք թույլ տալ, որ դժվարությունը լինի այն կրակե հնոցը, որը թրծում է ձեր ուժը:

> «Ընկերնե՛ր, մեզ համար ակնհայտ է, որ Աստված *ոչ միայն անչափ սիրում է ձեզ, այլև Նրա ձեռքը ձեզ վրա է՝ հատուկ մի բանի համար:* Երբ այս Ուղերձը, որը մենք քարոզեցինք, հասավ ձեզ, այն միայն խոսքերով չէր: Ինչ-որ բան կատարվեց ձեզանում: Սուրբ Հոգին պողպատի ամրություն հաղորդեց ձեր համոզմունքներին» (Ա Թեսաղ. 1.5, MSG, շեղագիրն ավելացված է):

Ավարտելով այս գլուխը՝ ես աղոթում եմ ձեզ համար.

Թանկագին երկնային Հա՛յր,

Թող որ մենք՝ Քո դուստրերը, մեկ լինենք Քո սրտի և երկնային նպատակի հետ: Թող որ մեր կյանքերն արտահայտեն այն ամենը, ինչ Դու փափագում ես, որ մենք վերապրենք, տեսնենք, լսենք և ունենանք: Մեկ դարձրու մեզ: Մենք հնազանդվում ենք այն ամենին, ինչ Դու ցանկանում ես անել մեր կյանքերում: Թող Քո կա՛մքը լինի կրակե հնոցում և ջրի մկրտության մեջ: Ձևավորի՛ր մեզ՝ դարձնելով այնքան զորավոր և ճկուն, որ մեր կյանքերը հռչակեն Քո սերը և փրկարար զորությունը, Հիսուսի անունով, ամե՛ն:

Հաջորդ բաժնում կսովորենք, թե ինչպես նպատակաուղղված գործածենք այս ամենը:

ՄԱՍ ԵՐԵՔ

ՁԻՆՎԱԾ

8

Թրե բառեր

«Որովհետև, թեև մարմնով ենք վարվում, բայց մարմնավորապես չենք զինվորություն անում: Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ՝ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու»:

— Բ Կորնթացիների 10.3,4

Այն թուրը, որը մեզ վստահվել է, չի բարձրացվում մեր ձեռքերով, այլ՝ մեր բառերով: Մենք խոսում ենք Աստծո Խոսքը, որը, որպես զենք, լսվել է շատ ավելի վաղ, քան տեսնվել է: Վերջին անգամ, երբ այս աշխարհը տեսավ այս թուրը կամ Աստծո Խոսքը՝ իր ամենահզոր արտահայտմամբ, այն ժամանակ էր, երբ Հիսուսն այս երկրի վրա էր: Նա փափագում է, որ մենք միասնաբար աճենք՝ հասնելով նույն հասակի չափին:

Ինչպես մեր Տեր Փրկիչը, մենք կարող ենք դուրս քաշել մեր թուրը այն բառերի միջոցով, որոնք խոսում ենք: Մենք խոսում ենք որպես հավատքի, հույսի և Նրա սիրո դեսպաններ, որպեսզի այս աշխարհի մարդիկ իմանան, որ իրենք հաշտվել են Աստծո հետ Նրա Որդու մահվան միջոցով: Մենք հույսի ծառայողներ ենք, ում բառերը համեմված են աղով և լույսով, և օտարոտի են հնչում այս խավարով պղպեղված աշխարհի համար: Բառերն անտեսանելի են, բայց սխալ գործածելու դեպքում կարող են մահացու լինել:

Բառերը զորավոր զենքեր են բոլոր գործերի համար՝ թե՛ բարի, թե՛ չար:

— Մենլի Փ. Հոլ

Մենք զորություն ունենք՝ ասելու այնպիսի բառեր, որոնք կարող են բացել կամ փակել մարդկանց սրտերը: Հիմա ժամանակն է ասելու Երկնքի բառերը՝ մարդկանց մեր խոսքով և գործերով ազատ արձակելու մտադրությամբ:

Մեր հինավուրց լեզուն միավորում է նրանց, ովքեր մի ժամանակ բաժանված էին, որովհետև այն բաղկացած է անձամբ Աստծո խոսքերից: Մտածե՛ք այս մասին. Աստված տվել է մեզ Իր լեզուն, և կարիք չկա, որ սովորենք երկնային ուղղագրությունը կամ կետադրությունը՝ այն գործածելու համար: Նա օժտել է Իր բառերը կարողությամբ, և խնամքով կազմել է ամեն նախադասությունը, որպեսզի ամեն վանկ լինի լցված զորությամբ և կետադրված խոստմամբ:

> «Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց և օգտակար է, որ սովորեցնի մեզ այն, ինչ ճշմարիտ է, և դրդի մեզ՝ գիտակցել, թե ինչն է սխալ մեր կյանքերում: Այն ուղղում է մեզ, երբ մենք սխալ ենք, և սովորեցնում է ճիշտ վարվել: Աստված օգտագործում է այն, որպեսզի պատրաստի և սպառազինի Իր ժողովրդին ամեն բարի գործ անելու համար»: (Բ Տիմոթ. 3.16,17, NLT)

Ուշադրություն դարձրեք՝ այստեղ գրված չէ, որ Սուրբ գրքի միայն որոշ մասն է ոգեշնչված և օգտակար, այլ որ ամբողջ Սուրբ գիրքն է սովորեցնում, ուղղում, պատրաստում և սպառազինում: Եթե մենք ընտրենք որոշ մասեր Խոսքից, խոսենք միայն դրանք և ապրենք միայն դրանցով, մենք վատ սպառազինված և անպատրաստ կլինենք այն ամենին, ինչ սպասվում է մեզ ապագայում: Սուրբ գիրքը դառնում է մեր հայելին: Աստծո Խոսքը կարող է այնպես փոխել մեզ, որ արտացոլենք այն, ինչ ճշմարիտ է, և մերժեք այն, ինչ սխալ է: Խոսքին նայելը դրդում է մեզ՝ փոխել ոչ միայն մեր խոսելաոճը, այլև մեր բառերի ծագումը:

> «Վերևից եկողն ամենից վեր է. երկրից լինողը երկրից է, և երկրից է խոսում…» (Հովհ. 3.31):

Լեզուն կարող է բարձրացնել կամ նվաստացնել, օրհնել կամ անիծել, բժշկել կամ վերքեր հասցնել: Մենք կարող ենք խոսել կա՛մ

այս աշխարհի ձևով, կա՛մ Երկնքի ձևով: «Մեսիջ» թարգմանությունը վերծանում է Հովհաննես 3. 31-ը հետևյալ կերպով.

> «Նա, Ով գալիս է վերևից, գլխով և ուսերով բարձր է Աստծո այլ ավետաբերներից: Երկրի վրա ծնվածը կապված է երկրայինով և խոսում է երկրի լեզուն. Երկնքում ծնվածը իր սեփական դաշինքի մեջ է»:

Մենք երկրի վրա ծնվածներն ենք, ովքեր վերածնվել են Երկնքի համար: Եթե ես իմանայի, որ մինչև իմ երկրային կյանքի ավարտն ապրելու էի Իտալիայում, իտալերեն սովորելը տրամաբանական որոշում կլիներ: Մենք հավիտյան ապրելու ենք Երկնքում, այնպես որ, արժե սովորել երկնային լեզուն հիմա՛: Ժամանակն է, որ խոսենք մեր վերստին ծննդյան լեզվով, որը մեր Հոր երկրի լեզուն է:

> «Իմ սիրտը բորբոքվում է ազնիվ գաղափարով,
> երբ արտասանում եմ իմ տողերը թագավորի համար.
> իմ լեզուն վարպետ գրողի գրիչ է» (Սաղմ. 45.1, NIV):

Աստված ցանկանում է հայտնել Իր զորությունը ձեր մեջ և ձեր միջոցով: Նա ոչ մի դեպքում չէր նախատեսել, որ մենք ապրեինք՝ սահմանափակվելով մարդկային զորության լեզվով և իրողությամբ: Աղոթքի շնորհիվ մենք վերապրում ենք աստվածային միջամտություն, որը գլխով և ուսերով վեր է բարձրացնում մեզ մեր մարդկային լեզվի սահմաններից: Մեր նոր հասակը նոր տեսադաշտ է բացում մեր առջև: Մենք բարձրացնում ենք մեր թրերը, երբ բարձրացնում ենք Նրա Խոսքը. «Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են» (Առակ. 18.21):

Աստծո բառերն անթերի են և լի են կյանքով: Դրանք նմանեցվում են մեր կենդանի թրերին, որոնք լուսավորում են խավարը: Նա վստահել է Իր զավակներին զորավոր, սուրբ և հինավուրց մի լեզու: Այս կենդանի բառերը պետք է պատվով գործածել: Երբ Նրա սուրբ բառերը չարաշահվում են կամ գործածվում են բարկությամբ՝ դատաստանի համար, դրանց արտացոլանքն աղավաղվում է, և երկնային լույսը մթագնեցվում է խավարով:

Մենք հավիտյան ապրելու ենք Երկնքում, այնպես որ, արժե սովորել երկնային լեզուն հիմա՛:

Ես մեծ սիրով կցանկանայի որևէ օտար լեզու իմանալ: Այնքա՜ն զարմանալի կլիներ իմանալ նոր բառեր, որոնք ինձ համար ճանապարհ կբացեին դեպի մեկ այլ երկիր: Ինչպես ամերիկացիների մեծ մասը, ես նույնպես դպրոցում մասնակցել եմ օտար լեզվի պարտադիր երկամյա դասընթացին՝ ֆրանսերեն սովորելով, բայց քանի որ չէի շփվում ոչ ոքի հետ այդ լեզվով, իմ սահմանափակ գիտելիքներն արագորեն կորսվեցին: Երանի՜ ինձ առաջարկեին իտալերեն սովորել. այդ դեպքում ամեն ինչ այլ կերպ կդասավորվեր: Թեև հայրս ծնվել էր Միացյալ Նահանգներում, անգլերենը նրա առաջին լեզուն չէր: Նրա մայրը և հայրը ծնվել էին Սիցիլիա կղզում, և այդ պատճառով նրանք իտալախոս էին: Այդ ժամանակ իտալացիները տգետ, աղքատ գաղթականներ էին համարվում: Հորս ծնողները կապ ունեին իտալախոս համայնքի հետ, բայց մեկուսացված էին անգլախոս ամերիկացիներից: Իմ հայրն արագորեն հասկացավ, որ դպրոցում ուշադրություն էր գրավում իր արտասանության պատճառով, բայց արտասանությունը դժվար էր փոխել այն դեպքում, երբ ամեն օր խոսում ես այլ լեզվով տանը, և այլ լեզվով՝ դպրոցում: Իմ տատն այրի դարձավ, երբ հայրս ընդամենը տասը տարեկան էր: Որպես ավագ որդի՝ նա մեծ դժվարությամբ անգլերեն սովորեցրեց իր մորը, որպեսզի այդ կինը կարողանար հոգալ իր ընտանիքի մասին:

Հայրս պատմում էր, որ նա փախավ տնից վաղ տարիքում, փոխեց իր անունը՝ Վեներանդոյից՝ Ջոզեֆ, ծառայեց ռազմածովային նավատորմում և դարձավ ռեգբիի թիմի խաղացող Ինդիանայի համալսարանում: Ուսում ստանալուց հետո նա աշխատեց մի օդանավակայանում և ամուսնացավ մորս հետ, ով ուղեկցորդուհի էր: Նա աշխատում էր՝ ամեն գնով հեռու մնալ աղքատությունից, որը կրել էր մանկության և պատանեկության տարիներին:

Տասնամյակներ անց հայրս հաջողակ գործարար դարձավ: Մանկությանս տարիներին ինդիանացի երեխաներն ինձ «վոպ» էին անվանում (արհամարհական բառ, որով Ամերիկայում անվանում են իտալացիներին. առաջացել է «առանց փաստաթղթերի» (without papers) արտահայտության հապավումից), բայց ես նույնիսկ գաղափար չունեի, թե ինչ էր դա նշանակում: Ես միայն գիտեի, որ

երբ հորս ընտանիքը հավաքվում էր տատիս տանը, հորեղբայրներս խոսում էին իրար հետ կրակոտ և բարձր ձայներանգներ ունեցող երաժշտական լեզվով, որը երբեք չէի լսել մեր տանը: Ցավոք, ես գիտեմ ընդամենը մի քանի արտահայտություն և մի քանի երգ իտալերենով: Երանի՜ թե խնդրեի, որ ինձ ավելին սովորեցնեին: Նույնիսկ այժմ, երբ ես Իտալիա եմ ուղևորվում, հանկարծ հիշում եմ տատիս խոսքի ռիթմերը: Այնպիսի տպավորություն է, ասես հորս մայրենի լեզուն կանչում է իր դստերը:

Դուք ցանկանո՞ւմ եք խոսել օտար լեզվով: Խնդրում եմ, մի՛ մտածեք, որ ես նկատի ունեմ օտար լեզվի քերականությունը սովորելու հոգնեցուցիչ աշխատանքը: Ես նկատի ունեմ, որ դուք ունենաք իրական, բնածին ընկալում, որն այնքան խորն է, որ դուք կարող եք խոսել ձեր սրտից:

Միգուցե արդեն սահուն կերպով խոսում եք օտար լեզվով: Այդ դեպքում կարիք չկա, որ պատմեմ ձեզ, թե ինչպես է այս կարողությունը դռներ բացում և արագորեն կապեր հաստատում այնպիսի մարդկանց հետ, ովքեր ապրում են այլ իրականության մեջ: Միացյալ լեզվի և նպատակի համադրությունը ամուր կապեր է ստեղծում տարբեր երկրների բնակիչների միջև:

Երբ թարգմանում էինք մեր գրքերը բազմաթիվ օտար լեզուներով, մենք երկյուղածություն էինք ապրում, թե ինչպես էին այդ ուղերձները հասնում այլ մարդկանց: Նախկինում մեկուսացված մարդիկ զգում էին, որ իրենք մենակ չէին, և ստացողներն զգում էին, որ այլ մարդիկ պատվում էին նրանց կարիքները՝ նվիրատվություններ անելով: Մարդիկ ոչ միայն ստանում էին Աստծո Խոսքն իրենց լեզվով, այլև ընդունում էին այն փորձառությունը, որով մենք կիսվում էինք, այնպես որ, նրանք կարող էին կիրառել դա իրենց առօրյայում:

Գրելով «*Կնոջ հոգատարության ուժը*» գիրքը՝ ես ներկայացրի հոգատարությունը որպես սրտի լեզու, որն ընդհանուր է բոլոր կանանց համար: Հոգատարությունն արտահայտվում է որպես լեզու թե՛ բառերով, թե՛ առանց բառերի: Սա մեր համընդհանուր մայրենի լեզվի օրինակն է. հոգատարությունը ցույց է տալիս մեր կանացիությունը ճիշտ այնպես, ինչպես մեր մայրենի լեզուն ցույց է տալիս, թե որ երկրում ենք ծնվել:

Որքան էլ այս երկուսը կարևոր լինեն, ես հույս ունեմ բացահայտել մեկ այլ մակարդակ այս գրքի միջոցով: Ես ցանկանում եմ մի փոքր ավելի խորը գնալ և խոսել այնպիսի լեզվով, որն ավելի ազդեցիկ է, քան մեր մայրենի լեզուն կամ մեր սրտի մայրենի լեզուն:

Այս լեզվական կառուցվածքն ընդունակ է ավելիի, քան հաղորդակցությունը մարդկանց միջև: Այս լեզվի բառերը պարունակում են այնպիսի զորություն, որը կարող է տեղափոխել անտեսանելին՝ բերելով այն տեսանելի իրականության մեջ, և ինչ-որ բան ստեղծել ոչնչից:

Երբ մեր Հայրը խոսեց, ստեղծվեց ամեն ինչ: Հանկարծ անձև խառնաշփոթից և խավար դատարկությունից ծնվեցին կարգ ու կանոնը և լույսը: Եթե ցանկանում ենք լինել այնպիսի դուստրեր, ովքեր երկյուղածություն են առաջացնում իրենց հանդեպ և երկյուղածություն ներշնչող գործեր են անում՝ մեր զարմանալի Աստծուն պատիվ բերելու համար, ուրեմն մեզ անհրաժեշտ են Նրա բառերը և Նրա անունը:

Մենք նման ենք մեր Հորը. մեր մտքերն արտահայտվում են, երբ մենք խոսում ենք: Աստված ստեղծեց մեզ՝ շնորհելով խորին հասկացողություն այն մասին, թե ինչ է նշանակում ընդունել, կրել և, երբ ժամանակը լրանա, ծնել կյանքը: «…սրտի ավելացածից կխոսի բերանը» (Մատթ. 12.34): Սովորաբար, երբ լսում ենք այս խոսքը, մեզ հորդորում են՝ հսկել մեր սրտերը, կամ հասկանալ, թե ինչ կա մեր սրտում՝ լսելով, թե ինչ է դուրս գալիս մեր բերանից: Բայց այս անգամ ես ցանկանում եմ նայել այս խոսքին մեկ այլ տեսանկյունից. Աստված կյանքի կոչեց տիեզերքը և գալակտիկաները, երբ խոսեց Իր սրտի առատությունից:

> «Որովհետև Նրա աներևույթ բաները աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով տեսնվում են, որ է Նրա մշտնջենավոր զորությունը և Աստվածությունը» (Հռոմ. 1.20):

Դուք շատ ավելի ոգեշնչող և բարդ եք, քան օվկիանոսները, լեռները և առյուծները: Սիրելի դո՛ւստր, դուք արտացոլում եք մի զարմանալի հատկանիշ, որը հատուկ է մեր անտեսանելի Աստծուն:

Երբ ինչ-որ մեկը շշնջում է այս լեզուն, այն ակնթարթորեն

անցնում է մեծ տարածություններ՝ միացնելով երկիրը Երկնքի հետ: Մենք պետք է խոսենք այս լեզվով, որովհետև սա մեր Հոր լեզուն է:

Բացի այն, որ Սուրբ գիրքը՝ Աստծո գրված խոսքերն են, որոնցից թրեր են կազմվում, Աստվածաշունչը՝ մեր ճշմարիտ տան կենդանի լեզուն է: Եվ որպես այդպիսին՝ ամեն նախադասություն լի է օրինակներով և կարգադրություններով թե՛ մեր երկրային ընթացքի, թե՛ այն բարձր և սուրբ վայրի համար:

Փաստեր սուսերամարտի մասին

Հավասարակշռվածությունը և արգելափակման հնարները չեզոքացնում են նույնիսկ ամենաագրեսիվ սուսերամարտիկի հարձակման ուժը:

Նրա Խոսքը գերազանցում է բոլոր լեզուները, որոնք մենք մինչ այդ գիտեինք, որովհետև Նրա բառերը առաջացրին այն ամենը, ինչ մենք տեսնում ենք: Յուրաքանչյուրը, անկախ իր մայրենի լեզվից և խոսվածքից, կարող է անթերի խոսել մեր Հոր լեզվով: Այս զորավոր և հինավուրց գրվածքները հասանելի են ամեն ցեղի համար և ամեն բարբառով:

Օտար լեզուներն առաջացան, երբ Աստված ցրեց անհնազանդ մարդկանց, ովքեր մեկ ընդհանուր լեզու ունեին: Հետևյալ հատվածը Բաբելոնի աշտարակի պատմությունն է.

> «Եվ Եհովան իջավ մարդկանց որդիների շինած քաղաքը և աշտարակը տեսնելու: Եվ Եհովան ասաց. «Ահա մեկ ազգ է և մեկ լեզու նրանցից ամենի համար, և ահա սկսեցին շինել, և հիմա նրանց համար դժվար չի լինի ինչ որ խորհեցին շինելու: Եկեք իջնենք և այնտեղ նրանց լեզուն խառնակենք, որ իրար լեզու չհասկանան»: Եվ Եհովան այնտեղից նրանց ցրեց ամբողջ երկրի երեսի վրա, և քաղաքը շինելուց դադարեցին: Դրա համար նրա անունը Բաբելոն կոչվեց, որովհետև Եհովան այնտեղ խառնակեց ամբողջ երկրի լեզուն, և Եհովան նրանց ցրեց այնտեղից ամբողջ երկրի երեսի վրա» (Ծննդ. 11.5-9):

Հետաքրքիր է նշել, որ այս *անհնարին* թվացող կառուցման նախագիծը *հնարավոր* էր երկու գործոնի շնորհիվ՝ միաբան մարդկանց և ընդհանուր լեզվի: Նրանց ջանքերը պսակվում էին

հաջողությամբ, թեև նրանց նախագծի հեղինակն Աստված չէր: Նրանց ծրագրերը դրդված էին բացահայտ անհնազանդությունից՝ Աստծո ցուցումներին, որոնք տրված էին Ծննդոց 1-ում: Լեզուները խառնելը ոչ միայն *դադարեցրեց* նրանց գործի առաջխաղացումը, այլև միավորված մարդկանց *ցրեց* երկրի չորս կողմերը: Մարդկության պատմությունն սկսվեց մեկ լեզվով, և ես համոզված եմ, որ այն կավարտվի մեկ լեզվով… Աստծո մեծափառության լեզվով:

> «Եվ երբ որ այս ձայնը եղավ, բազմությունն եկավ մեկտեղ և կիտվեց, որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իր լեզվով խոսում էին: Եվ ամենքը հիանում էին և զարմանում և իրար ասում էին. «Չէ՞ որ ահա սրանք ամենքը, որ խոսում են, գալիլեացի են: Եվ ինչպե՞ս մենք ամեն մեկս մեր լեզվով լսում ենք, որ նրանում ծնված ենք: Պարթևներ և մարք և եղամացիք և բնակվողներ Միջագետքի, Հրեաստանի և Կապադովկիայի, Պոնտոսի և Ասիայի մեջ, Փռուգիայի և Պամփյուլիայի մեջ, Եգիպտոսում և լիբիացիների կողմերում, Կյուրենեի մոտ և նորեկ հռոմեացիներ, հրեաներ և նորահավատներ, կրետացիներ և արաբացիներ, *լսում ենք, որ նրանք մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաները խոսում են»:*
> (Գործք 2.6-11, շեղագիրն ավելացված է)

Երբ Երկինքը ձայն է գտնում երկրի վրա, բազմություններ են հավաքվում: Երբ մենք ճշմարտապես ասելիք ունենանք, Աստված միջոց կգտնի, թե ինչպես հասցնենք մեր խոսքը նրանց, ովքեր պետք է լսեն այն: Երբ մենք անձնատուր լինենք՝ խոսելու Նրա բառերը Նրա Հոգու զորությամբ, ապշեցուցիչ բաներ կարող են տեղի ունենալ: Ես փափագում եմ Աստծո մեծափառության այս միացյալ արտահայտությանը:

Մի՞թե ձեզ դուր չի գալիս այն փաստը, որ Աստված ընտրեց Իր ծառայողներին մի շրջանից, որտեղ մարդիկ անուսում էին համարվում (Գալիլեան), որպեսզի հռչակեր Իր փառավոր սքանչելիքները նվիրյալ և լավ կրթված մարդկանց, ովքեր հավաքվել էին Երուսաղեմում բոլոր երկրներից: Ոչ ոք չանտեսվեց: Կարևոր էր խոսել այն լեզուներով, որոնք հասկանալի էին այդ մարդկանց, բայց առավել կարևոր էր հավաքական ուժը, երբ

բոլորը միաբան ասում էին նույնը: Պենտեկոստեի օրը Երկնքի հռչակումները ներխուժեցին երկիր, և նրանք, ովքեր ներկա էին, իմացան այդ մասին:

Մեր Բարձրյալ Աստված հաղթող է: Նրա փառավոր սերը և զարմանալի ողորմությունն անսահման են: Փրկության պարգևը տրվում է միայն Նրան հավատալու միջոցով, և նրանք, ովքեր փնտրում են Նրան, շնորհք և հույս են գտնում:

Ես չեմ խոսում այն մասին, թե արդյո՞ք դուք հավատում եք այլ լեզուներով խոսելուն: Կան ավելի կարևոր հարցեր, որոնց մենք պետք է պատասխանենք: Արդյո՞ք մենք կորոշենք օգտագործել մեր խոսքն այնպես, որ փառավորենք Աստծուն: Արդյո՞ք մենք կխոսենք թերի մարդկային ձևով, թե՞ կպատմենք Նրա անթերի գործերի մասին: Արդյո՞ք մենք հավաքական ձայն կդառնանք՝ թույլ տալով, որ Նրա Հոգին լցնի մեզ:

Ես երբեք չեմ տեսել, որ մի խումբ մարդիկ նվիրվեն միասնաբար գործելուն, քանի դեռ նրանցից յուրաքանչյուրը չունի ավելի բարձր նպատակ: Մեր Հոր նպատակների և լեզվի շուրջ միաբանվելը կնախաձեռնի Աստծո ծրագրի իրականացումը կամ նոր սկիզբ կդնի դրան, և կձևավորի մի ամբողջ ժողովուրդ Նրա նպատակի շուրջ:

Քանի որ թրի (Նրա մարմնի և Նրա Խոսքի) բազմաթիվ մասերը եղել են առանձնացված և չեն եղել մեր անմիջական տեսադաշտում, մենք ընդամենը ճանաչել ենք մեր մասը… և այն էլ՝ մասամբ: Որևէ մասի գործառույթը հասկանալու լավագույն տարբերակը՝ ամբողջի մասին պատկերացում կազմելն է:

Եթե ինչ-որ մասեր պակասում են, դա բնականորեն նշանակում է, որ կան մասեր, որոնք մենք գիտենք… և այլ մասեր, որոնք լրացնում են Սուրբ Հոգին և Աստծո Խոսքը: Մենք մարգարեանում ենք և հավատքի խոսք ենք խոսում, որպեսզի հաստատություն ստեղծենք այն մասերի համար, որոնք դեռ պետք է տեսնենք: Նա մեր ամենն է ամենի մեջ, իսկ մենք ամբողջի մասն ենք:

Բավականին երկար ժամանակ է, որ մենք մեկնում ենք Խոսքը՝ հռչակելու փոխարեն: Մենք սովորել ենք անցկացնել այն մարդկային փորձառության, հասարակական նախապատվությունների, ներկա նախապաշարմունքների և մարդկային մտքի սահմանափակ

իմաստության զտիչներով, փոխարենը՝ պարզապես հռչակենք անսահմանորեն հզոր և հավիտենական գրված Խոսքը: Մենք մեկնել ենք Ավետարանը՝ այն արտահայտելու փոխարեն:

Բավականին երկար ժամանակ է, որ մենք մեկնում ենք Խոսքը՝ հռչակելու փոխարեն:

Մենք գայթակղվել ենք՝ մեկնել Խոսքն ըստ այն փոքր չափի, որը կատարում ենք կամ վերապրել ենք, փոխարենը հռչակենք Խոսքն իր առեղծվածային, ամբողջական կերպով: Մենք պետք է հավատք ունենանք, որպեսզի հռչակենք այն, ինչը չենք հասկանում:

> «Հավատքով մենք հասկանում ենք, որ աշխարհները կազմվել են Աստծո Խոսքով, այնպես որ, այն, ինչ տեսանելի է, չի արվել երևացող բաներից» (Եբր. 11.3, ASV):

Այն աշխարհը, որը մենք տեսնում ենք, Աստված կազմեց բառերով, որոնք մենք չենք կարող տեսնել: Երբ գործում ենք մեր Հոր նման և կրկնում ենք Նրա բառերը, Նրա թուրը գտնում է իր հաստատությունը: Երբ մենք պարզապես հռչակում ենք այն, ինչն արդեն զորությամբ հավիտյան պատրաստված է Երկնքում, ստեղծված երկիրը ճանաչում է այդ բառերը և իրեն համապատասխանեցնում է իր Ստեղծողի կամքին:

Չափազանց շատ բան է կորսվում մեկնության մեջ, երբ մենք անցկացնում ենք Երկնքի բառերը երկրի զտիչով, փոխարենը՝ փոխենք երկիրը Երկնքի բառերով: Ավելի լավ է իմաստություն ստանանք Հինավուրցից, ոչ թե մեր ժամանակվա մարդկանցից: Անկեղծ ասած՝ ես միշտ մտածել եմ, որ Հոբի ընկերները շատ ճիշտ էին խոսում, մինչև այն պահը, երբ խոսեց Աստված:

> ««Ո՞վ է սա, որ *թաքցնում է* խորհուրդն առանց գիտության»:
> Այդ իսկ պատճառով, ես խոսել եմ այն, ինչ չեմ հասկացել,
> բաներ, որոնք չափազանց զարմանալի էին ինձ համար,
> որոնք ես չգիտեի»:
> (Հոբ 42.3, ESV, շեղագիրն ավելացված է)

Այլ աստվածաշնչյան թարգմանություններում «*թաքցնում է*» բառի փոխարեն գրված է «*նսեմացնում է*», «*մթագնեցնում է*» և

«*վիճարկում է»:* Երբ փորձում ենք բացատրել ինչ-որ հատված Աստծո Խոսքից, կամ բացատրությունների միջոցով ազատվել որևէ հատվածից, որը չենք հասկանում, մենք ստվեր ենք գցում Աստծո խորհրդի լույսի վրա կամ մթագնեցնում ենք այն: Մենք վիճարկում ենք Նրա մեծությունը, երբ սահմանափակում ենք Նրա երկնային Խոսքը:

Եթե ես ուղարկեմ որդիներիցս մեկին՝ ասելու նրա եղբայրներից մեկին. «Մայրիկը ցանկանում է, որ անմիջապես ներքև իջնես», ես կակնկալեմ, որ նա ճշտորեն կրկնելու է իմ ասածը: Բայց եթե նա բաց թողնի ինչ-որ բան իմ ասածից, կամ ավելացնի այնպիսի բան, որը ես չեմ ասել, մեր հաղորդակցության մեջ շփոթմունք կառաջանա: Օրինակ՝ «Մայրիկը ցանկանում է, որ անմիջապես ներքև իջնես՝ ճաշի սեղանը պատրաստելու համար» (միգուցե նա կավելացնի սա, որովհետև կցանկանա, որ իր եղբա՛յրը պատրաստի սեղանը): Եթե ես ներքև կանչեմ նրան՝ մեր շանը դուրս տանելու կամ պարզապես նրա հետ շփվելու համար, մեր միջև շփոթմունք կառաջանա: Իսկ եթե իմ ասածը փոխանցվի այսպես. «Մայրիկը ցանկանում է, որ ներքև իջնես»՝ առանց ժամանակը նշելու, միգուցե որդիս մտածի. «Լա՛վ»: Բայց չիմանալով, որ նա պետք է անմիջապես իջնի, նա կարող է ուշացնել իմ կարգադրությունը: Կան փոքրիկ օրինակներ, որոնք կարող են լուրջ հետևանքներ ունենալ ավելի կարևոր իրավիճակներում:

Աստված միակն է, Ով գիտի ամեն ինչ: Նա գիտի, որ մենք չգիտենք ամեն ինչ: Ահա թե ինչու Նա իմաստություն տվեց մեզ, որպեսզի մենք ճանաչենք Նրա իմաստությունը և ճանապարհները գրեթե ամեն ինչում, ինչը կարևոր է: Բայց, ինչպես և իմ որդիները, մենք հաճախ ենթադրում ենք, որ Նրա փաստարկները կամ Նրա կողմից նշված ժամանակային սահմանները կարևոր չեն:

Ինչպե՞ս է այս օրինակը համապատասխանում Պողոսի կարգադրությանը իր հոգևոր որդուն՝ Տիմոթեոսին:

> «*Խոսքը քարոզի՛ր. վրա հասիր թե՛ ժամանակին լինի, թե՛ ժամանակից դուրս, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր* ամեն երկայնամտությունով և վարդապետությունով: Որովհետև *ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությանը չեն համ-*

> *բերի*, այլ իրենց հատուկ ցանկությունների համեմատ վարդապետներ կդիզեն իրենց վրա, իրենց լսելիքների մարմաջելու պես: *Եվ* իրենց լսելիքը *ճշմարտությունից ետ կդարձնեն* և առասպելների ետևից կմոլորվեն» (Բ Տիմոթ. 4.2-4, շեղագիրն ավելացված է):

Թեթևացրած Խոսք քարոզելու փոխարեն, քարոզե՛ք այն Խոսքը, որը կարող է լույս և թեթևություն բերել: Ես հասկանում եմ՝ կար ժամանակ, երբ Աստծո Խոսքի սուրը խոսվում էր առանց լույսի և գործածվում էր օրինապաշտական կերպով, բայց Աստծո Խոսքը կկորցնի իր փայլը ամեն անգամ, երբ մենք ինչ-որ բան ավելացնենք դրան: Եթե այն, ինչը նախատեսված է բժշկելու համար, վերքեր հասցնի մարդկանց, նրանք խույս կտան դրանից:

Շատ ծառայողներ և առաջնորդներ մի փոքր թեթևացրել են Խոսքը՝ մարդկանց չվախեցնելու համար. նրանք ստեղծել են օժանդակ լեզու, որը նման է Աստծո Խոսքի ժարգոնի՝ փորձելով հասնել ավելի շատ նոր մարդկանց: Կարծում եմ՝ նոր մարդկանց հասնելու մեթոդները հրաշալի են, բայց մենք սխալ ենք անում, եթե թույլ ենք տալիս, որ մեր մեթոդները փոխզիջման գնան Աստծո ուղերձի հետ:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ կարճ բառերը՝
լավագույնն են, իսկ հին բառերը՝ ամենից լավն են:

— Ուինսթոն Չերչիլ

Ուինսթոն Չերչիլը հրաշալիորեն հաղորդակցվող անձնավորություն էր: Նրա խոսքերը իր ազդեցության շրջանակից և իր ժամանակվանից տարածվել են շատ ավելի հեռուն և մինչև օրս շարունակում են խոսել: Կարծում եմ՝ այս խոսքը բացատրում է, թե որքանով են կարճ և համառոտ բառերը պարզ կերպով խոսում մեզ հետ, և որ ավելի հին բառերը լավագույնս դիմացել են ժամանակի կործանարար ազդեցությանը: Որքան էլ արդիական և տեղին լինեն մարդկային բառերը, դրանք ի վերջո ընկնում են *անժամանակյա* հավիտենության գիրկը:

Հիսուսի ժամանակներում հրեաներն օգտագործում էին երկու լեզու: Եբրայերենը տաճարի և սուրբ գրքերի ուսումնասիրության

համար էր, իսկ արամեերենն ամենօրյա լեզու էր, որն օգտագործվում էր, օրինակ, տանը և շուկայում: Հիսուսը բերեց սրբազան, պահված խոսքերը և Աստծո զորությունը սովորական մարդկանց, ովքեր փողոցներում, տներում և շուկաներում էին: Բայց Նա թույլ չտվեց, որ մարդիկ վերաբերվեին սուրբին հասարակի պես, թեև Նա վերաբերվում էր հասարակ մարդկանց՝ որպես սրբության:

Հնարավո՞ր է արդյոք, որ փորձելով լինել ամեն բան ամեն մարդկանց համար՝ մենք թույլ ենք տվել, որ մեր բառերը սովորական կամ անսուրբ դառնան, և նվազեցրել ենք սրբության հավիտենական կշիռը: Թույլ տվեք մեկ օրինակ բերել իմ մասին: Տարիներ շարունակ ես հորդորել եմ իմ ունկնդիրներին՝ թողնել այն, ինչ եղել է անցյալում, որովհետև Աստծո հետ «քո անցյալը՝ քո ապագան չէ»:

Աստված տվեց ինձ այս արտահայտությունը 1994 թվականին, աղոթքի ընթացքում: Սովորաբար ես հանձնարարում եմ իմ դասերին կամ ծառայություններին հաճախող կանանց՝ հիշել այս արտահայտությունը: Թեև այս արտահայտությունը ճշմարիտ է, այն, այսպես ասած, ունի պիտանելիության ժամկետ կամ միջավայր: Այս ճշմարտությունը վերափոխող զորություն ունի, երբ հռչակվում է սուրբգրային հատվածների հետ, որոնք հաստատում են այն: «Քո անցյալը՝ քո ապագան չէ» արտահայտությունը Փիլիպեցիների 3.13,14-ի սեղմ տարբերակն է.

> «…բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում»:

Այս արտահայտությունը *ճշմարիտ է*, բայց դրա ազդեցությունն այնքան չէ, որքան ճշմարտության ազդեցությունը: Ճշմարտությունից ստացված ժարգոնային արտահայտությունները չունեն բնօրինակի զորությունը: Մենք այլևս չենք կարող կախված լինել այնպիսի բառերից, որոնք զուրկ են զորությունից. մենք չենք կարող երևակայել, որ սուրբ գրքերն այլևս անհրաժեշտ չեն մեզ՝ ճշմարտությունը պատկերելու համար: Մենք մշտապես կծախողվենք, երբ փորձենք սուրբգրային լինել՝ առանց Սուրբ գրքի:

Թևավոր արտահայտությունները հեշտ է հիշել, որովհետև դրանք այնքա՜ն… թևավոր են: Այս սոցիալական ցանցերի ժամանակաշրջանում, եթե որևէ բառախումբ, թեկուզ ինչ-որ բովանդակություն ունի, այն կարող է ճանապարհորդել աշխարհով մեկ մի քանի րոպեների ընթացքում: Բայց ինչպիսի՞ արդյունքներ է տալիս այս հնարավորությունը: Մի՞թե Ֆեյսբուքը և Թվիթերը մարդկանց վերափոխելու զորություն ունեն: Հուսով եմ, որ այդպես է, որովհետև միլիոնավոր մարդիկ շատ ժամանակ են անցկացնում դրանց ազդեցության ներքո: Ես աղոթում եմ, որ սոցիալական ցանցերը չստեղծի իմաստուն հիմարների սերունդ, ովքեր գիտեն ամեն ինչ, բայց ոչինչ չեն անում:

Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սաղմոսներում այդքան հաճախ հնչում «սելա» (դադարի՛ր և համակվի՛ր երկյուղածությամբ Նրա սքանչելիքներից) հրավերը: Այս դադարները թույլ են տալիս մեզ՝ ժամանակ հատկացնել, որպեսզի Աստվածաշնչի սուրբ խոսքերը թափանցեն ցանկացած ստվերոտ բնագավառ մեր մտքում՝ իրենց անժամանակյա փայլով: Առանց Սուրբ Հոգու ձայնի՝ չկա մեղքի հանդիմանություն և, ի վերջո, չկա ճշմարտապես իմաստուն խորհուրդ:

Ես մտածում եմ, թե ինչպիսի՞ բառեր ենք մենք ասել՝ ստանալու համար մեր ներկա իրականությունը: Մի հարցազրույցի ժամանակ «Փրկության բանակ» շարժման հիմնադիր Վիլյամ Բուտին հարցրին, թե ինչպիսի՞ մտահոգություններ ուներ հաջորդ հարյուրամյակի եկեղեցու մասին: Ահա թե ինչ պատասխանեց.

> «Ի պատասխան ձեր հարցմանը, ես համարում եմ, որ գլխավոր վտանգները, որոնք սպառնալու են գալիք դարում, լինելու են կրոնը՝ առանց Սուրբ Հոգու, քրիստոնեությունը՝ առանց Քրիստոսի, ներումը՝ առանց ապաշխարության, փրկությունը՝ առանց վերածնման, քաղաքականությունը՝ առանց Աստծո, և երկինքը՝ առանց դժոխքի»:

Երբ կարդացի այս մարգարեական զգուշացումը, սիրտս խոցվեց՝ ասես թրից: Ես ցավ չզգացի այլ մարդկանց սխալների պատճառով, այլ հենց ի՛մ սխալների: Հիմա պառակտումներ բերելու և մարդկանց

մատնացույց անելու ժամանակը չէ. առանց այդ էլ Քրիստոսի մարմինը խիստ հուսահատ վիճակում է:

Եթե այն, ինչ մենք հռչակել ենք վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, ստեղծել է մեր ներկա իրականությունը, եկեք կանխամտածված կառուցենք նորը, որը հիմնված կլինի Աստծո Խոսքի ամուր ժայռի վրա:

> «Անհոգ մարդկանց բառերը խոցում են թրերի պես,
> բայց իմաստուն մարդկանց լեզուն բժշկություն է բերում»:
> (Առակ. 12.18, NIV):

Եկեք խոսենք Աստծո իմաստությունը և տեսնենք, թե ինչպես է սկսվում բժշկությունը:

Զգուշացումներ

Այս կյանքում չափազանց շատ բաներ են զգուշացման պիտակներ կրում, և բառերը նույնպես բազմաթիվ զգուշացումներ ունեն: *Զգուշացում.* մահը և կյանքը ձեր բառերի մեջ են: *Զգուշացում.* դանդաղ եղեք խոսելու համար: *Զգուշացում.* մտքերը և բառերը ստեղծում են ձեր իրականությունը:

> *Հետևիր քո մտքերին. դրանք վերածվում են բառերի: Հետևիր քո բառերին. դրանք վերածվում են գործողությունների: Հետևիր քո գործողություններին. դրանք վերածվում են սովորությունների: Հետևիր քո սովորություններին. դրանք վերածվում են բնավորության: Հետևիր քո բնավորությանը. այն դառնում է քո ճակատագիրը:*
>
> — Անհայտ հեղինակ

Այս տպավորիչ արտահայտությունը մեր կյանքը կարող է դարձնել այնպիսին, որ մենք մշտապես վերահսկենք մեր մտքերը, բառերը, գործողությունները և սովորությունները: Այս հաջորդականությունը ճիշտ է, բայց կարիք չկա, որ մենք մշտապես վերահսկենք և վերլուծենք մեր մտքերը: Փոխարենը՝ Աստված առաջարկում է մեզ՝ փոխարինել մեր մտքերը և ճանապարհները Իր

մտքերով և ճանապարհներով: Ի դեպ, սա շատ ավելի հեշտ է, քան մշտապես ձեր մտքերն ու ճանապարհները վերլուծելը:

«Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն,
և ձեր ճանապարհներն Իմ ճանապարհները չեն, - ասում է Տերը:
Այլ, ինչպես որ բարձր է երկինքը երկրից,
նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր
ճանապարհներից
և Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից:
Որովհետև, ինչպես որ իջնում են անձրևը և ձյունը երկնքից
և ետ չեն դառնում այնտեղ, այլ ոռոգում են երկիրը
և այն արգասավոր անում և բողբոջեցնում այն,
և տալիս են սերմ սերմնացանին և հաց՝ ուտողին,
այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած Խոսքը,
այն չպիտի պարապ ետ դառնա Ինձ մոտ,
այլ՝ կատարի Իմ ուզածը,
և հաջողվի նրանում, ինչի համար որ Ես այն ուղարկեցի»:
(Եսայի 55.8-11)

Երբ կարդում ենք Նրա Խոսքը, այն նորոգում է մեր մտքերը: Երբ նորոգվում են մեր մտքերը, փոխվում է մեր մտածողությունը: Երբ փոխվում է մեր մտածողությունը, մենք սկսում ենք այլ կերպ խոսել մեր, մեր միջավայրի և այլ մարդկանց մասին: Այս փոփոխությունը մեր լեզվի մեջ՝ փոփոխություն է առաջացնում մեր գործողությունների մեջ և կապակցում է մեզ այն նպատակների հետ, որոնք Երկինքն ունի այս երկրի համար: Մեր բառերն սկսում են արտահայտել մեր երկնային Հոր կամքը, և Նրա խաղողի այգին սկսում է ծաղկել:

Աստծո կենդանի Խոսքից են առաջացել բոլոր ճշմարտությունները, որոնք կարող են ազդել մեզ վրա և վերափոխել մեզ: Ի վերջո, ճշմարտությունը տեսություն չէ, որի շուրջ կարելի է բանավիճել. ճշմարտությունը Հիսուսն է՝ մարմին դարձած Խոսքը:

«Հիսուսը նրան ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով»»:
(Հովհ. 14. 6)

Կա հսկայական տարբերություն ճշմարտությունն ասելու և ճշմարտությունը լինելու միջև: Մենք պետք է ապրենք

ճշմարտությամբ՝ հետևելով Նրա օրինակին: Նա՝ անսպառ ճշմարտություն է, որովհետև Նա կենդանի է հավիտյանս հավիտենից: Առաջին տեսակը մի ակնթարթ խրախուսում է ձեզ, իսկ երկրորդը շարունակաբար փոխում է ձեզ իր լույսով:

Իմ «Քո անցյալը՝ քո ապագան չէ» արտահայտությունը կարելի է նմանեցնել մի փոքր բացված դռան: Նրա Խոսքը՝ լայն բացված դարպաս է: Աստծո ճշմարտությունը կարող է առանձնացնել ձեզ և հագցնել լույսով: Որքա՜ն հրաշալի է, որ մեր Հայրը տվեց մեզ ոչ միայն լեզու, այլև Հիսուսին՝ օրինակ, որը ցույց է տալիս, թե ինչպես ապրել այն, ինչ մենք խոսում ենք:

> «Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում»» (Հովհ. 5.19):

Նրա Խոսքը ոչ միայն կենդանի է… Նրա Խոսքը՝ Նրա կամքն է: Ինչպե՞ս ես կարող եմ ասել սա, որովհետև Հիսուսը ցույց տվեց Հոր կամքը, իսկ Նա Աստծո Խոսքն է՝ հայտնված մարդկային մարմնով:

> «Նրա համար աշխարհ մտնելիս ասում է.
> «Զոհ և պատարագ չկամեցար,
> բայց մի մարմին պատրաստեցիր Ինձ համար:
> Ողջակեզների և մեղքի համար պատարագների չհաճեցիր»:
> Այն ժամանակ ասացի, թե *«Ահա գալիս եմ,*
> *գրքի տոմսում գրված է Ինձ համար՝*
> *Քո կամքն անելու, ո՛վ Աստված»»:*
> (Եբր. 10.5-7, շեղագիրն ավելացված է)

Այնպես որ, հարց է առաջանում. ի՞նչ է գրված մեր մասին գրքի տոմսում: Համաձայն Գործք 2-րդ գլխի՝ Աստծո դուստրերը կգործեն հետևյալ երկնային սխրանքները. մենք կմարգարեանանք Նրա որդիների հետ, երբ վերապրենք Աստծո Հոգու թափումը: Մենք կծառայենք Նրան՝ լինելով այն հրաշքների հովանու ներքո, որոնք Նա կտա Երկնքում, և քայլելով այն նշանների միջև, որոնք Նա կտա այս երկրի վրա: Մեր օրերում նրանք, ովքեր կանչեն Աստծուն,

կփրկվեն (տե՛ս խոսքեր 17-21-ը)։ Այս սքանչելի խոստումները ցույց են տալիս Նրա մեծահոգի կամքը մեզ համար։

Դուք ցանկանո՞ւմ եք կատարել Նրա կամքը, որպեսզի այն ամենը, ինչ գրված է ձեր մասին, կարելի լինի տեսնել։ Ես համոզված եմ, որ ցանկանում եք։ Եկե՛ք որսանք այս պահը և կնքենք աղոթքով։

● ● ●

Երկնային Հա՛յր,

Նայի՛ր Քո դստերը։ Ես եկել եմ՝ կատարելու Քո կամքը։ Ես վերցնում եմ Քո Խոսքը՝ խոսելով և արտահայտելով այն։ Եվ այն ամենը, ինչ գրված է իմ մասին, թող իրականանա իմ կյանքում, Հիսուսի անունով, ամե՛ն։

9

Հունձքի թուրը

«Ահա Ես ասում եմ ձեզ՝ բարձրացրեք ձեր աչքերը և տեսեք արտերը, որ սպիտակել են և արդեն հնձին հասել»:

— Հովհաննես 4.35

Կա միայն մեկ թուր, որն ստեղծվել է Հյուսիսային Ամերիկայում և ճշմարիտ ամերիկյան ոճ ունի. այն պիտանի է բոլոր նպատակների համար, և ավելի քան քսան տարբեր գործածություն ունի: Մաչետեի բազմաթիվ կիրառությունները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի. մաքրել և մաքուր պահել շավիղները, փոխել շրջակա միջավայրը, հունձք հավաքել և սպանել կամ պաշտպանել:

Ահա օրինակներ այն մասին, թե ինչպես կարելի է օգտագործել մաչետեն: Այն հարթեցնում է շավիղները և պահում է արահետներն անցանելի վիճակում: Այն պարարտախառնուրդ է կտրատում՝ պարտեզներ կամ այգիներ պարարտացնելու համար, և չոր ցախ կամ փայտ կտրում՝ կրակի համար: Մաչետեով կարելի է որոշակի տարածք մաքրել ճամբարի համար, ստեղծել փոքրիկ զբոսայգի կամ պուրակ, ձևափոխել բնակության վայրերը՝ հարթեցնելով սիզամարգերը և ձևավորելով կենդանի (ծառերից կամ թփերից կազմված) պատնեշներ: Դրանով նույնպես կարելի է էտել ծառերը և խաղողի վազի քմահաճ ճյուղերը՝ ապագա աճն ուղղորդելու և խթանելու համար, պատրաստել սյուներ, թիփիներ (հնդկացիական վրաններ) և ցանկապատեր, ինչպես նաև կառուցել ապաստարաններ: Մաչետեն օգտագործվում է բրինձ, շաքարեղեգ, եգիպտացորեն, տարեկան, կորեկ, գարի, հնդկաձավար, վարսակ



և կենդանիների հարդ հնձելու համար, ինչպես նաև կոկոսներ և ընկույզներ կտրելու և կիսելու համար և այլն: Մաչետեն իդեալական գործիք է՝ բարձր աճած բուսականությունը հեռացնելու համար՝ թողնելով արմատային բիոզանգվածը, որպեսզի այն կրկին աճի և պտուղ տա:

Եվ վերջինը, այն կարող է պաշտպանել և սպանել: Թեև սա մաչետեի հիմնական գործածությունը չէ, այն ահարկու զենք է ինքնապաշտպանության համար, որը կարող է կանգնեցնել հարձակվող մարդկանց, վայրի կենդանիներին և սպանել թունավոր օձերին: Այն նույնպես կարող է օգտագործվել վայրի և ընտանի կենդանիներ սպանելու համար:

Ամեն ինչ կարող է լինել… այնպես չէ՞:

Մաչետեն կարելի է համեմատել մարտական դանակի, կացնի և թրի հետ, և քանի որ այս թուրը այսքան շատ կիրառություններ ունի, այն դարձել է շատերի ամենօրյա կյանքի մասը աշխարհի տարբեր մասերում: Իսկապես որ, հաշվի առնելով այս տպավորիչ ցուցակը՝ ես զարմանում եմ՝ ինչպե՞ս եմ մինչև հիմա կարողացել ապրել առանց մաչետեի:

Հետագա էջերում ես խոսելու եմ այն մասին, թե ինչ կարող է կատարվել, երբ մենք շավիղներ մաքրենք, միջավայրեր փոխենք և հավաքենք դաշտերի հունձքը: Դուք կարող եք գտնել ձեր ճանապարհը, փախստավայր ստեղծել և վայելել ձեր գործերի պտուղը: Այդ ընթացքում դուք կարող եք հանդիպել օձերի, որոնց պետք է արագորեն ոչնչացնել:

Մաքրել և պահպանել շավիղները

Միայն Աստծո Խոսքն է վառ լուսավորում մարդու հոգևոր շավիղը: Ձբոսնեք Առակաց գրքով և կբացահայտեք, թե ինչ կա ձեր առջև, և թե ինչ է սպասվում ձեզ ապագայում: Շավիղները պարզապես միջոց չեն՝ նպատակակետին հասնելու համար: Շավիղները և ճանապարհները հատուկ նպատակ ունեն: Երբեմն

ժամանակից շուտ տեղ հասնելը վնասակար է: Վտանգավոր է տեղ հասնել, եթե մեր բնավորությունը դեռ չի հասունացել կամ չի փոխվել: Բնավորությունը և ուժը հաճախ ձևավորվում են ճանապարհն անցնելիս: Առակաց 20.21-ը զգուշացնում է մեզ, որ այն, ինչ շտապելով է ստացվել, միշտ չէ, որ վերջում օրհնված կլինի: Մեր արագընթաց փոխադրամիջոցների պատճառով, մենք մոռացել ենք ճանապարհի նշանակությունը և նպատակը: Հագեցած կյանքը և փոխհարաբերությունները չեն կառուցվում Ա կետից Բ կետը հնարավորինս արագ ցատկելով, այլ՝ կյանքի շավիղի դասերը քաղելու միջոցով:

Մեր օրերում, երբ մարդիկ քայլում են ասֆալտապատ մայթերով, շավիղները պարզապես հողածածկ արահետներ կամ կարճ ճանապարհներ են, որոնք անցնում են անտառների կամ դաշտերի միջով: Անցյալում մարդիկ հասկանում էին, որ ճանապարհները տեղափոխում էին մարդկանց, բայց շավիղները կապակցում էին նրանց: Ցավոք, մենք այնքան արագ ենք տեղափոխվում մեկ վայրից մյուսը, որ չենք հասցնում բացել արահետներ, որոնք կապակցում են մեզ այլ մարդկանց հետ: Եվ այս շարունակական հորիզոնական ընթացքը երկրով մեկ հաճախ տեղի է ունենում մեր ուղղահայաց շավիղների հաշվին:

Պատահական չէ, որ այն մարտավարություններից մեկը, որը Հռոմն օգտագործեց՝ աշխարհը գրավելու համար, կամուրջների և ճանապարհների կառուցումն էր: Սա հնարավորություն տվեց հռոմեացիներին՝ տեղափոխել իրենց բանակները և տարածել իրենց մշակույթը: Ճանապարհները, կամուրջները և շավիղներն ինքնին չեզոք են, բայց ինչպես Հռոմի օրերում, թշնամական ուժերը կարող են օգտագործել այդ ճանապարհները նույն հաջողությամբ, ինչպես և համախոհները: Մեր օրերում թվային շավիղները շրջապատել են երկրագունդը: Ինտերնետը և սոցիալական ցանցերը վիրտուալ ճանապարհների և շավիղների դեր են կատարում: Բայց սոցիալական ցանցերից պետք է շատ զգուշորեն օգտվել. դրանք չպետք է օգտագործվեն որպես անձնական շփման փոխարինողներ: Շատ ամուսնություններ խաթարվել են, որովհետև ամուսիններից մեկը միայնակ պառկած էր անկողնում,

մինչ մյուսը զգացմունքորեն կլանված էր վիրտուալ մտերիմ փոխհարաբերություններով: Երբևէ պատահե՞լ է, որ ձեր ընկերուհին ավարտել է խոսակցությունը ձեզ հետ, որովհետև չի կարողացել մի կողմ դնել հեռախոսը: Իսկ պատահե՞լ է, որ դուք այդպես վարվեք:

Ամեն օրը՝ ճանապարհորդություն է ժամանակով: Մենք տեղափոխվում ենք ժամանակով, նույնիսկ՝ առանց տնից դուրս գալու: Ինչպես ժամանակը, նույնպես և կարիերաները, կոչումները, ընկերությունները, ընտանիքները ունեն ճանապարհներ և շավիղներ: Բացի արահետներ բացելու անհրաժեշտությունից՝ նույնպես կարիք կա անխափան պահել դրանք, որպեսզի այլ մարդիկ չկորցնեն կամ չշփոթեն ճանապարհը մեր անփութության պատճառով:

Համաձայն Սաղմոսների գրքի և Առակաց գրքի՝ ի վերջո կա ընդամենը երկու շավիղ այս կյանքում. այն շավիղը, որը բարձրանում է դեպի լույսը և կյանքը, և մյուսը, որն իջնում է դեպի խավարը և մահը: Չկա ճանապարհ այս երկուսի մեջտեղում: Ընտրությունն ակնհայտ է թվում… ընտրե՛ք Աստծո ճանապարհը դեպի կյանքը և լույսը: Բայց մեր կյանքում լինում են ժամանակներ, երբ մենք հավելյալ լույսի կարիք ենք ունենում՝ ճիշտ շավիղն ընտրելու համար:

Օրինակ՝ երիտասարդ տարիներին մենք բնականորեն փորձառություն չունենք: Դժվար պահերին մենք կարող ենք կորցնել մեր նպատակը: Խավար ժամանակներին մենք կարող ենք կորցնել մեր ճանապարհը: Երբեմն ճիշտ մուտքը վատ է նշված, կամ էլ ճանապարհն է վատ լուսավորված, և ակնհայտ է դառնում, որ մեզ անհրաժեշտ է ավելի վառ լույս: Մենք կարող ենք սովորել սաղմոսերգուի իմաստությունից. «Խոսքերիդ հայտնությունը լույս է տալիս և իմաստուն է անում պարզամիտներին» (Սաղմ. 119. 130):

Սա նշանակում է, որ մենք սահմանափակված չենք մեզ շրջապատող լույսի պայծառությամբ: Երբ Աստծո Խոսքը մուտք է գործում մեր սրտերը, այն ոչ միայն առաջնորդում է մեզ, այլև լույս է տալիս: Այն, ինչ վտանգավոր է խավարում, բացահայտվում է լույսի մեջ:

Նոր և հին շավիղները

Ավելի քան երբևէ, Աստված խնդրում է մեզ՝ հարթել նոր արահետներ և կրկին բացել հին շավիղները: Այնքա՜ն ժամանակ է, որ Աստծո ժողովուրդը մոլորվել է սրբության պողոտայից (տե՛ս Երեմիա 18.15): Մեզ անհրաժեշտ է Նրա Խոսքը, որպեսզի բացենք մեր առջևում գտնվող ճանապարհը: Ինչպես որ մաչետեն է շավիղներ մաքրում վայրի մացառների մեջ, այնպես էլ Աստծո Խոսքի թուրը կարող է կտրատել այն, ինչը խճճում է մեզ:

Ավելի քան երբևէ, Աստված խնդրում է մեզ՝ հարթել նոր արահետներ և կրկին բացել հին շավիղները:

Սա նշանակում է, որ միգուցե մենք առաջնորդվենք այնպիսի շավիղներով, որոնք սկզբում դժվարանցանելի են թվում, բայց մենք կարող ենք գործածել Աստծո Խոսքը՝ մեր ճանապարհը մաքրելու և լուսավորելու համար: Եթե դուք քրիստոնյա եք, ուրեմն թշնամուն չհաջողվեց փակել ձեր մուտքը դեպի փրկության ճանապարհը, բայց նա շատ ջանքեր կգործադրի, որպեսզի շեղի ձեզ այդ ճանապարհից: Աստծո Խոսքի լույսը շնորհում է խոհեմություն, որը ձեզ համար կանի հետևյալը.

> «Որ քեզ ազատի *չար ճանապարհից*,
> և *ենգություններ խոսող* մարդուց:
> Որ *ուղղության ճանապարհները* թողնում են,
> որպեսզի *խավարի ճանապարհներով* գնան:
> Որ ուրախանում են չարություն անելով
> և զվարճանում են չար ենգությունով:
> Որոնց *շավիղները ծուռ են*,
> և որոնք *խոտորում են իրենց ուղիներով»:*
> (Առակ. 2.12-15, շեղագիրն ավելացված է)

Այս խոսքերից իմանում ենք, որ ենգավոր խոսքն ի վերջո տանում է չար ճանապարհների և ծուռ շավիղների, որոնք վերջնականապես հեռացնում են ձեզ կյանքի ճանապարհից: Այս հատվածը ցույց է տալիս երեք բան. *չարն ունի ճանապարհ, շավիղ և լեզու* (իհարկե, դուք արդեն գիտեիք այս մասին):

Ճանապարհ (կամ՝ ձև) բառը նշանակում է՝ մի շարք մեթոդներ, սովորույթներ, եղանակներ, հնարներ, մարտավարություններ, նաև ոճեր կամ կերպեր: Չարի մեթոդների թվում են հպարտությունը, անհնազանդությունը, անպատվությունը, չարախոսությունը, այլասերվածությունը, սուտը, պոռնկությունը, շնությունը, կռապաշտությունը, վրիժառությունը, ատելությունը, նախանձը, զայրույթը և կախարդությունը:

Շավիղ բառը տարբերվում է *ճանապարհ* բառից, որովհետև *ճանապարհը՝* ձեր ընթացքի եղանակն է, իսկ *շավիղը՝* ուղղությունը: *Ճանապարհը (կամ՝ ձևը)*, որով դուք ինչ-որ տեղ եք հասնում, կարող է տարբերվել քայլելուց մինչև ինքնաթիռով տեղափոխվելը այն դեպքում, երբ ձեր ճանապարհորդության *շավիղը* կարող է լինել արևմուտքից՝ արևելք: Ըստ վերոնշյալ սուրբգրային հատվածի համատեքստի՝ ուղիղ շավիղներով գնալու համար պետք է խոսել ճշմարտությունը, ոչ թե ստել:

Երրորդ բառն այս հատվածում *լեզուն* է: Անկախ նրանից՝ մենք գիտակցո՞ւմ ենք, թե՞ ոչ, մեր խոսքը կորոշի թե՛ մեր ճանապարհորդության մեթոդները, թե՛ մեր նպատակակետը: Լեզուն կարող է կապակցել մեզ արդար շավիղների և ճանապարհների հետ՝ տեղափոխելով մեզ դրանց վրա, և մեր բառերը կարող են հեռացնել մեզ չարից:

Այսպիսով, *ճանապարհը՝* ձեր գնալու ձևն է, *շավիղը՝* ձեր ուղին է, և այս երկուսը սովորաբար որոշվում են այն բառերի հիման վրա, որոնք մենք խոսում ենք: Մեր խոսքը կամ բառերի ընտրությունը կարող է որոշել մեր կյանքի ընթացքը:

Իսկ ի՞նչ, եթե դուք փորձում եք գտնել ձեր շավիղը: Ի՞նչ, եթե հին շավիղը պատվել է մացառներով, կամ դուք ցանկանում եք անցանելի պահել որևէ շավիղ, որպեսզի մյուսները գտնեն իրենց ճանապարհը: Ինչպե՞ս եք առաջ ընթանալու դրանցով: Պետք է խոստովանել, որ շատերը մոլորվել են ճանապարհից, որովհետև տարվել են սխալ ճանապարհով: Օրինապաշտությունը ետ է կանգնեցնում չափազանց շատ մարդկանց ճշմարիտ աստվածապաշտություն ունենալու մտադրությունից, և միաժամանակ անօրինության ուղին որսում է նրանց, ովքեր

համակված են ցանկություններով և մոլեգնող կրքերով: Անիմաստ է ոտք դնել այն շավիղների վրա, որոնք ոչ մի տեղ չեն հասցրել ուրիշներին: Մենք հնարավորություն ունենք քայլելու նոր և կենդանի ճանապարհով (տե՛ս Եբր. 10.20):

Մի՛ գնա այնտեղ, որտեղ տանում է արահետը. փոխարենը՝
գնա՛ այնտեղ, որտեղ արահետ չկա, և շավիղ հարթիր:

— Ռալֆ Ուոլդո Էմերսոն

Ես չեմ ցանկանում հակասական թվալ, բայց երբեմն արդար շավիղները ոչ ավանդական մոտեցում են պահանջում: Հիսուսը երբեք չշեղվեց արդարության շավիղից, բայց Նա, անկասկած, նոր շավիղներ հարթեց: Նա պատվիրեց Իր հետևորդներին՝ անել նույնը, երբ ուղարկեց նրանց *ամբողջ* աշխարհով՝ բոլոր ազգերի մեջ աշակերտներ պատրաստելու համար: Խաչից առաջ, փրկության բոլոր արահետները տանում էին Երուսաղեմ: Նրա փառավոր հարությունից հետո, Գողգոթան դարձավ այն էպիկենտրոնը, որտեղից մարմին և արյուն ունեցող տաճարները տարածվեցին աշխարհով մեկ: Թե՛ Մարտին Լյութերը, թե՛ Մայր Թերեզան թողեցին ակնկալվող շավիղը, որպեսզի նոր շավիղ հարթեին այլ մարդկանց համար:

Ձեր շավիղը թողնելու կամ որևէ շավիղի վերադառնալու համար, դուք պետք է սպասեք Աստծո ցուցումներին, իսկ հետո հետևեք Նրա առաջնորդությանը և՛ խոսքով, և՛ գործերով: Երբ կարդանք Նրա Խոսքը, մտորենք Նրա ճանապարհների շուրջ և խոսենք Նրա լեզվով. այն, ինչ մենք փնտրում ենք, կբացվի մեզ համար: Իր Խոսքի զորության միջոցով Աստված ճանապարհ է բացում այնտեղ, որտեղ, թվում է՝ ճանապարհ չկա: Մեր Աստված գիտի, թե ինչպես կարող ենք անցնել ավազուտ անապատով կամ ծովով՝ այնպիսի վայրերով, որտեղ ճանապարհներ չկան:

«Արգելափակի՛ր այն ճանապարհը, որը տանում է Ոչ մի տեղ.
շնորհ արա ինձ Քո պարզ հայտնությամբ:
Ես ընտրում եմ ճշմարիտ ճանապարհը դեպի Ինչ-որ տեղ,
Ես կանգնեցնում եմ քո ճանապարհային նշանները ամեն
շրջադարձի և հատման վրա:
Ես ամուր բռնում և կառչում եմ այն ամենից,

ինչից Դու պատվիրում ես.
Աստվա՛ծ, ամոթով մի՛ թող ինձ:
Ես կանցնեմ այն ընթացքը, որը Դու որոշել ես ինձ համար,
եթե Դու պարզապես ցույց տաս ինձ,
թե ինչպե՞ս անեմ դա» (Սաղմ. 119.29-32, MSG):

Փոխել շրջակա միջավայրը

Մաչետեի մեկ այլ գործառույթ՝ նոր միջավայրեր ձևափոխելը կամ ձևավորելն է:

Տարիներ առաջ Ջոնը և ես տուն կառուցեցինք Ֆլորիդա նահանգի այն մասում, որը ծածկված էր խիտ անտառներով: Երբ շինարարները բուլդոզերով մաքրում էին մեր տարածքը, բոլոր կրծողները, միջատները, օձերը և կարիճները մեր տարածքից գնացին դեպի երկու կողմերում գտնվող բացատները: Մենք տեղ բացեցինք տան և սիզամարգի համար՝ փոխելով անմիջական միջավայրը, ինչը, սակայն, չէր նշանակում, որ մեր տարածքի նախկին բնակիչները հեռացան… նրանք պարզապես տեղահանվեցին:

«Երբ սատանան ավարտեց ամեն գայթակղությունը, նա հեռացավ Նրանից մինչև հարմար ժամանակ:
«Եվ Հիսուսը վերադարձավ Գալիլեա՝ Հոգու զորությամբ, և համբավը Նրա մասին տարածվեց ամբողջ շրջակա գավառով»» (Ղուկ. 4.13,14, ESV):

Հիսուսը ոչ միայն ծոմ պահեց անապատում, այլև բախվեց սատանայի հետ: Նա սպառված էր, բայց ոչ՝ դատարկ: Նա վերադարձավ՝ լցված Սուրբ Հոգու զորությամբ: Ծոմը շատ ավելին է, քան չուտելը: Այդ ժամանակ է, երբ մենք որոշում ենք, թե ինչը պետք է մեր կյանքում ունենա գերազանցություն և ձայնի իրավունք: Մենք դատարկվում ենք, որպեսզի Նա կարողանա լցնել մեզ:

Երբեմն դուք պետք է ծայրահեղ կերպով փոխեք ձեր միջավայրը՝ անջատե՛ք հեռուստացույցը, ազատվե՛ք ինտերնետից և ցա՛ծ դրեք ձեր հեռախոսը: Երբ բոլոր այս ձայները լռեցվեն, դուք նույնպես հանդարտվելու հնարավորություն կունենաք: Այնուամենայնիվ, նպատակն այն չէ, որ ավելի խորը հայտնություն ունենաք ինքներդ

ձեր մասին, այլ, որ վերապրեք ավելի խորը հայտնություն Նրա մասին:

> «Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողն
> Ամենակարողի շուքի տակ է հանգստանում:
> Ես կասեմ Տիրոջը. «Իմ ապավե՛ն և իմ ամրո՛ց,
> իմ Աստվա՛ծ, որին ես հուսացած եմ»» (Սաղմ. 91.1,2):

Դուք կարող եք դիտարկել ձեր կյանքը նույն կերպով: Երբ Հիսուսը եկավ և մաքրեց ձեր կյանքը, թշնամին չանհետացավ. նա պարզապես մի կողմ գնաց: Նա չի հեռացել, այլ պարզապես կորել է մեր տեսադաշտից և հնարավորության է սպասում՝ իր դիրքը վերականգնելու համար: Դուք պետք է վճռականորեն նոր կենսաոճ և միջավայր հաստատեք, որպեսզի խուսափեք թշնամու հակահարձակումից: Լսե՛ք, թե ինչպես Աստված պատվիրեց Իսրայելին՝ ապրել, երբ նրանք մուտք գործեցին Խոստման երկիր.

> «Եվ անես ինչ որ Եհովայի առջև ուղիղ և հաճելի է, որ քեզ համար բարի լինի, և մտնես ժառանգես այն բարի երկիրը, որ Եհովան երդում արեց քո հայրերին, որ քո ամեն թշնամիներին քո առջևից հալածես, ինչպես որ Եհովան ասաց»:
> (Երկր. Օր. 6.18,19)

Մեր Տերը քշում է հակառակվող ուժերին և հանձնարարում է մեզ՝ տիրանալ երկրին կամ գրավել այն: Չարը պարտված կամ տեղահանված է բարու կողմից, քանի դեռ խավարը տեղահանված է լույսի կողմից: Հիսուսն աշխարհի Փրկիչն է, և մեր պատասխանատվությունն է՝ տանել Նրա Ավետարանը և ներխուժել ու գրավել մեր երկիրը Նրա սիրով:

> «Ահա իշխանություն տվի ձեզ՝ կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու ամբողջ զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի: Սակայն նրա համար մի՛ ուրախացեք, որ ոգիները ձեզ հնազանդվում են, բայց առավել ուրախացեք, որ ձեր անունները գրված են Երկնքում» (Ղուկ. 10.19,20):

Շատ հաճախ այս խոսքն օգտագործվել է՝ որպես արդարացում օձեր վերցնելու համար, ինչի միջոցով մարդիկ փորձել են

ապացուցել իրենց հոգևոր իշխանությունը: Սա հպարտ, հիմար և հաճախ մահացու սովորություն է: Մենք չպետք է փաթաթվենք օձերով ճիշտ այնպես, ինչպես որ չպետք է փաթաթվենք թշնամու զորությամբ: Մենք իշխանություն ունենք տրորելու, ոչ թե բռնելու համար: Մենք պետք է փշրենք, ոչ թե փայփայենք:

Հավաքել հունձքը

Հունձքի ժամանակ շավիղները պետք է մաքրված և պատշաճ վիճակում լինեն, որպեսզի հնձվորները կարողանան հասնել դաշտերին:

> «Մի՞թե դուք չեք ասում, թե դեռ չորս ամիս կա, և հունձքը կգա: Ահա ասում եմ ձեզ՝ բարձրացրե՛ք ձեր աչքերը և տեսե՛ք արտերը, որ սպիտակել են և արդեն հնձին հասել: Եվ հնձողը վարձք է առնում և հավիտենական կյանքի մեջ պտուղ ժողովում, որ սերմողը և հնձողն իրար հետ ուրախանան: Որովհետև սրանում ճշմարիտ է այն խոսքը, թե՝ ուրիշ է սերմողը և ուրիշ է հնձողը: Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, որ դուք չաշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, և դուք նրանց աշխատանքի մեջ մտաք» (Հովհ. 4.35-38):

Հունձքը կարճաժամկետ և անհետաձգելի է: Այն ամենը, ինչ մենք ունենք, պետք է գործածվի ավելի, քան մեկ նպատակի համար: Մեր օրերը կարելի է նմանեցնել Նեեմիայի օրերին, երբ նա պաշտպանվում էր կառուցելու ընթացքում: Նմանապես, մենք պետք է պաշտպանվենք հնձելու ընթացքում:

> «Հրատարակե՛ք այս ազգերի մեջ,
> պատերա՛զմ որոշեք.
> զարթնեցրե՛ք տղամարդկանց,
> մոտենան, վեր գնան բոլոր պատերազմի մարդիկ:
> Ձեր խոփերը սրեր շինեք,
> և ձեր հոտոցները՝ նիզակներ.
> թող տկարն ասի. «Տղամարդ եմ ես
> (կամ՝ Պատերազմող եմ ես)»» (Հովել 3.9,10):

Հաճախ նրանք, ովքեր չեն մասնակցում հունձքին, կփորձեն թշնամացնել հնձվորներին: Թշնամությունը խնդիր դարձավ դեռևս այն ժամանակվանից, երբ Կայենը և Աբելը կռվեցին Աստծո հավանությանն արժանանալու համար: Մրցակցությունը տեղին է օլիմպիական խաղերի ժամանակ, բայց ոչ՝ Աստծո տանը: Հիսուսը և Հովհաննեսը գործակիցներ էին, ովքեր թույլ չտվեցին, որ մարդիկ հրահրեին իրենց՝ մեկը մյուսի դեմ: Նրանք հասկանում էին, որ այն, ինչ իրենք անում էին, ավելի կարևոր էր, քան իրենց համբավը:

Երբ Հիսուսը հայտնվեց Հորդանանի ափերին, Հովհաննես Մկրտիչն աղաղակում էր և առաջնորդում էր Իսրայելի ժողովրդին ապաշխարության շավիղով՝ մկրտության և մեղքերի խոստովանության միջոցով: Երբ Հիսուսը եկավ, որպեսզի նույն կերպով մկրտվեր նրա կողմից, Հովհաննեսը հրաժարվեց (տե՛ս Մատթ. 3.13-15): Հովհաննեսը հասկանում էր, որ ինքը պարզապես ազդարարող էր, իսկ Հիսուսը՝ Նա էր, Ում մասին ինքն ազդարարում էր: Երբ երկուսն էլ հնազանդվեցին այս գործընթացին, Երկինքը բացվեց, լսվեց Աստծո ձայնը, և Հիսուսը հռչակվեց Աստծո Որդի (տե՛ս 16,17 խոսքեր):

Այն բանից հետո, երբ Հիսուսը քառասուն օր շարունակ մնաց անապատում, Նա և Նրա աշակերտներն սկսեցին մկրտել Հովհաննեսի և նրա աշակերտների հետ: Փարիսեցիները և սադուկեցիները եկան՝ դիտելու և նրանց «միավորները հաշվելու» համար:

> «Հիսուսը հասկացավ, որ փարիսեցիները հաշվում էին այն մկրտությունների քանակը, որոնք անում էին Ինքը և Հովհաննեսը (թեև իրականում մկրտում էին Հիսուսի աշակերտները, ոչ թե Հիսուսը): Նրանք ցույց տվեցին իրենց հաշվարկներն այնպես, որ Հիսուսը գերազանցում էր Հովհաննեսին՝ դարձնելով Նրան և Հովհաննեսին թշնամիներ մարդկանց աչքերում: Այնպես որ, Հիսուսը հեռացավ Հուդայի երկրից և վերադարձավ Գալիլեա» (Հովհ. 4.1-3, MSG):

Հունձքի ընթացքում ավելի լավ է հեռանալ դաշտից, քան թույլ տալ, որ մարդիկ, ովքեր չեն գտնվում Հունձքի Տիրոջ իշխանության ներքո, թշնամացնեն ձեզ:

Հիսուսը որոշեց վերադառնալ Գալիլեա, և ճանապարհին հնձի հասած դաշտ գտավ: Հոգնած և ծարաված՝ Հիսուսը կանգ առավ մի ջրհորի մոտ, որտեղ Նրան հանդիպեց մի անբարո կին, ով եկել էր ջուր վերցնելու: Կարճ ժամանակ անց սամարացիների Սիքար քաղաքը բացվեց Հիսուսի համար՝ այդ կնոջ վկայության շնորհիվ (տե՛ս խոսքեր 4-30):

Երբ կրոնական առաջնորդները չկարողացան թշնամացնել Հովհաննեսին և Հիսուսին, նրանք փորձեցին համոզել մարդկանց, որ Հովհաննեսը և Հիսուսը թշնամիներ էին: Թշնամությունը և մրցակցությունը մշտապես փորձում են ընտրության առջև կանգնեցնել մարդկանց՝ դրդելով նրանց անցնել մեկ կամ մյուս խմբի կողմը:

Փաստեր սուսերամարտի մասին

Սրամարտի մեջ զորաշարվածքը պահպանելն էապես կարևոր է: Հակառակ դեպքում՝ դաշնակիցները վտանգի կենթարկեն մեկը մյուսին՝ իրարից կարճ տարածության վրա կռվելու պատճառով:

Հովհաննեսը նախակարապետ էր, ով հասկանում էր իր ժամանակաշրջանը և նպատակը: Նախակարապետները չեն բաժանում դաշտը: Ինչպես և Հովհաննեսը, մենք պետք է ազդարարենք Նրան, Ով գալիս է:

Սպանել կամ պաշտպանել

Երբ նախկինում ամայի տարածքներում փոխվում է միջավայրը, և շավիղներ են բացվում, հաճախ օձեր են հայտնվում: Տեսնելով չարի դրսևորումները՝ մենք չենք սկսում պայքարել մեր մարդկային ուժերով: Մենք սպանում ենք չարը Աստծո Խոսքի մաչետեով՝ ասելով. «*...գրվա՛ծ է»:* Երբ մենք տարածքներ ենք գրավում և ազատում ենք դրանց բնակիչներին, մենք արդեն իսկ տրորում ենք օձերին և կարիճներին:

Անապատների և ստվար աճած բուսականությամբ ծածկված

տարածքների հետ մեկտեղ, դաշտերը նույնպես թաքստոցներ են թունավոր օձերի համար: Գարու բարձր ցողունները քողարկում են նրանց բները և թաքցնում նրանց շարժումները:

Կարելի է ասել, որ հունձքի ընթացքում պետք է և՛ փոխել միջավայրը, և՛ շավիղներ հարթել: Հնձվորներն աշխատում են, որպեսզի քաղեն իրենց առջևում գտնվող հասկերը, իսկ հավաքողները ժողովում են այն, ինչ ստացվում է առաջինների աշխատանքից: Եթե դաշտում գիշատիչ գազան է հայտնվում և սպառնում է թե՛ հնձվորին, թե՛ հունձքին, դրան պետք է սպանել: Սա հնձվորի գործն է, ոչ թե հավաքողինը, որովհետև անկարելի է կռվել, երբ ձեռքերդ լիքն են: Սա նշանակում է, որ հունձքի պիտույքն արագորեն վերածվում է ինքնապաշտպանության միջոցի: Նույնիսկ եթե ձեզ չհաջողվի սատկեցնել օձին, նրան պետք է հեռացնել:

Ոչ մի դեպքում թույլ մի՛ տվեք, որ այն վտանգը, որին ենթարկվել է ձեր դաշտը, աննկատ կամ առանց ձեր կողմից բացահայտվելու անցնի մեկ այլ դաշտ: Եթե տեսնում եք վտանգը, վնասազերծե՛ք այն: Եթե դուք սպառազինված չեք դրա համար, զգուշացրեք մյուսներին, որ դաշտերում օձ կա:

● ● ●

Այնպես որ, եկեք վերցնենք Աստծո Խոսքը մաչետեի պես և մաքրենք մեր առջևի ճանապարհը, փոխենք մեր միջավայրը՝ դարձնելով այն բարենպաստ՝ հունձքի համար, և սպանենք այն օձերին, որոնք կհայտնվեն մեր ճանապարհին:

• • •

Թանկագին երկնային Հա՛յր,

Առաջնորդի՛ր իմ շավիղները Քո Խոսքի լույսով, և այնպես սովորեցրու ինձ, որ ես պարզ երևացող հետքեր թողնեմ իմ ետևից ուրիշների համար: Ես ցանկանում եմ գործածել Քո Խոսքը, որպեսզի ստեղծեմ միջավայրեր, որոնցում մարդիկ ծաղկունք կապրեն: Ես որոշում եմ կայացնում հսկել իմ սիրտը, որպեսզի չշփոթեմ իմ գործակիցներին մրցակիցների հետ:
Բացի՛ր իմ աչքերը, որպեզի տեսնեմ իմ կյանքը շրջապատող դաշտերը, որոնք սպիտակ են և պատրաստ են հունձքի, Հիսուսի անունով, ամե՛ն:

10

Լույսի թուրը

«Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ դեմ առ դեմ. հիմա փոքրիշատե եմ տեղյակ, բայց այն ժամանակ այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ»:

— Ա Կորնթացիների 13.12

Իրական աշխարհում լույսի թուր դեռևս գոյություն չունի. միակ տարբերակը՝ լազերային ճառագայթներն են: Այնուամենայնիվ, *«Աստղային պատերազմ»* կինոշարքում կա ֆուտուրիստական օրինակ, որը ցանկանում եմ օգտագործել՝ լուսեղեն թուրը: Այս զենքն ազատում է այն ամենը, ինչի վրա ընկնում է իր լուսավորությունը:

Հիսուսը մեր լույսն է շատ երկար և խավար թունելի վերջում, և երբ տեսնենք Նրան, մենք կլինենք Նրա նման:

Մեր տեսողությունը այս երկրային ժամանակավոր իրականությունից՝ լավագույն դեպքում թույլ լուսավորված, սահմանափակ և աղոտ է, բայց երբ հավիտենությունը կլանի ժամանակը, մենք կտեսնենք ամբողջովին՝ երես առ երես, այնպիսի իրականության մեջ, որտեղ ստվերներ չկան: Սա նշանակում է, որ այժմ մենք չենք կարող տեսնել ամբողջ պատկերը: Այնուամենայնիվ, դեռևս չի եղել մեր տեսածը ճշգրտորեն ընկալելու կամ զանազանելու ավելի մեծ կարիք, քան հիմա:

Ինչպես ասում են՝ *աչքն ամեն ինչ չէ, որ տեսնում է*. այնպես որ, մեզ անհրաժեշտ է լույսի թուրը՝ լույս և զանազանություն ունենալու համար: Ես ավելին եմ տեսնում այն ժամանակ, երբ իմ աչքերը

լայն բացված են, քան երբ կկոցում եմ աչքերս՝ փորձելով տեսնել խավարի մեջ: Այնուամենայնիվ, հաճախ այն բաները, որոնք ես տեսնում եմ, երբ նախատրամադրված չեմ ակնհայտ իրողությունը տեսնելուն, ամենաճիշտն են լինում:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որը բնութագրվում է սպասումով և զգուշացումներով:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ լույսը պարզորեն ընդգծվում է թանձր ստվերների միջոցով: Ամբողջ Նոր կտակարանն զգուշացնում է հավատացյալներին, որ այս երկրի վերջին օրերում կլինեն վիրավորանքները, կեղծ ուսմունքները և ամեն տեսակի խաբեությունը շատ տարածված են լինելու: Ահա թե ինչպես Պողոսը նկարագրեց մեր ժամանակաշրջանը Տիմոթեոսին.

> «Դու պետք է իմանաս, Տիմոթե՛ս, որ վերջին օրերին շատ դժվար ժամանակներ են լինելու: Որովհետև մարդիկ կսիրեն միայն իրենց և իրենց փողը: Նրանք կլինեն պարծենկոտ և հպարտ, Աստծուն ծաղրող, ծնողներին անհնազանդ և անշնորհակալ: Նրանց համար ոչինչ սուրբ չի լինի: Նրանք կլինեն չսիրող և չներող. նրանք կչարախոսեն մարդկանց և չեն վերահսկի իրենց: Նրանք կլինեն դաժան և կատեն բարին: Նրանք կդավաճանեն իրենց ընկերներին, կլինեն անհոգ, փքված՝ հպարտությունից, և կսիրեն հաճույքն ավելի, քան Աստծուն: Նրանք կրոնական վարք կունենան, բայց կմերժեն այն զորությունը, որը կարող է աստվածապաշտ դարձնել իրենց: Հեռո՛ւ մնա նման մարդկանցից» (Բ Տիմոթ. 3.1-5, NLT):

Եթե կարիք կար, որ Տիմոթեոսն իմանար մեր վիճակի մասին երկու հազար տարի առաջ, որքա՞ն ավելի մենք պետք է տեղյակ լինենք մեր ժամանակվա մասին: Ուշադրություն դարձրեք՝ Պողոսը չի ասում, որ մեր դժվարությունները կլինեն տնտեսական անկումների, երկրաշարժերի և պատերազմների պատճառով: Երկրի, ժողովուրդների կամ բանկերի վիճակը չէ, որ լարված է դարձնում մեր ժամանակը: Մեր պայքարն առաջանում է մարդու սրտի խավարած վիճակից:

Նոր կտակարանում կան բազմաթիվ զգուշացումներ՝ *զգո՛ւյշ եղիր, ուշադի՛ր եղիր, արթո՛ւն եղիր, զգո՛ն եղիր և մեծ ուշադրություն*

դարձրու Աստծո Խոսքին և մեր վարդապետությանը: Մենք ստանում ենք զգուշացումներ ոչ միայն կեղծ ուսուցիչների, այլև ինքնախաբեության վտանգի մասին:

Այնուամենայնիվ, մշտապես խաբեության վախի մեջ ապրելը նույնպես կտանի սխալ ճանապարհով: Ապրելով վախի մեջ՝ մարդը սարսափելի որոշումներ կկայացնի, որովհետև վախը սարսափելի խորհուրդներ է տալիս (եթե իհարկե, խոսքը Տիրոջ վախի մասին չէ): Աստված երբեք վախի հոգի չի տվել ձեզ: Նա տվել է «…զորության, սիրո և զգաստության հոգի» (Բ Տիմոթ. 1.7): Այս երեք հատկանիշները հենց այն են, ինչն անհրաժեշտ է մեզ, որպեսզի զանազանություն ունենանք և ճիշտ կերպով գործածենք Աստծո Խոսքը:

Աստծո Խոսքը՝ այն ճրագն է, որը լուսավորում է մեր շավիղները, դատում է մեր գործողությունները և քննում է մեր սրտերը: Առանց Աստծո Խոսքի լույսի՝ բոլորս կլինեինք խավարում և կվախենայինք այն ամենից, ինչը չէինք կարող տեսնել:

> «Խոսքերիդ հայտնությունը լույս է տալիս
> և իմաստուն է անում պարզամիտներին» (Սաղմ. 119.130):

Ինձ դուր է գալիս այն օրինակը, որը բերված է այս խոսքում: Երբ մենք հայտնաբերում կամ «փռում» ենք Աստծո Խոսքը գանձերի քարտեզի պես, մենք ձեռք ենք բերում ճիշտ պատկերացում և ներըմբռնում: Աստվածաշնչի այլ թարգմանություններում «հայտնությունը» բառի փոխարեն գրված է «ուսմունքը» և «մուտքը»:

Առանց Աստծո Խոսքի ներըմբռնման՝ կարելի է հեշտորեն շփոթել թշամուն ընկերոջ հետ, անցյալը՝ ապագայի հետ, որովհետև ստվերների իրականությունն աղավաղում է մեր պատկերացումները: Բայց երբ որևէ իրավիճակում լույս է հայտնվում, դուք տեսնում եք, թե իրականում ինչ կա ձեր առջևում:

> «Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և հոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը, և քննող է սրտի մտքերը և խորհուրդները» (Եբր. 4.12):

Այդ իսկ պատճառով, մեր թրծումը պետք է լինի շատ ավելի խորը այն ամենից, ինչը տեսանելի է. այն պետք է զորացնի մեր ներքին էությունը: Ինչի՞ են պետք մկանուտ ձեռքերը, որոնք սեղմում են թուրը սեփական դաշնակցի կոկորդին, կամ ուժեղ ոտքերը, որոնք սխալ տարածք են պահպանում: Մենք ոչինչ ենք, եթե մեր սրտերը և անձերը ձախողեն մեզ, եթե մենք չունենք ոչինչ՝ բացի մեր ուժից:

Ուսումնասիրելով սուսերամարտի արվեստը՝ ես իմացա, որ լավ սուսերամարտիկները կանխատեսում են, թե ինչ է տեղի ունենալու: Նրանք բնազդորեն գիտեն հակառակորդի հաջորդ շարժումը, և համապատասխանեցնում են իրենց դիրքը՝ նրա հարձակումը ետ մղելու համար: Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցուն՝ պատվիրելով նրանց՝ կրկին հաստատել իրենց սերն այն եղբոր հանդեպ, ով նախկինում կարգապահական տույժի էր ենթարկվել. «Որ սատանան մեզ զրկանք չանի, որ նրա խորհուրդներին անտեղյակ չենք» (Բ Կորնթ. 2.11):

Հաղթել սատանայի խորհուրդները

Ի՞նչ դավեր է նյութում թշնամին: Նա ցանկանում է բաժանել մեզ Աստծուց և մեկս մյուսից՝ մեղքի զգացման, միմյանց դատելու, ամոթի և կասկածամտության միջոցով: Նրա մարտավարությունների նպատակը՝ մեզ մեկուսացնելն է: Մենք հակառակվում ենք այս հարձակմանը սիրով, զորությամբ և զգաստությամբ:

Առաջին տարրը՝ *սերն է:*

> «Իմ աղոթքն է, որ ձեր սերը շարունակ ավելանա գիտությամբ և ամեն զանազանությամբ» (Փիլիպ. 1.9, ESV):

Որտեղ սիրո աճը կանգնեցվում է, խավարը և խաբեությունը շատանում են, իսկ որտեղ սերը ծաղկունք է ապրում, գիտությունը և զանազանությունը ավելանում են՝ սիրո աճին համաչափ: Կարող եմ անկեղծորեն ասել, որ ոչ ոք երբեք չի խոսել գիտության և զանազանության խոսքեր իմ կյանքում՝ առանց իմ հանդեպ սեր ունենալու:

> «Ով որ ասում է, որ լույսի մեջ է, և իր եղբորն [կամ քրոջն] ատում է, մինչև հիմա խավարի մեջ է: Նա, որ իր եղբորը [կամ քրոջը] սիրում է, լույսի մեջ է մնում, և գայթակղություն չկա նրանում: Բայց նա, որ իր եղբորն [կամ քրոջն] ատում է, խավարում է և խավարի մեջ է ման գալիս, և չգիտի, թե ուր է գնում, որովհետև խավարը կուրացրեց նրա աչքերը»:
> (Ա Հովհ. 2.9-11):

Ամեն ինչ շատ պարզ է. ատելությունն ապրում է խավարում, իսկ սերն ապրում է լույսի մեջ: Ատելությամբ լցված մարդիկ սայթաքում են՝ քայլելով խավարում, և նույնիսկ գաղափար չունեն, թե ուր են գնում, որովհետև նրանք կուրացած են (գտնվում են ինքնախաբեության մեջ): Սիրով լցված մարդիկ քայլում են լույսի մեջ, նրանք գիտեն, թե ուր են գնում, և հասնում են իրենց նպատակակետին՝ առանց սայթաքելու:

Սովորաբար կանայք ավելի նրբանկատ և խորաթափանց են: Աստծո դուստրերը կարող են զարգացնել իրենց խորաթափանցությունը և ճշմարիտ զանազանություն ունենալ… սիրելով: Այնպես որ, ահա որոշ վարժություններ ներքին զանազանության համար (տե՛ս Ա Կորնթ. 13.4-7-ից):

1. Սերը չի հակազդում. այն համբերատար և բարի է:
2. Սերը չի պահպանում անցյալում գործած մեղքերի ցուցակը:
3. Սերը վստահում է Աստծուն, և այդ պատճառով հարատևում է:
4. Սերն ուրախանում է ճշմարտությամբ:
5. Սերը չի խորհրդակցում անցյալի հետ:
6. Սերը փնտրում է լավագույնը:
7. Սերը տարածվում է դեպի ապագան:

Երկրորդ տարրը՝ *իշխանությունը* կամ *զորությունն է:*

Չկա ոչ մի իշխանություն՝ առանց ուժի, և ոչ մի օրինական ուժ՝ առանց իշխանության: Իրականում, այս երկուսն էլ պարգև են Աստծուց, և սրանք գիտակցելու համար դուք պետք է իմանաք ձեր դիրքը:

> «Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետր. 2.9):

Իրականում դուք հենց այսպիսին եք՝ անկախ ձեր բնական ծագումից կամ աշխատանքային նկարագրությունից: Քրիստոսում դուք պատկանում եք դուստրերի ընտիր ազգին. դուք թագավորական քահանայության ժառանգորդուհի եք և սուրբ ազգի դեսպան: Դուք Նրա ամենաարժեքավոր սեփականությունն եք: Դուք փրկված եք, որպեսզի հռչակեք այն ամենը, ինչ Նա արեց, և կանչեց ձեզ խավարի կյանքից՝ հավիտյան ապրելու Իր լույսի փառքի մեջ: Սա ձեր վկայության զորությունն է:

Ամեն ինչ շատ պարզ է. ատելությունն ապրում է խավարում, իսկ սերն ապրում է լույսի մեջ:

Երրորդ տարրը՝ *պարզ և առողջ միտքն է:*

Ի՞նչ է նշանակում՝ ունենալ զգաստ միտք: *«Մերիամ-Վեբսթեր»* բառարանը *առողջ* բառը սահմանում է որպես «ազատ՝ վնասվածքներից, հիվանդություններից, արատներից, շեղումներից կամ թերություններից. տրամաբանորեն դատողություններ անելու կարողություն. ողջամիտ, համոզիչ և հիմնավորված»: Միայն Աստված կարող է այսպիսին դարձնել Իր ժողովրդին այս կոտրված և անառողջ դատողություն ունեցող աշխարհում: Աստծո Խոսքը կարող է նորոգել ձեր միտքը և փոխել այն՝ անառողջից դարձնելով առողջ: Երբ հանդիպում եք Խոսքի հետ, այն կարող է փոխել ձեզ ճիշտ նույն կերպով, ինչպես հանդիպումը Հիսուսի հետ փոխեց մերկ և կատաղած խելագարին՝ հագցնելով նրան և դարձնելով հանդարտ և «խելքը գլուխը եկած» (տե՛ս Մարկ. 5.1-15):

Անհնար է զանազանություն ունենալ, եթե ձեր միտքը փոթորկվում և տատանվում է: Զանազանությունը նշանակում է, որ մեր սննդակարգն անցնում է Աստծո Խոսքի կաթից ավելի հասուն կերակուրների, որոնք զորացնում են այն մարդկանց, ովքեր գիտեն՝ ինչպես մարսել այդ կերակուրները: Սա տեղի է ունենում, երբ նորոգում ենք մեր մտքերը Նրա Խոսքի լույսով և զանազանություն գործադրելու միջոցով:

> «Բայց կատարյալների համար է հաստատ կերակուրը, որոնց զգայարանները վարժողությամբ կրթված են՝ բարին և չարը զանազանելու» (Եբր. 5.14):

Կար ժամանակ, երբ ես ճիշտ չէի հասկանում այս խոսքի նշանակությունը: Մինչև նույն շփոթմունքի ճահճի մեջ ընկնելը, որում ես հայտնվել էի, իմացե՛ք, որ այս խոսքը չի հավասարեցնում զանազանությունը դատելու հետ: Խոսքն այստեղ շատ ավելի լայն գաղափարի մասին է, քան մարդկանց մեղավոր կամ անմեղ համարելը: Հասունությունը, զանազանությունը և ուժը Խոսքի մեջ են, և մենք կարիք ունենք, որ այս բոլորը միասին գործեն, եթե պատրաստվում ենք ապահովությամբ նավարկել այս աշխարհի ջրերում և տարբերել բարին չարից:

Ավելին, քան տեսնում է աչքը

Զանազանությունը բխում է հասունությունից, որը, վերջին հաշվով, մեր մոտեցումն է կյանքին: Իրականում, ցանկացած տարիքում կամ մեր կյանքի ցանկացած փուլում կարող ենք լինել հասուն կամ ոչ հասուն: Մեր զանազանությունը չի զարգանում, երբ մենք պիտակում ենք մարդկանց և երևույթները: Ինչպես որ իմ տեքստ մուտքագրելու արագությունը ստեղնաշարով նվազում է, երբ իջեցնում եմ գլուխս՝ ստեղների տառերին նայելու համար, այնպես էլ պիտակները թույլ չեն տալիս մեզ՝ ազատորեն գործել հավատքի մեջ և վստահել, որ ինչ-որ անտեսանելի բան առաջ կտանի մեզ: Որոշ ժամանակ ստեղնաշարով աշխատելուց հետո, ես ճանաչում եմ ստեղները մատներովս, և այլևս չեմ նայում դրանց:

Ճշմարտությունն այն է, որ մշտապես կա ավելին, քան այն, ինչ երևում է: Մենք գիտենք, որ այն ամենը, ինչ մենք հիմա տեսնում ենք, ստեղծվել է այն բաներից, որոնք մենք անկարող ենք տեսնել:

Ամեն բնական իրողություն՝ որևէ
հոգևոր իրողության խորհուրդ է:

— Ռալֆ Ուոլդո Էմերսոն

Նմանապես, զանազանությունը այն չէ, որ մարդկանց, երևույթները կամ վերապրումները «լավ» կամ «վատ» պիտակես:

Զանազանությունը նշանակում է՝ իմանալ, թե ինչ է տեղի

ունենում իրականում, որպեսզի հերոսուհի դուստրերը կարողանան օգուտ քաղել այն իրավիճակներից, որոնք այլ մարդիկ անբարենպաստ են համարում: Զանազանություն ունեցող պատերազմողը կիմանա, թե ինչպես բարու վերածել իր շուրջը գտնվող չարը:

Զանազանությունը կարելի է նմանեցնել լույսը հեռավորության վրա նշմարելուն: Մերօրյա մշակույթում սահմանները բարու և չարի միջև մշուշոտ են դարձել: Մեր առջև գտնվող խավարն այնքա՜ն շատ է, որ այն մթագնեցնում է հորիզոնից երևացող լույսը:

Ճշգրտորեն տեսնելու համար, մենք պետք է նայենք մեր սրտին և լսենք մեր սրտի ներքին ձայնը, քանի որ մենք ստանում ենք Սուրբ Հոգու խորհուրդը մեր ներսից: Զանազանությունը այնպիսի կարողություն է, որը պետք է վարժեցնել մշտապես գործադրելու միջոցով: Միայն այդ դեպքում կկարողանանք բաժանելկամ տարբերակել բարին չարից:

Այնպես վերաբերվեք մարդկանց, ասես նրանք այն են,
ինչ պետք է լինեն, և օգնեք նրանց՝ դառնալ այն,
ինչ նրանք կարող են լինել:

— Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթե

Թույլ տվեք, որպես օրինակ, մի դրվագ բերել իմ կյանքից: Անցյալում ես անբարո սեռական կյանք եմ ունեցել: Այն մարդիկ, ովքեր կարողանում էին հմտորեն պիտակել ուրիշներին, նայում էին ինձ և ճակատիս դրոշմում էին «անբարոյական» պիտակը: Այնուամենայնիվ, փաթեթավորումը նկարագրելը դեռ չի նշանակում, որ ձեզ հայտնի է դրա պարունակությունը: Տարիներ շարունակ իմ կյանքը պիտակվում և քողարկվում էր նրանով, ինչ ես անում էի: Բայց փա՜ռք Աստծուն, Նա բերեց իմ կյանքում այնպիսի մարդու, ով յուրացրել էր զանազանության արվեստը:

Փաստեր սուսերամարտի մասին
Ժամանակը՝ միակ կարևոր բաղադրիչն է սուսերամարտի մեջ:

Նա և նրա կինը ընդունեցին ինձ իրենց տանը: Նրանց տանը գիշերելուց հետո ես ընդունված և անվտանգ զգացի ինձ, այնինչ այլ ընտանիքներում ես ընդամենը զգում էի, որ ինձ հետևում էին: Նա և նրա կինը տեսան ավելին, քան ակնհայտորեն կոտրված աղջկա. նրանք տեսան, թե ինչպես կարող էր ամեն ինչ դասավորվել:

Նրանք հասկացան, որ թեև ես սխալներ էի թույլ տվել իմ սեռական կյանքում, սակայն եթե հնարավոր լիներ կրկին վերադարձնել ինձ ճիշտ ճանապարհին, իմ անցյալը կարող էր լուսավորել այլ աղջիկների ճանապարհը: Իմ անցյալը լիովին անտեսելու փոխարեն, նրանք խրախուսեցին ինձ՝ օգտագործել այն՝ որպես փարոս ուրիշների համար: Այնտեղ, որտեղ մարդիկ տեսնում էին ձախողված մի աղջկա, նրանք նկատեցին ներուժ՝ բազմաթիվ խարույկների համար, որոնք կարելի էր վառել՝ այլ աղջիկների փրկելու համար:

Ժամանակի ընթացքում ես կարողացա զանազանել բարին չարից: Ես սկսեցի պատմել իմ կայացրած որոշումների և դրանց արդյունքների մասին, որպեսզի ուրիշները չգնային նույն ճանապարհով:

Մենք պետք է հասունանանք զանազանելու կարողության մեջ: Ճշմարտապես զանազանող անձնավորությունը հասկանում է, որ մարդու խավար անցյալը կարող է ծառայել որպես փարոս մյուսի ապագայի համար: Պատերազմողները նայում են ավելի հեռուն, քան խավար անցյալը և ակնհայտ ներկան, և տեսնում են ապագայի փառավոր հայտնությունը իրենց և մյուսների համար: Հիսուսը եկավ որպես «Լույս՝ հեթանոսներին լուսավորելու համար, և փառք՝ քո Իսրայել ժողովրդի համար» (Ղուկ. 2.32):

Այնուամենայնիվ, խնդրում եմ, մի՛ մտածեք, որ ես միամիտ եմ և չեմ գիտակցում, որ մենք պետք է զանազանենք այն դեպքերը, երբ խավարը լույսի դիմակ է հագնում: Ներկայումս բարի պտուղը չար պտղից տարբերելու կարողությունն ավելի ու ավելի կարևոր է դառնում.

> «Որովհետև ամեն մի ծառ իր պտղից է ճանաչվում. որովհետև փշերից թուզ չեն քաղում, և ոչ մորենուց խաղող են կթում:

> Բարի մարդն իր սրտի բարի գանձից բարի է բխում, և չար մարդն իր սրտի չար գանձից չար է բխում, որովհետև սրտի ավելացածից խոսում է նրա բերանը» (Ղուկ. 6.44,45):

Ամենաճշգրիտ ցուցանիշն այն մասին, թե ինչ կա մեր ներսում, այն է, թե ինչ է դուրս գալիս մեր բերանից: Երբեմն ինչ-որ մեկը կարող է ասել մի բան, որը ճիշտ է հնչում, բայց սխալ զգացողություն է առաջացնում: Այլ դեպքերում ինչ-որ մեկը կարող է ասել մի բան, որը սխալ է հնչում, բայց ճիշտ զգացողություն է առաջացնում (օրինակ՝ երիտասարդ, անփորձ քրիստոնյաները): Լսե՛ք ձեր սրտով, իսկ հետո լսե՛ք ձեր սրտին: Մի՛ անարգեք ձեր ներքին զգացումը:

Իհարկե, նման ընկալումն անկարելի է զարգացնել՝ վարժեցնելով ֆիզիկական զգայարանները. այն շատ ավելի խորն է: Այն կապ ունի ներքին ըմբռնողության և զգայունության հետ: Եվ սա այն բնագավառն է, որում կանայք կարող են փայլել: Երբ սրտերը թրծվեն, և կասկածամտության թույնը մաքրվի, մենք կկարողանանք նկատել այն, ինչն այլ դեպքում բաց կթողնեինք:

Զանազանություն և աղոթք

Ի՞նչ է բարեխոսությունը: Մի՞թե այն սահմանափակվում է աղոթքով:

Դե ինչ, ես համոզված եմ, որ բարեխոսությունը պետք է մշտապես սկսվի աղոթքով, բայց ճշմարիտ բարեխոսությունը հազվադեպ է ավարտվում դրանով: *«Բարեխոսել»* բառի սահմանումը կազմված է հետևյալ բառերից. «միջամտել, միջնորդել, բանակցություններ վարել, վճիռ կայացնել», և իմ սիրելի բառը՝ «ոտքի ելնել»: Այնպես որ, ահա թե ինչպես ենք բարեխոսում. մենք խոսում ենք այլ մարդկանց փոխարեն՝ որպես դատապաշտպան, միջնորդում ենք այն խնդիրների մեջ, որոնք լուծման կարիք ունեն, և ձայն ենք բարձրացնում ճնշված և լռեցված մարդկանց փոխարեն: Խոսքը ցույց է տալիս մեզ, թե որտե՞ղ պետք է միջնորդենք, որտե՞ղ պետք է գտնենք մեր պատասխանները, և թե ինչպե՞ս պետք է ուղղենք այն,

ինչը չարաշահվել կամ վնասվել է: Բացի այդ՝ Խոսքն առաջնորդում է մեզ դեպի լույսը, որը գտնվում է մեր շավիղի վերջում:

Աստված երբեք չի շնորհում մեզ զանազանություն՝ քննադատելու համար, այլ՝ բարեխոսելու համար:

— Օսվալդ Չեմբերս

Իմանալով այս ամենը *բարեխոսության* մասին՝ մենք ավելի ամբողջապես ենք հասկանում, թե ինչ է նշանակում բարեխոսել: Ես հավատում եմ, որ բարեխոսությունը տեղի է ունենում ամենուր, որտեղ լույսը բախվում է խավարի հետ:

Հիսուսը եկավ որպես միջնորդ Աստծո և մարդկության միջև. Նա միջամտեց ամենուր, ուր հանդիպեց հիվանդության, դիվային գերության, կրոնական խեղաթյուրման և կեղեքման խավար ուժերի: Նա պարտության մատնեց օրենքի գիտակների խճճող խոսքերը և փայլուն վճիռներ կայացրեց՝ շնորհիվ Իր ապշեցուցիչ իմաստության: Եվ ընդհուպ՝ մինչև Իր երկրային կյանքի ավարտը, Նա ոտքի ելավ ամեն հարցում՝ մարդկանց բարձրացնելու համար:

Երբ Հիսուսին մարտահրավեր նետեցին՝ բերելով Նրա մոտ շնության մեջ մեղադրվող մի կնոջ, Նա ոտքի ելավ՝ բարեխոսելով նրա համար: Նա զանազանեց, որ կրոնական առաջնորդները բերել էին այդ կնոջը, որպեսզի խաբեին Իրեն և ծուղակի մեջ գցեին: Նրանք աղավաղում էին Աստծո Խոսքը՝ վերածելով այն դատաստանի գործիքի: Նա զանազանեց իրական խնդիրը և բարեխոսական կոչ արեց՝ լույս սփռելով այդ մարդկանց խավարած սրտերին.

> «Բայց երբ որ ստիպում էին՝ հարցնելով Նրան, վեր նայեց և ասաց. «Ձեզնից ով որ անմեղ է, թող առաջ նա՛ քար գցի նրա վրա»» (Հովհ. 8.7):

Դրանից հետո Հիսուսը կրկին կռացավ, սպասեց, մինչև որ բոլոր մեղադրողները գնացին, և կրկին ոտքի կանգնեց.

> «Հիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքի չտեսավ այն կնոջից բացի, և ասաց նրան. «Ո՛վ կին, ո՞ւր են քեզ ամբաստանողները.

> ոչ ոք քեզ չդատապարտե՞ց»: Նա էլ ասաց. «Ո՛չ, ո՛վ Տեր», և Հիսուսն էլ ասաց նրան. «Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»:
> Արդ Հիսուսը դարձյալ խոսեց նրանց հետ և ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. ով որ Իմ ետևից գա, նա խավարում չի գնա, այլ կյանքի լույսը կընդունի»» (Խոսքեր 10-12):

Նա զորացրեց այդ կնոջը՝ անմեղ ապագա ունենալու համար: Այդ կինն անձամբ չէր կարող անել դա, եթե մնար իր անցյալի դատապարտության կապանքների մեջ: Այլևս ոչ ոք չէր փորձի քարկոծել այդ անանուն կնոջը:

Քույրե՛ր, եկեք մի կողմ դնենք մեր դատապարտության քարերը և վերցնենք լույսի թուրը: Ձանազանությունը կարող է լուսավորել աշխարհը՝ այլ մարդկանց համար:

Հիսուսը նույնպես բարեխոսեց, երբ կանգնեց քարայրի առջև, որտեղ թաղված էր Ղազարոսը, և հարություն տվեց նրան մեռելներից: Հիսուսը լաց եղավ, քանի որ Նրա սիրտը ցավում էր Իր ընկերոջ համար, ում Նա սիրում էր: Դրանից հետո Նա աղոթեց.

> «Հիսուսն էլ Իր աչքերը դեպի վեր բարձրացրեց և ասաց. «Հա՛յր, գոհանում եմ Քեզնից, որ Ինձ լսեցիր: Եվ Ես գիտեի, որ միշտ լսում ես Ինձ, բայց այս շրջակա ժողովրդի համար ասացի, որ հավատան, թե Դու ուղարկեցիր Ինձ»: Եվ այս ասելով՝ մեծ ձայնով աղաղակեց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկ»: Եվ մեռելը դուրս եկավ՝ ոտքերը և ձեռքերը պատանով կապած, և երեսը վարշամակով պատած: Հիսուսը նրանց ասաց. «Արձակե՛ք դրան և թողե՛ք որ գնա»» (Հովհ. 11.41-44):

Ղազարոսն իր ետևում թողեց գերեզմանի խավարը և ազատություն գտավ նոր օրվա լույսի մեջ: Ձանազանությունը և ճշմարիտ բարեխոսությունը կարող են ազատ արձակել այն մարդկանց, ովքեր իրենց ճակատագրերի գերիներն են դարձել:

> Իր երկրային կյանքի ընթացքում Հիսուսը զանազանում էր չարի գործերը, իսկ հետո բարեխոսում էր՝ բերելով լույս, ճշմարտություն և բժշկություն երկրի խավարի մեջ: Իմ կարծիքով, զանազանության ամենաշրջադարձային դրսևորումը Հիսուսի կյանքում այն էր, երբ Նա ասաց. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34, ESV):

Զանազանությունը հասկանում է, երբ այլ մարդիկ կույր են, և բարեխոսում է՝ հիմնվելով նրանց անտեղյակության, ոչ թե նրանց գործողությունների վրա: Խաչը վերջ տվեց մեր բաժանությանն Աստծո հետ, բայց Նրա բարեխոսությունը կանգ չառավ այդտեղ: Այն շարունակվեց, երբ Հիսուսը հարություն առավ գերեզմանից և համբարձվեց Երկինք:

> «Ո՞վ որևէ մեղադրանք կներկայացնի Աստծո ընտրյալների դեմ: Աստված է, Ով արդարացնում է: Ո՞վ է, որ դատապարտի: Քրիստոս Հիսուսը՝ Նա է, Ով մահացավ,- ավելին՝ Ով հարություն առավ,- Ով Աստծո աջ կողմում է, Ով իրապես բարեխոսում է մեզ համար» (Հռոմ. 8.33,34, ESV):

Եվ քանի որ Նա հավիտենական է, համբարձված է, և կարողանում է ճշտորեն զանազանել, մենք ունենք հետևյալ խոստումը.

> «Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր… Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Խոսքեր 35,37):

Սիրելինե՛ր, ժամանակն է, որ զորանանք Խոսքի մեջ, լուսավորենք այս աշխարհը ճշմարիտ զանազանությամբ և ոտքի ելնենք բարեխոսության գործերով:

• • •

Երկնային Հա՛յր,

Ես պատրաստ եմ ցած դնել դատապարտության քարերը և զանազանող դուստր դառնալ: Ես կնորոգեմ իմ միտքը կարդալով, խոսելով և ապրելով Քո Խոսքը՝ լույսի մեջ: Ես ցանկանում եմ տեսնել, թե ինչպես է Երկնքի լույսը և իմաստությունը ներխուժում երկրի խավարի մեջ: Ես պատրաստ եմ ազատ արձակել նրանց, ովքեր մեղքի ստրուկներ են՝ հռչակելով լույս և սեր նրանց ապագայում: Ես պատրաստ եմ լաց լինել նրանց համար, ովքեր թաղված են մարդկային թրաֆիքինգի, կրոնական գերության և հուսահատության գերեզմաններում: Ես կբարձրացնեմ իմ ձայնը, կերկարացնեմ իմ ձեռքերը, ոտքի կելնեմ և կմիջամտեմ այլ մարդկանց համար, Հիսուսի անունով, ամե՛ն:

11

Երգի թուրը

«Երգի՛ր և ցնծա՛, ո՛վ Սիոնի դուստր,
որովհետև ահա՛, Ես գալիս եմ, և կբնակվեմ
քո մեջ,- հռչակում է Տերը»:

— Զաքարիա 2.10, ESV

Թուրը ձեր ձեռքում ճիշտ կերպով պահելը նման է երաժշտական գործիք լարելուն... Երբեմն անհրաժեշտ է ընդամենը մեկ երգ՝ պայքարը ձեր օգտին դարձնելու համար:

Կարիք չկա, որ երկրպագության առաջնորդ լինեք՝ երկրպագելու համար, և կարիք չկա, որ երգիչ լինեք՝ երգելու համար: Դուք պետք է պարզապես դուստր լինեք, ինչն արդեն բավական է, որովհետև կան շատ պայքարներ, որոնք դուք հաղթում եք երգով:

Ես շատ ոգեշնչվեցի՝ գտնելով մի թուր, որի ձևը և գործառույթը ցույց են տալիս, թե ինչ է տեղի ունենում, երբ մենք երգում ենք: Այս հին ժամանակներին պատկանող թուրը կոչվում է ֆլամբերգ, և բառացիորեն նշանակում է «հրեղեն թուր»[9]: Այս թրի շեղբի եզրերն ալիքաձև են: Երբ ֆլամբերգի շեղբը բախվում է հակառակորդի թրի շեղբին, այն տատանումներ է փոխանցում այդ թրին, և թուրը նրա ձեռքում սկսում է ցնցվել: Հակառակորդի սեղմումը թուլանում է, ինչն առավելություն է ստեղծում ֆլամբերգը կրողի համար:

Կարո՞ղ եք նման բան պատկերացնել:

Ես ի սրտե հավատում եմ, որ երբ մենք երգում ենք, տեղի է ունենում նույնը... հատկապես երբ մենք երգում ենք Խո՛սքը: Օդային ալիքներն սկսում են տատանվել մեր ձայնից, և երբ



բախումները լույսի և խավարի միջև սաստկանում են, թշնամու սեղմումը թուլանում է: Նրա հարձակումը կորցնում է իր թափը, և անեծքներն ու մեղադրանքները խափանվում են կամ շփոթության են մատնվում: Երաժշտական գործիքների և երգի շեշտակի համադրությունը կարող է փոխել այն միջավայրը, որը շրջապատում է մեզ, կա՛մ ի չարը, կա՛մ ի բարին:

Իմ անձնական փորձառության մեջ եղել են երկրպագության պահեր, երբ բառացիորեն զգում էի, թե ինչպես էր ժամանակը դանդաղում՝ գրեթե կանգ առնելու աստիճան:

Եվ որքա՜ն զավեշտական է, որ Ադամի մուտքը Եդեմ փակում էր հենց բոցեղեն թուրը, որը պտտվում էր ամեն կողմ (տե՛ս Ծննդ. 3.24): Կարելի է համարել, որ երգերի և երկրպագության միջոցով նման մի թուր մուտքի հնարավորություն է ընձեռում մեզ:

«Մտե՛ք Նրա դռները գոհությունով,
Նրա սրահները՝ փառաբանությունով» (Սաղմ. 100.4):

Գործածելով երկրպագության և գոհության բառերը, որոնք հաճախ ասվում են երգերի միջոցով՝ մենք մուտք ենք գործում Երկինք և ընդունելություն ենք ստանում մեր Հոր սրահներում: Մենք կտրում-անցնում ենք ահռելի տարածություն անտեսանելի իրականության մեջ և քայլում ենք Երկնքի սալահատակի վրայով, թեև մեր ոտքերը դեռ հաստատ կանգնած են այս երկրի վրա: Չեմ կարող ասել ձեզ, թե քանի՜ անգամ եմ բառացիորեն զգացել, որ «հափշտակվել եմ», երբ երգելով քայլել եմ մեր տան սենյակներով:

Փաստեր սուսերամարտի մասին

Պատրաստության դիրքը (en garde) ոչ միայն պաշտպանական է, այլև հարձակողական: Այն, փաստորեն, պատրաստության դիրք է:

Մեզ պետք չէ բանալի կամ հրավիրատոմս՝ Աստծո սրահները մտնելու համար, այլ ընդամենը՝ երգ:

Երգի սկիզբը

Ելից 15-ում գրված է երգի խթանիչ ուժի մասին: Մինչ այս Աստվածաշնչում գրված էր երաժշտական գործիքների մասին, բայց ոչ՝ բառերի:

> «Ես կերգեմ Տիրոջը, որովհետև Նա փառավոր կերպով
> հաղթություն է տարել,
> ձիուն և նրա հեծյալին Նա գցել է ծովի մեջ:
> Տերն իմ զորությունն է և իմ երգը,
> և Նա դարձել է իմ փրկությունը.
> սա է իմ Աստվածը, և ես կփառաբանեմ Նրան,
> իմ հոր Աստվածը, և ես կմեծարեմ Նրան:
> Տերը՝ պատերազմող է,
> Տեր է Նրա անունը» (Ելից 15.1-3, ESV):

Այս հաղթական երգի մեջ Մովսեսը հռչակեց, որ Աստված իր զորության երգն էր:

Երբ մեծարում եք Աստծուն երգով, դուք հռչակում ենք Նրա իշխանությունը ձեր կյանքում: Երբ երգում եք Նրան, ձեր սիրտը բացվում է, և ձեր կյանքը լցվում է Նրա սքանչելիքներով: Ես նույնիսկ չեմ կարող հաշվել, թե քանի անգամ է երկրպագությունն ամբողջովին փոխել իմ պատկերացումը տարբեր իրավիճակներում: Լինում են պահեր, երբ ես այլևս չեմ դիմանում այն ամենին, ինչ տեղի է ունենում ինձ հետ: Օրինակ՝ ես լսում եմ սարսափելի լուր կամ տեղեկանում եմ որևէ պատահարի մասին, ինչը փորձում է վախ առաջացնել ինձանում: Եթե այդ հարձակումը չափազանց ուժգին է, ես մտնում եմ առանձին սենյակ և փակում եմ դուռն իմ ետևից, և ոչ միայն երգում եմ, այլև պարում եմ, մինչև որ զգամ պատասխանը՝ իմ իրավիճակին:

Այլ դեպքերում ես հիասթափություն եմ զգում, և եռանդս կորում է: Երբեմն անընդհատ ճանապարհորդելը կարող է մի փոքր

ապակողմնորոշեցնող լինել, բայց կա մի բան, որը ես մշտապես անում եմ: Երբ մտնում եմ իմ հյուրանոցային համարը, ամբողջ օրը ինքնաթիռներով և մեքենաներով ճանապարհորդելուց հետո, ես խափանում եմ հիասթափության մթնոլորտը երկրպագությամբ: Ես հնարավորինս արագ աղոթում եմ իմ սենյակի համար և դնում եմ ականջակալներս:

Շնորհիվ փառաբանության և երկրպագության երգերի, ես կարող եմ վերապրել երկնային մթնոլորտը՝ անկախ այն բանից, թե երկրագնդի որ մասում եմ գտնվում: Նման դեպքերում ես գիտեմ, որ եկել եմ ծառայելու, և հրաժարվում եմ թույլ տալ, որ տաղտկալի հյուրանոցային համարը մի քաղաքում, որը հեռու է իմ տնից, հիասթափություն առաջացնի ինձանում: Կամ, միգուցե, իմ սենյակը հաճելի է, բայց ես ֆիզիկապես և հոգևորապես սպառված եմ զգում ինձ, և ավելի շուտ ցանկանում եմ մի փոքր ննջել, քան քարոզել: Այդ ժամանակ ես գիտեմ, որ եկել է իմ պարգևը բորբոքելու ժամանակը:

> «Լցվե՛ք Հոգով՝ խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, երգե՛ք և սաղմոսե՛ք ձեր սրտերում Տիրոջը: Ամեն ժամանակ, ամեն բանի համար գոհացե՛ք Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով» (Եփես. 5.18-20):

Աստված մեծարվում է, երբ մենք երգում և հռչակում ենք Նրա իշխանությունը մեր իրավիճակում: Երբ Նա բնակվում է Իր ժողովրդի փառաբանության մեջ, մենք Նրա առջև ենք, և միևնույն ժամանակ Նա մեր ներսում է: Նրա համարձակությունը լցնում է մեր սրտերը, երբ դրանք հորդում են գոհությամբ:

Պատերազմական երգեր

Մի անգամ իսրայելցիների երգչախումբը պարտության մատնեց երեք անհավատալիորեն խոշոր բանակների, որոնք հավաքվել էին իրենց թագավորությունը կործանելու համար (տե՛ս Բ Մնաց. 20): Երբ Աստծո սուրբ ժողովուրդը բարձրացրեց իր ձայնը՝ փառաբանելով

իր անպարտելի Աստծուն, Նա շփոթեցրեց թշնամու բանակները և այնպես արեց, որ թշնամիները կոտորեցին իրար: Եվ ո՞րն էր Աստծո ժողովրդի ռազմավարական մարտակոչը:

> «Գոհությո՛ւն տվեք Տիրոջը,
> որովհետև Նրա սերը հավիտյան է» (Բ Մնաց. 20.21, NIV):

Ինչպիսի՞ բանակ կարող է պայքարել հարատևող սիրո դեմ: Այդպիսի բանակ չկա, որովհետև սերն անպարտելի է:

Ահա իմ սիրելի օրինակներից ևս մեկը այն մասին, որ Աստված պայքարում է մեր փոխարեն: Եսային գրում է.

> «Դուք երգ կունենաք
> սուրբ տոնի գիշերվա նման,
> և սրտի ուրախություն՝
> սրինգով գնացողի պես,
> որ գնում է Տիրոջ սարը՝ Իսրայելի Վեմի մոտ:
> Եվ Տերը լսել է տալու Իր ձայնի փառքը
> և Իր բազուկի իջնելը ցույց է տալու
> սաստիկ բարկությունով և լափող կրակի բոցով,
> հեղեղով, փոթորկով և կարկտի քարերով:
> Որովհետև Տիրոջ ձայնից զարհուրելու է ասորեստանցին,
> որ զարկում էր գավազանով:
> Եվ որոշված գավազանի ամեն հարվածը, որ
> Տերն իջեցնելու է նրա վրա,
> լինելու է թմբուկներով և քնարներով,
> և պատերազմելու է նրա հետ պատերազմներով՝
> շարժելով Իր ձեռքը» (Եսայի 30.29-32):

Իմ դերն այս «հավասարման» մեջ՝ *բերանս բացելը և երգելն է:* Բայց ես չեմ կարող պարզապես երգել: Ես պետք է երգեմ այնպես, ասես սա այն գիշերն է, երբ բարձրացել եմ Աստծո սարը, և դրա վեհ բարձունքներից կրկին ձեռք եմ բերում Նրա պես տեսնելու կարողությունը և հիշում եմ, թե որքա՜ն զարմանալի է Բարձրյալը: Երբ ես երգում եմ նման ցնծագին զորությամբ, Աստված բացում է իմ հոգու ականջները և աչքերը, որպեսզի ես լսեմ Նրա փառահեղ ձայնը և տեսնեմ, թե ինչպես է Նրա զորավոր ձեռքը բարձրացել՝ մարտնչելու համար: Նրա ձայնն ամրություններ է կործանում,

իսկ Նրա գավազանը վրա է հասնում թշնամուն: Այս ամենը տեղի է ունենում ժամանակակից երաժշտական գործիքների ձայնին համընթաց:

Ինչո՞ւ ենք մենք ընդամենը կիսով չափ դուրս քաշում մեր թրերը: Երբ մենք երկրպագում ենք միասնական ուրախությամբ, մեր ամբողջ կարողությամբ և զորությամբ, Աստված ջախջախում է թշնամուն Իր թրով:

Ինչպես գիտեք, մենք չենք կռվում մարմին և արյուն ունեցող թշնամիների դեմ: Մեր պայքարը խավարի անտեսանելի ուժերի դեմ է, որոնք կանգնած են լույսին, սիրուն, ճշմարտությանը, հավատքին, հույսին և խիզախությանը հակառակ՝ ցանկացած գործողության ետևում, որը տեղի է ունենում այս աշխարհում:

Աստծո խոստումների ամենաազդեցիկ փնջերից մեկը Եսայի 54-րդ գլխում է: Միայն այս գլխում մենք գտնում ենք Աստծո խոստումները ժառանգության, առատության, վերականգնման, փրկության, գթասրտության, հաստատ հիմք ունենալու, վախից ազատ լինելու, Աստծուց խրատված զավակ լինելու և թշնամուց պաշտպանված լինելու մասին: Եվ դուք կարող եք ստանալ այդ ամենը մեկ երգի դիմա՜ց:

««Երգի՛ր, ո՛վ ամուլ, որ չես ծնել,
բացականչի՛ր երգով և բարձրաձայն գոչի՛ր,
դու, որ երկունք չես քաշել:
Որովհետև լքվածի երեխաներն ավելի շատ կլինեն,
քան այն կնոջ, ով ամուսնացած է»,- ասում է Տերը»:
(Եսայի 54.1, ESV)

Երբ դուք երգում եք, ձեր կյանքի դռները բացվում են՝ Երկնքից մատակարարվելու համար: Երբ ես զգում եմ ինձ շղթայված, շրջապատված, սահմանափակված կամ պարզապես կապված այս երկրին, ես դուրս եմ քաշում իմ երգի թուրը և բարձրացնում եմ իմ ձայնը:

Ես նույնպես պարում եմ: Իսկ ինչո՞ւ ոչ: Պարելը՝ այն անհարմար գործողությունն է, որն առանձնացրեց Դավթին՝ որպես Աստ-

ծո մարդ, և միևնույն ժամանակ դարձավ նրա կին Մեղքողի անպտղության պատճառը:

> «Եվ երբ Տիրոջ տապանակը եկավ Դավթի քաղաքը, Սավուղի աղջիկը՝ Մեղքողը, պատուհանից նայելով տեսավ, որ Դավիթ թագավորը Տիրոջ առջև կաքավում և պարում էր, և նրան անարգեց իր սրտում» (Բ Թագ. 6.16):

Ձեր լսարանը մարդիկ չեն… այլ՝ Աստված: Դավիթը չէր կարողանում զսպել իրեն: Նա անսահմանորեն ուրախ էր, և այդ պատճառով անզուսպ կերպով պարում էր: Տապանակը վերադարձել էր, և այն խոստումը, որն Աստված տվել էր նրան, կատարվել էր: Երաժշտությունը կօգնի շարժել ձեր մարմինը, բայց դուք իսկապես կսկսեք պարել, երբ հիշեք, թե ինչ է Աստված արել ձեզ համար: Երբ բացեք ձեր սրտի դռները, որպեսզի գոհանաք և շնորհակալությամբ հաստատեք այն ամենը, ինչ Նա արել է, դուք կհպվեք Նրան: Գիշերով հնչած մեր երգերը շարժում են Աստծուն՝ գործելու ամբողջ օրվա ընթացքում: Երբ դուք երգեք, ձեր կյանքի միջավայրը բառացիորեն կթրթռա նոր սպասողականությամբ, թշնամու առաջընթացը կխափանվի, և դուք մուտք կգործեք Աստծո ներկայության մեջ:

Երբ դուք երգում եք, ձեր կյանքի դռները բացվում են՝ երկնքից մատակարարում ստանալու համար:

Երբ մենք երգում ենք, Աստված լսում է, և մենք սկսում ենք տեսնել, թե ինչպես են Նրա խոստումներն իրականանում մեր կյանքում:

• • •

Թանկագին երկնային Հա՛յր,

Ես պատրաստ եմ երգել՝ բերելով Քո առջև կյանքիս բոլոր կոտրված և անպտուղ բնագավառները: Ես հավատում եմ, որ երբ երգեմ Քեզ, Դու կլցնես իմ սիրտը հույսով և սպասումով, և հավատքս կբարձրանա, երբ արտահայտեմ իմ սերը Քո հանդեպ: Միայն Դո՛ւ կարող ես խորտակել թշնամու ստերը և ամրությունները Քո թագավորական իշխանությամբ և զորությամբ: Ների՛ր ինձ, որ պահել եմ այն փառքը, որը պատկանում է Քո անվանը: Այս պահից ի վեր ես որոշում եմ՝ լինել այդ հրեղեն թրի պես, որը պտտվում է ամեն կողմ: Եվ անկախ իմ հանգամանքներից՝ ես կերգեմ Քո փառքի, Քո սիրո և Քո ողորմության մասին, որոնք հավիտյան են, Հիսուսի անունով, ամե՛ն:

12

Լռության թուրը

Մի թուրը մյուսին պահում է պատյանի մեջ:

— Ջորջ Հերբերտ

Լռության թրի լավագույն օրինակը այն թուրն է, որը մնում է իր պատյանում: Սա այն թուրն է, որը կա, բայց դուրս չի հանվում: Այս թրի բռնակը երևում է, ինչը նշանակում է, որ այն կարող է դուրս քաշվել, բայց շեղբը թաքնված է, այսինքն՝ թուրը կրողը որոշել է պահել այն պատյանում:

Լռությունը՝ անտեսանելի թուր է, որովհետև այն չասված խոսք է կամ չձեռնարկած գործողություն: Երբ լռություն է պահանջվում, այն զենքերը, որոնք դուք կրում եք, պետք է թաքնված մնան: Այս թուրը գործածվում է, երբ մենք հրաժարվում ենք այն ամենից, ինչ ցանկանում ենք կամ կարող ենք անել, որպեսզի փրկենք և պաշտպանենք մեզ, և մեր մարմինն ու անձը դնում ենք մեր Թագավորի ոտքերի մոտ:

Լռությունը կարող է շատ բան նշանակել: Այն կարող է նշանակել, որ դուք իրականում չունեք պատասխան ձեր դեմ ուղղված հարցին, մեղադրանքին կամ հարձակմանը: Երբեմն մեզ հետ այնպիսի բաներ են տեղի ունենում, որոնք մենք բառացիորեն չենք հասկանում, և այդ պատճառով չգիտենք՝ ինչպես արձագանքել դրանց: Լռությունը նույնպես նշանակում է, որ դուք պատասխան ունեք, բայց որոշել եք չխոսել: Եթե թուրը դուրս չի հանվում, ուրեմն միգուցե ինչ-որ բան կանգնեցրել է մեր ձեռքերը: Ես չեմ խոսում այն մասին, երբ վախը



կաշկանդում է ձեզ, այլ՝ երբ Աստված շշնջում է. «Հանձնի՛ր սա Ինձ»: Հանդարտ մնալը հաճախ ավելի շատ ուժ է պահանջում, քան հարվածելը:

Հանդարտ և լուռ լինելը՝ լավագույն վիճակն է, որում մենք կարող ենք լինել, երբ Աստծուց լսելու կարիք ունենք: Բացի այդ՝ կա ժամանակ, երբ հանդարտ և լուռ լինելը դառնում է լավագույն դիրքորոշումը, որը մենք կարող ենք ունենալ, որպեսզի Աստված կարողանա հայտնել Իրեն այլ մարդկանց: Երկու դեպքերում էլ անհրաժեշտ է վերահսկել մեր անձերը: Մեր ժամանակակից մշակույթում այս հատկանիշն անվանում են ինքնավերահսկողություն. «Քանդված անպարիսպ քաղաք է այն մարդը, որ չի զսպում իր ոգին (կամ՝ անձը)» (Առակ. 25.28):

Եթե մեր անձերն անպաշտպան են մնացել մեր անհոգ բառերի կամ գործողությունների պատճառով, ապա լուռ մտորման և ապաշխարության ժամանակը կարող է վերականգնել այն, ինչ կողոպտվել է (այս մասին՝ մի փոքր անց):

Այլ դեպքերում մենք հայտնվում ենք վտանգավոր հանգամանքներում, որոնք չեն առաջացել մեր պատճառով: Մենք հնազանդվել ենք Աստծուն և հետևել ենք Նրա առաջնորդությանը, և արդյունքում հայտնվել ենք լույսի և խավարի լարված պայքարի մեջտեղում:

Հավանաբար, լավագույն աստվածաշնչյան օրինակն անբարենպաստ հանգամանքներում և անհավասար ուժերով պայքարելու մասին Իսրայելի զավակների ելիցն է Եգիպտոսից՝ նրանց ստրկության երկրից:

Մի շարք պատուհասներից և որոշ բանակցություններից հետո, Աստված միջամտեց և ուղարկեց կործանիչին, ով սպանեց Եգիպտոսի բոլոր առաջնեկներին: Վշտաբեկ փարավոնը ազատ արձակեց Իսրայելցիներին, որպեսզի նրանք գնային և երկրպագեին իրենց Աստծուն: Այնուամենայնիվ, Աստված կրկին խստացրեց փարավոնի սիրտը, և նա մտափոխվեց՝ ուղարկելով իր ամբողջ բանակային ուժը երկրից հեռացող Իսրայելցիների դեմ:

Բնական է, որ իսրայելցիները շատ վախեցան, երբ տեսան, թե ինչպես էին կառքերը և ձիերը հետապնդում իրենց: Փարավոնին հանցավոր համարելու փոխարեն, նրանք մեղադրեցին Մովսեսին՝ ասելով, որ նա դուրս էր բերել իրենց անապատ, որպեսզի սպաներ այդտեղ: Թվում էր՝ ամեն ինչ կորած էր, և չկար ոչ մի ելք: Համաձայն առողջ դատողության՝ նրանք ծուղակի մեջ էին. նրանց առջև նշմարվում էր ահռելի ծովը, իսկ ետևում՝ աշխարհի լավագույն բանակը: Համոզված եմ՝ դուք հիշում եք, որ մեր զարմանալի Աստված դիտարկում է անելանելի որոգայթները՝ որպես հնարավորություններ: Իսրայելը հենց այնտեղ էր, որտեղ Աստված ցանկանում էր, երբ Մովսեսը համարձակ հռչակեց.

> «Մի՛ վախեցեք, կանգնե՛ք և տեսե՛ք Եհովայի փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար, որովհետև ձեր այսօրվա տեսած եգիպտացիներին այլևս չպիտի տեսնեք հավիտյան: Եհովան ձեզ համար պիտի պատերազմի, և դուք *լուռ* կացեք» (Ելից 14.13,14, շեղագիրն ավելացված է):

Դուք համաձա՞յն եք, որ դժվար է լուռ մնալ այն պահերին, երբ ուժգին վախ եք զգում:

Կարդալով այս տողերը՝ ես հիշեցի «*Տասը պատվիրաններ*» ֆիլմի էպիկական պատկերը: Պտտվող կրակե սյունը, որն առաջնորդում էր նրանց, փոխեց ուղղությունը՝ գնալով դեպի իսրայելցիների խմբի ետևի կողմը, որպեսզի խոչընդոտեր եգիպտական բանակի առաջխաղացումը: Ամբողջ գիշեր այդ կրակե պատնեշը թույլ չտվեց եգիպտացիներին՝ մոտենալ ծովի ափին: Այդ ընթացքում Աստծո քամին բաժանում էր Կարմիր ծովը և չորացնում էր ծովի հատակը՝ ստեղծելով տիղմից ազատ ճանապարհ, որով Իսրայել ժողովուրդը կարող էր փախչել:

Որպես դիտորդ՝ ես մտածում եմ. «*Զարմանալի՜ է: Խոսք չկա*»:

Բայց հրաշքն այդքանով չավարտվեց: Այն բանից հետո, երբ իսրայելցիներն ապահով անցան ծովի մյուս կողմը, եգիպտացիներն սկսեցին հետապնդել նրանց: Ամենահարմար պահին Աստված թողեց Կարմիր ծովի ջրերը և միանգամից թաղեց ամբողջ եգիպտական բանակը:

Արդյո՞ք այս աննման հրաշքն էր, որը ոգեշնչեց Մովսեսին՝ երգել իր երգը, իսկ Մարիամին և բոլոր կանանց՝ միանալ նրան ծնծղաներով և պարով:

Ակնհայտ է՝ երբ Տերը պատերազմում է ձեզ համար, դուք ընդամենը պետք է հանդարտ և լուռ մնաք, մինչև գա հաղթանակը տոնելու ժամանակը: Ամեն ինչ պարզ է թվում, այնպես չէ՞: Այո՛, բայց ես *չէի* ասի, որ սա հեշտ է:

Շատ անգամ ես հազիվ եմ զսպել ինձ, որ չխոսեմ: Ինչպես արդեն գիտեք, մեր պայքարների մեծ մասը բաղկացած չէ կրակի և ջրի էպիկական դրսևորումներից: Չկա քամի, որը ճանապարհ է բացում տեսանելի ծովի միջով: Չկա կրակի սյուն, որը լուսավորում է մեր գիշերը և ետ է պահում թշնամու բանակը: Մեր թշնամին չի հետապնդում մեզ կառքերով և նիզակներով: Նրա հարձակումներն ավելի աննկատ են, և գրեթե բոլոր դեպքերում նա զինված է աղավաղված ստերով, մեկուսացում բերող լուրերով և կաշկանդող վախով:

Միակ աղի ջուրը հարյուրավոր կիլոմետրերի վրա կարող են լինել մեր աչքերի արցունքները, իսկ միակ կրակե սյունը՝ մեր սրտերում առկայծող կրակը: Բայց, միևնույն է, մենք խոստում ունենք, որ Նա պահպանում է մեր թիկունքը ոչ թե այն պատճառով, որ Նա հանձնարարել է հրեշտակներին՝ հսկել մեզ, այլ որովհետև Նա մեր թիկնապահն է: Նա վստահեցրել է, որ երբեք չի թողնի և չի լքի մեզ:

Նայենք Մովսեսի հորդորանքին այլ կողմերից.

> «Մովսեսը խոսեց ժողովրդի հետ. «Մի՛ վախեցեք: Հաստա՛տ կանգնեք և նայե՛ք, թե ինչպես է այսօր Աստված կատարում Իր փրկութան գործը ձեզ համար: Այսօր մի լավ նայեք եգիպտացիներին, որովհետև դուք այլևս չեք տեսնելու նրանց:
> Աստված կպայքարի այս մարտի մեջ ձեր փոխարեն:
> Իսկ դո՞ւք: Դուք փակ պահեք ձեր բերանները»»:
> (Ելից 14.13,14, MSG)

Եվ կրկին.

> «Մովսեսը պատասխանեց ժողովրդին. «Մի՛ վախեցեք: Հաստա՛տ կանգնեք և կտեսնեք այն փրկությունը, որը Տերը կբերի ձեզ այսօր: Այն եգիպտացիներին, ում դուք այսօր տեսնում եք, այլևս չեք տեսնի: Տերը կպայքարի ձեր փոխարեն. դուք միայն պետք է հանդարտ լինեք» (խոսքեր 13,14):

Այս խոսքերում կրկնվող հաջորդականություն կա: Նախ և առաջ՝ մեր մտքից չպետք է վախենանք: Մենք պետք է դուրս մղենք վախի ցանկացած նշույլ և թույլ չտանք, որ այն կեղտոտի մեր մտածելակերպը: Հաջորդը՝ մեզ պատվիրված է հաստատ կանգնել և պահպանել մեր դիրքը: Սա նշանակում է, որ մենք չենք փախչում, տեղի չենք տալիս կամ չենք հրաժարվում մեր հավակնություններից, այլ հաստատ կանգնած ենք մնում այնտեղ, որտեղ կանք: Երբ այս երկուսը կատարվեն, մենք կտեսնենք Աստծո հրաշքները: Նա հրավիրում է մեզ՝ տեսնել Աստծո փրկությունը մեր կյանքում, և ավելին՝ պատրաստվել զարմանալ դրանով:

Ինձ դուր է գալիս, թե ինչպես Մովսեսը պատկերավոր փոխեց ամբողջ ազգի կարծիքն իրենց իրավիճակի մասին: «Նայե՛ք այս թշնամուն վերջին անգամ, որովհետև դուք այլևս չեք տեսնելու նրան: Եվ մինչ դուք տեսնում եք Աստծո զորության և հավատարմության զարմանալի դրսևորումը, դուք պետք է հանդարտ և լուռ լինեք: Չպետք է լինի ոչ մի ծաղրանք, ճիչեր կամ հարցեր. պարզապես վայելեք այս ամենը լռության մեջ»:

Երբ պայքարները կամ թշնամիները չափազանց մեծ են մեզ համար, Աստված հնարավորություն ունի հայտնելու Իրեն՝ որպես Փրկիչ: Մենք ետ ենք քաշվում, իսկ Նա միջամտում է՝ հայտնելով Իր կարողությունը, հավատարմությունը և զորությունը:

Փաստեր սուսերամարտի մասին

Սուսերամարտի արվեստը սովորեցնում է վերահսկել ձեր գործողությունները: Այն ինքնավերահսկողություն է սովորեցնում:

Ելից գրքում գրված այս պատմությունից իմանում ենք, որ Աստված միտումնավոր և շարունակաբար խստացնում էր փարավոնի սիրտը, որպեսզի հայտ-

ներ Իր փառքը Եգիպտոսում, և Իր անունը՝ ամբողջ երկրի վրա: Այս փրկությունը Եգիպտոսից՝ հանրահայտ դարձրեց Աստծուն և Նրա զավակներին: Այս իրադարձությունը ազգերին ցույց տվեց զորության և ուխտի Աստծուն և հավիտյան առանձնացրեց Աբրահամի սերունդներին: Մինչ այս, Իսրայելը ստրկացված ազգ էր և ապրում էր անհայտության մեջ ազատ, բարգավաճ և ազդեցիկ Եգիպտոսում:

Ավելի ուշ, Իսրայելի պատմության ընթացքում նրանք կրկին բախվեցին անհաղթահարելի հակառակության՝ այս անգամ հայտնվելով Ասորեստանի թագավորի ձեռքում: Նա առաջարկեց Իսրայելի զավակներին՝ անսուրբ դաշինք կնքել իր հետ, և խոստացավ առատորեն ապահովել նրանց հացով և գինով այն գերության երկրում, որտեղ նա տանելու էր նրանց: Լսե՛ք նրա սպառնալիքները և ուշադրություն դարձրեք, թե որքանով էր նրա պարծենկոտությունը առիթ տալիս, որ Աստված ցույց տար Իր զորությունը՝ օգնելով Իր ժողովրդին:

> «Միգուցե Եզեկիան ձեզ խաբի՝ ասելով, թե «Եհովան մեզ ազատելու է»: Մի՞թե փրկեցին այն ազգերի աստվածները՝ ամեն մեկն իր երկիրը Ասորեստանի թագավորի ձեռքից... Ո՞րն է այս երկրների բոլոր աստվածներից, որ ազատած լինեն իրենց երկիրն իմ ձեռքից, որ Եհովան էլ Երուսաղեմն ազատեր իմ ձեռքից» (Եսայի 36.18-20):

Ինչպե՞ս Եզեկիա թագավորը պատվիրեց իր ժողովրդին՝ պատասխանել այս ամբարտավան և անողորմ զավթիչին:

> «Եվ նրանք լռեցին և պատասխան չտվեցին, որովհետև թագավորը հրաման էր արել՝ ասելով. «Նրան չպատասխանե՛ք»»: (Խոսք 21)

Այն, որ մարդիկ լուռ էին, չէր նշանակում, որ նրանք չէին հուսահատվել: Հեռանալով Ասորեստանի թագավորի ներկայությունից, որի նպատակն էր՝ վախեցնել իրենց, նրանք հուսահատությունից պատռեցին իրենց հանդերձները և սուրհանդակներ ուղարկեցին՝ պատմելու նրա սպառնալիքներն իրենց երկրի թագավորին: Եզեկիան բերեց այդ ամենը Տիրոջ առջև՝ հետևյալ խնդրանքով.

> «Այնպես որ, ո՛վ Տեր, մեր Աստվա՛ծ, փրկի՛ր մեզ այս ձեռքից, որ երկրի *բոլոր* թագավորություններն իմանան, որ միայն Դու ես Տերը» (Եսայի 37.20, ESV):

Ինձ դուր է գալիս այս աղոթքը: Այն ցույց է տալիս, որ մեր պայքարը շատ ավելի ծավալուն է, քան մենք ի վիճակի ենք պատկերացնել: Սա հակամարտություն չէր երկու ազգերի միջև, այլ ևս մեկ հայտնություն միակ ճշմարիտ Աստծո մասին: Այս ազգերն այդպես էլ չհանդիպեցին մարտի դաշտում, որովհետև Աստված այլ մարտավարություն ուներ:

> «Ահա Ես նրա վրա մի ոգի կուղարկեմ, և նա մի լուր կլսի և ետ կդառնա իր երկիրը, և Ես սրով կսպանեմ նրան» (Եսայի 37.7):

Նա, ով պարծենում էր, որ մեծ համբավ ուներ ազգերի մեջ, մի լուրի զոհ դարձավ: Ինձ դուր է գալիս այս օրինակը, որովհետև հաճախ մենք գայթակղություն ենք ունենում անձամբ պատերազմ վարել՝ պատասխանելով լուրերին և բամբասանքներին, բայց այդ դեպքում մենք պարտվում ենք, նույնիսկ, երբ երևակայում ենք, որ հաղթել ենք:

Խոսքն արծաթ է, լռությունը՝ ոսկի:

— Հին եգիպտական ասացվածք

Հիշե՛ք. երբ Աստված կանգնած է ձեր թիկունքին, ձեր ապագան նման է ոսկու:

Անհատական պայքարներ

Իսկ ի՞նչ այն դեպքում, երբ պայքարն անհատական է:

Իրականում, չգիտեմ, թե քանի անգամ է եղել, որ Աստված զինված և պատրաստ է եղել իմ փոխարեն կռվելու համար, իսկ ես խափանել եմ Նրա հրաշագործ փրկությունն իմ բերանով:

Անկեղծ ասած՝ միգուցե ամենից դժվարն ինձ համար հենց լռության թուրը գործածելն է, սակայն ժամանակի ընթացքում ես ավելի շատ եմ բացահայտում դրա շեղբը պատյանի մեջ պահելու

անհրաժեշտությունը: Թվում է՝ սպառանալիքի առջև լուռ մնալն արդեն հակասում է պաշտպանական դիրքին, հատկապես եթե հաշվի առնենք, որ հաճախ անհրաժեշտ է լռել այն ժամանակ, երբ ձեզ մեղադրում են կամ նվաստացնում:

Առակաց գիրքը խոստանում է մեզ. «Կրակը հանգչում է առանց փայտի, և վեճերն անհետանում են, երբ բամբասանքը դադարում է» (26.20, NLT):

Անհրաժեշտ է լուռ մնալ, մինչև որ փայտի վերջին կտորը լիովին այրվի, իսկ ժամանակի քամին ցրի ընդհարման մոխիրը:

Երբեմն լռությունը նշանակում է՝ հեռանալ այն խոսակցություններից, որոնց պատճառով դուք կարող եք վտանգի ենթարկվել: Այլ դեպքերում այն նշանակում է՝ հրաժարվել բացել մեր բերանը, երբ մյուսները, թվում է, չեն կարողանում փակել իրենցը: Հաճախ ամենաազդեցիկ զենքերն ամենից դժվար է կրել: Մեր լեզուն կարող է լինել կործանարար զենք կամ բժշկության միջոց: Ես չեմ խոսում մարդկանցից վիրավորվելու և նրանց հետ չխոսելու մասին. ես շատ լավ տեղյակ եմ, թե ինչպես է դա լինում: Ես խոսում եմ այն մասին, որ դուք հեռանում եք՝ առանց որևէ բան ասելու կամ անելու, թեև շատ բան եք ցանկանում ասել և անել:

Վերջերս Ջոնը և ես նորովի հայտնաբերեցինք լռության զորությունը: Ինչպես և բոլորը, մենք պաշտպանված չենք բամբասանքից: Մարդիկ խոսում են: Երբեմն պատճառը չարակամությունն է, բայց կան դեպքեր, երբ նրանք պարզապես փորձում են պարզել, թե ինչ է տեղի ունեցել: Նման մի դեպք պատահեց, երբ մարդիկ անընդհատ հարցնում էին մեզ մի չլուծված խնդրի մասին, որը կապ ուներ մեզ հետ: Այդ թեման սկսեց քննարկվել թե՛ մեր ընկերների, թե՛ անծանոթ մարդկանց կողմից: Սկզբում մենք լուռ էինք: Հետո սկսեցինք զգուշորեն և խելամտորեն պատասխանել հարցերին, բայց այդ բամբասանքն այնպիսի լայն տարածում գտավ, որ թվում էր՝ անիմաստ էր զգուշորեն ընտրել մեր բառերը, երբ այլ մարդիկ խոսում էին առանց մտածելու: Ինչո՞ւ մենք չպետք է ներկայացնեինք տեղի ունեցածը մեր տեսանկյունից:

Մի օր տեղի ունեցավ հերթական միջադեպը, որն, իմ կարծիքով,

ամենից անարդարն էր: Ինձ թվաց, որ բոլոր թույլատրելի սահմաններն արդեն խախտվել են, և ես պարզապես սկսեցի խոսել:

Կարո՞ղ եմ անկեղծ լինել: Սկզբում բացեիբաց խոսելը հաճելի էր: Ինչպիսի՜ թեթևություն զգացի, երբ վերջապես ասացի այն ամենը, ինչ մտածում էի: Թվում էր՝ դիմացիններս ավելի թեթևացած էին զգում իրենց՝ մեր տեսանկյունն իմանալուց հետո: Հավատացե՛ք ինձ՝ այս փուլը խիստ կարճատև էր. շուտով ես դադարեցի զգուշորեն և կշռադատված խոսելուց՝ լիովին անզգույշ դառնալով: Ասես մի անջրպետ կոտրված լիներ, և ես չէի կարողանում կրկին վերահսկել ամբողջ ջուրը: Ես տարածվում և հոսում էի առվակներով ու գետակներով՝ հասնելով այնպիսի տեղեր, որտեղ բոլորովին մտադրված չէի գնալ:

Իմ ունկնդիրներն արդեն իմ ստեղծած տիղմոտ գետի մեջ էին և կորցնում էին իրենց կոշիկներն այդ գետի ցեխի մեջ: Որքան ավելի էր շարունակվում այդ անկարգությունը, այնքան ես ավելի էի ցանկանում մեղադրել մյուս կողմին՝ այդ ցեխի սահանքին սկիզբ դնելու համար: Շատ չանցած ես հասկացա, որ ջուրը բարձրացել էր մինչև ծնկներս: Թե՛ ես, թե՛ Զոնը չափից շատ էինք խոսել և հայտնվել էինք ցեխաջրի մեջ:

Երկուսս էլ տարբեր նահանգներում էինք, երբ հասկացանք սա: Մենք խոսեցինք հեռախոսով և միասին աղոթեցինք: Մենք ապաշխարեցինք՝ ներողություն խնդրելով և խոստովանելով մեր հանցանքները այնքան, որքան կարող էինք, բայց այդ պահից ի վեր «սո՛ւս» բառը դարձավ մեր նոր սիրելի բառը:

Դավթի լռության թուրը

Եթե մենք դեռ կասկածներ ունեինք այն մասին, թե արդյո՞ք մեր որոշումը ճիշտ էր, դրանք փարատվեցին հաջորդ օրը՝ կիրակնօրյա ծառայության ժամանակ: Այդ օրը մենք հրավիրել էինք մի քարոզչի, ում մասին ես երբեք չէի լսել: Նա սկսեց կիսվել փայլուն մտքերով Դավթի և Սավուղի մասին՝ նկարագրելով, թե ինչպես էր Դավիթը վարվում, երբ նրա մասին սխալ տեղեկություններ էին հայտնում Սավուղին, երբ Սավուղն էր սխալ տեղեկություններ տարածում նրա

մասին, երբ Սավուղը հետապնդում էր նրան, երբ Սավուղը ներեց նրան, ինչից հետո կրկին սկսեց սխալ տեղեկություններ տարածել նրա մասին, և կրկին հետապնդում էր նրան մի քարայրից՝ մյուսը և մի թաքստոցից՝ մյուսը: Դավիթն ապացուցում էր իր անմեղությունը և հավատարմությունը՝ փոխարենը ստանալով նոր ստեր և հետապնդումներ:

Ես շատ լավ գիտեի այս պատմությունը և այնպես էի զգում ինձ, ասես բազմաթիվ անգամներ վերապրել էի նույնը:

Այդ հյուր-քարոզիչը կանգ չառավ դրանով: Նա շարունակեց բացատրել, թե ինչպես Դավիթը գրեթե դարձավ այն, ինչից փախչում էր: Հոգնած բոլոր կռիվներից՝ Դավիթը հույս ուներ, որ հանգրվան էր գտել՝ պաշտպանելով Նաբաղի մարդկանց և ոչխարներին: Դավիթն ուղարկեց իր երիտասարդներից մի քանիսին՝ հարցնելու, թե արդյո՞ք նրանք կարող էին մասնակցել ոչխարները խուզելու տոնակատարությանը: Կարելի է մտածել, որ Դավիթը պարզապես ցանկանում ներգրավված լինել ինչ-որ բանում:

Նրա խնդրանքը չստացավ լավ ընդունելություն: Նրան ոչ միայն արգելեցին մասնակցել տոնակատարությանը, այլև վիրավորանք հասցրին:

> «Եվ Նաբաղը Դավթի ծառաներին պատասխանեց և ասաց. «Դավիթն ո՞վ է, և Հեսսեի որդին ո՞վ է. այս օրերը իրենց տերերի երեսից փախչող ծառաները շատացել են…»: Եվ Դավթի երիտասարդներն իրենց ճանապարհը դարձան և գնացին, այս բոլոր խոսքերը նրան պատմեցին» (Ա Թագ. 25.10,12):

Ինչպե՞ս դուք կզգայիք ձեզ: Դավթին անպատվեցին իր մարդկանց առջև, ինչպես նաև կասկածանքով վերաբերվեցին՝ մեղադրելով նրան, որ փախել էր իր տիրոջից: Լսելով սա՝ Դավիթը բարկացավ և, կարելի է ասել, մի փոքր խիստ արձագանքեց.

> «Եվ Դավիթն իր մարդկանց ասաց. «Ամեն մարդ իր սուրը մեջքը կապի», և ամեն մարդ իր սուրը մեջքը կապեց, և Դավիթն էլ իր սուրը մեջքը կապեց, և Դավթի ետևից չորս հարյուրի չափ մարդ դուրս եկավ, և երկու հարյուր մարդ մնացին կարասիների մոտ» (խոսք 13):

Դավթի համբերության բաժակը լցվել էր: Նա արդեն կուշտ էր մեղադրանքներից այն մասին, որ ինքն ապստամբ ծառա էր, թեև նա հավատարմորեն ծառայում էր Աստծուն: Նա չէր փախել. նրան վտարել էին: Նաբաղն իր վրա էր բերում Դավթի զայրույթը, որը կուտակվել էր տարիներ տևող հիասթափության արդյունքում: Դավիթն այնքա՜ն հուսալքվեց, որ նույնիսկ վիճարկեց, որ աստվածապաշտությունը վարձք ունի:

> «Եվ Դավիթն ասել էր. «*Ուրեմն զուր տեղն եմ անապատի մեջ այս մարդու բոլոր ունեցած բաները պահել, և նրա բոլոր ունեցածից մի բան չկորավ*, բայց նա ինձ լավության փոխարեն վատություն է անում: Աստված Դավթի թշնամիներին այսպես և սրանից ավելի անի, եթե մինչև էգուց առավոտ նրա մարդկանցից մեկ արու մարդ ողջ թողնեմ»» (խոսքեր 21,22, շեղագիրն ավելացված է):

Դավիթը պաշտպանող հովվից վերածվեց այնպիսի առաջնորդի, ով պատրաստ է սպանել բոլորին: Այսպես վարվելը շատ հեշտ է, երբ դուք մոռանում եք, որ ձեզ վարձատրողն Աստված է, ոչ թե մարդը: Քանի որ Դավիթն առաջնորդ էր, նրա բոլոր մարդիկ լսեցին նրան և միացան իրենց վիրավորված ղեկավարին: Նրանք, առանց վարանելու կամ հարցեր տալու, ցատկեցին իրենց ձիերի վրա՝ թրերը մեջքներին կապած:

Այստեղ ես կարող եմ մի եզրակացություն անել. այն, որ բոլորը հետևում են ձեր առաջնորդությանը, դեռ չի նշանակում, որ դուք ճիշտ եք: Մարդիկ հետևում են առաջնորդներին, և չնայած որ Դավիթը մեծ առաջնորդ էր, նա իմաստության կարիք ուներ, որովհետև նա մոտ էր իր կյանքի շատ դժվար մի ժամանակահատվածի ավարտին:

Ինչպե՞ս Դավիթը հայտնվեց նման վիճակում:

Հնարավոր է, որ նա թույլ տվեց, որ այդ ծաղրող մարդու բառերն աղավաղեին իր տեսիլքը: Այս վիրավորանքն ու զրպարտությունն սպառնում էին հեռացնել նրան իր ընթացքից: Տարիներ շարունակ ամեն իրավիճակում Աստծուն վստահելուց հետո, Դավիթը պատրաստվում էր անձամբ տնօրինել ստեղծված իրավիճակը:

Եթե զգոն չլինեք, ապա լսելով այն, ինչ մարդիկ ասում են ձեր մասին՝ դուք կարող եք մոռանալ, թե ով եք իրականում:

Կարևոր չէր, թե քանի անգամ Դավիթն ապացուցեց իր անմեղությունը Սավուղին. այդպես նա չէր կարողանա ստանալ գահը: Գահն այլևս Սավուղինը չէր, և նա չէր կարող տալ այն ոչ ոքի, քանի որ թագավորությունը վերցվել էր նրանից: Աստված պատրաստում էր Դավթին: Նա մաքրում էր նրան՝ օգտագործելով մերժվածությունը՝ նույն փորձությունը, որում Սավուղը ձախողվեց:

Բոլորիս կյանքում էլ կան մարդիկ, ովքեր քննադատում և շեղում են մեզ: Ես չգիտեմ կյանքի մի բնագավառ, որը զերծ է մնում մարդկանց կարծիքներից: Մենք պետք է որոշում կայացնենք, որ թույլ ենք տալու այդ քննադատներին՝ մաքրել մեզ, *ոչ թե* որոշել, թե ով ենք մենք: Դավիթը չէր օծվել Սամուելից, որպեսզի սպաներ Սավուղին և Նաբաղին. նա օծվել էր, որպեսզի դառնար Իսրայելի թագավորը: Աստծո խոստման իրականացումն արդեն մոտ էր, և նա գրեթե կորցրեց ամեն ինչ՝ հիմար Նաբաղի պատճառով, ով շեղեց նրան:

Լսելով այն, ինչ մարդիկ ասում են ձեր մասին՝ դուք կարող եք մոռանալ, թե ով եք իրականում:

Ընդունե՛ք սա որպես զգուշացում. հիմարները կհայտնվեն, որպեսզի հեռացնեն ձեզ ճանապարհից հենց այն ժամանակ, երբ դուք գրեթե հասել եք այնտեղ, որտեղ Աստված ցանկանում է: Ի՞նչ են ասում հիմարները: Նրանք վիճարկում են Աստծո գոյությունը և ներկայությունը: Նրանք ասում են. «Աստված քեզ հետ չէ», «Աստվածապաշտությունն անօգուտ է» կամ «Աստված չի գործում քո փոխարեն» և այլն:

Դավիթը սարսափելի պատասխան կտար Նաբաղի «Ո՞վ է Դավիթը» հարցին, եթե սպաներ այն մարդկանց, որոնց կարճ ժամանակ առաջ պաշտպանում էր:

Եվ ի՞նչ եք կարծում, նման արարքից հետո քանի՞ այդպիսի տոնակատարությունների կհրավիրվեին Դավիթը և իր մարդիկ: Կարծում եմ՝ ոչ մի: Դավիթը թույլ կտար, որ Նաբաղի հիմար խոսքը որոշեր, թե ով էր ինքը:

Փա՜ռք Աստծուն Աբիգեայի համար՝ այդ խիզախ կնոջ, ում

մեջքին կապած էր իմաստության թուրը: Նա ընկավ Դավթի առջև՝ դրանով իսկ պատվելով այն ամենը, ինչ իր ամուսինն անպատվել էր: Եվ դրանից հետո նա հիշեցրեց Դավթին, թե ով էր նա և ում էր պատկանում:

> «Որովհետև Տերը իմ տիրոջ համար անպատճառ հաստատ տուն պիտի շինի, որովհետև իմ տերը Տիրոջ պատերազմները պատերազմեց, և քո օրերում քեզ վրա մի չարություն չգտնվեց: Բայց թեև քեզ հալածելու և քո անձը որոնելու համար մեկ մարդ է վեր կացել, իմ տիրոջ հոգին քո Տեր Աստծո առջև կյանքի ծրարի մեջ ծրարված պիտի լինի, բայց քո թշնամիների հոգիները Նա կշպրտի՝ պարսատիկի միջից դուրս եկածի պես: Եվ երբ որ Տերը բոլոր քեզ համար ասած բարությունները իմ տիրոջն անի, և քեզ Իսրայելի վրա թագավոր նշանակի, սա քեզ համար գայթակղություն և իմ տիրոջ սրտի համար խիղճ չլինի, թե՝ առանց պատճառի արյուն թափեցիր, կամ իմ տերն ինքն իրեն օգնեց, և երբ որ Տերը իմ տիրոջը բարություն անի, այն ժամանակ քո աղախնին հիշես» (խոսքեր 28-31):

Այս հատվածում կան բանալի սկզբունքներ, որոնք անհրաժեշտ են բոլորիս.

1. Միայն Տերն է հաստատում տները:
2. Եթե մենք ապրենք՝ հնազանդվելով Աստծո Հոգու ցուցումներին, Աստված կպաշտպանի մեզ:
3. Աստված գիտի, թե ինչպես հաշվեհարդար տեսնել մեր թշնամիների հետ:
4. Մենք երբեք չպետք է օգտագործենք մեր դիրքն Աստծո մեջ՝ ինքներս մեզ պաշտպանելու համար:
5. Մենք չպետք է անձամբ տնօրինենք այն ամենը, ինչը վերաբերում է դատաստանին և փրկությանը. երկուսն էլ պատկանում են մեր Աստծուն:

Բարեբախտաբար, Աբիգեայի բառերը կանգնեցրին Դավթին, և նա հիշեց Աստծո ձեռքը և խոստումներն իր կյանքում: Շատ ժամանակ չանցած, այրիացած Աբիգեան դարձավ Դավթի հարսնացուն, իսկ մերժված ծառան թագավոր դարձավ:

Լռությունը այն տարրն է, որում կազմվում են մեծ բաները, որպեսզի դրանք, ի վերջո, կարողանան ի հայտ գալ՝ լիովին ձևավորված և վեհ կերպով, դեպի Կյանքի լույսը, որում նրանք այնուհետև իշխելու են:

— Թոմաս Քարլայլ

Նոր տեսակի զենք

Սիրելի մայրե՛ր, քույրե՛ր, դուստրե՛ր և ընկերնե՛ր, հնարավոր է, որ ինչ-որ մեկը վիրավորանք է հասցրել ձեզ: Միգուցե ձեր հանդեպ զրպարտիչ մեղադրանքներ են ներկայացրել: Խնդրում եմ, հավատացե՛ք ինձ՝ ես հասկանում եմ: Բայց մի՞թե դուք իսկապես ցանկանում եք թույլ տալ, որ ինչ-որ մեկի վիրավորանքը կամ սխալը խափանի ձեր կյանքի կոչումը: Դուք ձգտում եք հարվածել, բայց այն թուրը, որը ձեր ձեռքում է, և որը ձեր կարծիքով օծված է, կոչվում է վրիժառություն, և դուք չէ, որ պետք է գործածեք այն: Տեղադրե՛ք ձեր թուրը պատյանի մեջ և ցա՛ծ դրեք այն:

Արդյո՞ք դուք զայրանում եք, որովհետև մի կնոջ կողքին եք, ում զրպարտել և անարգել են: Անմիջապես հիշեցրեք նրան Աստծո խոստումների մասին և հորդորեք՝ հանդարտ մնալ և հետևել, թե ինչպես է գործում Աստված՝ մեր թիկնապահը: Իմ ընկե՛ր, մինչ դուք գնում եք դեպի Աստծո նպատակը, Նա կհաստատի ձեր տունը և կհոգա ձեր մասին: Մի՛ փորձեք պատկերացնել, թե ինչ կկատարվի այն մարդկանց հետ, ում դուք թշնամիներ եք համարում: Աստված արդեն հարթել է ամեն ինչ. հանգիստ եղեք՝ իմանալով, որ միայն Նա է արդար դատավորը: Ժամանակն է, որ հրաժարվենք ինքնապաշտպանության կեցվածք ընդունելուց: Աստված պայքարում է մեզ համար, մինչ մենք պայքարում ենք այլ մարդկանց համար:

Վերցրե՛ք այլ տեսակի զենք՝ թուր, որը կոչվում է *լռություն:* Այս թուրը մնում է պատյանի մեջ: Հենց այս թուրն էր, որը Հիսուսը մեծ վարպետությամբ պատյանի մեջ դրեց: Նա հրաժարվեց դուրս քաշել հենց այս զենքը: Լռության միջոցով Նա փրկեց մեր կյանքերը՝ դնելով Իր կյանքը: Պատկերացրեք, թե ինչ էր նշանակում

լուռ մնալը՝ իմանալով, որ ամբողջ Երկնքի կարողությունը Իր տրամադրության տակ էր ցանկացած պահին, երբ Նա բարձրացներ Իր ձայնը կամ ձեռքը: Պատկերացրեք, թե ինչ էր նշանակում լուռ լինել, երբ այս աշխարհի խղճուկ իշխանները ծաղրում էին իրենց Արարչին: Պատկերացրեք, թե ինչ էր նշանակում սուտ մեղադրանքներ ստանալ, երբ Նա արդարության մարմնացումն էր (տե՛ս Հովհ. 5.22): Հիսուսը լուռ չէր այն պատճառով, որ պատասխան չուներ: Հիսուսը լուռ էր, որովհետև հենց Ինքն էր պատասխանը:

> «Դրանից հետո քահանայապետը կանգնեց և ասաց Հիսուսին. «Ինչ է, մի՞թե չես պատասխանելու այս մեղադրանքներին: Ի՞նչ ունես ասելու Ինքդ Քեզ համար»: Բայց Հիսուսը լուռ մնաց» (Մատթ. 26.62,63, NLT):

Ո՛չ մի բառ, շշնջոց, ծանր հոգոց, գլխի շարժում կամ խեթ հայացք: Պարզապես լռություն… գառան պես: Այնպես չէր, որ Հիսուսն ասելիք չուներ, բայց Նա որոշեց ոչինչ չասել:

Նույն կերպով, երբեմն մեզ թվում է, որ մենք այնքա՜ն ասելու բան ունենք: Մեր հանդեպ սուտ մեղադրանքներ են ներկայացրել, մեզ սխալ են հասկացել, և նույնիսկ բերել են այնպիսի մարդկանց առջև, որոնց չի հետաքրքրում ճշմարտությունը: Պահե՛ք ձեր մտադրությունները ձեր ներսում և տեսե՛ք, թե ինչպես է Աստված պատասխանում: Երբ կասկածյալներին ձերբակալում են, նրանց զգուշացնում են. «Դուք ունեք ոչինչ չասելու իրավունք»: Այս զգուշացումը նրանց պաշտպանության համար է, որպեսզի նրանք մեղադրանք չբերեն իրենց վրա՝ առանց իրավաբանական խորհրդատվություն ստանալու: Երբեմն բոլորս էլ կարիք ունենք լսելու, որ լուռ մնալը՝ մեր իրավունքն է:

Բռնությունից հրաժարվելը՝ ազդեցիկ և արդար զենք է, որը կտրում է՝ առանց վերք հասցնելու, և ազնվացնում է իրեն գործածող մարդուն: Այն թուր է, որը բժշկում է:

— Մարտին Լյութեր Քինգ Կրտ.

Եթե Հիսուսը՝ Աստծո Որդին և միակ Անմեղը, օգտվեց լուռ մնալու իրավունքից, երբ հրաժարվեց պաշտպանել Ինքն Իրեն՝ չնայելով մահվան սպառնալիքին, անկասկած՝ մենք կարող ենք անել նույնը, քանի դեռ ապրում ենք: Հիսուսը լուռ քայլ արեց և զբաղեցրեց մեր տեղը՝ պայքարելով մեզ համար:

Թեև Նա անմեղ էր, մեր մեղքը դրվեց Նրա վրա՝ հանդերձի պես, և Նա չցանկացավ հանել այն:

> «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցինք,
> յուրաքանչյուրն իր ճանապարհին դարձավ,
> և Տերը Նրա վրա դրեց
> մեր ամենի մեղքը:
> Նա անհրավություն կրեց և չարչարվեց,
> բայց Իր բերանը չբացեց՝
> ինչպես մի ոչխար, որ մորթվելու է տարվում,
> և ինչպես մի մունջ մաքի իր խուզողների առջև,
> այնպես Իր բերանը չբացեց» (Եսայի 53.6,7):

Աշխարհը շրջվեց Նրանից, Ով ճանապարհ պատրաստեց: Իրականում, Հիսուսն Իր լռությամբ խոսեց ամենից բարձր: Երկրային խոսքեր պետք չէին, երբ երկնային Խոսքը կանգնած էր նրանց առջև՝ լուռ, մինչ նրանք դատապարտում էին իրենք իրենց, որպեսզի Նրանով բոլորը փրկվեին:

Ո՞ր պայքարի ժամանակ է անհրաժեշտ պատասխանել ձեր լռությամբ: Պարզապես ուշադրություն դարձրեք ձեր կյանքի այն բնագավառներին, որտեղ ձեզ համար դժվար է լռելը:

> «Որ նախատվելիս՝ փոխարենը չէր նախատում, չարչարվելիս՝ չէր սպառնում, բայց դատաստանը հանձնում էր արդար դատավորին» (Ա Պետր. 2.23):

Արդյո՞ք պատրաստ եք հանդարտ կանգնել և նայել՝ վստահելով Աստծուն սպառնալիքների, վիրավորանքների և խարդավանքների դեպքում: Արդյո՞ք պատրաստ եք անել սա մշտապես, շարունակաբար և, նույնիսկ, ամեն օր՝ ձեր կյանքի որոշ փուլերում: Իմ քույրե՛ր, մենք կարող ենք անել սա, որովհետև Նա արդեն քայլել է մեր առջևից և ճանապարհ է բացել:

• • •

Թանկագին երկնային Հա՛յր,

Ես գալիս եմ Քեզ մոտ Հիսուսի անունով: Այսօր որոշում եմ կայացնում հրաժարվել իմ կարծիքն արտահայտելու իրավունքից և օգտվում եմ լուռ լինելու իրավունքից: Սուրբ Հոգի, շնորհի՛ր ինձ իմաստություն, որպեսզի իմանամ՝ երբ լռել և երբ խոսել: Խոսի՛ր ինձ հետ, մինչ ես լռեցնում եմ իմ անձը Քո առջև: Ների՛ր ինձ, որ երբեմն հետևել եմ բամբասանքներին: Ես հնազանդվում եմ Քո իմաստությանը և կղեկավարեմ իմ անձը Քո Խոսքի խորհրդով: Այլևս թույլ չեմ տա, որ մարդկանց կարծիքները որոշեն, թե ինչպիսին եմ ես: Դու տվեցիր Քո կյանքը՝ ինձ պաշտպանելու համար, և միայն Դու ես ճշմարտությունը և արդարությունը: Ների՛ր ինձ, որ երբեմն գործել եմ իմ իմաստությամբ, և միտումնավոր ասել եմ՝ ինչ մտածել եմ: Ե՛կ ամեն պայքարի մեջ, որն այժմ սպառնում և ճնշում է ինձ: Ես կդադարեմ բորբոքել հակամարտությունների կրակը: Ես վստահում եմ Քեզ, երբ թշնամու հարձակումներն սպառնում են պարտության մատնել ինձ: Ես կպահպանեմ իմ դիրքը լռությամբ և համոզված լինելով, որ Դու արդեն հաղթել ես այս պայքարը, Հիսուսի անունով, ամե՛ն:

13

Ներման և վերականգնման թուրը

Երբեմն, պարտվելով որևէ պայքարում,
դուք նոր ժանապարհ եք ձեռք բերում՝
պատերազմը հաղթելու համար:

—Դոնալդ Տրամպ

Պատկերացրեք մի թուր, որը հենած է գահին: Այս թուրը մի պահ կողքի է դրված, որպեսզի հետագայում գործածվի ավելի մեծ նպատակի համար: Հաղթող թագավորները պահանջում էին հավատարիմ ծառայություն այն ասպետներից, ովքեր մի ժամանակ պատերազմում էին իրենց դեմ: Նոր թագավորության կազմում գտնվող յուրաքանչյուր ազնվական կանգնում էր թագավորի առջև և ցած էր դնում իր թուրը, իսկ հետո երեսնիվայր պառկում էր իր նոր տիրոջ ոտքերի մոտ: Երբեմն թագավորը դնում էր իր ոտքն ասպետի վզին: Այս դիրքով ասպետը հավատարիմ ծառայության երդում էր տալիս իր նոր տիրոջը, մինչև իր թուրը կրկին ստանալը:

Այս գլխում մենք հնարավորություն ունենք ստուգելու մեր շարժառիթները: Կարևոր է պարզել՝ արդյո՞ք մենք պայքարում ենք ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի դեմ, թե՞ իրապես պայքարում ենք ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար:

Օրինակ՝ դուք կարող եք դեմ լինել արհեստական վիժեցմանը, բայց դա դեռ չի նշանակում, որ դուք կյանքի կողմնակից եք: Այլ բան

է՝ պաստառներ պահել արհեստական վիժեցման հիվանդանոցի առջև, և բոլորովին այլ բան է՝ բացել ձեր սիրտը և տունը միայնակ մոր կամ անցանկալի երեխայի համար: Միգուցե դուք դեմ լինեք մարդասպանությանը, բայց իրականում չցանկանաք անել այն, ինչ պահանջվում է՝ կյանքը պահպանելու համար:

Այս տեսակի փոփոխությունները մեր շարժառիթների մեջ տեղի են ունենում այն ժամանակ, երբ մենք հասկանում ենք, որ նվիրված ենք ավելի մեծ նպատակի, քան մեր սեփական իրավունքները և կարծիքները: Թեև մեզ վստահվել է Հոգու թուրը, բայց մենք զինված չենք վնաս հասցնելու համար: Մենք ազատ ենք արձակում գերիներին և բանտարկյալներին, ոչ թե ահաբեկում և գերում ենք նրանց: Մենք միշտ կարող ենք անել ավելին:

Մեր զենքերը կռված չեն մեր երկրագնդի ապականվող նյութերից, այնպես որ մենք չենք վարում մեր պատերազմը՝ համաձայն մեր ծննդյան մոլորակի կանոնների: Զենքերը պետք է գործածվեն համաձայն իրենց ստեղծման վայրի կանոնների, իսկ մեր զենքերն այնտեղից են, որտեղ թրերի «մետաղը» մաքրվում է ճշմարիտ լույսի մեջ, և շեղբի եզրերն անթերի կերպով սրվում են՝ միաժամանակ կտրելու և բժշկելու համար: Սա է պատճառը, որ այս ակնառու հոգևոր զենքերը բարձրացնելու շարժառիթները նույնպես պետք է մաքրվեն:

Գաղատացիների գրքում բերված է մարդկային զենքերի և դրդապատճառների սպառիչ ցուցակ. կախարդություն, ատելություն կամ թշնամություն, զայրույթի կամ բարկության բռնկումներ, չարախոսություն, բաժանություններ կամ պառակտումներ, հերձվածություններ, նախանձ և սպանություն: Բոլոր այս երկրային գործիքները և դրանց նպատակները կապված են մարդկության անկման հետ:

Պողոս առաքյալը ցույց է տալիս, որ մեր զորության նպատակը բոլորովին հակառակ է այս «կեղտոտ» զենքերի ներգործությանը.

> «Որովհետև եթե մի ավելի բան պարծենալու լինեմ մեր իշխանության համար, որ Տերը տվեց մեզ՝ ձեր շինության և ոչ թե կործանման համար, չեմ ամաչի» (Բ Կորնթ. 10.8):

Մենք չենք պայքարում կործանելու համար, այլ՝ կառուցելու: Այն իշխանությունը, որը Երկինքը տվել է մեզ, չարը կործանելու համար է՝ բարին գործելու միջոցով: Պարզապես այն փաստը, որ ես ավելի քան երեք տասնամյակ կրում եմ Աստծո Խոսքի թուրը, դեռ չի նշանակում, որ ես միշտ պատշաճ կերպով եմ գործածել այն: Երբեմն զայրույթով ճոճել եմ այդ թուրը՝ խոցելով այն, ինչը բժշկության կարիք ուներ: Այլ դեպքերում, ես թողել եմ այդ թուրը պատյանի մեջ, երբ պետք է դուրս հանեի այն և կտրեի գերիների կապանքները:

Երբ երեխաներս փոքր էին, իմ թուրը երկար ժամանակ դրված էր անկողնուս կողքին և ասես ննջում էր: Ես բացում էի Աստվածաշունչը, որպեսզի կարդայի Սաղմոսների գրքից, բայց աննկատ ննջում էի: Ամիսներ շարունակ զգուշորեն խուսափում էի գործածել իմ թրի սուր եզրերը՝ իմ զբաղված կյանքի մեջ թափանցելու համար:

Այս գլխում ցանկանում եմ ձեզ անցկացնել մի երկարատև անձնական սուսերամարտով, որը լի էր անհաջողություններով, բայց, ի վերջո, ավարտվեց հաղթությամբ:

Քրիստոնյա դառնալուց կարճ ժամանակ անց ես հասկացա, որ Աստված կանչել էր ինձ այլ մարդկանց ծառայելու համար: Ես սկսեցի լրջորեն պատրաստվել, թեև նույնիսկ գաղափար չունեի, թե ինչպիսին պետք է լիներ իմ ծառայությունը: Ես կարդում էի Աստվածաշունչս, գնում էի եկեղեցի ամեն անգամ, երբ դռները բացվում էին, հաճախում էի սեմինարների և ծառայում էի: Այդ բազմաթիվ ծառայություններից մեկի ժամանակ մի հյուր-քարոզիչ մեծ համոզվածությամբ հռչակեց, որ եթե ձեր ամբողջ ընտանիքը փրկված չէ, իմաստ չունի, որ քարոզեք Աստծո Խոսքն այլ մարդկանց: Նրա տրամաբանությունը հետևյալն էր. եթե ձեր անձնական կյանքը չի համոզել ձեր մտերիմներին, որ Ավետարանը ճշմարիտ է, ինչո՞ւ ուրիշները պետք է լսեն ձեզ: Հետագայում ես իմացա, որ այդ ավյունով ասված բառերն այնքան էլ ճիշտ չէին, բայց այդ պահին ես շատ լրջորեն ընդունեցի դրանք:

Քանի որ իմ հոր կյանքը շատ հեռու էր փրկությունից, ես սկսեցի ավելի շատ աղոթել նրա համար: Նա *կորած հեթանոսի* դասական օրինակ էր: Նա անդադար ծխում էր, չափից շատ խմիչք էր օգտագործում և չէր կարողանում կապել նույնիսկ մեկ նախադասություն՝ առանց հայհոյանքի: Իմ պատկերացումը նրա մասին հետևյալն էր. նա մշտապես դավաճանում էր մորս, և լքել էր իր երեխաներին:

Ջոնը և ես ապրում էինք Դալլասում, և առաջին անգամ, երբ հայրս այցելեց մեզ, ես մի կերպ եկեղեցի տարա նրան: Ամբողջ ծառայության ընթացքում ես անընդհատ նայում էի հորս՝ հուսալով, որ նա կզգար իր մեղքի ծանրությունը, կհասկանար իր դստեր անհավանությունը և կվերապրեր Սուրբ Հոգու հանդիմանությունը: Ես չէի ցանկանում, որ նա նույնիսկ կասկածի նշույլ ունենար այն պահին, երբ հովիվը տար վերջին հարցը. «Որտե՞ղ դուք կհայտնվեիք, եթե մահանայիք այս երեկո»:

Ես ենթադրում էի, որ նա գոնե կխոնարհեցներ գլուխը և կմտորեր, բայց փոխարենը նա նայեց քարոզչին արհամարհական հայացքով՝ կարծես թե ասելով. «Ես ուղիղ դժոխք եմ գնում, և դու էլ կարող ես այդտեղ գնալ»:

Հայրս ոչինչ չասաց ինձ ապաշխարության հրավերի ժամանակ, և նույնիսկ չշարժվեց: Ես հուսահատվեցի և փորձեցի քարշ տալ նրան խորանի մոտ՝ բռնելով նրա ձեռքը: Նա նողկանքով ետ հրեց ձեռքս: «*Միգուցե նա չի հասկանում, թե որքան լուրջ է սա*»: Ես մոտեցա նրան և շշնջացի՝ փորձելով բացատրել. «Հայրի՛կ, Հիսուսը միակ ճանապարհն է: Եթե չաղոթես այս աղոթքը, դու դժոխք կգնաս»:

Այս հայտնությունը չարժանացավ ջերմ ընդունելության: Որքան հիշում եմ, դրան հետևեց հայհոյանքների մի տեղատարափ: Ցանկացած դուռ նրա սրտում, որը ես բաց էի համարում, փակվեց և ամուր կողպվեց:

Հայրս թեթևություն զգաց՝ վերադառնալով իր անհոգ կյանքին արևոտ Ֆլորիդայում, և թողնելով Տեխասում իր դստերը, ով հետապնդում էր իրեն Աստվածաշնչով:

Չցանկանալով այդքան հեշտորեն հանձնվել՝ ես կապ հաստատեցի իմ ընկերուհիներից մեկի ընկերների հետ

Ֆլորիդայում՝ տալով նրանց հորս հեռախոսահամարը: Հավատքս բարձրացավ, երբ աղոթեցի՝ խնդրելով, որ լիովին օտար մարդիկ դառնային կատարյալ մշակներ հորս համար:

Երբ այս փորձը նույնպես ձախողվեց, ես որոշեցի, որ ժամանակն էր գործի դնել ծանր սպառազինությունը:

Ամբողջ շաբաթ ես տրամադրվեցի, որպեսզի աղոթեի և ծոմ պահեի հորս դարձի գալու համար: Ես չէի պատրաստվում հանձնվել: Ես քայլում և աղոթում էի, երեսնիվայր պառկում էի հատակին և աղաղակում էի, ծնկի էի գալիս անկողնուս մոտ բաց Աստվածաշնչով և կրկնում էի Աստծո խոստումները: Կարճ ժամանակ անց սկսեցի շարունակ նայել հեռախոսին՝ ցանկանալով, որ այն զանգահարեր: Ես անհամբեր սպասում էի, որ կլսեի հորս ձայնը, ով կպատմեր ինձ, թե ինչպես էր փրկվել սատանայի իշխանությունից:

Հեռախոսն այդպես էլ չզանգահարեց, բայց ես լսեցի իմ Հոր ձայնը: Իմ երկնային Հայրը մի հարց շշնջաց իմ հոգում. «*Լի՛զա, դու գիտե՞ս, որ ես սիրում եմ քո հորն ավելի շատ, քան դու*»:

Ամենայն անկեղծությամբ, այդ պահին այս հայտնությունը մի փոքր ցնցեց ինձ, այնպես որ, ես լուռ մնացի: Շշնջոցը շարունակվեց. «*Ես ցանկանում եմ, որ նա Ինձ հետ լինի, շատ ավելի, քան դու: Լի՛զա, հանձնի՛ր նրան Ինձ… դու չես կարող փրկել նրան*»:

Այդ ժամանակ Աստված հիշեցրեց մի խոստում Իր Խոսքից. «*Մի՞թե ես չասացի. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես դու և քո տունը» [Գործք 16.31]: Սա Իմ խոստումն է քեզ՝ հորդ համար: Հավատա՛ դրան և դադարի՛ր վարվել տարօրինակ կերպով: Պարզապես սիրի՛ր նրան*»:

Ես բացեցի Աստվածաշունչս և ընդգծեցի այս խոսքը Գործք առաքելոց գրքում՝ ամբողջությամբ հուսալով Նրա Խոսքին:

Հավատքը՝ գիտակցաբար վստահություն է
Աստծո բնավորությանը,
Ում ժանապարհները դուք միգուցե չեք
հասկանում տվյալ պահին:

— Օսվալդ Չեմբերս

• • •

Այդ դեպքից ոչ շատ անց ես ծննդաբերեցի մեր առաջնեկին՝ էդիսոնին: Մեր ընտանիքը տեղափոխվեց Ֆլորիդա և հաստատվեց նույն քաղաքում, որտեղ ապրում էր հայրս: Անմիջապես մեր երկրորդ որդու ծնունդից առաջ, հայրս կորցրեց իր աշխատանքը և տեղափոխվեց Ֆլորիդայի ափամերձ տարածքը, որտեղ հասնելու համար մենք պետք է մի քանի ժամվա ճանապարհ գնայինք մեքենայով: Նա հույս ուներ կրկին սկսել ամեն ինչ, բայց իր տարիքի տղամարդու համար նոր աշխատանք գտնելը շատ դժվար էր: Հայրս, ով մի ժամանակ պատվերներով առանձնատներ և քաղաքամերձ ակումբներ էր կառուցում, հանկարծ դարձավ շենքերի տեխնիկական սպասարկման հասարակ աշխատող: Նա ընկավ ընկճվածության գիրկը և սկսեց խմիչք օգտագործել ոչ միայն գիշերը, այլև ամբողջ օրվա ընթացքում: Նա այլևս չէր այցելում մեզ, իսկ երբ մենք էինք այցելում նրան, նա արդեն արբած էր լինում: Այդ այցելությունները վախեցնում էին երեխաներիս: Նրանք չէին հասկանում, թե ինչո՞ւ հայրս պարզ չէր խոսում, ինչո՞ւ էր նա աղմկում, զառանցում և անվանում իրենց մորն իր նախկին կնոջ անունով:

Հանկարծ մի տարի՝ դեկտեմբեր ամսին, ամեն ինչ փոխվեց: Սուրբ ծննդյան հաջորդ օրը մենք ներս մտանք այն տան ետնամուտքից, որտեղ հայրս ապրում էր իր ընկերուհու հետ: Մենք սպասում էինք, որ նա նստած կլիներ ետնամուտքի պատշգամբում, բայց փոխարենը գտանք մի երկտող, որը կցաժապավենով փակցված էր շարժական ապակե դռանը: Ցռմռված տառերով գրված էր հետևյալը. «Ներողությո՛ւն, ես այլ ծրագրեր ունեմ»:

Այդ երկտողը հասցեագրված չէր ինչ-որ մեկին, և ներքևում գրված չէր ոչ մի անուն: Անմիջապես տնից դուրս գալուց մի քանի ժամ առաջ մենք զանգահարել էինք նրան և ասել, որ կրկին այցելելու էինք նրան: Այլ ծրագրե՞ր: Ես ապշած կանգնել էի՝ սեղմելով այդ խզբզած թղթի կտորը ձեռքումս: Ես լսում էի, թե ինչպես էին երեխաները հարցնում. «Որտե՞ղ է հայրիկդ»:

Նայելով մեր առջևի լողափին՝ ես պատկերացրի, որ հայրս կանգնած է հեռվում և ծիծաղում է մեզ վրա: Ես չգիտեի՝ ինչ ասել: Ջոնը պատասխանեց մեր տղաների հարցին, մինչ մենք տանում էինք նրանց դեպի մեքենան:

Ես կոտրված և խայտառակված էի զգում ինձ: Շարունակ ներողություն էի խնդրում Ջոնից և իմ տղաներից: Մինչև տուն հասնելը ես մի քանի անգամ լաց եղա: «*Ջոնի ծնողների մտքով նույնիսկ չէր անցնի փախչել ինչ-որ բար, հատկապես, եթե նրանք իմանային, որ իրենց երեխաները և թոռները հյուր էին գալու իրենց*»:

Հինգ ժամը մեքենայի մեջ՝ երկար ժամանակ է, հատկապես եթե ճանապարհորդությունը խափանվել է, իսկ մայրիկը ամբողջ ճանապարհին լաց է լինում: Մեր երկու տղաները կամաց թփթփացնում էին ուսս և փորձում էին մխիթարել. «Ամեն ինչ լա՞վ է: Մայրի՛կ, ամեն ինչ լավ է»:

Ես փորձեցի ձևացնել, որ ամեն ինչ լավ էր, բայց շատ վատ էի զգում ինձ:

Հաջորդ օրը Ջոնն ուղևորվեց Շվեդիա: Նրան ճանապարհելուց հետո ես տուն վերադարձա օդանավակայանից, ուղարկեցի տղաներիս բակ, երկրպագության երաժշտություն միացրի և պառկեցի հատակին, որպեսզի աղոթեի և մի քանի հարցեր տայի Աստծուն: «*Ինչո՞ւ իմ հայրը չի սիրում ինձ: Ինչո՞ւ նա չցանկացավ շփվել իմ երեխաների հետ: Ե՞րբ կկատարվի Քո խոստումը*»:

Ես լաց էի լինում գորգի վրա: Հանկարծ հասկացա… *Ես անհա՛յր էի:* Իմ հայրը չէր մահացել, բայց ես չէի կարող որևէ կերպով «անհանգստացնել» նրան: Նա չէր ցանկանում կապ ունենալ ինձ հետ: Ես բարձրաձայն արտահայտեցի մտքերս և սկսեցի ավելի ուժգին լաց լինել, բայց հենց այն պահին, երբ մուտք գործեցի «լացի գոտու» մեջ, լսեցի այն, ինչ կարող եմ մեկնաբանել միայն որպես Աստծո ծիծաղ: Այդ ձայնն այն աստիճան անհամապատասխան էր իմ տրամադրությանը, որ ես բարձրացրի գլուխս և նայեցի շուրջս: Հանկարծ լսեցի Նրա շշնջոցը. «Դու լիովին սխալ ես պատկերացնում ամբողջ իրավիճակը: Դու տեսնում ես մերժում, իսկ ես՝ որդեգրություն»:

Ի՞նչ:

«Երբ քո հայրը բոլորովին լքեց քեզ, դու կատարելապես որդեգրվեցիր Իմ կողմից: Ինչ-որ իմաստով, հայրդ հրաժարվեց բոլոր իրավունքներից քո և քո երեխաների հանդեպ: Այժմ մեր միջև չկա ոչ մի արգելք: Դու կատարելապես Ի՛մն ես»:

Իսկապե՞ս: Մի՞թե իմ լսողությունը չէր խաբում ինձ:

«Եթե Ջոնն ինչ-որ կարիք ունենա, նա կարող է զանգահարել իր հորը: Եթե դու ինչ-որ կարիք ունենաս, անմիջապես ե՛կ Ինձ մոտ»:

Դե ինչ, հրաշալի՜ է:

Այն պահին, երբ ես հասկացա, որ անհայր էի, ես բացահայտեցի, որ որդեգրված էի: Այնպիսի զգացում ունեի, որ Աստված ոգեշնչվածությամբ էր կիսվում ինձ հետ այս մասին: Հանկարծ հայտնաբերեցի, որ ծիծաղում էի այս զարմանալի հայտնության պատճառով: Ես սրբեցի արցունքներս, ոտքի ելա և բարձրացրի ձեռքերս ու սկսեցի երկրպագել: Միայն ճշմարիտ, բարի Հայրը կարող էր այսպես հոգալ իմ մասին:

Այդ պահից ի վեր ես որևէ բան չէի սպասում իմ հորից: Նա պարտք չէր ինձ ոչինչ՝ ո՛չ այցելություններ, ո՛չ հավանություն, ո՛չ սեր, ո՛չ պարգևներ, և ո՛չ էլ՝ բարի խոսքեր:

Այս հայտնությունն ստանալուց կարճ ժամանակ անց, մեր ընտանիքը Ֆլորիդայից տեղափոխվեց Կոլորադո, և մենք սկսեցինք հազվադեպ այցելել հորս: Քանի որ հայրս շատ էր խմիչք օգտագործում, ես այլևս ապահով չէի զգում ինձ, երբ այցելում էի նրան: Մինչև մեր վերջնական տեղափոխվելը, ես հրավիրեցի հորս՝ մնալ մեր տանը՝ մեզ հրաժեշտ տալու համար: Նա կտրականապես հրաժարվեց: Այնպես որ, ես հեռացա Ֆլորիդայից՝ դեռևս ապավինելով Աստծո խոստմանը՝ որ հայրս փրկված է լինելու:

● ● ●

Հաջորդ անգամ, երբ եղբայրս՝ Ջոին, և ես այցելեցինք հորս, նա չէր հիշում ինձ: Նրա զգայական ընկալումը վնասվել էր՝ տարիներ շարունակ խմիչքը չարաշահելու պատճառով: Գրեթե ամբողջ ընթացքում նա ենթադրում էր, որ ես նրա նախկին ընկերուհիներից կամ կանանցից մեկն էի: Երբ նա վերջապես հասկացավ, որ ես

նրա դուստրն եմ, ոտքից գլուխ չափեց ինձ և շնորհակալություն հայտնեց քաշս կորցնելու համար: Ակնհայտ էր, որ նա զարմացած էր, թե որքան կլորադեմ էի ես վերջին Սուրբ Ծննդյան բացիկի վրա, որը նա տեսել էր: Տասնհինգ տարեկանում ինձ մոտ սննդային խանգարում կառաջանար այս մեկնաբանության պատճառով:

Ես փորձեցի ցույց տալ նրան որդիներիս լուսանկարները և պատմել նրանց մասին, բայց նա չէր ցանկանում լսել դա: Եղբայրս սկսեց նկարահանել նրան, որպեսզի ես կարողանայի տանել տեսանյութն ինձ հետ և ցույց տայի տղաներիս, բայց նա հայհոյեց և մի կողմ հրեց տեսախցիկը: Հեռանալիս ես կեղտոտ և հիասթափված էի զգում ինձ:

Տուն թռչելիս ես լսեցի, թե ինչպես Աստված ևս մեկ անգամ շշնջաց Սաղմոս 45-ի խոստումները:

> «Լսի՛ր, աղջի՛կ, և տե՛ս, խոնարհեցրո՛ւ քո ականջը
> և մոռացի՛ր քո ժողովուրդը և քո հոր տունը:
> Եվ ապա թագավորը կցանկանա քո գեղեցկությանը,
> որովհետև Նա՛ է քո Տերը, երկրպագություն արա Նրան»:
> (Խոսքեր 10,11)

Ես գիտեի, որ այլևս չէի խոնարհվելու այն պատկերացմանը, որն իմ հայրը տվել էր ինձ: Ես այլևս տեղի չէի տալու այդ ճնշմանը. ես իմ Թագավորի փափագն էի:

Տարիներն անցնում էին, և հորս խելագարությունն ավելի էր զարգանում, մինչև որ նրա ընկերուհին ստիպված եղավ տեղավորել նրան խիստ ռեժիմով բժշկական հաստատությունում:

Վերջին անգամ այցելեցի նրան 2009 թվականի դեկտեմբեր ամսին: Ես բերեցի ինձ հետ իմ առաջնեկին՝ Էդիսոնին, նրա գեղեցկուհի կնոջը՝ Ջուլիաննային, և նրանց նորածին որդուն՝ Աշերին: Ես ցանկանում էի, որ հայրս տեսներ իր առաջին թոռնիկին: Երբ մենք եկանք նրա բժշկական հաստատությունը, ես լուսանկարներ շարեցի նրա սեղանի վրա՝ հուսալով, որ նա կկարողանար հիշել, թե ովքեր էինք: Լուսանկարներից մեկում հայրս

էդիսոնի հետ էր, երբ էդիսոնը մեկ տարեկան էր: Ես ցույց տվեցի այն երիտասարդին, ով խոյանում էր հորս կողքին, և բացատրեցի, որ նա իմ որդին է՝ նրա թոռը: Հայրս գլխով արեց և մեղմորեն վերցրեց լուսանկարը՝ փորձելով յուրացնել իմ բոլոր ասածները:

Ես գրեթե տեսնում էի, թե ինչպես էին հորս հիշողության թելերը հյուսվում՝ պատկերելով իր ընտանիքի կտավը: Նա բարձրացրեց գլուխը և նայեց վեր՝ հերթով զննելով ինձ, Ջուլիին, Աշերին և էդիսոնին: Հանկարծ ես հասկացա, որ նրա համար ամեն ինչ պարզ էր: Նա հանդարտորեն շարժեց գլուխը և մատնացույց արեց էդիսոնին այն լուսանկարի մեջ, որն իր ձեռքում էր: Երբ նա ճանաչեց մեզ, ես ևս մեկ անգամ կարողացա տեսնել նրան այդ տկար մարմնի մեջ՝ այնպիսին, ինչպիսին նա մի ժամանակ էր: Այդ մարդը մեզ հետ էր, բայց ես չգիտեի, թե որքա՞ն ժամանակով:

Ես լուռ աղոթք բարձրացրի. «*Երկնային Հա՛յր, ի՞նչ պետք է ասեմ*»:

Նա անմիջապես պատասխանեց. «*Ասա՛ նրան, որ նա լավ հայր էր*»:

«*Ի՞նչ»,*- շփոթվելով ընդդիմացա ես, - «*Դա սո՛ւտ է: Ես չեմ ստելու նրան… առավել ևս՝ ո՛չ հիմա: Նա լավ հայր չէ՛ր*»:

Ես լսեցի Նրա հավաստիությունը. «*Նա այնքանով էր լավը, որքանով գիտեր»:*

Ես թերահավատորեն վիճեցի. «*Նա կարող էր սովորել՝ ինչպես դառնալ ավելի լավը»:* Իմ միտքը ճանապարհորդեց ետ՝ դեպի մեր հարևանները, ում հետ նա կարող էր ընկերանալ, և այն գրքերը, որոնք նա կարող էր կարդալ: Որքան հիշում եմ՝ նա նույնիսկ չէր փորձում փոխվել:

Փաստեր սուսերամարտի մասին

Երբ երկու հմուտ սուսերամարտիկներ մարտնչում են, նրանք ավելի շատ կռվում են իրենց մտքերով, քան իրենց ձեռքերով:

Իմ հակառակությունը հանդիպեց լռության: Տասնամյակների ընթացքում ես սովորել եմ, որ Աստված չի վիճում: Ես կարող էի վիճել այնքան, որքան ցանկանայի, բայց, ի վերջո, Նրա վերջնական պատասխանն այն էր, ինչ Նա ասաց վերջին անգամ: Ժամանակն էր, որ օգտագործեի վերականգնման թուրը՝ բժշկելու համար:

Ես խորը շունչ քաշեցի, մոտեցա և բարձրացրի հորս ձեռքերը՝ գրավելու համար նրա ուշադրությունը, և կրկնեցի այն, ինչ լսել էի. «Հայրի՛կ, դու լավ հայր ես եղել»:

Հայրս ցնցվեց: Նրա մարմնով ասես սարսուռ անցավ, և աչքերը լցվեցին արցունքներով: Նա համբուրեց ձեռքերս և մեծ դժվարությամբ ասաց հետևյալ երկու բառերը. «Շնորհակա՛լ… եմ»:

Այս երկու բառերից ամեն ինչ փոխվեց: Ծերանոցի սենյակի ճնշված մթնոլորտը թեթևացավ. ես հասկացա, որ հորս սիրտը բացվեց: Ջուլիաննան սկսեց լաց լինել, իսկ Էդիսոնն արագորեն քայլեց՝ կանգնելով հորս աթոռի ետևում: Բոլորս սկսեցինք աղոթել հորս համար՝ համաձայն Գործք առաքելոց գրքի խոստման, որն Աստված տվել էր ինձ շատ տարիներ առաջ: Մենք գոհացանք Աստծուց իմ հոր փրկության համար և չեղյալ դարձրինք ցանկացած պարտավորություն, որը նա կարող էր զգալ մեր հանդեպ՝ համաձայն Հովհաննես 20.23-ի.

> «Որոնց մեղքը որ թողնեք, թողված կլինի նրանց, որոնցը որ պահեք, պահված կլինի»:

Ամբողջ աղոթքի ընթացքում հայրս սեղմում էր ձեռքերս՝ ի նշան համաձայնության, և շարունակում էր համբուրել: Դա սիրո և ներման սուրբ պահ էր: Նրա շարժումները մաքուր և անմեղ էին՝ երեխայի շարժումների պես: Այն անպարկեշտ վերաբերմունքից, որը ես ստացա նրանից նախորդ այցելությունների ժամանակ, նույնիսկ հետք չկար:

Երբ մեր աղոթքն ավարտվեց, հայրս զգալիորեն հոգնել էր: Ջուլիաննան մնաց Աշերի հետ, իսկ Էդիսոնը և ես ուղեկցեցինք նրան դեպի նրա աղքատիկ կահավորված սենյակը, պառկեցրինք մահճակալին և ծածկեցինք: Ես մոտեցա բուժքրոջը՝ ստուգելով, թե արդյո՞ք իմ կոնտակտային տվյալները նրա մոտ ճիշտ էին: Մինչ ես լրացնում էի գրանցման քարտը, որը նա պետք է ավելացներ հորս գործին, հայրս դուրս եկավ իր սենյակից: Ես ձայն տվեցի նրան, բայց նա քայլեց անմիջապես իմ կողքով՝ ասես մենք անծանոթ էինք, և նստեց մի խումբ կանանց հետ, ովքեր դիտում էին *Լուրենս Վելկի հեռուստաշոուի* կրկնողությունը: Ինչ-որ բան կատարվեց այդ

ընթացքում, երբ մենք միասին էինք, բայց հորս գիտակցությունը կրկին մթագնեց:

Անցավ մեկ տարի. 2010 թվականի Սուրբ Ծնունդն էր: Ես հիշում եմ, որ ամեն անգամ հորս մասին մտածելով՝ մտահոգվում էի: Ես արթնանում էի գիշերվա կեսին և մտածում էի, որ միգուցե նա մահանում էր: Իմ մտահոգություններով կիսվեցի մորս հետ, բայց նա վստահեցրեց ինձ, որ հորաքույրս իր ամուսնու հետ նոր էր այցելել նրան, և նա շատ լավ էր զգում իրեն: Բայց ինչ-ինչ պատճառով ես չէի կարողանում ազատվել այդ կանխազգացումից: Ես ասացի Ջոին, որ ցանկանում էի, որ նա հնարավորինս շուտ այցելեր հորս:

Նոր տարվա նախօրեին ես ընթրիք էի պատրաստում և հեռուստացույց էի դիտում: Մի կին, ով նորությունների մեկնաբան էր, պատմում իր հոր մահվան մասին՝ ասելով, թե որքան էր կարոտում նրան: Արցունքներն սկսեցին հոսել աչքերիցս: Ես լսեցի, թե ինչպես Յոգին ասաց. «*Դու լաց ես լինում, որովհետև այս տարի դու հրաժեշտ ես տալու քո հորը*»:

Հունվարի 6-ին ես Կանադայում էի՝ ծառայողական ուղևորության մեջ: Ես արթնացա իմ հյուրանոցային համարում խիստ վաղ և խիստ մտահոգված: Գիշերվա ժամը 3^{00}-ն էր, և որքան էլ փորձում էի, չէի կարողանում կրկին քնել: Ավելի ուշ այդ առավոտյան ես պետք է ձայնագրեի հինգ հեռուստատեսային հաղորդում և մի շարք ուսմունքներ, ինչը մտքի պարզություն էր պահանջում: Ես աղոթեցի, կարդացի, երաժշտություն լսեցի, բայց ապարդյուն:

Առավոտյան ես թույլ և անհանգիստ էի զգում ինձ, և ժամ առ ժամ իմ անհանգստությունն ավելանում էր:

Երբ ձայնագրություններն ավարտվեցին, ես գնացի օդանավակայան: Միացնելով բջջային հեռախոսս՝ տեսա, որ բավականին շատ զանգեր եմ բաց թողել: Առաջին ձայնային հաղորդագրությունն իմ կրտսեր որդուց էր, ով տանն էր: Նա կորցրել էր իր ատամների պահիչը և խնդրում էր, որ զանգահարեի ատամնաբույժ-օրթոդոնտին՝ փոխարինող պահիչի համար: Ես

կարդացի բոլոր հաղորդագրությունները, մինչև որ մնաց միայն մեկը: Ես շտապում էի հասցնել թռիչքին և անցնել մաքսային զննումը, այնպես որ, որոշեցի, որ կլսեմ այդ հաղորդագրությունը՝ մոտենալով իմ մուտքին:

Վերցնելով ուղեբեռս՝ ես միացրի հաղորդագրությունը: Մի կանացի ձայն ասում էր. «Ինչպես գիտեք, ձեր հայրը մահանում է: Եթե ցանկանում եք հրաժեշտ տալ նրան, պետք է գաք այսօր»:

Մինչև հաղորդագրության ավարտվելը, ես զանգահարեցի նրա համարով: Միտքս տատանվում էր. «*Որտեղի՞ց ես պետք է իմանայի սա: Ոչ ոք չէր ասել ինձ, որ հայրս մահանում էր*»: Բարեբախտաբար, ես կարողացա խոսել այդ կնոջ հետ, ով իր մեքենայով գնում էր այն վայրը, որտեղ տեղափոխել էին հորս: Ես բացատրեցի, որ Կանադայում էի՝ Դենվեր ուղևորվող ինքնաթիռի մեջ: Նա խոստացավ, որ կզանգահարեր ինձ, երբ լիներ հորս կողքին:

Այնուհետև փորձեցի զանգահարել եղբորս, բայց նա հավաքույթների էր: Ես զանգահարեցի Ջոնին և մեր ընկերներից մեկին: Թվում էր՝ շուրջս ամեն ինչ պտտվում էր: Ես ստուգեցի, թե արդյո՞ք կային ուղիղ չվերթներ դեպի Օռլանդո, բայց հասանելի չվերթներ չկային:

Քանի որ այլևս ժամանակ չկար, ես նստեցի իմ ինքնաթիռը դեպի Դենվեր, և մինչ ուղևորներն անցնում էին կողքովս, ես սպասում էի այդ կնոջ զանգին: Եվ երբ ուղեկցորդուհիները փակեցին դուռը և պատվիրեցին անջատել բոլոր հեռախոսները, նա զանգահարեց: Նա բացատրեց, որ հայրս լավ չէր զգում իրեն, և առաջարկեց դնել հեռախոսը նրա ականջին: Ես առանձնացա՝ մարդկանցով լի միջանցքից դեպի օվալաձև պատուհանը, որպեսզի խոսեմ:

«Հայրի՛կ, Լիզան է»,- իմ ձայնը թույլ և դողդոջուն էր, բայց շարունակեցի. «Ես սիրում եմ քեզ: Հիշո՞ւմ ես, թե ինչպես էիր ձկնորսության տանում ինձ, և ինչպես էիր սովորեցնում սուզվել և լողալ: Վաղը ես գալու եմ, բայց եթե այլևս չես կարող դիմանալ, դու կարող ես գնալ»:

Ես կանգ առա՝ մտածելով, թե այլևս ի՞նչ կարելի էր ասել: Այդ կինը կրկին վերցրեց հեռախոսը: Ես հարցրի նրան՝ արդյո՞ք նա նկատեց որևէ արձագանք հորս կողմից: Նա ասաց, որ ոչինչ

չնկատեց, բայց համոզված էր, որ ինչ-որ կերպով հայրս լսել էր ինձ: Ես անջատեցի հեռախոսս՝ հրաժեշտ տալով նրան:

Երեք ու կես ժամ տևող թռիչքի ընթացքում ես կարդում էի: Անկեղծ ասած՝ չեմ հիշում, թե ինչ գիրք էի կարդում: Վայրէջքից անմիջապես հետո փորձեցի կապ հաստատել եղբորս հետ: Ես կրկին ու կրկին զանգահարում էի նրան, մինչև որ կարողացա կապ հաստատել նրա հետ և պատմել կատարվածը:

Ջոին սկսեց ծրագրել իր ուղևորությունը Կալիֆոռնիայից դեպի Ֆլորիդա: Մինչև մեքենայով տուն հասնելը՝ հեռախոսով խոսեցի ավիաուղիների ներկայացուցչի հետ: Կոլորադոյում խավար և ցուրտ ձմեռային գիշեր էր: Ես ծրագրեցի, որ թռչելու էի հաջորդ առավոտյան, ժամը յոթին ուղևորվող ինքնաթիռով: Տուն հասնելուն պես, կանչեցի որդիներիս և պատմեցի այդ լուրը: Մինչ նրանք լսում էին, ես հասկացա, որ հայրս օտար մարդ էր նրանց համար: Ես ասացի նրանց, որ ցավում էի, որ պետք է կրկին մենակ թողնեի նրանց, չնայած՝ նոր էի վերադարձել տուն, և նրանց հայրը նույնպես քաղաքում չէր:

Այդ պահին և՛ տան, և՛ բջջային հեռախոսները միաժամանակ զանգեցին: Տան հեռախոսով զանգահարում էր ամուսնացած որդիս, իսկ երկրորդ զանգահարողը եղբայրս էր: Նա ասաց, որ մեր հայրը մահացել է: Ամեն ինչ ավարտված էր: Թաղում չէր լինելու, որովհետև հայրս կարգադրել էր, որ իր մարմինը դիակիզվեր: Մենք այլևս չէինք տեսնելու նրան: Ես կրկին խոսեցի հորս սոցիալական աշխատակցուհու հետ և լաց լինելով՝ պատմեցի, որ նա մահացել էր:

Այդ գիշեր՝ քնելուց առաջ, ես աղոթեցի. «Աստվա՛ծ, Դու հավատարիմ ես»:

Ես խորը քնեցի և արթնացա զարմանալիորեն հանգստացած վիճակում:

Ես տանն էի ևս մեկ շաբաթ, մինչև որ սկսվեցին ճանապարհորդություններս: Հունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին ես քարոզում էի հարյուրավոր և հազարավոր մարդկանցից բաղկացած հավաքույթներին, և ամեն երեկո հռչակում էի Աստծո

հավատարմությունը: Ես փորձում էի չմտածել հորս մասին: Նա արդեն անհասանելի էր ինձ համար: Եվ հանկարծ, 2011 թվականի մայիսին, հանդիպեցի Աստծո հավատարմությանը:

Ես կանանց համաժողով էի անցկացնում Ջեքսոնվիլում՝ Ֆլորիդայում: Առաջին դասի ընթացքում նկատեցի մի գեղեցիկ երիտասարդ կնոջ՝ շիկակարմիր մազերով: Ինչ-ինչ պատճառով, ավելի քան հազար մարդուց բաղկացած խմբում ես ուշադրություն դարձրի միայն նրան: Դրանից հետո կրկին նկատեցի նրան կեսօրվա թեմատիկ դասին:

Այդ երեկո, երբ պատրաստվում էի գնալ իմ հաջորդ դասին, ես տեսա այդ սիրունատես և շիկակարմիր մազերով կնոջը հյուրանոցի նախասրահում, և զգացի, որ պետք է ծանոթանամ նրա հետ: Մոտեցա նրան, բայց մինչև որևէ բան ասելը՝ նա ներկայացավ.

- Լի՛զա, ես էյփրիլն եմ: Մենք խոսել ենք հեռախոսով:

Ես սկսեցի մտովի վերհիշել, թե ե՞րբ եմ խոսել էյփրիլ անունով կնոջ հետ, ով ապրում է Ջեքսոնվիլում: Նա նկատեց, որ ես դժվարանում էի, և օգնեց ինձ:

- Ես զանգահարել էի ձեզ այն օրը, երբ մահացավ ձեր հայրը:

Ես մտածեցի, որ հորս՝ ծերանոցից Ջեքսոնվիլ հասնելու համար պետք էր հինգից վեց ժամվա ճանապարհ անցնել մեքենայով: *Ինչո՞ւ էր էյփրիլն այստեղ եկել:*

- Երբ ես իմացա, որ այս համաժողովին դուք այստեղ եք լինելու, իմ ընկերուհիներից մի քանիսի հետ եկա:

Ես ցնցված էի: Էյփրիլը շարունակեց.

- Ես ձեր հոր սոցիալական աշխատողն էի վերջին հինգ տարիների ընթացքում: Նա անտանելի բնավորություն ուներ: Նրան դուրս էին արել առաջին հաստատությունից, որտեղ նա եղել էր: Նրա վարքն անվերահսկելի էր. նա փախել էր, մեքենա էր գողացել և ծեծվել էր ոստիկանության կողմից: Բայց վերջին տարվա ընթացքում նա հրեշտակ էր:

Ես դեռ ցնցված էի և նայում էի նրան դատարկ հայացքով:

- Նա համբուրում էր ձեռքս ամեն անգամ, երբ տեսնում էի նրան, - շարունակեց նա:

Ես շփոթված էի՝ փորձելով ընդունել այն ամենը, ինչ նա ասում

էր: Մի՞թե նա հենց նոր ասաց, որ իմ հայրը հրեշտակ էր իր կյանքի վերջին տարվա ընթացքում:

- Էյփրի՛լ, ես այցելել եմ նրան նրա մահվանից մեկ տարի առաջ:

- Ես գիտեմ: Ես տեսա ձեր անունը նրա գործի մեջ: Ես կարդացել եմ ձեր գրքերը, բայց մինչև ձեր այցելությունը չէի մտածել, որ նա ձեր հայրն է: Տարիներ շարունակ աղոթել եմ նրա համար. ես ցանկանում էի վստահ լինել, որ դուք հնարավորություն կունենայիք հրաժեշտ տալ նրան:

Աստված հավատարիմ է: Նա ոչ միայն շրջապատել էր իմ հորն աղոթքով, երբ ես նրա հետ չէի, բայց կարող եմ լիովին համոզված լինել, որ հայրս ընդունեց ավելին, քան իմ ներումը, երբ մենք աղոթեցինք: Ես հավատում եմ, որ ինչ-որ կերպով այդ պահին նա ընդունեց նաև Երկնքի ներումը: Մեկ օրվա ընթացքում հայրս փոխվեց: Ծանր բնավորություն ունեցող մարդը դարձավ զիջող. բարկացկոտ և դառնացած մարդը դարձավ մեղմ և երեխայի պես անկեղծ: Այնպիսի տպավորություն է, որ իր կյանքի վերջին տարվա ընթացքում նա ապաշխարության պտուղ բերեց: Դեռ այնքա՜ն բան կա, որը ես այդպես էլ չեմ իմանա և չեմ հասկանա, մինչև չհայտնվեմ հավիտենության մեջ, բայց ես համոզված եմ, որ տեսնելու եմ հորս այդտեղ:

Ներումը՝ մեղքերի թողություն է, որովհետև սրանով է, որ այն, ինչ կորսված էր և գտնվեց, փրկվում է՝ կրկին կորսվելուց:

— Օգոստինոս

Ես հաճախ եմ մտածում, որ միգուցե այն երեկո, երբ այցելեցինք հորս, նա հիշեց այն ամենը, ինչ կորցրել էր: Ես մտածում եմ, որ միգուցե նրա թոռնիկի՝ Աշերի անմեղությունը հորս մեջ արթնացրեց նրա ժառանգության հույսը, որը, նրա կարծիքով, կորած էր: Ես մտածում եմ, որ միգուց նա նայեց էդիսոնի ուժին և հասունությանը, Ջուլիի գեղեցկությանը և շնորհալիությանը, և երիտասարդ սեր տեսավ: Ես մտածում եմ, որ միգուցե ես ներկայացնում էի այն ընտանիքը, որը նա կորցրել էր: Այդ երեկո մենք գտանք նրան այնպիսի վայրում, որտեղից նա այլևս չէր կարող փախչել: Մենք

տեսանք այն ցավը, որը նա փորձել էր անզգայացնել ալկոհոլի միջոցով, և պարզապես սիրեցինք նրան:

Ինչպիսին է ձե՛ր պատմությունը

Սիրելի դո՛ւստր, իսկ ի՞նչ կասեք ձեր մասին: Ես չգիտեմ ձեր պատմությունը, բայց կարող եմ ասել, որ Աստված հավատարիմ է: Արդյո՞ք ձեր կյանքում կան հիասթափության կամ դառնության դաշույններ, որոնց պատճառով դուք կարող եք ոչ ճիշտ գործածել այն թուրը, որը ձեր ձեռքում է: Ճշմարտությունն այն է, որ ես դեռ դատում էի իմ հորը, մինչև վերջին անգամ նրան հանդիպելը, մինչև այն պահը, երբ ասացի նրան այն բառերը, որոնք ստացա Աստծուց: Երբ ես ազատ արձակեցի նրան, ես նույնպես ազատ արձակվեցի: Մեր Թագավորը կարող է բժշկել երկու կողմերը՝ մի կողմի գործողություններով:

Խորը և չբուժված վերքերը կարող են պատճառ դառնալ, որ խոցենք և վնասենք այն մարդկանց, ում Երկինքը փափագում է բժշկել: Մեր Թագավորը գրավել է ձեր սիրտը. այժմ Նա ցանկանում է գործածել ձեր կյանքն Իր նպատակի համար, որը վերականգնումն է:

Չկա ավելի լիավարտ վրիժառություն, քան ներումը:

— Ջոշ Բիլինգս

Եկեք ցա՛ծ դնենք մերժվածության և հիասթափության ցանկացած թուր՝ մեր Հոր ոտքերի մոտ, և թույլ տանք Նրան՝ այն վերածել որդեգրության, վերականգնման և աստվածային նախասահմանության: Ինչպե՞ս Աստված կցանկանա գործածել ձեզ՝ վերականգնում բերելու համար: Որտե՞ղ կարող է Թագավորն ուղարկել ձեզ, որպեսզի խոսեք այն բառերը, որոնք մարդկանց անհրաժեշտ է լսել, որպեսզի ընդունեն Նրա բժշկությունը և կյանքը: Արդյո՞ք դուք ցանկանում եք խոսել Նրա իմաստությունը ավելի, քան ձեր սովորած բառերը: Արդյո՞ք կամենում եք օրհնել այն մարդուն, ով ցավ է պատճառել ձեզ: Ես չեմ խնդրում՝ կրկնել իմ բառերը, բայց խնդրում եմ ձեզ՝ խոսել Հոր խոսքերն այն

իրավիճակներում և այն մարդկանց համար, որոնք աղաղակում են՝ ցանկանալով ստանալ վերականգնում:

● ● ●

Թանկագին երկնային Հա՛յր,

Ես բերում եմ իմ կյանքը Քո առջև՝ որպես հավատարմորեն ծառայելու երդում: Ես հոգնել եմ պայքարել հիասթափության դիրքից: Դու հավատարիմ ես Քո խոսքին, Դու սիրում ես ամեն բան լավ գործել, և այդպես էլ անում ես: Ես հանձնում եմ Քեզ այն ամենը, ինչ կրել եմ իմ ուժերով: Խնդրում եմ, որ Դո՛ւ որոշես ժամանակները, և տաս ինձ Քո իմաստությունը և Քո բառերը: Ես որոշում եմ տալ Քեզ իմ ամբողջ հավատարմությունը և նվիրումը: Բարձրացրո՛ւ ինձ՝ զինելով ոչ թե վնասելու, այլ բժշկելու համար, Հիսուսի անունով, ամե՛ն:

● ● ●

Հասնելով մեր վերջին բաժնին՝ ես գիտակցում եմ, որ բավականաչափ ժամանակ չունեմ՝ խոսելու բոլոր թրերի մասին, որոնք դուք կարող եք կրել, որովհետև թրերը՝ խիստ անձնականացված զենքեր են: Հաջորդ բաժնում ցանկանում եմ կոչ անել, որ այլևս անզեն չթողնեք ձեր տունը:

ՄԱՍ ՉՈՐՍ

ՈՒՂԱՐԿՎԱԾ

14

Կրել խաչը

Մենք պետք է արթնացնենք ինքներս մեզ: Հակառակ դեպքում՝ ինչ-որ մեկը կգրավի մեր տեղը և կկրի մեր խաչը, և դրանով իսկ կզրկի մեզ մեր պսակից:

— Վիլամ Բուտ

Մենք ունենք և՛ խաչ, և՛ պսակ: Հիմնականում, այն խաչը, որը մենք կրում ենք, անտեսանելի է: Մենք տեսնում ենք դրա արդյունքը, բայց ոչ՝ կերպարանքը: Նմանապես, Քրիստոսում մեզ անտեսանելի պսակ է տրվել:

«Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան,
կամ մարդու որդին, որ այցելես նրան:
Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից,
փառքով և պատվով պսակեցիր նրան,
և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան» (Եբր. 2.6-8):

Մեր պսակն այս երկրի վրա՝ մեր իշխանական դիրքն է: Որպես երկնքի դեսպաններ՝ մենք ունենք այդ տիրույթի իշխանությունը:

Սովորեք ճանաչել Քրիստոսին, և այն էլ՝ խաչվածին: Սովորեք երգել Նրան և ասել. «Տեր Հիսո՛ւս, Դու իմ արդարությունն ես, իսկ ես՝ Քո մեղքը: Դու Քեզ վրա ես վերցրել այն, ինչ իմն է, և տվել ես ինձ այն, ինչ Քոնն է: Դու դարձել ես այնպիսին, ինչպիսին չէիր, որպեսզի ես կարողանայի դառնալ այնպիսին, ինչպիսին չէի:

— Մարտին Լյութեր

Մենք դնում ենք պսակը և կրում ենք խաչը: Հիսուսը կրեց մեր խաչը, որպեսզի մենք կարողանանք դնել Նրա պսակը: Նա դարձավ մեզ նման: Մի՞թե ժամանակը չէ, որ դառնանք Նրա նման:

> «Այն ժամանակ Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ ետևից գա» (Մատթ. 16.24):

Ինչպե՞ս ենք մենք կատարում այս խիստ անձնական հրահանգը:

Այս հրահանգը բաղկացած է երեք մասից. ուրանալ սեփական անձը, բարձրացնել խաչը և հետևել Հիսուսին: Իմ անձնասեր ուղիները տարբերվում են ձերից, և նույն կերպով, այն խաչը, որը ես կրում եմ, եզակի է իմ կյանքի ընթացքի համար: Ես չեմ կրում ձեր խաչը, և ո՛չ էլ դուք՝ իմը:

Որպեսզի սովորենք, թե ինչպես կրենք մեր խաչը, պետք է պատասխանենք որոշ հարցերի խաչի մասին: Ի՞նչ է Հիսուսը խնդրում մեզ՝ կրել: Որտե՞ղ է մեր խաչը: Արդյո՞ք սա մի բեռ է, որը մենք պետք է քարշ տանք ամբողջ կյանքի ընթացքում: Արդյո՞ք խաչը նշանակում է շատ ավելի խորհրդավոր մի բան, քան կարող են ներկայացնել փայտե գերանները: Խաչն այնպիսի գեղեցկություն ունի, որ ոչ մի մանյակ կամ ականջօղ չի կարող համեմատվել դրա հետ: Ես ճշմարտապես հավատում եմ, որ խաչն ընդգրկում է փրկության ամբողջ գործը, որը տրվել է մեզ:

Խաչը շատ ավելին է, քան զարդարանքը, որը կարելի է կրել. այն պատվեր է, որը պետք է կատարվի: Վերջին գլխում ես ցանկանում եմ պատմել, թե ինչ է նշանակում՝ կրել ձեր խաչը հերոսուհու պես:

Ջրույց խաչի մասին

Գրեթե գիշերվա ժամը երկուսն էր, Զատկի երեկոյից հետո: Ես արդեն քնում էի, երբ Սուրբ Հոգին սկսեց հարցեր տալ ինձ խաչի մասին:

«Լի՛զա, ի՞նչ է նշանակում՝ կրել քո խաչը»:

Ես կիսաքնած պատասխանեցի. «Ուրանալ իմ անձը»:

Եվ պարզ լսեցի հետևյալը. «Ո՛չ, քո անձն ուրանալը՝ ընդամենը առաջին քայլն է»:

Ես վարանելով առաջարկեցի. «Ցած դնել իմ կա՞մքը»:

«Քո անձն ուրանալը հենց նշանակում է՝ ցած դնել քո կամքը: Ի՞նչ է նշանակում՝ կրել քո խաչը»:

Այդ պահին ես հասկացա, որ, հավանաբար, չունեմ պատասխանը, բայց հարցերը չդադարեցին:

«Ինչպե՞ս ես իմանում, թե ե՛րբ ես կրում քո խաչը, կամ՝ ե՛րբ ես թողել այն տանը»:

«Որքա՞ն է կշռում քո խաչը, Լի՛զա»:

«Որտե՞ղ ես դու պահում քո խաչը»:

Ես պատկերացրի իմ թափթփված պահարանը, մեր ավտոտնակը և մեր տան շքամուտքի դռան առջևի տարածքը: Ես նստեցի անկողնուս մեջ՝ աչքերս կիսաբաց անելով, և բարձրաձայն շշնջացի. «Ես չգիտեմ…»:

Իմ խոստովանությունից հետո, հարցերի տարափը դադարեց: Անկեղծ ասած՝ ես գրել եմ խաչի մասին այս կամ այն չափով իմ գրքերից յուրաքանչյուրի մեջ, բայց այդ պահին թվում էր՝ ես նույնիսկ չէի կարողանում որոշել, թե որն էր իմ խաչը, առավել ևս՝ նկարագրել այն:

Ինձ դուր է գալիս, որ այն պահին, երբ մենք խոստովանում ենք մեր կարիքը, Աստված պատրաստ է հոգալ այն: Հենց որ գիտակցեցի իմ անգիտությունը, պատասխանները հայտնվեցին: Ես լսեցի. «Նայի՛ր այն ցուցակը, որը պատրաստեցիր օրվա ընթացքում»:

Ինչպես նշեցի 5-րդ գլխում, ես հարցում անցկացրի իմ սոցիալական էջերում՝ խնդրելով սահմանել խաչը մեկ բառով, և ստացա բազմաթիվ պատասխաններ: Այդ ժամանակ ես չասացի ձեզ, որ ձեռքով արտագրեցի ավելի, քան հինգ հարյուր պատասխան՝ օգտագործված ծրարի վրա: Ես գնացի Զոնի աշխատասենյակ, գտա այդ ծրարը և վերադարձա անկողին: Ես արտագրեցի այդ ձեռագիր ցուցակն իմ iPad-ի մեջ: Ահա այդ բառերի մի մասը՝ գրաֆիկական տեսքով:

Ես անցկացրի այդ հարցումը՝ ցանկանալով ստանալ մեկ պատասխան, որն այդպես էլ չէր տրվել, բայց ես կավելացնեմ այն այստեղ. *զենք:* Վերանայելով այդ բառերի ցուցակը, որի ստեղծման մեջ սիրով մասնակցել էին բազմաթիվ մարդիկ, ես լսեցի, թե ինչպես Սուրբ Հոգին շշնջաց. «Նայի՛ր խաչին: Բոլոր այս բառերը և ավելին՝ ներկայացնում են խաչը: Կրի՛ր այս ամենը քո առօրյա կյանքում»:

Ես կրկին աչքի անցկացրի այդ ցուցակը, որը պահում էի դողացող ձեռքով: Դա ճշմարի՞տ էր: *Խաչը շնորհում է այն ամենը, ինչ հաղթել է, ինչպես որ Հիսուսն է շնորհում այն ամենը, ինչ կա Իր Անձի մեջ:* Խաչի միջոցով Քրիստոսը գնեց մեզ համար սեր, ներում, ազատություն և փրկագնում: Ժամանակն էր՝ ինչ ես վերապրել էի, փոխանցել այլ մարդկանց: Այս բառերից ամեն մեկը ցույց էր տալիս խաչի էության առանձին տարրերը, որոնք անհրաժեշտ էր արտահայտել այս կորած աշխարհին (և նույնիսկ շատ եկեղեցիների): Պողոսը նկարագրում էր, թե ինչպես էր նա կրում խաչը.

> «Մենք ամենուր կրում ենք այս թանկ [խաչի] Ուղերձը մեր սովորական կյանքերի հասարակ կավե անոթներում»:
> (Բ Կորնթ. 4.7, MSG)

Այն խաչը, որը ես կրում եմ՝ այն ամենն է, ինչ Նա արել է ինձ համար, ինչպես որ այն խաչը, որը դուք եք կրում, ձեր Ավետարանն է, կամ այն ամենի վկայությունը, ինչ Նա արել է ձեզ համար: Բայց սա դեռ վերջը չէ: Մենք՝ անոթներ ենք, որոնք այլ մարդկանց մեջ լցնում են Երկնքի թանկարժեք պարգևները: Մենք չենք զտում Ավետարանը. մենք պարզապես կրում ենք այն: Այս կերպով, արտասովորը մուտք է գործում մեր սովորական առօրյայի մեջ: Ամեն օր ես վերցնում եմ խաչի հույսը, սերը և ներումն ինձ հետ, երբ մտնում եմ մթերային խանութ, երբ ինքնաթիռ եմ նստում կամ գնում եմ գրասենյակ: Ես տանում եմ այն ամեն տեղ, ուր կյանքը տանում է ինձ: Ահա թե որտեղ եմ ես առաջարկում խաչի զորությունը և սքանչելիքները:

Լսե՛ք, թե ինչպես է Պողոսը նկարագրում խաչը կրելը Հռոմում գտնվող նորահավատներին:

> «Այնպես որ, ահա թե ինչ եմ ցանկանում, որ անեք՝ Աստծո օգնությամբ. վերցրե՛ք ձեր սովորական, առօրյա կյանքը՝ ձեր քունը, սնվելը, աշխատանքի գնալը, ձեր կյանքի ընթացքը, և դրեք այն Աստծո առջև՝ որպես զոհաբերություն: *Լավագույնը, ինչ կարող եք անել Աստծո համար, հետևյալն է. ընդունե՛ք այն, ինչ Նա անում է ձեզ համար:* Մի՛ հարմարվեք ձեր մշակույթին այն աստիճան, որ համապատասխանեք դրան՝ առանց, նույնիսկ, մտածելու: Փոխարենը՝ *ուղղե՛ք ձեր ուշադրությունն Աստծուն*: Դուք կփոխվեք՝ ներսից՝ դուրս: Հոժարությամբ ընդունեք այն, ինչ Նա ցանկանում է ձեզնից, և արագորեն արձագանքեք դրան» (Հռոմ. 12.1,2, MSG):

Հիսուսը չէր անցկացնում պաշտոնական ավետարանչական հավաքույթներ, համաժողովներ և, նույնիսկ, կիրակնօրյա ծառայություններ: Այնուամենայնիվ, Նրա կյանքի ամեն մի պահն ուղերձ էր պարունակում (իհարկե, այս ամենը սխալ չէ, բայց հազվադեպ է լինում, որ այս միջոցառումները մեր առօրյա կյանքի մասը կազմեն): Հիսուսը տանում էր Աստծուն Իր հետ ամեն օր և ամեն տեղ, ուր գնում էր, և Նա խնդրում է ձեզ՝ անել նույնը: Խաչը կրել նշանակում է՝ ընդունել այն ամենը, ինչ Աստված արել է ձեզ համար, և արտացոլել այս նոր կյանքն այլ մարդկանց մեջ: Երբ ընդունում ենք այս ճշմարտությունը, մենք սկսում ենք այլ կերպ վարվել և այլ կերպ

դիտարկել մեզ շրջապատող աշխարհը: Ի՞նչ կլիներ, եթե մենք ամեն օր աղոթեինք այսպես. «Երկնային Հա՛յր, թող որ այն ամենը, ինչը տվել է Քո Որդու խաչելությունը, այսօր լիովին արտահայտվի ինձանում և իմ միջոցով: Ես որոշում եմ կայացնում՝ ուրանալ մեղքը և իմ նախկին սահմանափակումները՝ մեծարելով Քո գործը և հետևելով Քեզ»:

Մեզ շրջապատող մարդիկ կտեսնեին մեծարված Հիսուսին: Երբ այս փոխանակումը տեղի է ունենում, մենք սկսում ենք այլ կերպ նայել ամեն ինչին: Ինքներս մեզ նայելու փոխարեն, մենք ուշադրություն ենք դարձնում Հիսուսի կյանքին: Երբ կարդում ենք մեր Աստվածաշունչը, տեսնում ենք, թե ինչպես էր Նա ապրում ամեն օրը: Այնպես որ, մենք ձրիաբար տալիս ենք այն, ինչ ձրիաբար տրվել է մեզ:

Փաստեր սուսերամարտի մասին

Զբաղվե՛ք սուսերամարտով, երբ հոգնած եք, երբ հիվանդ եք, երբ շատ շոգ է կամ, երբ շատ ցուրտ է, երբ անձրև է գալիս, և երբ դուք ատում եք սուսերամարտը:

Կրել մեր խաչը

Եկեք խոսենք մեր խաչը կրելու մասին: Արդյո՞ք մենք համաձայն ենք, որ խաչը՝ Աստծո անպայմանական սիրո մեծագույն դրսևորումն է մեր հանդեպ: Մի՞թե դուք որևէ կասկած ունեք, որ միլիոնավոր մարդիկ դեռ սպասում են, որ մենք տանենք նրանց այս անպայմանական սերը: Ինչպե՞ս պետք է անենք սա. հետևելով Նրա օրինակին:

Հիսուսը *սիրում* էր մարդկանց՝ խոսելով ճշմարտությունը, կերակրելով քաղցածներին, հանելով դևերին, բժշկելով հիվանդներին, հակառակվելով կրոնին և հարություն տալով մեռելներին:

> «Եվ Հիսուսը ման էր գալիս ամբողջ Գալիլեայում՝ *սովորեցնելով նրանց ժողովարաններում և քարոզելով Արքայության Ավետարանը,* և ժողովրդի մեջ եղած *ամեն հիվան-*

> *դություն և ամեն ցավ բժշկելով»* (Մատթ. 4.23, շեղագիրն ավելացված է):

Հետևե՛ք Նրան:

Ի՞նչ կասեք ներման մասին: Մի՞թե ներման կարիքն այսօր պակասել է: Ընդհակառակը՝ չափազանց շատ մարդիկ մեղքի զգացումի և ամոթի ծուղակում են: Տարե՛ք ներման խաչն այդ մարդկանց՝ ձրիաբար ներելով նրանց և պատմելով Բարի լուրն այն մասին, որ նրանք ձրիաբար ներում են ստացել:

Հիսուսը ցույց տվեց մարդկանց, որ նրանք *ներված* էին՝ խոսելով ճշմարտությունը, կերակրելով քաղցածներին, հանելով դևերին, բժշկելով հիվանդներին, հակառակվելով կրոնին և հարություն տալով մեռելներին:

> ««…Քաջացի՛ր, որդյա՛կ, քո մեղքերը ներված են քեզ»: Եվ ահա դպիրներից ոմանք իրենց մեջ ասացին. «Դա հայհոյում է»: Եվ Հիսուսը նրանց խորհուրդները տեսնելով՝ ասաց. «Ինչո՞ւ եք չար բաներ խորհում ձեր սրտերում, որովհետև ո՞րն է ավելի հեշտ, ասել՝ քո մեղքերը թողվա՞ծ են քեզ, թե՞ ասել՝ վե՛ր կաց և մա՛ն եկ: *Բայց որ իմանաք, թե մարդու Որդին իշխանություն ունի այս երկրի վրա մեղքեր թողելու*», - այն ժամանակ անդամալույծին ասաց. «*Վե՛ր կաց, քո մահիճը վե՛ր առ և գնա՛ քո տունը*»: Եվ նա վեր կացավ, գնաց իր տունը: Եվ ժողովուրդները տեսնելով՝ զարմացան, *և Աստծուն փառավորում էին, որ այնպիսի իշխանություն է տվել մարդկանց»* (Մատթ. 9.2-8, շեղագիրն ավելացված է):

Հետևե՛ք Նրան:

Նա արեց սա, որպեսզի մենք իմանանք՝ մեզ տրված է բժշկելու և ներելու իշխանություն: Նա գործեց այս հրաշքը՝ որպես մարդու Որդի: Որքա՜ն ավելի մենք պետք է անենք՝ որպես Աստծո դուստրեր:

Հաջորդը՝ ազատության հետ կապված խնդիրներն են: Արդյոք երբևէ եղե՞լ է մի սերունդ, որն այս աստիճան գերված լիներ կրքով, նախանձով, կռապաշտությամբ և արատավորությամբ: Բացի այդ՝ կան մարդիկ, որոնք բառացիորեն գտնվում են աշխատանքային կամ սեռական ստրկության մեջ. տարե՛ք նրանց ազատության խաչը: Միգուցե հարցնեք. «Ինչպե՞ս»: Խոսելով ճշմարտությունը, կերակրելով քաղցածներին, հանելով դևերին, բժշկելով հիվանդ-

ներին, հակառակվելով կրոնին և հարություն տալով մեռելներին՝ Հիսուսը ցույց տվեց մարդկանց իրենց *ազատությունը:*

> *«Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությամբ օծեց, որ ման եկավ՝ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, որովհետև Աստված Նրա հետ էր»* (Գործք 10.38, շեղագիրն ավելացված է):

Հետևե՛ք Նրան:

Հիսուսը բարի գործեց և բժշկեց նրանց, ովքեր ճնշված էին սատանայի կողմից, որովհետև Աստված Նրա հետ էր: Կարիք չկա ընտրություն կատարել հասարակական արդարության և գերբնական կյանքի միջև: Հիսուսն ընտրեց երկուսն էլ: Եկե՛ք հետևենք Նրան, Ում անունն է էմմանուել՝ «Աստված մեզ հետ», և անենք նույնը:

Գոյություն ունի փրկության խիստ արտահայտված կարիք՝ մարդկային կյանքի ցանկացած բնագավառում: «Փրկություն» բառը ծավալուն իմաստ ունի. այն նշանակում է՝ փրկագնում, փոխանակում, ազատագրում, նորոգում, վերականգնում և վերստացում: Մի՞թե այս ամենի կարիքն ինչ-որ կերպով պակասել է: Տարե՛ք մարդկանց այս փրկագնման խաչը ձեր առօրյա կյանքով:

Կրկին՝ խոսելով ճշմարտությունը, կերակրելով քաղցածներին, հանելով դևերին, բժշկելով հիվանդներին, հակառակվելով կրոնին և հարություն տալով մեռելներին՝ Հիսուսը ցույց տվեց մարդկանց, որ նրանք *փրկված* էին:

> «Տիրոջ փրկվածներն ասեն,
> որ նրանց փրկեց թշնամու ձեռքից» (Սաղմ. 107.2):

Այս հորդորից հետո Սաղմոս 107-ում գրված են մի շարք հանգամանքներ, որոնց պատճառով Աստծո ժողովուրդը հայտնվել էր փորձանքի մեջ: Ես կխրախուսեմ ձեզ, որ կարդաք այս Սաղմոսը և իմանաք, որ դուք մենակ չեք: Այն պարզապես շատ երկար է՝ այս գրքում զետեղելու համար: Իմացե՛ք, որ անկախ այն բանից՝ դո՞ւք եք խառնաշփոթ ստեղծել ձեր կյանքում, թե՞ հայտնվել եք խնդիրների մեջ՝ ձեզնից չկախված պատճառներով, Աստված

փրկում է: Անկախ այն բանից, թե ինչպես եք հայտնվել փորձանքի մեջ, Նա դուրս է բերում ձեզ՝ տանելով բարի վայր: Միայն Նա՛ ունի փրկելու զորություն, և բոլոր փրկվածները պետք է ասեն սա: Սա խաչը կրելու ևս մեկ ձև է:

> «Որովհետև իմ անձը չես թողնի գերեզմանում
> և Քո սուրբին ապականություն տեսնել չես տա:
> Դու ինձ ճանաչեցնում ես կյանքի ճանապարհը.
> Քո երեսի առջև ուրախությունների լիություն կա,
> և քո աջ կողմը՝ քաղցրություններ հավիտյան»:
> (Սաղմ. 16.10,11)

Այս խոսքերը Դավթինն են, բայց այս խոստումը նախ՝ տրվել էր Քրիստոսին, իսկ այժմ՝ մեզ:

Հետևե՛ք Նրան:

Այս խոստումը պատկանում է բոլոր փրկվածներին՝ անկախ նրանից, թե ինչ է կատարվում ձեզ հետ հենց հիմա: Սա խաչի զորությունն է: Մի՞թե կարող է լինել ավելի լավ խոստում՝ Արքայության Ավետարանը հռչակելու համար: Արդյո՞ք Քրիստոսի զոհը խաչի վրա բժշկել է ձեր կյանքը, մարմինը և փոխհարաբերությունները: Արդյո՞ք դուք հավատում եք, որ այն դեռ զորություն ունի՝ բժշկելու ամեն հիվանդություն և տառապանք: Մենք գիտենք, որ Հիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Կարելի՞ է արդյոք ասել նույնը խաչի մասին: Հարություն առնելուց հետո, Հիսուսը կրկին պատվիրեց Իր աշակերտներին՝ հետևել Իր օրինակին:

> «Եվ երբ որ Նրան տեսան, երկրպագություն արին Նրան, բայց ոմանք երկմտեցին: Եվ Հիսուսը մոտ գալով՝ նրանց հետ խոսեց և ասաց. «Ամեն իշխանություն Ինձ տրվեց Երկնքում և երկրում: Ուրեմն, գնացե՛ք բոլոր ազգերը աշակերտեք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատվիրեցի, պահեն, և ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհի վերջը»»:
> (Մատթ. 28.17-20)

Եթե Նա մեզ հետ է, և Նա նույնն է, նշանակում է՝ Նա ցանկանում է ցուցադրել երկրի վրա այն ամենը, ինչ փրկագնված է խաչի միջոցով:

> «Վերջը, երբ որ այն տասնմեկը սեղան էին նստած, նրանց երևաց և նրանց անհավատությունը և քարսրտությունը հանդիմանեց, որ չհավատացին նրանց, որ Նրան տեսել էին հարություն առած: Եվ նրանց ասաց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով, Ավետարանը քարոզեք ամեն արարածի: Ով որ հավատաց և մկրտվեց, կփրկվի, և ով որ չհավատաց, կդատապարտվի: Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»»: (Մարկ. 16.14-18)

Հիսուսը նախ՝ պետք է լուծեր որոշ խնդիրներ՝ կասկածը, անհավատությունը և խստասրտությունը, մինչև որ Նրա բոլոր աշակերտները կկարողանային հետևել Իրեն և տեսնել այս հրաշքներն ու նշանները: Կարիք չկա, որ հետապնդենք դևերի, բայց եթե դուք բավականին երկար ժամանակ է՝ հետևում եք Հիսուսին, դուք հավանաբար կհանդիպեք նրանց: Նրանց հետ խոսակցության մեջ մի՛ մտեք: Օգտագործե՛ք Աստծո թուրը՝ նրանց լռեցնելու, իսկ հետո Հիսուսի անունով դուրս հանելու համար:

Խոսե՛ք Երկնքի ճշմարտությունը ամեն լեզվով, որ կարող եք:

Օձեր վերցնելը և միտումնավոր կերպով թույն խմելը՝ հիմարություն են: Քանի որ Հիսուսը ցած չնետեց Իրեն ժայռից, անկասկած՝ Նա չի առաջարկի Իր աշակերտներին՝ խաղալ թունավոր օձերի հետ և թույն խմել: Այս հատվածը՝ խոստում է պաշտպանության մասին: Նա խոստացավ, որ երբ մենք հպվենք հիվանդներին, նրանք կբժշկվեն: Հիվանդներն այլևս չպետք է համարվեն անմաքուր մարդիկ, որոնց հետ վախենում ենք շփվել: Անմաքուր մարդիկ շարունակ հպվում էին Հիսուսին, և այդ հպումը բժշկում էր նրանց: Միգուցե դուք ասեք. «Դե՛, դա Հիսուսն էր»: Մի անգամ ես կարդացի, որ հենց այն ժամանակ, երբ Մայր Թերեզան որոշում կայացրեց գնալ բորոտների մոտ, հայտնաբերվեց այդ սուր վարակիչ հիվանդության բուժումը, և այն դադարեց տարածվել:

> «Եվ առաքյալների ձեռքով շատ նշաններ և հրաշքներ էին լինում ժողովրդի մեջ. ամենքը միաբան Սողոմոնի սրահում էին… Եվ ամբողջ օրը չէին դադարում տաճարում և տներում սովորեցնել և Հիսուս Քրիստոսին ավետարանել»:
> (Գործք 5.12,42)

Հրաշքները, նշանները, սովորեցնելը և քարոզելը պետք է լինեն ամեն օր: Այստեղ պետք է խոստովանեմ… ես ցանկանում եմ, որ գերբնականն ավելի բնական դառնա, և որ Նրա անվան մեծությունը հռչակվի ամեն օր: Այնպես որ, ես պատմելու եմ Հիսուսի անվան մասին և հետևելու եմ Նրա առաջնորդությանը: Եթե առաջին եկեղեցին ամենուր տանում էր խաչի մասին ուղերձը, և մարդկանց սրտերը քաջալերվում էին, հիվանդները բժշկվում էին, իսկ կապվածներն ազատ էին արձակվում, ինչո՞ւ մենք չպետք է անենք նույնը:

Արդյո՞ք դուք դեռ նշան եք փնտրում այն մասին, որ Հիսուսը մինչև օրս ցանկանում է հրաշքներ գործել: Խաչը՝ մեր նշանն է, իսկ դուք՝ Նրա հրաշքը:

Ես հավատում եմ, որ մենք կտեսնենք նշաններ և հրաշքներ այն չափով, որով քարոզում ենք Քրիստոսի խաչը և ապրում ենք Աստծո Խոսքով: Մինիմալիստական Ավետարանը նվազ արդյունքներ է բերում: Եթե մենք քարոզենք խաչի առավելությունների մի մասը, կունենանք խաչի առավելությունների մի մասը: Պետք չէ սպասել, որ փոփոխված տարբերակները տան իրականի լիարժեք արդյունքը:

> «Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացուցությամբ, որ ձեր հավատքը մարդկանց իմաստությունով չլինի, այլ՝ Աստծո զորությունով» (Ա Կորնթ. 2.4,5):

Անզոր Ավետարանի քարոզումն անզոր արդյունքներ կտա: Հիսուսի արյունը ճանապարհ է բացել մեզ համար, որպեսզի մենք համարձակությամբ մոտենանք Աստծո գահին՝ գտնելու համար ամբողջ երկնային զորությունը, որն անհրաժեշտ է մեզ:

«Պինդ բռնենք հույսի դավանությունն անսայթաք, որ հավատարիմ է խոստացողը: Եվ զգուշանանք իրար համար՝ դեպի սեր և բարի գործեր գրգռելով: Եվ չթողնենք իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորությունն է, բայց իրար հորդորենք, և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցած է» (Եբր. 10.23-25):

Կենդանի թրեր

Ես գրեցի այս ամենը՝ ձեզ գործողության մղելու հույսով: Այնքա՜ն ժամանակ է՝ մենք ձանձրացրել ենք մարդկանց մեր խոսքերով և զվարճացրել ենք նրանց՝ ձեռնածություններ անելով. ժամանակն է՝ տարածվել՝ դառնալով Նրա թուրը:

«Տո՛ւն եկեք, հույսով լի բանտարկյալնե՛ր:
Հենց այսօր ես կրկնակի պարգև եմ հռչակում՝
այն ամենը, ինչ դուք կորցրել էիք, կրկնակիով
վերադարձվում է:
Այժմ Հուդան իմ զենքն է՝ այն աղեղը, որը ես կձգեմ,
դնելով Եփրեմին որպես նետ՝ լարի վրա:
Ես կարթնացնեմ քո որդիներին, ո՛վ Սիոն,
հակառակվելու համար քո որդիներին, ո՛վ Հունաստան:
Այս պահից ի վեր մարդիկ Իմ թրերն են»:
(Զաքարիա 9.12,13, MSG, շեղագիրն ավելացված է)

Ինչպես որ Հիսուսը՝ Հոր Խոսքն էր, որը մարմին էր դարձել, այնպես էլ մեր կյանքերը պետք է դառնան Հիսուսի մարմնավորված Խոսքը:

Ինչպես որ Հիսուսը՝ Հոր Խոսքն էր, որը մարմին էր դարձել, այնպես էլ մեր կյանքերը պետք է դառնան Հիսուսի մարմնավորված Խոսքը: Քանի որ Աստծո Խոսքը՝ Հոգու թուրն է, և Հիսուսը՝ մարմին դարձած Խոսքն է, որպես Նրա մարմին՝ մենք նույնպես պետք է կենդանի թրեր դառնանք: «Նա դարձնում է Իր ավետաբերներին քամիներ, Իր ծառայողներին՝ բոցավառ կրակ» (Սաղմ. 104.4, ESV): Մենք կրակե թրեր ենք, ովքեր հռչակում են, որ Նա է ճանապարհը:

Նրա Հոգին այն քամին է, որը բարձրացնում է մեզ, իսկ Նրա ուղերձը այն կրակն է, որը փակված է մեր ոսկորների մեջ: Այն

ամենը, ինչ Նա արել է մեզ համար, և այն ամենը, ինչ Նա դեռ փափագում է անել, չպետք է սահմանափակվեն մեր անվստահությամբ և կրոնական ավանդույթներով: Խաչը ավարտեց ամեն ինչ: Այդ դեպքում, ինչո՞ւ ենք մենք այսքան քիչ գործել:

Խաչը հերոսուհի դարձրեց ձեզ: Դուք պետք է կրեք այն՝ ունենալով հույս ձեր սրտում, հավատք անհնարին բաների համար, և սեր՝ մարդկության հանդեպ: Աշակերտները չունեին ժամանակ և նույնիսկ՝ բավականաչափ տեղ և հնարավորություն, որպեսզի գրի առնեին այն ամենը, ինչ Հիսուսն արեց:

> «Բայց ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ մեկ գրված լինեին, կարծում եմ, թե այս աշխարհն էլ բավական չէր լինի՝ այն գրված գրքերը տանելու» (Հովհ. 21.25):

Սա նշանակում է, որ Հիսուսի սքանչելիքներն անհաշվելի են: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ յուրաքանչյուրս ընտրված է եղել՝ որպես Նրա սքանչելիքների կենդանի արտահայտություն: Երբ մենք մեկ դառնանք Նրա հետ, ինչպես որ Նա է մեկ Հոր հետ, աշխարհը կտեսնի Նրա հարսնացուին՝ կանգնած ամբողջ իր հասակով, և շատերը կգան Աստծուն:

Աստծո դուստրե՛ր, թողե՛ք այն, ինչ դուք արտահայտում եք, մերժե՛ք դրա սահմանափակումները և արտահայտե՛ք Նրան: Ամեն օր հիշեցրե՛ք ձեզ Նրա բարության, փրկության և ողորմության մասին: Լսե՛ք Սուրբ Հոգուն, երբ տանում եք այն ամենը, ինչ Խաչը տվել է հույսով սպասող մարդկանց: Հետևե՛ք Նրան, կարդացե՛ք և կրկնե՛ք ձեր Թագավորի խոսքերն այնքան, մինչև դրանք լցնեն ձեր կյանքի բոլոր անկյունները: Սիրելի դո՛ւստր, դադարե՛ք մտածել, որ դուք թիրախ եք, որովհետև դուք ընտրվել եք՝ լինելու թուր, որը բարձրացված է Նրա ձեռքում: Ապրե՛ք հերոսուհու պես, և դուք անպատճառ պարտության կմատնեք թշնամուն, և գերիներն ազատ կարձակվեն:

Ոմանք ասել են, որ Քրիստոսի խաչի մեջ հերոսություն չկա, բայց ես ցանկանում եմ ասել ձեզ, որ Հիսուս Քրիստոսի խաչն ավելի շատ հերոսություն է ներշնչել մարդկանց անձերում, քան ցանկացած այլ իրադարձություն՝ մարդկության պատմության մեջ:

—Ջոն Ջ. Լեյք

ՆԾՈՒՄՆԵՐ

1. Մառա Հվիստենդալ. *«Անբնական ընտրություն»* (Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա «Perseus», 2011), էջ 6:
2. Կ. Ս. Լյուիս. *«Խառնակչի նամակները»* (Նյու Յորք, «HarperCollins», 1942), էջ 200:
3. Լյուիս. *«Խառնակչի նամակները»*, էջ 4:
4. Նիկ Էվանգելիստա, *«Սուսերամարտի արվեստը և գիտությունը»* (Լինքոլն վուդ, Իլլինոյս, «Masters Press», 1996), էջեր 126-127:
5. Էվանգելիստա, «Սուսերամարտի արվեստը և գիտությունը», էջ 126:
6. Մոմենտ (ֆիզիկա) «http://en.wikipedia.org/wiki/Moment_%28physics%29»:
7. Զեկույց թրաֆիքինգի մասին, 2008թ. հունիս, «www.state.gov/documents/organization/105501.pdf», էջ 9:
8. Փիթ Բրուքշոու. «Մեծագույն դժվարությունները, որոնք այսօր կանգնած են Փրկության բանակի առջև», «www.petebrookshaw.com/2012/07/greatest-challenges-facing-salvation.html», 2012թ. հուլիսի 1:
9. «Հրեղեն շեղբով թուր», «http://en.wikipedia.org/wiki/Flame-bladed_sword»:
10. Դեյվիդ Վան Բիեմա. «*Մայր Թերեզա. ժամանակակից սուրբի կյանքը և գործերը*» (Նյու Յորք, «Time Books», 2010), էջ 37:

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒԾՆԵՐԸ

Արթնացի՛ր եվ փոխի՛ր քո աշխարհը



«Երբ արթնանում են կին առյուծները» գրքում Լիզան ներկայացնում է էգ առյուծի կյանքը և աստվածաշնչյան նկարագիրը՝ որպես կնոջ զորության և քնքշության օրինակ: Դուք կոչ կզգաք՝ ձեր մեջ բացահայտելու նոր ջերմեռանդություն, խիզախություն և կյանքի նպատակ:

- Ձե՛ռք բերեք ուժի ապշեցուցիչ դրսևորում:
- Պաշտպանե՛ք փոքրերին և ձայն չունեցողներին:
- Բարձրացրե՛ք խմբային մռնչոց, որը փոխում է ամեն բան:

Կարող եք անվճար ներբեռնել Զոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութերը հետևյալ կայքերից.

www.CloudLibrary.org

Հավելյալ նյութերը բազմաթիվ լեզուներով հասանելի են դիտելու և ներբեռնելու համար Youtube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերում:

Ի՞նչ կպատահեր, եթե հայտնաբերեիք, որ ձեզ վստահվել է անտեսանելի, անպարտելի և չվնասվող զենք: Արդյոք կօգտագործեի՞ք այն: Արե՛ք ավելին, քան ուսումնասիրելը, և սկսե՛ք գործածել

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ:

Աշխարհով մեկ կանայք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և սեռասպանության թիրախներ են: Մեր հոգևոր թշնամին ձգտում է զինաթափել կանանց բոլոր կողմերից: Լիզա Բիվերը բացատրում է, որ Աստծո Խոսքը թուր է, որը պետք է և՛ ուսումնասիրել, և՛ գործածել: Հիմա այն ժամանակն է, երբ կանանց իսկապես անհրաժեշտ է զինվել:

Ստեղծարար կերպով համեմատելով թուրը Աստծո Խոսքի և խաչի հետ՝ «Թրեր կրող կանայք» գիրքը կսովորեցնի ձեզ.

- Ինչպե՞ս երկրի վրա խոսել երկնային լեզվով:
- Ի՞նչ է նշանակում՝ բարեխոսել:
- Ի՞նչ է նշանակում՝ կրել ձեր խաչը:
- Ի՞նչ է նշանակում՝ զանազանություն ունենալ:
- Ինչպե՞ս զինաթափել թշնամուն:
- Ինչո՞ւ են կանայք թշնամու թիրախը, և ինչո՞ւ է Աստծուն անհրաժեշտ, որ նրանք հերոսուհիներ դառնան:

Նա ջերմեռանդ է: Հակված է ծայրահեղությունների: Շփվող է: Ուժեղ է: Զվարճալի է: Լիզա Բիվերը միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ է, հանրաճանաչ գրքերի հեղինակ և «Ավետաբեր» հեռուստահաղորդման համատեղ հաղորդավարը, որը հեռարձակվում է ավելի քան 216 երկրներում:

Լիզան քարոզում է Ավետարանն իր թափանցիկ ոճով՝ բերելով օրինակներ իր անձնական փորձառությունից, որպեսզի զորացնի մարդկանց՝ ազատություն պարգևելով և վերափոխելով նրանց: Որպես արդարության պաշտպան՝ նա հորդորում է մարդկանց՝ դառնալ պատասխան այն խնդիրներին և դժվարություններին, որոնք ամենուր են:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը
www.CloudLibrary.org և www.MessengerInternational.org կայքերից:

Նիրմեիտուտ ժ զանոռոՏ
ողեիիտ ձգ ը՝ սյոտիրյոռ

Messenger International
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ: